Ս. ԻՆԳՈՒԼՈՎ

# ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

I ՊՐԱԿ

3(075)
Ի - 52

ԿՈՒՍՀՐԱՏ 1933 ԵՐԵՎԱՆ

Арм.
3.8581 | Ia
3(075)
Ի - 52
25 SEP 2006
1 DEC 2009

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

Ս. ԻՆԳՈՒԼՈՎ

# ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ

ԿՈՒՍԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանված է ռուսական յերկրորդ վերամշակված հրատարակությունից

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

11639
26 APR 2013
61-87
...Библиотека ... Арм.ССР им. А. Мясникяна

# ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*Քաղգրագիտության այս դասագիրքը հրատարակվում է քաղաքային կուսակցական դպրոցների ուսանողների համար, ինչպես յեվ կուլթեկնածուների, կուսակցության յերիտասարդ անդամների, համակրողների յեվ անկուսակցական բանվորական ակտիվի ինքնակրթության համար:*

*Առաջին հրատարակության (1932 թ.) համեմատությամբ դասագիրքը հեղինակի կողմից վերամշակվել է կուսակցության յեվ կառավարության վերջին վորոշումների հիման վրա: Դասագիրքն ավելի հանրամատչելի յե դարձվել յեվ յենթարկվել է մեթոդական մշակման (գլուխների նոր կառուցում յեվ նյութի դասավորումը գլուխների ներսում): Այդ ուղղությամբ վերամշակումը կատարվել է Կուսհրատի կողմից անցկացված մասսայական գրաքննադատական աշխատանքի հիման վրա (կուսդպրոցների սովորողների յեվ պրոպագանդիստների կոլեկտիվ գնահատականները, կուսկոմների մեթոդբյուրոների յեվ առանձին ընկերների գրախոսականները յեվ այլն): Վերամշակման ժամանակ դասագիրքը կրճատվել է:*

*Հրատարակչությունը կուսցանցի պրոպագանդիստներին յեվ սովորողներին խնդրում է իրենց գնահատականները, նկատողություններն ու առաջարկություններն ուղարկել հետեվյալ հասցեյով՝* Մոսկվա, Կուզնեցկի Մոստ, 7, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի Հրատարակչություն — Կուսհրատ, Քաղգրագիտության սեկտոր: *Բոլոր նկատողություններն ու առաջարկությունները հեղինակի յեվ Հրատարակչության կողմից ոգտագործվելու յեն դասագրքի հետագա մշակման ընթացքում:*



Գլուխ

# ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

1917 թ. հոկտեմբերին մեր յերկրի բանվոր դասակարգն ու գյուղացիությունը վերջ տվին կապիտալիստների յեվ կալվածատերերի տիրապետությանը: Հին ցարական Ռուսաստանը դարձավ Խորհրդային սոցիալիստական հանրապետություն, պրոլետարական դիկտատուրայի յերկիր: Մեր յերկիրը միակն է աշխարհում, վորտեղ իշխանությունը պատկանում է բանվոր դասակարգին: Մնացած ամբողջ աշխարհում (բացի Չինաստանի մեկ հինգերորդական մասից, ուր սահմանված է խորհուրդների իշխանություն) իշխանությունը պատկանում է կապիտալիստներին յեվ կալվածատերերին:

Բանվոր դասակարգը, գյուղացիության աշխատավոր մասսաների աջակցությամբ մեր յերկրում իշխանությունն իր ձեռքը զցելով, սկսեց վերակառուցել յերկրի ամբողջ կյանքը: Այդ վերակառուցման խնդիրն է — հասնել կոմունիստների վերջնական նպատակին — կառուցել կոմունիստական հասարակարգ:

Առաջավոր մարդկության լավագույն մտածողները յեվ բանվոր դասակարգի շահերը պաշտպանող հարյուր հազարավոր անձնազոհ մարտիկներ շատ տասնամյակներ են պայքարել կոմունիզմի համար: Նրանցից քչերը չեն զոհվել այդ պայքարում: Հանուն կոմունիզմի պայքարել են բանվոր դասակարգի մեծ ուսուցիչները ու առաջնորդները՝ Կարլ Մարքսը, Ֆրիդրիխ Ենգելսը յեվ Վլադիմիր Իլյիչ Լենինը: Կոմունիզմի համար մղվող պայքարին է նվիրել իր ամբողջ կյանքը ընկ. Ստալինը, մեր յերկրի յեվ ողջ աշխարհի բանվոր դասակարգի ճանաչված ու սիրված ուսուցիչը յեվ առաջնորդը: Կոմունիզմի համար պայքարում են բոլոր կոմունիստական կուսակցությունները, նրանց հետեվից ամբողջ յերկրագնդում գնում են տասնյակ միլիոնավոր առաջավոր բանվորներ, գյուղացիներ, աշխատավորներ:

Մեր յերկրում կոմունիզմը կենսագործվում է, դառնում է իրականություն: Մենք սոցիալիզմ (կոմունիզմի ստորին աստիճանը) ենք կառուցում ամեն որ, ամեն ժամ: Իսկ մեր յերկիրը աշխարհի մեկ վեցերորդ մասն է:

Մեր յերկրում գոյություն ունեցող կարգերն այնքան են տարբերվում մնացած ամբողջ աշխարհում յեղած կարգերից, վոր իրականում դրանք յերկու տարբեր աշխարհներ են: Մեր յերկրում կյանքն այնպես է կառուցված, վոր բոլոր բարիքները պատկանում են աշխատավորներին, իսկ բուրժուական յերկրներում կյանքի բոլոր բարիքները պատկանում են հարուստ դատարկապորտներին, ձրիակերներին: Մեր աշխարհը յերիտասարդ է, ուժերով լեցուն, նա առույգ յեվ գործունյա կերպով կառուցում է նոր կյանք. կապիտալիստական աշխարհը զառամած է, տկար, նա փտում է վոտքից մինչեվ գլուխ: Ի՞նչ է դրա պատճառը: Ինչո՞ւմն է այդ յերկու աշխարհների տարբերությունը: Այդ մասին է հենց խոսվելու առաջին գլխում: Գլուխը բաժանված է հետեվյալ հատվածների՝



*1. Ի՞նչպես է կառուցված կապիտալիստական հասարակությունը:*
*2. Ի՞նչ է կատարվում կապիտալիստական աշխարհում:*
*3. Ի՞նչ է կատարվում Խորհուրդների յերկրում:*
*4. Համաշխարհային իմպերիալիզմը յեվ ԽՍՀՄ-ն:*

## 1. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ԻՆՉՈ՞Ւ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ

*Վողջ կապիտալիստական աշխարհը մեր աչքերի առաջ գալարվում են դաժանագույն տնտեսական ճգնաժամի ջղաձգություններից: Այդ ճգնաժամը պատահաբար չի առաջացել: Կապիտալիստական աշխարհում ճգնաժամերն անխուսափելիորեն ծագում են վորոշակի ժամանակամիջոցներում — սովորաբար յուրաքանչյուր 12, 10, 8 տարին մեկ:*

*Իսկ ի՞նչպես են արտահայտվում այդ ճգնաժամերը: Ճգնաժամերի ժամանակ խախտվում է բուրժուական յերկրի ամբողջ տնտեսական կյանքը. փակվում են շատ գործարաններ ու ֆաբրիկաներ և միլիոնավոր բանվորներ մնում են առանց աշխատանքի ու հացի. խանութները գրեթե առևտուր չեն անում, փակվում են բազմաթիվ բանկեր, յերկաթուղիներն ու նավերը թույլ են աշխատում և շատ դեպքերում իսպառ կանգ են առնում, տասնյակ հազարավոր գյուղացիական (ֆերմերների) տնտեսություններ քայքայվում են, իսկ գյուղացիները դառնում են մուրացկաններ:*

*Այս բոլորն առանձնապես ուժեղ արտահայտվում է այժմյան ճգնաժամում: Ներկայիս ճգնաժամն սկսվել է 1929թ. և աչքի յե ընկնում չտեսնված խորությամբ և տևականությամբ: Ընկ. Ստալինն այժմյան ճգնաժամի մասին ասել է, թե նա հանդիսանում է «ամենալուրջ և ամենախորը ճգնաժամը մինչև այժմ յեղած համաշխարհային տնտեսական բոլոր ճգնաժամերի մեջ»:*

*Կապիտալիստական յերկրների արդյունաբերությունը հիմա անհամեմատ ավելի քիչ ապրանք է արտադրում, քան 1928թ., մինչև ճգնաժամը: Յեթե 1928 թ. կապիտալիստական յերկրներում արտադրված բոլոր ապրանքները համարենք 100%, ապա առ 1933 թ. սկիզբը արտադրվել է միայն 67%: Ինչպես տեսնում ենք, ապրանքների արտադրությունը մեկ յերրորդով կրճատվել է: Հիմա խոշորա-*

գույն կապիտալիստական յերկրներն իրենց արտադրած ապրանքների քանակով 30 — 35 տարով հետ են գնացել։

Ինչո՞ւ յե այդպես լինում։ Միգուցե այդ յերկրներում պակասում է հումքը կամ բանվորական ձեռքերը։ Միգուցե արտադրությունը ղեկավարելու համար նրանց ունեցած ճարտարապետներն ու տեխնիկները քի՞չ են։ Միգուցե նրանց դազգյահներն ու մեքենաները փչացած են։

Վոչ, պատճառն այդ չէ։ Ավելի քան 40 մլն. վորակյալ բանվորներ ու հարյուր հազարավոր մասնագետներ քաղցի յեն մատնված, աշխատանք չգտնելով։ Սարքավորումը գտնվում է լավ վիճակում։ Այդպիսին բավական կլիներ շուկա բաց թողնվող ապրանքների քանակը կրկնապատկելու, իսկ վորոշ յերկրներում անգամ յեռապատկելու համար։ Հումքը նույնպես շատ առատ է։ Կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է արդյունաբերության աճման ու զարգացման համար, բայց նա վոչ միայն չի զարգանում, այլ շարունակ կրճատվում է։ Դազգյահ դազգյահի հետևից, գործարան գործարանի հետևից կանգ են առնում։ Որինակ, Ամերիկայում ոգտագործվում է արդյունաբերության ունեցած արտադրական կարողության միայն կեսը, իսկ մնացած մասն անգործության է մատնված։

Ի՞նչ է դրա պատճառը։ Պատճառն այն է, որ շուկայում առանց այդ էլ չափազանց շատ ապրանք կա, պատճառն այն է, վոր հսկայական քանակությամբ ապրանքներ ընկած են պահեստներում, չունենալով գնորդներ։ Չվաճառված ապրանքների այդ սարերն որեցոր մեծանում են։

Յեվ վոչ միայն արդյունաբերական ապրանքները, այլև գյուղատնտեսական մթերքները՝ հացը, միսը, ձուն, սուրճը, բրինձը և այլն չեն գնվում, ընկած են անշարժ։ Չգիտեն, թե ինչ անեն դրանց։ Դրա համար էլ կապիտալիստական յերկրները վոչ միայն կրճատում են ցանքատարածությունները, այլև վոչնչացնում են արդեն արտադրված մթերքները։

Իսկ ինչո՞ւ այդ ապրանքներն ու մթերքները մնում են պահեստներում ընկած։ Միգուցե բոլորն էլ կուշտ են, վոտից մինչև գլուխ հագնված և վոչ վոքի վոչինչ չի՞ հարկավոր։

Վոչ, բանն, իհարկե, այդ չէ։ Կապիտալիստական յերկրներում բանվորների, գյուղացիների, ծառայողների և ընդհանրապես աշխատավոր բնակչության բազմամիլիոն մասսաներն իրենցից ներկայացնում են սպառողների մի ահագին բանակ։ Նրանց կարիքներն իրոք բավարարելու համար հարկ կլիներ վոչ թե փակել յեղած գործարաններն ու ֆաբրիկաները, այլ կառուցել նորերը, վոչ թե կրճատել, այլ ընդարձակել ցանքսերը։ Բայց բանն էլ հենց այն է, վոր այդ հարյուր միլիոնավոր մարդիկ ի վիճակի չեն գնելու իրենց համար անհրաժեշտ ապրանքներն ու մթերքները։ Նրանք տառապում են, սովում, հյուծ-



վում կարիքից և զրկանքներից, նրանք միջոցներ չունեն իրենց համար, իրենց յերեխաների համար գնելու ամենաանհրաժեշտ իրերը։ Բազմամիլիոն մասսաների աղքատությամբ է բացատրվում այն, վոր կապիտալիստական յերկրներում ապրանքները մնում են ընկած պահեստներում, վոր խանութները լեփ-լեցուն են ապրանքներով, վոր կապիտալիստները, հացի, բրնձի, սուրճի մեծամեծ պաշարների տերերը, ջանալով գների անկման առաջն առնել, ծովն են թափում կամ այրում հսկայական քանակությամբ սննդամթերքներ, իսկ բանվորներն ու գյուղացիներն ստիպված են սովել, հագնել ցնցոտիներ ու իրենց բնակարաններում սառչել առանց ածխի և այլն։

Վերջապես ի՞նչ է պատճառը, վոր կապիտալիստական աշխարհում ազգաբնակության ճնշող մեծամասնությունն ապրում է կարիքի մեջ, սովում, զրկանքներ է կրում, և միայն մի բուռն հարուստներ են ոգտվում կյանքի բոլոր բարիքներից։ Պատճառը կապիտալիստական հասարակության կառուցվածքն է։ Բուրժուական հասարակության այդ կառուցվածքի և նրա զարգացման որենքների մասին մանրամասնաբար պատմված է կոմունիստ-բոլշևիկների կուսակցության ծրագրի առաջին, ներածական մասում։

Այստեղ տեսնենք, թե ինչպես է կառուցված և ինչպես է զարգանում այդ հասարակությունը։

## ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

Կապիտալիստական հասարակության մեջ բոլոր գործարանները, մեքենաները, յերկաթուղիները, հանքահորերը, կալվածքները, նավերն ու բանկերը պատկանում են կապիտալիստների դասակարգին։

Գործարաններն ու ֆաբրիկաները վերամշակում են ահագին քանակությամբ արտադրանքներ։ Պարզ է, վոր գործարանատերն այդ իրերն արտադրում է վոչ իր սեփական սպառման համար։ Միակ բանը, ինչով նա հետաքրքրվում է, դա այն շահույթներն են, վորոնք նա կարող է կորզել իր արտադրած պրոդուկտների վաճառքից։ Յեվ իրոք, յեթե Հենրի Ֆորդն անգամ ամեն որ իր համար նոր ավտոմոբիլ վերցներ, նրան բավական կլիներ ամսական 30 ավտոմոբիլ, բայց նա վերջերս բաց էր թողնում ամսական 50 հազ. ավտոմոբիլ, իսկ չորս տարի առաջ, այսինքն մինչև ճգնաժամը, ամսական մոտ 200 հազ. ավտոմոբիլ։ Ուրեմն կապիտալիստական ձեռնարկության մեջ արտադրվող բոլոր պրոդուկտները հանվում են շուկա, դառնում են առուծախի առարկա, այսինքն՝ ապրանք։ Հետևաբար կապիտալիստական տնտեսությունն ապրանքային տնտեսություն է։

Այստեղ պետք է նախապես մատնանշել, վոր յեթե կապիտալիս-




Դիագրամը ցույց է տալիս ԽՍՀՄ-ում արտադրվող ապրանքների քանակի աճումը յեվ ապրանքների արտադրության կրճատումը կապիտալիստական յերկրներում (տոկոսներով):

տական տնտեսությունն ապրանքային է, ապա յուրաքանչյուր ապրանքային տնտեսություն անպայման կապիտալիստական չէ։ Յեթե, որինակ, կոշկակարն ինքը իր արտադրության միջոցներով կոշիկ է արտադրում շուկայում վաճառելու համար, նրա տնտեսությունն էլ ապրանքային է, սակայն դեռևս կապիտալիստական տնտեսություն չէ։ Այդպիսի կոշկակարը կապիտալիստ չէ, այլ մանր ապրանքարտադրող։ Նա այն ժամանակ է կապիտալիստ դառնում, յերբ վարձում է իր համար աշխատող գործավորներ, յերբ նա ուռճանում է նրանց աշխատանքով, յերբ նա դառնում է շահագործող։ Նույնը կարելի յե ասել նաև միջակ գյուղացու մասին։ Նա իր ընտանիքի ոգնությամբ, իր արտադրության միջոցներով (գործիքներ, սերմեր և այլն) հաց է արտադրում, իսկ ավելցուկը վաճառում է, իր հացի մի մասը դարձնում է ապրանք։ Միջակ գյուղացին մանր ապրանքարտադրող է։ Այլ բան է կուլակը, վորը շահագործում է վարձու բանվորներին, բատրակներին, ինչպես և զանազան յեղանակներով (հողը վարձակալության տալով, արտադրության գործիքներն ոգտագործության տալով, վաշխառությամբ և այլն) շահագործում է չքավորներին։ Դա գյուղական կապիտալիստ է։

Արտադրության միջոցների խոշոր սեփականատերերի — շահագործողների (բուրժուազիա, բանկիրներ, հողատերեր) դասակարգը մարդկային հասարակության մեջ աննշան փոքրամասնություն է կազմում։ Սակայն իր ձեռքում պահելով բոլոր ֆաբրիկաները, գործարանները, հողերը և արտադրության այլ միջոցները, այդ սակավաթիվ դասակարգն իշխում է տասնյակ և հարյուր միլիոնավոր վարձու գործավորների բանակների վրա։

Վարձու գործավորների բանակը կազմված է արտադրության միջոցներից զուրկ մարդկանցից, վորոնք ապրում են միայն իրենց բանվորական ուժի վաճառքով։ Նրանք ստիպված են վաճառելու իրենց



բանվորական ուժը, վորովհետև նրանց գոյության միակ միջոցն իրենց բանող ձեռքերն են։ Վարձու աշխատողների այդ բանակը կազմում է բանվոր դասակարգը — պրոլետարների դասակարգը, պրոլետարիատ:

Կապիտալիզմի պայմաններում բանվորական ուժը նույնպես հանդիսանում է ապրանք: Բանվորն ստիպված է այդպիսին վաճառել կապիտալիստին, վորպեսզի սովից չմեռնի։ Իր բանվորական ուժը վաճառողների բանակը շատ մեծ է. նա շարունակ աճում է կապիտալիզմի պայմաններում քայքայվող գյուղացիների, տնայնագործների, մանր բուրժուազիայի հաշվին։ Այդպիսով ստեղծվում է վոչ միայն շուկա հագուստի, վոտնամանի, մսի, կոճակների և այլնի առուծախի համար, այլև բանվորական ուժի շուկա:

Պրոլետարների դասակարգը և կապիտալիստների դասակարգը հակադրված են մեկ մեկու։ Կապիտալիստները շահագրգռված են, վորպեսզի բանվորների աշխատանքից իրենց համար կորզեն հնարավոր չափով ավելի մեծ յեկամուտներ։ Կապիտալիզմի ամբողջ սիստեմը կառուցված է այն բանի վրա, վոր բանվորը գործարանում ծախսում է ավելի շատ աշխատանք, քան այն, վորը վարձատրվում է: Յեթե, որինակ, իր աշխատավարձին հավասար արժեքով արտադրանք ստեղծելու համար բավական է, վոր բանվորն աշխատի 4 ժամ, իսկ բանվորական որը տևում է 10 ժամ, ապա պարզ է, վոր մնացած 6 ժամը բանվորն աշխատում է կապիտալիստի համար ձրի, ստեղծելով հավելյալ արժեք։

Հավելյալ արժեքը Լենինն այսպես է բացատրում՝

> «Վարձու բանվորն իր բանվորական ուժը վաճառում է հողի, ֆաբրիկայի, աշխատանքի գործիքների տիրոջը։ Բանվորական որվա մի մասը բանվորը գործադրում է ծածկելու համար իր և իր ընտանիքի գոյության ծախսերը (աշխատավարձ), իսկ որվա մյուս մասը բանվորն աշխատում է ձրի, կապիտալիստի համար ստեղծելով հավելյալ արժեք, շահույթի աղբյուր, կապիտալիստների դասակարգի հարստության աղբյուր»։

Լինելով յերկրի հիմնական արտադրական միջոցների սեփականատերը, կապիտալիստների դասակարգը յուրացնում է չվարձատրված աշխատանքը բանվորների, վորոնք հավելյալ արժեք են ստեղծում կապիտալիստների համար։ Կապիտալիստական շահագործումը պրոլետարիատի կողմից ստեղծվող հավելյալ արժեքի յուրացումն է բուրժուազիայի կողմից:

Հավելյալ արժեքի զգալի մասը կապիտալիստները ծախսում են սեփական կարիքների և հաճույքների, փարթամության և շռայլության, անբարոյականության և խրախճանքների վրա։ Մյուս մասը կապիտալիստները ծախսում են իրենց ձեռնարկությունների ընդարձակման վրա։ Հավելյալ արժեքի վորոշ մասը ծախսվում է բուրժուազիայի պետական ապարատի, նրա չինովնիկների, զինվորականների, վոստիկա-

նության, յեկեղեցու և այլն պահպանման վրա—պրոլետարիատի ճընշման սիստեմի վրա: Այդպիսով կապիտալիզմի ժամանակ պրոլետարիատը պահում և կերակրում է բոլոր կապիտալիստներին, մակաբույծներին և բանվոր դասակարգի բոլոր կեղեքիչներին:

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արտադրության կապիտալիստական յեղանակը կառուցված է այնպես, վոր աշխատում են մասսաները, իսկ նրանց աշխատանքի արդյունքը դառնում է մի բուռն շահագործողների սեփականություն: Կապիտալիստական ձեռնարկության մեջ ապրանքների արտադրությունը կատարվում է միասին, կոլեկտիվ կերպով աշխատող հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորների ջանքերով: Իսկ նրանց արտադրության արդյունքը յուրացնում է ձեռնարկատերը, առանձին, մասնավոր անհատը: Այդ արտադրանքը հանդիսանում է կապիտալիստների սեփականություն: Արտադրանքի բաշխումը կատարվում է այնպես, վոր նրա չնչին մասը, վորպես աշխատավարձ, տրվում է բանվորներին, իսկ արտադրված ապրանքների ամբողջ զանգվածը դառնում է գործարանատերերի սեփականություն:

Վորքան ավելի յեր զարգանում կապիտալիզմը, վորքան ավելի եյին մեծանում գործարաններն ու ֆաբրիկաները, ընդգրկելով հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորներ, այնքան ավելի ակներև եր դառնում, վոր հսկայական քանակությամբ բանվորներ կլանող արտադրությունը կրում է հասարակական բնույթ:

«Այժմ ֆաբրիկաներից ու գործարաններից դուրս յեկող թելը, գործվածքները, մետաղե ապրանքները,—գրում է Ենգելսը,—իրենցից ներկայացնում են բազմաթիվ բանվորների աշխատանքի պրոդուկտ, վորոնք հերթով աշխատել են նրանց վրա, մինչև վոր նրանց տվել են վերջնական ձև, և վոչ վոք անհատապես չի կարող ասել՝ «սա յես եմ պատրաստել, սա իմ պրոդուկտն է»:

Այդ հսկայական հասարակական կոլեկտիվի աշխատանքը բաժանվում է արտադրության զանազան տեսակների, զանազան մասնագիտությունների: Բաժանված լինելով, նրանք միևնույն ժամանակ միմյանց լրացնում են, իրար հետ սերտորեն կապված են և կազմում ու ստեղծում են հասարակական արտադրության մեկ միասնական հոսանք: Կապիտալիզմի պայմաններում այդ հասարակական աշխատանքի արդյունքը հանդիսանում է առանձին մասնավոր սեփականատերերի, կապիտալիստների յեվ վոչ թե ամբողջ հասարակության սեփականությունը: Սա յե կապիտալիզմի հիմնական հակասությունը, հակասություն արտադրության հասարակական բնույթի յեվ յուրացման մասնավոր կապիտալիստական



բնույթի միջև: Այս հիմնական հակասությունից են ծագում կապիտալիզմի մյուս բոլոր հակասությունները, վորոնց աճումն ու խորացումը տանում է դեպի կապիտալիստական հասարակության կործանումը:

Քննենք այդ հակասությունները:

Կապիտալիստական ձեռնարկությունների առաջացման և հասարակական արտադրության ստեղծվելու հետ, հասարակական աշխատանքի պրոդուկտի մասնավոր յուրացման պայմաններում, առաջ են գալիս յերկու իրար հակադիր դասակարգեր՝ մի կողմից — պրոլետարների դասակարգ, մյուս կողմից — կապիտալիստների դասակարգ:

Այդպիսով արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի միջև յեղած հակասությունն ստեղծել է հակասություն դասակարգերի միջև — պրոլետարիատի և բուրժուազիայի միջև:

Արտադրության կապիտալիստական յեղանակից, վորի ժամանակ արտադրվող ապրանքները պատկանում են վոչ թե արտադրողներին, այլ ձեռնարկությունների սեփականատերերին, բղխում է նաև մի ուրիշ հակասություն: Ձեռնարկությունները կառուցվում և աշխատում են վորոշակի կարգով. մեքենաներն ու մեխանիզմներն արտադրության մեջ պահանջում են կարգապահություն և կազմակերպվածություն: Ուստի և աշխատանքի հասարակական բնույթին ուղեկցում է արտադրության կազմակերպումը ձեռնարկության մեջ:

Սակայն արտադրության կազմակերպումն առանձին ֆաբրիկայում ամենևին չի ապահովում և չի նշանակում արտադրության կազմակերպումն ամբողջ հասարակության մեջ: Արտադրության միջոցների յուրաքանչյուր սեփականատեր, յուրաքանչյուր կապիտալիստ մտահոգված է միայն ավելի մեծ շահույթ ստանալու խնդրով: Ապրանքային տնտեսության առանձնահատկությունն այն է, վոր, ինչպես ասել է Ենգելսը՝

«Վոչ վոք չգիտե, թե այն պրոդուկտից, վոր ինքն արտադրում է, վորքանը շուկա դուրս կգա և ինչ քանակությամբ սպառողներ կգտնի. վոչ վոք չգիտե, թե կգտնի՞ արդյոք իր ապրանքը սպառող, կարդարացնի՞ արդյոք նա արտադրության ծախսերը և ընդհանրապես կվաճառվի՞ նա, թե վոչ: Հասարակական արտադրության մեջ տիրում է անարխիա»:

Յուրաքանչյուր կապիտալիստ ձգտում է շուկայում հաղթել, դուրս մղել իր ճանապարհի վրա կանգնած ամեն մի ուրիշ կապիտալիստի: Խոշոր ֆիրման ջանում է վոչնչացնել փոքրին, վորպեսզի կարողանա իր ապրանքները վաճառել ավելի մեծ քանակությամբ, հետևաբար ավելի մեծ շահույթ ստանա: Փոքր ֆաբրիկան չի կարող դիմանալ խոշորի դեմ մղվող պայքարում: Խոշոր գործարանատերը կամ հողատերը միշտ կարող է արտադրանքը բաց թողնել ավելի եժան գնով: Նրա ձեռքում

կան ավելի լավ մեքենաներ և լավ հող, իսկ լավ մեքենաներն ու լավ հողերն ավելի արտադրանք են տալիս, ուստի և արտադրված իրերը կարելի յե բաց թողնել շուկա այնպիսի գնով, վորը հնարավորություն կտա դուրս մղել հակառակորդին, տիրել շուկային և հետո նորից գները բարձրացնել։ Իզուր չե, վոր Մարքսն ու Էնգելսն ապրանքների եժան գներն անվանել են բուրժուազիայի ծանր հրետանի։

Կապիտալիստների միջև վաճառքի շուկայի համար, մրցող ֆիրմաներին դուրս մղելու համար տեղի ունեցող այդ պայքարը կոչվում է մրցակցություն: Դա հանդիսանում է կապիտալիստական տնտեսության գլխավոր, տարբերիչ գծերից մեկը։

Յեվ այդպես, արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական բնույթի միջև յեղած հակասությունն առաջացնում է արտադրության անարխիա յեվ մրցակցություն ամբողջ կապիտալիստական տնտեսության մեջ:

## ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱՂՔԱՏԱՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՒՂԵԿԻՑՆ Է

Շահույթի հետևից ընկնելը, մրցակցական պայքարը կապիտալիստին ստիպում է ընդարձակել իր ունեցած ձեռնարկությունները, նրանց մեջ դնել ավելի ուժեղ մեքենաներ, բարելավել արտադրության կազմակերպումն ու տեխնիկան։

Ձեռք բերած շահույթներով նա կառուցում է ցեխերի և գործարանների նոր կորպուսներ։ Այդ նրան հնարավորություն է տալիս դուրս մղել կամ կլանել (գնել) իր ավելի թույլ մրցակցի ձեռնարկությունը, արհեստանոցի կամ փոքր գործարանի տիրոջը։ Այդպիսով տեղի յե ունենում, մի կողմից՝ արտադրության խոշորացում (համակենտրոնացում), իսկ, մյուս կողմից՝ կապիտալների կենտրոնացում (ցենտրալիզացիա) ավելի խոշոր կապիտալիստների ձեռքում։ Կապիտալիստական արտադրության զարգացման համեմատ կապիտալի այդ խոշորացումը և մանր տնտեսության կլանումը խոշորի կողմից ավելի ու ավելի յե ուժեղանում։ Դրան մեծապես օժանդակում է այն տեխնիկայի աճումը, վորը կապիտալիստը մտցնում է արտադրության մեջ։

Դա գործարանատերն անում է վոչ թե այն պատճառով, վոր նա գիտության և տեխնիկայի կողմնակից է, կամ նորմուծություններ սիրող, այլ այն պատճառով, վոր այլապես նա թույլ կլինի իր մրցակցից և կոչնչացվի։

Ավելի արագաշարժ, նոր, կատարելագործված մեքենաները բանվորին ստիպում են աշխատել ավելի մեծ լարումով։ Նա միևնույն ժամանակամիջոցում ծախսում է ավելի ուժ, եներգիա և առողջություն։ Նրա աշխատանքը, ինչպես ասում են, դառնում է ավելի ինտենսիվ, այսինքն՝ ավելի լարված։ Բանվորական որն այնքան է խտանում, վոր բանվորն սկսում է արագ մաշվել, աճում են հիվանդությունները, հաշմանդամությունը, մահացությունը։

Կատարելագործված մեքենայի միջոցով կապիտալիստը բանվորից կորզում է ավելի մեծ հավելյալ արժեք, այսինքն ավելի յե ուժեղացնում բանվորների շահագործումը։

Տեխնիկական պրոգրեսը, մեքենայական տեխնիկայի կատարելագործումը, ռացիոնալացումը կապիտալիզմի պայմաններում ուժեղացնում են թե՛ առանձնապես յուրաքանչյուր բանվորի, թե՛ ամբողջ բանվոր դասակարգի շահագործումը:

Շնորհիվ տեխնիկայի աճման՝ կապիտալիստը հնարավորություն է ստանում 5—6 բանվորով գործը գլուխ բերել այնտեղ, ուր առաջ աշխատում եր միքանի տասնյակ մարդ. այն, ինչ ձեռքով արտադրվելիս պահանջում է հարյուրավոր բանվորներ, մեքենան անում է ավելի լավ և արագ, սոսկ միքանի մարդկանց հսկողությամբ։ Ավելորդ բանվորներին կապիտալիստը փողոց է նետում։ Կապիտալիստական աշխարհում զարգացումն այնպես է կատարվում, վոր իրենց բանվորական ուժը վաճառելու համար պատրաստ մարդկանց թիվը միշտ ավելի մեծ է, քան բանվորական ձեռքերի պահանջի աճումը։ Նույնիսկ արդյունաբերության ծաղկման տարիներում ֆաբրիկաներից դուրս լինում է անգործ բանվորների ավելցուկ։ Այդպիսով կազմվում է աշխատանքի պահեստի բանակ, վորը յուրաքանչյուր վայրկյան պատրաստ է բավարարելու կապիտալիստի պահանջը բանվորական ուժի նկատմամբ։

Ուժեղ մեքենաների ներմուծումը արտադրության պրոցեսն այնքան է պարզեցնում, վոր հնարավորություն է տալիս վորակյալ բանվորներին փոխարինել անվորակներով, ինչպես և կանանցով, անգամ յերեխաներով ու հաշմանդամներով։

Կապիտալիստների համար այդ ավելի ձեռնտու յե, վորովհետև կապիտալիստական յերկրներում կանանց և յերեխաների աշխատանքն ավելի եժան է վարձատրվում, և դասակարգային պայքարում կանայք ու յերեխաները սակավ կայուն են, ավելի քիչ են կազմակերպված։

Ինչպես արդեն ասացինք, կապիտալիզմի պայմաններում մեքենայական արտադրության աճման համեմատ քայքայվում են մանր ձեռնարկությունները և արհեստավորական արհեստանոցները. նրանք չեն կարողանում դիմանալ խոշոր կապիտալիստական ֆիրմաների մրցակցությանը։

Կապիտալիզմը խոշոր հողատիրական և կուլակային տնտեսությունների աճման հետ աընթեր անշեղորեն քայքայում է նաև միջակ և մանր գյուղացիական տնտեսությունների հսկայական մեծամասնությանը։

Սնանկացած մանր արդյունաբերողները, արհեստավորները, մանըր առևտրականները, գյուղացիներն ստիպված են լինում դառնալ

վարձու բանվորներ, նրանք պրոլետարանում են և իրենց հերթին ավելացնում գործազուրկների բանակը:

Այդպիսով գործազրկությունը դառնում է կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցը: Բանվորական ուժի մշտական ավելցուկի կամ աշխատանքի պահեստի բանակի առկայությունը բուրժուազիային հնարավորություն է տալիս սիստեմատիկորեն իջեցնելու աշխատավարձը, յերկարացնելու բանվորական օրը և զանազան այլ ճանապարհներով ուժեղացնելու բանվորների շահագործումը:

Կապիտալիստական յերկրներում կյանքի հունից դուրս նետված բանվորների և քայքայված գյուղացիների հսկայական մասսաների առկայությունը ծանր է անդրադառնում աշխատավոր մասսաների ընդհանուր կացության վրա: Աշխատանք ունեցող բանվորների մոտ աճում է անվստահությունը վաղվա օրվա նկատմամբ: Գործազուրկների բանակը լրացվում է քայքայված գյուղացիներով, արհեստավորներով և այլն: Մասսաների ընդհանուր աղքատացումն աճում է: Դա կապիտալիստական կուտակման — կապիտալիզմի զարգացման անխուսափելի հետևանքն է:

Ընդհակառակը, կապիտալիստների ճամբարում աճում են հարըստությունը, փարթամությունն ու շքեղությունը:

Աշխատավորների բազմամիլիոն մասսաների աղքատացումը մի կողմից և կյանքի բոլոր բարիքների կենտրոնացումը մակաբույծների և շահագործողների դասակարգի ձեռքում — մյուս կողմից, տանում են դեպի հակասությունների խիստ սրում պրոլետարիատի և բուրժուազիայի միջև:

## Ո՞ՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերևակայենք մի որևէ կապիտալիստական յերկիր վերելքի, արտադրության և առևտրի ընդհանուր աշխուժացման շրջանում: Բոլոր կապիտալիստները ճիգ են թափում շուկա դուրս բերելու ըստ հնարավորության ավելի շատ ապրանքներ, պայքարում են հումքի համար և այլն: Կապիտալիստների համար լավ ժամանակ է, կարելի յե վաճառել խիստ բարձր գներով: Բայց ահա անցնում է մեկ-յերկու տարի: Կապիտալիստները հանկարծ նկատում են, վոր միքանի ապրանքներ այնքան էլ արագ չեն գնվում, սկսում են ընկած մնալ, դրանք շատացել են: Վաճառքը դժվարանում է: Գներն ընկնում են: Ուժեղանում է մրցակցությունը կապիտալիստների միջև, իրենց ապրանքների վաճառքի համար մղվող պայքարը: Վոմանք այլևս չեն կարողանում տալ հումքի համար վճարելիք պարտքերը, վորովհետև ապրանքների մեջ դրված փողերը (հումքի, բանվորական ուժի, հարկերի և այլնի համար վճարված փողերը) չեն վերադառնում—ապրանքները



չեն վաճառվում: Բանկերից վարկով վերցրած փողերը հետ չեն վերադառնում: Բանկերը պայթում են, վորովհետև հնարավորություն չեն ունենում կատարելու իրենց պարտավորությունները հանդեպ ավանդատուների: Բանկերի հետևից անդունդ են գլորվում այն արդյունաբերողներն ու առևտրականները, վորոնք չեն դիմանում ընկած գներին: Վրա յե հասնում ճգնաժամը: Իհարկե, ճգնաժամն ամենից շատ ծանրանում է բանվոր դասակարգի վրա: Հազարավոր բանվորներ նետվում են փողոց: Ուժեղանում է գործազրկությունը, աղքատությունը: Կրճատվում է աշխատող բանվորների աշխատավարձը:

Ճգնաժամի նախապատճառը արտադրության հասարակական բնույթի յեվ մասնավոր յուրացման միջեվ յեղած հիմնական հակասությունն է: Յեվ իրոք, յեթե այդ հակասությունը չլիներ, այսինքն յեթե հասարակական աշխատանքը տնորիներ ինքը հասարակությունը, ապա հասարակական աշխատանքի արդյունքներն էլ կբաշխվեյին իր իսկ հասարակության կողմից, այդ ժամանակ չէր լինի բուրժուական դասակարգը, չէր լինի մի բուռն մարդկանց հարստացում և հասարակության մեծամասնության՝ բանվորների ու աշխատավորների աղքատացում, չէր լինի արտադրության անարխիա, չէյին լինի ճգնաժամեր: Սակայն այն ժամանակ չէր լինի նաև ինքը կապիտալիզմը:

Հետևաբար ճգնաժամերի պատճառը գտնվում է հենց կապիտալիստական տնտեսակարգի մեջ: Վորպեսզի ճգնաժամեր չլինեն, անհրաժեշտ է վոչնչացնել կապիտալիստական տնտեսակարգը:

Իսկ ինչպես են կապիտալիստները դուրս գալիս ճգնաժամից:

Նրանք կրճատում են արտադրությունը, վոչնչացնում են արտադրված ապրանքների մի մասը: Աստիճանաբար, թեև ընկած գներով, այնուամենայնիվ ներծծվում են ապրանքի պաշարները. կապիտալիստները նվաճում են նոր շուկաներ, ուժեղացնում են բանվորների շահագործումը: Հետագայում ընկած գները և այդ գների պայմաններում ավելի շատ շահույթ ստանալու ձգտումը կապիտալիստներին ստիպում է բարձրացնել իրենց ձեռնարկությունների տեխնիկան, դնել ավելի կատարելագործված մեքենաներ, դազգյահներ, սարքավորում: Դա առաջացնում է նոր սարքավորման պահանջի ուժեղացում: Սարքավորման գները բարձրանում են: Սարքավորում արտադրող ճյուղերն աշխուժանում են, սկսում են ընդարձակվել: Բանվորների մի մասը կրկին ներգրավվում է արտադրության մեջ: Շնորհիվ դրա ավելանում է սպառման առարկաների պահանջը: Հետևաբար աշխուժացումն ու վերելքը փոխանցվում են նաև հագուստ, սննդամթերքներ և այլն արտադրող ճյուղերին:

Սկսվում է ընդհանուր վերելք, վորին վորոշ ժամանակից հետո հաջորդում է նոր ճգնաժամը:

Սակայն պետք է այստեղ նկատել, վոր ժամանակակից (այժ-

մյան) ճգնաժամը նախորդներից տարբերվում է նրանով, վոր նա ավելի խորն է ու տևական, քան առաջներում տեղի ունեցած բոլոր ճգնաժամերը։

Այդ ճգնաժամը համակել է ամբողջ կապիտալիստական աշխարհը, վորը կատաղաբար ու հուսահատ գալարվում է, չելք փնտրելով փակուղուց։

Կապիտալիզմի զարգացումը ճգնաժամից դեպի ճգնաժամ ուղեկցվում է մասսաների աղքատացումով։ Լենինն ընդգծում էր, վոր յուրաքանչյուր ճգնաժամից հետո բանվորական մասսաներն ավելի ու ավելի յեն աղքատանում։

> «Բանվորը ..., — գրում է Լենինը, — նախկինի համեմատությամբ ավելի յե աղքատանում, ստիպված է ավելի վատ ապրել, ավելի վատ սնվել, կիսաքաղց մնալ, ապաստանում է նկուղներում և տանիքներում»։

Մասսաների աղքատացումն առանձնապես ցայտուն կերպով արտահայտվում է ճգնաժամերի ժամանակ։ Այդ ժամանակ մասսաների հուզմունքը կապիտալիստական կարգերի դեմ առանձնապես արագ է աճում։

Կապիտալիստական հասարակության մեջ բոլոր հակասությունների ամենաուժեղ սրումը տեղի յե ունենում կապիտալիզմի ամենաբարձր զարգացման դարաշրջանում (ժամանակաշրջանում), իմպերիալիզմի դարաշրջանում։

Լենինն իր աշխատություններում առանձնապես մանրամասնորեն լուսաբանել է իմպերիալիզմի բնույթը, վորը կապիտալիզմի նորագույն աստիճանն է, պատերազմների և հեղափոխությունների դարաշրջանը, համաշխարհային պրոլետարական հեղափոխության նախօրյակը։

Այստեղ քննարկենք իմպերիալիզմի գլխավոր գծերը։

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՄՈՆՈՊՈԼԻՍՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ — ՏՐԵՍՏՆԵՐ, ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐ, ԿԱՐՏԵԼՆԵՐ

Մենք տեսանք, թե ինչպես մրցման ընթացքում միքանի մանր ու միջակ ձեռնարկությունների տեղ հանդես է գալիս փոքրերին, ավելի թույլերին կլանող մեծ ձեռնարկությունը։ Արտադրության համակենտրոնացման այդ պրոցեսը, այսինքն վոչնչացված, ավելի թույլ, ավելի հետամնաց ձեռնարկությունների տեղ մեծ ձեռնարկության ստեղծվելու պրոցեսը, տեղի յե ունենում մանավանդ ճգնաժամի ժամանակ։ Արտադրության համակենտրոնացման այդ պրոցեսը միաժամանակ կապիտալները համակենտրոնացնում է շարունակ սակավաթիվ դարձող մի բուռն խոշոր կապիտալիստների ձեռքում։

Շնորհիվ արդյունաբերության աճման և փոքր ձեռնարկությունների կլանման խոշորների կողմից, մի խումբ ամենաուժեղ գործարանատերերի ու ֆաբրիկատերերի ձեռքում հավաքվում են հսկայական կապիտալներ։ Լավագույն կերպով շահույթներ կորզելու և ձեռնարկատերերի ուրիշ խմբերի հետ ավելի լավ մրցելու համար արդյունաբերության մեկ կամ միքանի իրար հետ կապ ունեցող ճյուղերում խոշորագույն ձեռնարկություններ ունեցող կապիտալիստներն ստեղծում են իրենց միությունները, վորոնք կոչվում են տրեստներ, կոնցեռններ, սինդիկատներ և այլն։ Ստեղծելով այդպիսի միավորումներ, խոշորագույն կապիտալիստները հնարավորություն են ստանում համարյա անարգել կերպով թելադրել շուկայի գները և ավելի հաջող պայքարել այն մրցակիցների դեմ, վորոնք միավորման մեջ չեն մտել, վորոնք գործում են առանձին-առանձին, ինչպես և այն միավորումների դեմ, վորոնք ավելի թույլ են։

Կապիտալների այդպիսի մեծ միավորումները, վորոնք ընդգրկում են արդյունաբերության մի վորևե ճյուղի զգալի մասը, կոչվում են մոնոպոլիաներ (մենաշնորհներ)։ Մոնոպոլիա նշանակում է տիրապետություն շուկայում, գները, արտադրության չափերը, առևտրի պայմանները և այլն վորոշելու հնարավորություն։

Թե ինչպիսի վիթխարի չափերի յեն հասնում մոնոպոլիաները, կարելի յե տեսնել Պողպատի տրեստի օրինակից, վորը գլխավորում է ամերիկյան միլիարդատեր Մորգանը։ Այդ տրեստն ունի ավելի քան հինգ միլիարդ ռուբ. կապիտալ։ Նա ունի 147 գործարան, 500 դոմնային հնոց։ Մինչև ճգնաժամն այդ տրեստն արտադր. էր Ամերիկայում ձուլվող ամբողջ չուգունի և պողպատի գրեթե կեսը։ Այդ տրեստն իր ձեռքում պահում է ավելի քան 100 հազ. կմ. յերկաթուղի։

XX դարի սկզբում աշխարհիս բոլոր կապիտալների կեսն արդեն գտնվում էր այդպիսի զանազան միավորումների՝ սինդիկատների և տրեստների ձեռքում։ 1900 թվին Ամերիկայում տրեստների ձեռքին էր տեքստիլ արդյունաբերության 50 %-ը, ապակու—54 %, թղթի—60 %, սննդի—62 %, քիմիական—61 % և պողպատաձուլական արդյունաբերության 84 %-ը։ ԽՍՀՄ սահմաններից դուրս նավթի գրեթե ամբողջ համաշխարհային հանույթը կենտրոնացած է ամերիկյան «Ստանդարտ Օյլ» և անգլիական «Ռոյալ Դեթչ» տրեստների ձեռքում։

Լենինն ասում է, թե մոնոպոլիան «իրենից ներկայացնում է կարևորագույն յերևույթներից մեկը—յեթե վոչ կարևորագույնը—նորագույն կապիտալիզմի եկոնոմիկայում», վոր «Յեվրոպայի համար բավականաչափ ճշգրիտ կերպով կարելի յե սահմանել հին կապիտալիզմը վերջնականապես նորով փոխարինվելու ժամանակը. դա հենց XX դարի սկիզբն է»։

Մոնոպոլիաները փոխարինեցին ցիրուցան և միմյանց մասին վոչինչ չիմացող առանձին կապիտալիստների ազատ մրցակցությունը։

Սակայն նրանք չվերացրին, այլ ավելի ևս ուժեղացրին մրցակցական պայքարը։ Մեկ կամ մի քանի պետությունների մեջ արդյունաբերության առանձին ճյուղերն ընդգրկող մոնոպոլիաները միմյանց դեմ ավելի կատաղի պայքար են մղում վաճառքի շուկաների, հումքի, եժան բանվորական ուժի, հողի ընդերքի, գաղութների համար։ Մոնոպոլիաները միավորումների ներսում էլ չեն վոչնչացնում կապիտալիստների պայքարը։ Տրեստների ներսում մրցումը տեղի յե ունենում վորպես պայքար ազդեցության համար, «վերահսկիչ ծրարի», այսինքն ավելի մեծ քանակությամբ բաժնետոմսեր (փայեր) ձեռք բերելու համար, վորով մի կապիտալիստ ջանում ե իր ձեռքը հավաքել տրեստի կամ սինդիկատի ղեկավարությունը։

Հզոր մոնոպոլիաների միջև և այդ մոնոպոլիաների իրենց իսկ ներսում տեղի ունեցող մրցումը, ինչպես և տրեստների պայքարը «վայրի», այսինքն մոնոպոլիաների մեջ չմտնող ֆիրմաների (ձեռնարկությունների) դեմ, տանում ե դեպի արտադրության ավելի մեծ անարխիա, դեպի կապիտալիզմի հակասությունների ավելի խստացում, դեպի ավելի խորը և տևական ճգնաժամեր։

Մոնոպոլիաները կապիտալիզմի նոր փուլի (աստիճանի)—իմպերիալիզմի հիմնական հատկանիշն են։ «Իմպերիալիզմը կապիտալիզմի մոնոպոլիստական աստիճանն ե»,—ասել ե Լենինը։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Մոնոպոլիաների գործունեությունը բավականաչափ պարզ չի լինի, յեթե մենք կանգ չառնենք բանկերի նոր դերի վրա։

Բանկերն առաջացել են վորպես միջնորդ կազմակերպություններ, կապիտալիստական ֆիրմաների դրամական հաշվարկների շնորհիվ։ Յերբ ֆիրման պետք ե մի ուրիշ ընկերության վճարի մեծ գումարներ, իսկ այդ բոպեյին ինքը կանխիկ դրամ չունի, նա ստիպված ե լինում փոխ վերցնելու մի վորևե տեղից։ Բանկը հենց այն տեղն ե, վորտեղից կարելի յե դրամ փոխ առնել։ Իհարկե, բանկը վարկը բաց ե թողնում միայն լավ տոկոսներ վերցնելով։ Բայց չե՞ վոր կապիտալիստը կամ ընկերությունը, յերբ փողը գցում են բանկը, նույնպես տոկոս են ստանում այդ կապիտալից։ Կապիտալիստը բանկի կարիքն զգում ե և՛ այն ժամանակ, յերբ նրա կանխիկ դրամը պակասում ե, և՛ այն ժամանակ, յերբ նրա մոտ ավելցուկ փող կա։

Յերբ նրա փողը քիչ ե, բանկն ոգնում ե վարկով։ Բայց յերբեմն պատահում ե, վոր գործարանատերը կամ տրեստը հանկարծ շատ փող ե ստանում, իսկ այդպիսին միանգամից շրջանառության մեջ դնելու հնարավորություն չկա—կամ նրա արտադրությունը սեզոնային ե և տվյալ ժամանակ աշխատանք չկա, կամ հումք առնելու ժամանակը չե, կամ գործարանատերն իր պլանը փոխել ե, ժամանակավորապես հետաձգելով նոր ձեռնարկությունների կառուցումը։ Իսկ փողն անշարժ պահելը, յերբ նա յեկամուտ չի բերում, կապիտալիստի սովորությունից դուրս ե, ձեռնտու չե։ Կապիտալիստը փողը գցում ե բանկը, վորպեսզի առայժմ նա տոկոսներ բերի։ Բանկի համար դա ձեռնտու յե։ Նա ավանդատուներից փողը հավաքում ե ավելի ցածր տոկոսով, իսկ կապիտալիստներին փողը փոխ ե տալիս ավելի բարձր տոկոսով։ Ավելցուկ ունեցող կապիտալիստից ստացած փողը նա տալիս ե մի ուրիշ կապիտալիստի, վորը տվյալ դեպքում վարկի կարիք ունի։ Այդ գործառնությունը բանկի համար շահավետ ե։ Բանկը գործադրում ե ամեն ջանք, վորպեսզի ավանդներ հավաքի վոչ միայն կապիտալիստներից, այլև մանր սեփականատերերից, ծառայողներից, ուսուցիչներից, տեխնիկներից, գյուղացիներից, բանվորներից, և այդպիսով միջոցներ հավաքելով, այդպիսիները տրամադրում ե կապիտալիստներին։ Վորքան ավելի մեծ ե բանկի շրջանառու կապիտալը, այնքան ավելի լայն կարող ե ծավալել նա իր գործունեությունը։ Սակայն փողը փոխ տալով, բանկն ուզում ե վստահ լինել, վոր վարկ ստացող ձեռնարկությունն իվիճակի կլինի ժամանակին վճարելու իր պարտքը։ Այդ պատճառով էլ բանկն սկսում ե միջամտել ձեռնարկության գործերին, վերահսկողության յենթարկել նրա գործունեությունը։ Յեթե այդ ձեռնարկությունը (ֆիրման) բաժնետիրական ե (փայատիրական), բանկը ձեռք ե բերում նրա բաժնետոմսերը և այդպիսով ազդում ե նրա գործունեության վրա արդեն ձեռնարկության իր իսկ ներսում, իր ներկայացուցիչներին մտցնելով նրա վարչության մեջ և այլն։

Մյուս կողմից էլ ավանդատու-ֆիրմաները մտահոգված հետևվում են բանկի գործերի վիճակին, վորովհետև յեթե բանկը ժամանակին իրենց վարկ չտա կամ սնանկանա, ապա կկորչեն իրենց մուծած կապիտալները, իսկ դա կարող ե կրախ առաջացնել ձեռնարկություններում։ Ուստի արդյունաբերական ձեռնարկություններն էլ իրենց հերթին ջանում են ազդել բանկի գործերի վրա։ Նրանք էլ իրենց մարդկանցն են անցկացնում բանկերի ղեկավար որգանների կազմի մեջ։ Ֆիրմաները դրանում շահագրգռված են վոչ միայն նրա համար, վոր պահպանեն իրենց ավանդները, այլև նրա համար, վոր վարկի կարիք ունենալու դեպքում մերժում չստանան։

Բանկերի մրցումը տանում ե դեպի բանկային հզոր միավորումների զարգացում, դեպի բանկային գործի համակենտրոնացում։ Այստեղ ևս տեղի յե ունենում այն, ինչ վոր արդյունաբերության մեջ։ Բանկային միավորումները դառնում են ամենակարող մոնոպոլիստներ, սկսում են տնորինել մեծ ու փոքր ձեռնարկությունների գրեթե ամբողջ դրամական կապիտալը, արտադրության բոլոր միջոցները և հումքի աղբյուրները։ Նրանք իշխում են յերկրի, իսկ յերբեմն էլ միջա-

նի յերկրների ամբողջ արդյունաբերության վրա, ամբողջ տնտեսության վրա։ Կապիտալիստների միևնույն խմբակները տիրում են և՛ արդյունաբերական ձեռնարկություններին, և՛ բանկերին, և՛ տրանսպորտին։ Տեղի յե ունենում, ինչպես Լենինն է ասում, «...բանկերի անձնական ունիա[1]) խոշորագույն արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների հետ»։

Այդպիսով կատարվում է արդյունաբերական և բանկային կապիտալի միաձուլում, միացում։

«Արտադրության համակենտրոնացում. դրանից բղխող մոնոպոլիաներ, բանկերի միացում կամ միաձուլում արդյունաբերության հետ — ահա ֆինանսական կապիտալի ծագման պատմությունը...», — գրում է Լենինը։

Հենց այդ է ֆինանսական կապիտալի եյությունը։ Իմպերիալիզմը ֆինանսական կապիտալի տիրապետության ժամանակաշրջանն է։

## ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ, ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՎԵՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Ֆինանսական կապիտալի աճման հետ խիստ աճում է խոշոր կապիտալիստական պետությունների պահանջը վաճառքի և հումքի նոր շուկաների նկատմամբ։ Մինչև XIX դարի վերջը մեկ յերկրի կապիտալիստները կարող եյին իրենց ապրանքներն արտահանել հետամնաց յերկրները, այնտեղ չհանդիպելով ուրիշ յերկրների կապիտալի։ Անգլիան, վորն ամենից առաջ դարձավ արդյունաբերական կապիտալիզմի յերկիր, ուներ հումքի կարիք և իր ապրանքները վաճառահանելու հնարավորության պահանջ։ Լայնատարած առևտուր անելով, նա արտահանում եր զանազան ֆաբրիկատներ (տեքստիլ, յերկաթեղեն և այլն), իրեն անվանում եր և իրոք հանդիսանում «աշխարհի ֆաբրիկան»։ Նա հնարավորություն ուներ առևտուր անելու Ասիայում, Ամերիկայում և Աֆրիկայում, գրեթե չհանդիպելով մրցակիցների։ Հետագայում կապիտալիզմի աճումն ուրիշ յերկրներում, և վերջիններիս կողմից մի շարք հետամնաց յերկրների գրավումը դժվարացրին անգլիական ապրանքների անարգել շարժումը դեպի աշխարհի բոլոր շուկաները։ Գերմանական, ֆրանսիական և ուրիշ կապիտալիստներ նույնպես սկսեցին դուրս գալ համաշխարհային շուկաները։ Մաքսերի միջոցով անջրպետվելով օտարերկրյա մրցումից, այդ յերկրները՝ շնորհիվ նրան, վոր կապիտալիստները գազանաբար շահագործում են բանվորներին, կարողացան դիզել մեծ կապիտալներ։ Մասսաների աղքատացումն անհնարին եր դարձնում այդ կապիտալների օգտագործումը ապրանքների արտադրության և վաճառքի համար՝ յերկրի

1) Ունիա նշանակում է ղեկավարության միացումը մեկի ձեռքում։



ներսում։ Այդպիսով առաջացավ կապիտալների ավելցուկ, վորը և այդ յերկրների կապիտալիստներն սկսեցին արտահանել դեպի գաղութային ու կիսագաղութային յերկրները՝ այնտեղ ձեռնարկություններ կազմակերպելու, յերկաթուղիներ կառուցելու համար և այլն։ Հետևաբար ֆինանսական կապիտալի առաջացման հետ բնորոշ է դառնում կապիտալների արտահանումը հսկայական չափերով։

Իհարկե, կապիտալներն ամենից առաջ հոսեցին դեպի հետամնաց յերկրները, վորովհետև այդտեղ կարելի յե ավելի մեծ շահույթ ստանալ. այդ յերկրներում կապիտալներ քիչ կան, հողն եժան է, բանվորական ձեռքերն ու հումքը կարելի յե ձեռք բերել շատ չնչին գներով և այլն։ XX դարի սկզբից կապիտալի արտահանումն ընդունում է շատ լայն չափեր. վորպես կանոն նրա հետ առընթեր կատարվում է այն յերկրի լիակատար կամ մասնակի գրավումը, ուր խոշոր կապիտալիստական պետությունն արտահանում է իր կապիտալը։ Ուստի զանազան յերկրներ նվաճելու և այդտեղ արտահանված կապիտալները պաշտպանելու համար ֆինանսական կապիտալի յերկրներն ստեղծում են ահագին բանակներ։ Այդ յերկրներում շարունակ աճում են սպառազինումները, կամ, ինչպես ասում են, աճում է միլիտարիզմը։

Ճանապարհին գտնվող բեռները պաշտպանելու և նոր նավահանգիստներ գրավելու համար կապիտալի յերկրները կառուցում են զրահակիրներ, հածանավեր, սուզանավեր, ականակիրներ և այլն — աճում են ծովային սպառազինումները, կամ, ինչպես ասում են, մարինիզմը։

Մինչեվ 1900 թ. ամբողջ աշխարհն արդեն բաժանված եր մեծագույն կապիտալիստական յերկրների միջեվ յեվ հետագայում խոսք կարող եր լինել միայն աշխարհի նոր վերաբաժանման մասին։

Լենինը 1915 թ. աշխարհի այդ բաժանման մասին գրում է հետևյալը՝

«...կապիտալիստական յերկրների քաղաքականությունն ավարտեց չգրավված հողերի գրավումը մեր մոլորակում։ Աշխարհն առաջին անգամ արդեն բաժանված եր, այնպես վոր հետագայում կարող են լինել միայն վերաբաժանումներ, այսինքն անցում մեկ «տիրողից» մյուսին, և վոչ թե անտերունչ վիճակից «տիրոջը»։

Իսկ զորեղ կապիտալիստական յերկրների կողմից գրավված կապիտալիստական աշխարհի վերաբաժանումը հնարավոր է միայն պատերազմի միջոցով։ Այդ նշանակում է, վոր ֆինանսական կապիտալի տիրապետությունն անխուսափելիորեն կապված է իմպերիալիստական պատերազմների առաջացման հետ։ 1914 — 1918 թ. թ. համաշխարհային պատերազմը հենց այնպիսի պատերազմ եր, վոր մղվեց աշխարհի վերաբաժանման համար։

# ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՆԵԽՎՈՂ, ՄԵՌՆՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆ Է

*Այսպես ուրեմն կապիտալիզմի զարգացումը XX դարի սկզբում տարավ* դեպի արտադրության ու կապիտալների ուժեղացված համակենտրոնացում, դեպի հզոր մոնոպոլիաների լայն զարգացումն, դեպի բանկային յեվ արդյունաբերական կապիտալի միաձուլումը, դեպի ֆինանսական կապիտալի յեվ ֆինանսական օլիգարխիայի ծագումը, այսինքն դեպի մի բուռ ֆինանսիստների տիրապետությունը, դեպի կապիտալների արտահանումն այլ յերկրներ, դեպի աշխարհի բաժանումը կապիտալիստների մոնոպոլիստական խոշորագույն միությունների միջեվ, դեպի ամբողջ յերկրագնդի բաժանումը կապիտալիստական խոշորագույն պետությունների միջեվ, դեպի աշխարհի նոր վերաբաժանման համար մղվող պայքար, դեպի պատերազմները:

*Ահա կապիտալիզմի այս նոր աստիճանն էլ (XIX դարի վերջը, XX-ի սկիզբը) կոչվում է կապիտալիզմի* իմպերիալիստական *աստիճան,* իմպերիալիզմ:

*Լենինը հետևյալն է ասել իմպերիալիզմի մասին.*

«Իմպերիալիզմը կապիտալիզմն է զարգացման այն աստիճանի, յերբ ձեվավորվեց մոնոպոլիաների յեվ ֆինանսական կապիտալի տիրապետությունը, խոշոր նշանակություն ձեռք բերեց կապիտալի արտահանումը, սկսվեց աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից յեվ ավարտվեց յերկրագնդի ամբողջ տերիտորիայի բաժանումը կապիտալիստական խոշորագույն յերկրների կողմից»:

*Այդ աստիճանին կապիտալիստական վորոշ յերկրներ իրենց զարգացմամբ մյուսներից առաջ են ընկնում,—իմպերիալիստական յերկրները առանձնապես անհամաչափ են զարգանում: Այդ անհամաչափությունն անխուսափելիորեն տանում է դեպի պատերազմական ընդհարումներ իմպերիալիստական յերկրների միջև, դեպի պատերազմական պայքարը արդեն բաժանված աշխարհի նոր բաժանման համար:* Լենինն իմպերիալիզմն անվանել է կապիտալիզմի վերջին աստիճան, նեխվող կապիտալիզմ:

*Ինչպես տեսանք, մինչիմպերիալիստական ժամանակ ազատ մրցումը տեխնիկական զարգացման (առաջադիմության) հրողն էր, շարժիչը: Մոնոպոլիաները հնարավորություն են տալիս ձեռնարկատերերին համաձայնության գալու, գները սահմանելու այնպես, վոր ավելի շահույթ ստանան, չմտցնելով նոր մեքենաներ և չգնելով նոր գյուտեր: Տրեստները հաճախ գնում են գյուտերի գծագրերը, վորպեսզի պահեն, թաքցնեն ու թույլ չտան նրանց վերածվելու մեքենաների, սարքավորման, գործիքների, վորպեսզի գյուտերը տված չլինեն ուրիշ տրեստի ձեռքը ու այդպիսով հարված չհասցնեն բարձր գներին: Հետևաբար մոնոպոլիաներն առաջ են բերում լճացում, նեխում, տեխնիկայի և տնտեսության աճման արհեստական (դիտավորյալ) կասեցում:*



*Իմպերիալիզմի մասին գրքում, վոր գրված է 1916 թ., Լենինն այսպիսի դեպք է պատմում.*

*«Ամերիկայում մի վոմն Ոուենս հնարել է շշամեքենա, վոր հեղափոխություն է կատարում շշերի պատրաստման գործում: Շշի ֆաբրիկատերերի գերմանական կարտելը գնում է Ոուենսի գյուտի արտոնագրերը և պահում, կասեցնում նրանց կիրառումը»:*

*Քիմիական համաշխարհային կոնցերնի տեր լորդ Մելչետը 1931—1933 թվականներին հանդես եր գալիս ճառերով ու հոդվածներով, վորոնց մեջ կոչ եր անում արգելելու ամեն մի գյուտ: Անգլիական յեկեղեցիներում տերտերներն աղոթքներ են արտասանում ամեն մի նորամուծություն, գյուտ, հայտնագործություն և այլն դադարեցնելու ոգտին:*

*Մյուս կողմից, գաղութների թալանը նպաստում է ահագին կապիտալների կուտակմանը իմպերիալիստական յերկրներում:*

*Այդ կապիտալներին պետք է ինչ-վոր կիրառում տալ, ըստ հնարավորության ավելի ձեռնտու կերպով ոգտագործել: Կապիտալի շահավետ գործադրման ձևերից մեկը հանդիսանում է զանազան փոխառությունների, պարտատոմսերի, բաժնետոմսերի գնումը: Դա ստեղծում է այն մարդկանց դասակարգը, վորոնք վոչինչ չեն անում և ապրում են իրենց արժեթղթերից ստացվող յեկամուտներով:*

*Ամբողջ բուրժուազիայի համար բնորոշ են պարապությունը, անգործարարությունը, ծուլությունն ու ապականությունը: Միլիոնատերերը շատ հաճախ նույնիսկ չգիտեն, թե վորտեղ են գտնվում իրենց ձեռնարկությունները, ինչ են արտադրում իրենց գործարանները, ինչ սարքավորում ունեն ձեռնարկությունները: Բոլոր փողային գործերն ու ամբողջ արտադրությունը վարում են դրա համար հատկապես վարձված դիրեկտորները, կառավարիչները, ինժեներները, հաշվապահները, իսկ տերերը միայն իրենց շահույթներն են ստանում ու փողը ծախսում քեֆերի, ազարտ խաղերի, շռայլության ու անգործության մեջ ընթացող կյանքի վրա:*

*Այսպիսով բուրժուազիան անձնական հաճույքների վրա յե վատնում այն հարստությունները, վոր նրա համար ձեռք են բերվում միլիոնավոր վարձու գործավորների աշխատանքով: Բուրժուազիայի կողմից ստեղծվող լճացումը տեխնիկայի զարգացման մեջ, քայքայումն և մակաբուծությունը—ահա արդի կապիտալիզմի վառ փաստերը: Հետևաբար XX դարի կապիտալիստական կարգը վարակված է նեխվածությամբ:*

*Ահա թե ինչու յե իմպերիալիզմը* նեխվող *կապիտալիզմ:*

# ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ

Իմպերիալիզմի շրջանում առանձնապես սրվում են կապիտալիզմի բոլոր հակասությունները։ Առանձնապես լարված են դառնում դասակարգային հակասությունները՝ պայքարը բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև։ Դասակարգային պայքարի այդ սրումն անխուսափելիորեն տանում է դեպի պրոլետարական մասսաների հեղափոխական ապստամբությունը, դեպի սոցիալիստական հեղափոխություն։ Լենինը իմպերիալիզմն անվանել է պրոլետարական հեղափոխության նախօրյակը։

Խոշոր արդյունաբերության աճումը, արտադրության համակենտրոնացումը, ինչպես տեսանք, տալիս են այն արդյունքը, որ բանվոր դասակարգն ահագին զանգվածներով կենտրոնանում է ձեռնարկությունների մեջ։ Դա հող է ստեղծում նրա միավորման, կազմակերպման համար, միահամուռ կազմակերպված պայքարի համար՝ ընդդեմ շահագործողների։ Իր ավելի ակտիվ և դասակարգայնորեն գիտակից մասի ազդեցության և ղեկավարության տակ պրոլետարիատն ստեղծում է իր բանվորական կազմակերպությունները — արհեստակցական միությունները, փոխօգնության գանձարկղները և այլն։ Բանվոր դասակարգի շարքերում աճում է հեղափոխական վճռականությունը։ Լավագույն, առաջավոր, ամենից հեղափոխական և գիտակից բանվորները կազմակերպում են պրոլետարիատի քաղաքական կուսակցությունը— կոմունիստական կուսակցությունը։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգի համար արդեն ավելի հեշտ է դասակարգային մարտեր մղելն ընդդեմ բուրժուազիայի. կուսակցությունն ունի շահագործողների դեմ մղելիք պայքարի իր ծրագիրը, նա գիտե, թե ինչպես պետք է պայքարել առանց ավելորդ զոհերի, գիտե պայքարի և հաղթանակի ուղիներն ու յեղանակները։ Յերբ վոր կոմունիստական կուսակցությունն է գլխավորում բանվոր դասակարգին, պրոլետարիատը գիտե ինչի համար և ինչպես պետք է պայքարի։

Կոմունիստական կուսակցությունները հեղափոխական մարտերի յեն նախապատրաստում մասսաներին և հեղափոխության պայմաններում ղեկավարում են նրանց՝ իշխանություն նվաճելու և պրոլետարական դիկտատուրան իրագործելու համար մղվող պայքարում։

Պրոլետարական դիկտատուրայի համար մղվող պայքարում բանվոր դասակարգն ունի հզոր դաշնակիցներ—աշխատավոր գյուղացիության բազմամիլիոն զանգվածներն իր յերկրում և տասնյակ ու հարյուրավոր միլիոն ճնշված բանվորներ և գյուղացիներ գաղութներում ու կիսագաղութներում, վորոնք հեծում են իմպերիալիստական շահագործման լծի տակ։



Կապիտալիստական կարգի քայքայմանը իմպերիալիզմի դարաշրջանում ուղեկցում է վոչ միայն բանվորների, այլև բոլոր աշխատավոր մասսաների տառապանքների, զրկանքների, կարիքի ու թշվառության աճումը։ Այդ քայքայումը խորացնում է դասակարգային հակասությունները բոլոր շահագործող և շահագործվող զանգվածների միջև—գյուղացիների և հողատերերի միջև, գաղութների աշխատավոր զանգվածների և իրենց տեղական ու ոտարերկրյա իմպերիալիստական բուրժուազիայի միջև և այլն։

Ուստի բանվոր դասակարգը կապիտալիզմի դեմ ուղղված հեղափոխական պայքարի ուղին է քաշում և՛ գյուղացիությունը, և՛ ճնշված ու կախյալ ժողովուրդների աշխատավոր զանգվածներին։

Այդ պայքարի մեջ ղեկավար ուժ կամ, ինչպես ընդունված է ասել, հեգեմոն հանդիսանում է բանվոր դասակարգը։ Կարող են հարցնել. ինչու՞ հենց նա, պրոլետարիատն է հանդիսանում հեգեմոն, առաջատար ջոկատը շահագործողների դեմ մղվող պայքարում, սոցիալիզմի և կոմունիզմի համար մղվող պայքարում։ Ինչու՞ վոչ գյուղացիությունը, վոչ տնայնագործները կամ քաղաքային արհեստավորները։

Մի կուսակցություն կար Ռուսաստանում, վոր իրեն բարձրաձայն կերպով անվանում եր սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություն (եսերներ)—իրոք կուլակային կուսակցություն,—վորն այդպես էլ դնում եր հարցը՝ թե հեղափոխության մեջ առաջատար ուժ հանդիսանում է գյուղացիությունը։ Բայց չէ՞ վոր յերբ այդ կուսակցությունը 1917 թ. Կերենսկու գլխավորությամբ իշխանության ղեկը վերցրեց, նա ուժ չունեցավ վարելու վորևէ ինքնուրույն «գյուղացիական» քաղաքականություն, այլ վարում եր խոշոր բուրժուազիայի քաղաքականություն։ Ինչու՞ տեղի ունեցավ այդ։ Այն պատճառով, վոր կապիտալիստական հասարակության պայմաններում պայքար տեղի ունի յերկու գլխավոր, միմյանց դեմ գնացող դասակարգերի՝ պրոլետարիատի և խոշոր բուրժուազիայի միջև։ Բոլոր մյուս, այսպես կոչված՝ միջին խավերը պայքարում են կողմնակցելով կամ բանվոր դասակարգին, կամ բուրժուազիային։

Խելամուտ լինենք, թե ինչն է կազմում պրոլետարիատի հիմնական տարբերությունը մյուս դասակարգերից։ Նա վարձու գործավորների դասակարգ է, նա չունի սեփականություն, նա զուրկ է արտադրության գործիքներից, նա վոչինչ չունի, բացի իր աշխատուժից։ Բանվոր դասակարգը մեծ զանգվածներով կենտրոնացված է գործարաններում և ֆաբրիկաներում։ Արտադրությունն ինքն է բանվորների մասսաներին վարժեցնում կարգապահության, կազմակերպվածության։ Դրա շնորհիվ բանվոր դասակարգն ավելի յե ընդունակ կազմակերպելու իր շարքերը բուրժուազիայի և նրա իշխանության դեմ կռվելու համար, քան թե գյուղացիությունը կամ

այլ խավերը։ Բանվոր դասակարգն այն պատճառով է պայքարում բուրժուազիայի տիրապետությունը վոչնչացնելու համար, վոր նա ի վիճակի չէ բուրժուազիայի շահագործումից ազատվելու այլ կերպ, քան միմիայն մինչև վերջը վոչնչացնելով բուրժուազիայի տիրապետությունն ու կապիտալիզմի կարգն իսկ։

Իսկ գյուղացիությունը, արհեստավորները, տնայնագործները, յեթե պայքարում էլ են կապիտալիստական հասարակության մեջ բուրժուազիայի դեմ, ապա սոսկ նրա համար, վոր պաշտպանեն իրենց տնտեսությունը, իրենց սեփականությունը նրանց վրա գրոհող, նրանց ավերող խոշոր կապիտալից։

> «Միջին խավերը—մանր արդյունաբերողը, մանր առևտրականը, արհեստավորը, գյուղացին,—նրանք բոլորը պայքարում են բուրժուազիայի դեմ, վորպեսզի կորստից փրկեն իրենց գոյությունը, վորպես միջին դասի»,—ասել են Մարքսն ու Ենգելսը «Կոմունիստական մանիֆեստում»։

Այդ խավերը փոշիացած են, ներկայացնում են բազմաթիվ մանրտնտեսություններ, վորոնք միմյանց վերաբերմամբ գտնվում են մրցության վիճակում։ Յուրաքանչյուրի հոգսն իր անձնական տնտեսության մասին նպաստում է վոչ թե այդ խավերի կազմակերպմանը, այլ ապամիավորմանը։ Յեվ բուրժուազիայի դեմ ընդհանուր պայքար մղելու համար նրանց ամենից լավ կազմակերպել կարող է միայն բանվոր դասակարգը, վոր միակ մինչև վերջը շահագրգռված դասակարգն է առհասարակ ամեն մի հարստահարության վոչնչացման, այդ թվում և այն հարստահարության վոչնչացման նկատմամբ, վորին խոշոր կապիտալն է յենթարկում գյուղացիությունն ու աշխատավորների այլ խավերը։ Ուստի և բանվոր դասակարգը հանդիսանում է ամենահեղափոխական դասակարգը։ Նա չի կառչում մասնավոր սեփականությունից, նա չունի այն։ Պրոլետարները, ինչպես Մարքսն ու Ենգելսն էյին ասում, «վոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շղթաներից։ Իսկ ձեռք կբերեն նրանք մի ամբողջ աշխարհ»։ «Ներկայումս բուրժուազիային հակադրված բոլոր դասակարգերից միայն պրոլետարիատն է հանդիսանում իրոք հեղափոխական դասակարգ»,—ասել են Մարքսն ու Ենգելսը։

Բուրժուական կարգի տապալման համար պայքարելով, բանվոր դասակարգը պայքարում է վոչ միայն իր դասակարգային շահերի համար, պայքարում է մարդկային ամբողջ հասարակության ընդհանուր վերակառուցման համար, նա պայքարում է կոմունիստական հասարակության կառուցման համար, վորպիսի հասարակության մեջ չեն լինի վոչ աղքատներ, վոչ հարուստներ, վոչ ճնշվածներ, վոչ ճնշողներ, վոչ շահագործվողներ, վոչ շահագործողներ։ Այդ հասարակության ստեղծման մեջ շահագրգռված են բոլոր աշխատավորական և շահագործվող մասսաները։ Գլխավորելով այդ մասսաների հեղափոխական շարժումը, բանվոր դասակարգը տանում է նրանց կապիտալիստական տաժանքը վոչնչացնելու ուղիով, պրոլետարական հեղափոխության, բանվոր դասակարգի դիկտատուրայի նվաճման յեվ սոցիալիզմի կառուցման ուղիով։



Այսպիսով կապիտալիստական հասարակության մեջ տիրապետող դասակարգը—բուրժուազիան, ինչպես Մարքսն ու Ենգելսն են ասում,—

«... արտադրում է նախ և առաջ իր սեփական գերեզմանափորներին։ Նրա կործանումն ու պրոլետարիատի հաղթանակը միատեսակ անխուսափելի յեն»։

> «Կապիտալիզմի փլուզումն անխուսափելի յե,—ասում էր Լենինը։—Ամենուրեք աճում է մասսաների հեղափոխական գիտակցությունը։ Այդ մասին խոսում են հազարավոր նշաններ...
>
> Կապիտալիստները, բուրժուազիան իրենց համար «լավագույն» դեպքում կարող են այս կամ այն առանձին յերկրում ժամանակավորապես կասեցնել սոցիալիզմի հաղթանակը ելի հարյուր հազարավոր բանվորների և գյուղացիների վոչնչացման գնով։ Բայց նրանք չեն կարող փրկել կապիտալիզմը»։

Այժմյան համաշխարհային ճգնաժամը կապիտալիզմի մահամերձ ջղաձգություններից մեկն է հանդիսանում։ Բայց պետք է նկատի ունենալ, վոր կապիտալիզմը դեռևս դիմադրության մեծ միջոցներ ունի։ Նրա տրամադրության տակ է դարերով ստեղծված պետական հզոր ապարատը։ Կապիտալիզմը դեռևս ի վիճակի յե ֆաշիստական դիկտատուրայի միջոցով առաջ խաղալ բանվոր դասակարգի և նրա կազմակերպությունների դեմ։ Կապիտալիզմը դեռևս հենվում է իր գործակալների—սոցիալ-դավաճանական կուսակցությունների վրա, վորոնք իրենց անվանում են բանվորական, սոցիալ-դեմոկրատական, սոցիալիստական և այլն, իսկ իրոք հանդիսանում են կապիտալիզմի փրկության կուսակցություններ։

Յեկեղեցին իր հզոր ապարատով, մամուլը, բուրժուական դպրոցը, գրքերը, թատրոնը, կինոն նույնպես հզոր գործիքներ են կապիտալի ձեռքում։

Միայն բուրժուական պետական մեքենան ջարդելով և բուրժուազիայի իշխանությունը վոչնչացնելով, միայն կոմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ պրոլետարական դիկտատուրա հաստատելու համար մղվող դասակարգային համառ պայքարում է ի վիճակի համաշխարհային պրոլետարիատը հասնելու իր ազատագրմանը կապիտալիզմի լծից։

# 2. ԻՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԱՅԺՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԸ

1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմը ցնցեց համաշխարհային կապիտալիզմի ամբողջ սիստեմը և սկիզբը դրեց նրա ընդհանուր ճգնաժամի, այսինքն կապիտալիստական ամբողջ սիստեմի ճգնաժամի շրջանին։

Ինչումն է արտահայտվում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը։ Ընդհանուր ճգնաժամի առաջին ցուցանիշը՝ դա առաջ միասնական յեղած համաշխարհային կապիտալիստական տնտեսության պառակտումն է տնտեսության յերկու հակադիր սիստեմների — սոցիալիստականի, վորը հաջողությամբ զարգանում է, և կապիտալիստականի, վոր ապրում է անկում, տնտեսական ամենադաժան ճգնաժամ։ Յերկրագնդի վեցերորդ մասի անջատվելը կապիտալիզմից, այդ յերկու սիստեմների հակադրությունն ու պայքարը ամենից վառ արտահայտությունն է կապիտալիզմի ճգնաժամի։ Սոցիալիզմի աճումն ու հաջող շինարարությունը ԽՍՀՄ բարձրացնում է միջազգային պրոլետարիատի և գաղութային ժողովուրդների հեղափոխական վոգին, ակտիվությունն ու ցույց է տալիս նրանց կապիտալիզմի լծից ազատվելու ուղին։

Յերկրորդ ցուցանիշը՝ դա բանվոր դասակարգի յեվ բուրժուազիայի միջեվ յեղած հակասությունների սրումն է իմպերիալիստական յերկրներում։ Պատերազմն ու հետպատերազմյան շրջանը ահագին չափով իջեցրին բանվոր դասակարգի կենսական մակարդակը։ Գրեթե բոլոր յերկրներում կապիտալիստներն անցկացրին ռացիոնալացում (կազմակերպական և տեխնիկական բարելավումներ, վորոնք թույլ են տալիս արտադրել ավելի մեծ քանակությամբ արդյունքներ բանվորների պակաս քանակով)։ Այդ ռացիոնալացման պատճառով անհավատալի չափով բարձրացավ բանվոր դասակարգի շահագործումը, վորպես աշխատանքի ինտենսիվության հրեշավոր բարձրացման հետևանք։ Փողոց նետվեցին բանվոր դասակարգի մեծ ջոկատներ։ Գոյացավ արդեն վոչ թե աշխատանքի պահեստի բանակ, այլ գործազուրկների մշտական բանակ, վորն արդեն բոլորովին չի վերադառնում ֆաբրիկաներն ու գործարանները։ Այդ մշտական գործազրկության տոկոսը տատանվում է աշխատողների թվի համեմատությամբ Ամերիկայում, Գերմանիայում, Անգլիայում 8-ից մինչև 20, իսկ ներկայումս հասել է 30—50-ի։ Այս գործազուրկ բանակի առկայությունը կապիտալիստներին հնարավորություն է տալիս հարձակվելու աշխատող բանվորների աշխատավարձի վրա, կրճատելու այն, վատթարացնելու բանվորների աշխատանքի պայմանները։



Այսպիսով կապիտալիստական սիստեմն արդեն վարձու աշխատանք չի ապահովում ամբողջ պրոլետարիատի մեկ յերրորդի համար։

Դասակարգային հակասությունները գնալով սրվում են։

Մասսաներն ավելի ու ավելի յեն համոզվում կապիտալիստական սիստեմի անճարակությանը, և դա հեղափոխականացնում է բանվորներին (ուժեղացնում նրանց հեղափոխական ակտիվությունը)։ Կապիտալիստական հասարակության այդ հակասությունը լուծվել կարող է միմիայն իր իսկ կապիտալիստական սիստեմի վերացումով։

Յերրորդ ցուցանիշը՝ դա գաղութների յեվ իմպերիալիստական յերկրների միջեվ յեղած հակասությունների սրումն է։ 1920 թ. Լենինն ասում եր, վոր իմպերիալիստական պատերազմից հետո —

> «...մասսաների կարիքը, աղքատացումը աճեցին անլուր կերպով, ու նախ և առաջ 1 1/4 միլիարդ մարդկանց, այսինքն յերկրագնդի ամբողջ բնակչության 70 %-ի նկատմամբ։ Դա գաղութային, կախյալ յերկրներն են՝ որենքով իրավազուրկ բնակչությամբ, այն յերկրները, վորոնց վերաբերմամբ մանդատ է տված «ֆինանսական ավազակներին»։

Պատերազմի ժամանակ և պատերազմից հետո այդ յերկրներում ծագեց իրենց արդյունաբերությունն ու գոյացան իրենց բանվոր դասակարգն ու իրենց բուրժուազիան։ Բազմամիլիոն գյուղացիության քայքայումն ուժեղացավ։ Գաղութային յերկրների բանվոր դասակարգն ու գյուղացիությունը պրոլետարիատի ղեկավարությամբ ձգտում են ազատագրվել իմպերիալիզմի լծից ու իրենց բուրժուազիայի ճնշումից։

Հասկանալի յե, վոր գաղութային-հեղափոխական շարժումները նույնպես վառ ցուցանիշ են հանդիսանում կապիտալիստական ամբողջ սիստեմի ճգնաժամի։

Չորրորդ ցուցանիշը՝ դա այն հակասությունների սրումն է, վոր կան 1914—1918 թվականների պատերազմում պարտություն կրած իմպերիալիստական յերկրների (Գերմանիա, Ավստրիա և այլն) ու հաղթանակ տարած յերկրների միջեվ (Ֆրանսիա, Անգլիա, ՀԱՄՆ և այլն)։

1920 թ. Լենինն ասում եր, վոր 1914—1918 թվականների պատերազմը չափազանց հետ մղեց հաղթված յերկրները (Գերմանիային, Ավստրո-Հունգարիային, Բուլգարիային), նրանց դրեց գրեթե լիակատար կախման վիճակի մեջ հաղթող յերկրների վերաբերմամբ։

> «Պատերազմը Վերսալի դաշնագրի միջոցով նրանց վզին փաթաթեց այնպիսի պայմաններ, վոր առաջավոր ժողովուրդները գաղութային կախման, թշվառության, սովի, ավերմունքի և իրավազրկության վիճակի մեջ ընկան, վորովհետև նրանք շատ սերունդներով կապված են դաշնագրով և դրված այնպիսի պայմանների մեջ, վորոնցում չի ապրել վոչ մի քաղաքակիրթ ժողովուրդ»։

Հասկանալի յե, վոր հաղթված յերկրները չեն հաշտվում այդ դրության հետ։ Հաղթված յերկրների կապիտալիստները պատրաստվում են ուժով խլելու իրենց վզին փաթաթած՝ Վերսալի դաշնագիրը։ Իսկ այդ յերկրների պրոլետարիատը չի կարող հաշտվել կրկնակի ճնշման հետ՝ և՛ իր բուրժուազիայի, և՛ հաղթանակած յերկրների բուրժուազիայի։ Այդ հակասությունների ուժեղացումն անխուսափելիորեն տանում ե դեպի իմպերիալիստական նոր պատերազմ և դեպի պրոլետարական հեղափոխություն։

Վերջապես կապիտալիզմի ճգնաժամի հինգերորդ նշանը՝ դա այն հակասությունների ուժեղացումն ե, վորոնք գոյություն ունեն պատերազմից հաղթող դուրս յեկած իմպերիալիստական յերկրների միջեվ:

Իմպերիալիստական պատերազմը չլուծեց համաշխարհային շուկաներում տիրապետության համար պայքարող պետությունների միջև յեղած հակասությունները։ Ընդհակառակը, այդ հակասությունները խորացան։ Այժմ շարունակվում ե ամենասուր պայքարը իմպերիալիստական կարևորագույն պետությունների միջև վաճառահանության շուկաների, հումքի շուկաների, եժան աշխատուժի շուկաների համար։ Համառ ու դաժան պայքար տեղի ունի իմպերիալիստական պատերազմում հաղթանակած պետությունների միջև, և առաջին հերթին պայքար համաշխարհային շուկայում տիրապետելու համար իր նախկին հզորությունը կորցրած Անգլիայի և պատերազմում խիստ հարստացած Ամերիկայի միջև։ Պայքար տեղի ունի Ֆրանսիայի և Իտալիայի միջև, Ֆրանսիայի և Անգլիայի, Ամերիկայի և Ճապոնիայի միջև։

Հետպատերազմյան շրջանի ընթացքում այդ բոլոր հակասությունները շարունակ խորանում եյին։ Այդ հակասությունների լուծմանը հասնել կարելի յե միայն կապիտալիստական ամբողջ սիստեմի վերացման միջոցով։

Արդի (այժմյան) տնտեսական ճգնաժամը առանձնապես խոր ճգնաժամ ե հանդիսանում այն պատճառով, վոր նա տեղի ունի կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիմքի վրա:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՁԱՓԵՐԸ

Այժմ չկա բուրժուական վոչ մի պետություն, վորի մեջ արտադրանքը բարձր լինի նախապատերազմականից։ Կապիտալիստական աշխարհի համար նույնիսկ նախապատերազմական մակարդակը դառնում ե անիրագործելի յերազ։

Յեթե, որինակ, վերցնենք Գերմանիան, ապա նա այժմ ածուխ արդյունահանում ե իր կարողացածի կեսից պակաս, թուջ արտադրում ե մեկ քառորդ և պողպատ—իր արդյունաբերության արտադրունակության մոտ յերրորդ մասի չափով, իսկ մեքենաներ՝ ել ավելի պակաս—ընդամենը 26%։



Վերջին յերեք տարվա ընթացքում մեզանում շինարարական արդյունաբերությունն իր չափերով գրեթե յեռապատկվել ե, և ելի քիչ ե մեզ համար, շարունակ պակասում ե շինարարական նյութերը, իսկ Գերմանիայում մինչև 1932 թվի սկիզբը նույն այդ ժամանակի ընթացքում շինարարական արդյունաբերությունը կրճատվել ե տասն անգամ։

ՀԱՄՆ՝ ամբողջ արդյունաբերությունն աշխատում ե բեռնավորման կեսի չափով։ Թուջի և պողպատի արտադրությունը կրճատվել ե 85%-ով, և մետաղագործական ձեռնարկությունները արտադրում են իրենց կարողացածի մեկ վեցերորդականից պակաս։ Ամերիկայի (Միացյալ Նահանգների) շինարարական արդյունաբերությունը միշտ յեղել ե տնտեսության ամենահզոր ճյուղերից մեկը։ Այժմ նա աշխատում ե ճիշտ այնպես, ինչպես Գերմանիայում, միայն բեռնավորման մեկ տասներորդականի չափով։ Ամերիկայում գրեթե կառուցում չկա. այնտեղ մի կերպ պահպանում են միայն գոյություն ունեցող շենքերը։ Ամերիկան միշտ հռչակված ե յեղել իր ավտոմոբիլային հզոր արդյունաբերությամբ։ ՀԱՄՆ ավտոմոբիլային գործարաններն ընդունակ են տալու ամսական 800 հազար ավտոմոբիլ, իսկ տալիս են 80 հազար, այսինքն տասն անգամ պակաս։ 1933 թվի սկզբին ստիպված եր փակել իր ձեռնարկությունների մեծ մասը նաև ավտոմոբիլային հռչակավոր արքա Ֆորդը, վոր միշտ պարծենում եր, թե ճգնաժամը չի դիպչի նրան։

Անգլիայում արդյունաբերությունն արտադրում ե իր կարողացածի մոտ յերկու յերրորդը։ Նա այժմ թուջ և պողպատ արդյունագործում ե իր արտադրական հզորության կեսից պակաս, իսկ տեքստիլ ապրանքներ՝ միայն մոտ յերկու հինգերորդական։

Թե վորքան շատ ե հետ մղել ներկա ճգնաժամը կապիտալիստական յերկրները, կարելի յե դատել նրանով, վոր արտադրանքի ընդհանուր արդյունագործությամբ Անգլիան կանգնած ե 1898 թվի մակարդակի վրա, Գերմանիան՝ 1900 թվի մակարդակի վրա։ Սա նշանակում ե, վոր այդ յերկրների արդյունաբերության զարգացման մեջ պատմության՝ միքանի տասնամյակ տևողություն ունեցող մի ամբողջ շրջան ե դուրս ընկել։ Ամենից ավելի ճգնաժամը հարվածել ե բուրժուական յերկրների մետաղագործական արդյունաբերությանը, մանավանդ թուջահալման բնագավառում։ Այս տեսակետից Ամերիկան հետ ե մղված մինչ 1902 թ., Գերմանիան՝ մինչ 1891 թ., իսկ Անգլիան՝ մինչ 1860 թվականը։

Ճգնաժամը վոչ միայն արտադրության կրճատում, ֆաբրիկաների և գործարանների փակում ու միլիոնավոր դազգյահների և մեքենա-




*Արդյունաբերական ապրանքների բացթողումը կապիտալիստական յերկրներում 1932 թվականին՝ 1928 թվականի համեմատությամբ (տոկոսներով)։*

ների անգործությունն է առաջացնում, այլև առևտրի կրճատումն։ 1929 թվականի համեմատությամբ ամբողջ համաշխարհային առևտուրը կրճատվել է 60%-ով։ Ամերիկան յերկու տարվա մեջ ապրանքների ներմուծումը կրճատել է 60%-ով և արտահանումը՝ 66%-ով, Անգլիայում ներմուծումն ընկել է 22%-ով, իսկ արտահանումը՝ 47%-ով, Գերմանիայի արտաքին առևտուրն ընկել է ավելի քան կիսով չափ, իսկ Ֆրանսիայինը՝ 56%-ով։

Ճգնաժամին ուղեկցում են անթիվ փլուզումներ. կապիտալիստական մեծագույն ֆիրմաները, բանկերն ու ձեռնարկությունները սնանկանում, կործանվում են, ի վիճակի չլինելով վճարել իրենց պարտքերը։

Ամբողջ աշխարհում հայտնի յեն «Կոդակ» ֆիրմայի լուսանկարչական ապարատները։ Դեռ նորերս Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ավստրիայի, Չեխո-Սլովակիայի, Ճապոնիայի և այլ յերկրների ամեն մի գյուղում կարելի յեր գտնել բոլոր լեզուներով գրված ռեկլամներ, վորոնք գովաբանում եյին «Կոդակ» ֆիրմայի լուսանկարչական ապարատները։ Բուրժուական յերկրներում յուրաքանչյուր դպրոցական գիտե «Կոդակ» ֆիրման։ 1932 թ. այդ ֆիրման սնանկացավ, նրա տեր Իստմենը ինքնասպանություն գործեց։

Ամբողջ աշխարհում հայտնի յեն Կրեյգերի միջազգային կոնցեռնի լուցկիները։ Այդ ֆիրման էլ գլորվեց, փլուզումն կրեց, իսկ կոնցեռնի տերը՝ լուցկու արքա Կրեյգերը ինքնասպանություն գործեց։



Ամբողջ աշխարհում հայտնի յեն Սվիֆտի մսակոմբինատները Չիկագոյում, վորոնք նկարագրված են ամերիկական գրող Սինկլերի հռչակավոր «Ջունգլի» վեպում։ Մսարդյունաբերության մեջ տեխնիկայի համաշխարհային տիպար հանդիսացող այդ «սպանդանոցները» Սվիֆտի համար ստեղծել են մսի արքայի միջազգային անուն։ Սվիֆտը խոշորագույն ձեռնարկություններ ուներ Արգենտինայում և Ավստրալիայում։ Բայց այդ ֆիրման էլ սնանկացավ, իսկ ինքը մսարքա Սվիֆտը յերկնաքերիչի (բազմահարկ ամերիկյան տան) լուսամուտից դուրս նետեց իրեն և ջարդվեց։

Սնանկություններն աճում են ձնակույտի նման։ Անդունդը գլորվող մի բանկը իր հետևից քաշում է տասնյակ ուրիշ բանկեր, վորովհետև մեկ բանկը տասնյակ ուրիշների փայատերն է։

Բացի դրանից բանկի յուրաքանչյուր փլուզում կորստյան է մատնում նրա հետ կապված տասնյակ ֆիրմաներ։ Կապիտալիստական Ամերիկայի համար առանձնապես մռայլ սկսվեց 1933 թվականը։ Ամբողջ յերկրում փողատերերն սկսեցին տենդայնորեն վերցնել իրենց փողը, պահանջելով, վոր իրենց վճարեն վոսկի։ Այդ կապակցությամբ բոլոր 19 հազար բանկերն ստիպված եյին ժամանակավորապես փակվել։ Ավելի քան 5 հազար բանկ դրանից հետո միանգամայն սնանկացան։ Դոլլարը, վոր թվում եր, թե համաշխարհային շուկայում ամենաանսասան փողն եր, անգլիական ստեռլինգի հետևից արագաթափ գլորվեց դեպի ցած։

Կապիտալիզմի ամբողջ պատմության ընթացքում վոչ մի ճգնաժամ չի գիտցել այսպիսի քանակությամբ սնանկացումներ։

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ

Բուրժուական աշխարհում չտեսնված չափերով աճեց գործազրկությունը։ ՀԱՄՆ 1933 թ. կեսին կար 16 միլ. գործազուրկ, այսինքն Ամերիկայի բանվորների ամբողջ թվի կեսն առանց աշխատանքի յեր։ Գործազուրկների բանակը Գերմանիայում կազմում է 8,5 միլ. մարդ։ Գերմանիայում ընդամենը 15 միլ. բանվոր կա (գյուղատնտեսական բանվորների հետ միասին)։ Հետևաբար Գերմանիայի բոլոր բանվորների կեսից ավելին գտնվում է ֆաբրիկաներից և գործարաններից դուրս։ Բոլոր բանվորների քառորդ մասն աշխատում է մասնակի կերպով միայն։ Այսպիսով գերմանական ամբողջ պրոլետարիատի յերեք քառորդը գործազուրկ է։ Անգլիայում 4 միլիոնից ավելի գործազուրկ կա, Ճապոնիայում՝ ավելի քան 3 միլիոն և այլն։

Յեթե հաշվառենք լիակատար կերպով և մասնակիորեն գործա-

գուրկների ամբողջ մասսան աշխարհում, ապա նա կկազմի ավելի քան 40 միլիոն մարդ, իսկ ընտանիքների բոլոր անդամների հետ միասին գործազրկությունից տառապողների ընդհանուր թիվը կազմում է մոտ 200 միլ. մարդ։

Այդ մասսան գրեթե ամբողջովին կենտրոնացված է քաղաքներում— նրանց ծայրամասերում և բանվորական ավաններում ու ապրում է անընդհատ սովահարության ու զրկանքների զարհուրելի պայմաններում, բնակարանային մեծ նեղվածքի մեջ, բնակարանային վարձը չմուծնելու պատճառով դուրս վտարվելու մշտական սպառնալիքի տակ, իսկ շատ հաճախ ապրում է առանց որևէ բնակարանի, բաց յերկնքի տակ։

Այդ ահագին բնակչության ճնշող մասը դատապարտված է մահացման, որովհետև 70 բուրժուական յերկրներից միայն 9-ն են փողային որոշ օգնություն ցույց տալիս գործազուրկներին։

Կապիտալիստական յերկրներում քաղաքների փողոցները լի յեն մուրացկաններով։

Պոռնկությունը, գողությունը, բանդիտիզմը, ինքնասպանությունները հասել են բոլորովին չտեսնված չափերի։ Քաղաքների փողոցները, զբոսավայրերը, պարտեզները լի յեն տնանկներով (անտուններով)։ Նրանք միայն գիշերն են նստում նստարանների վրա, յեկեղեցիների աստիճաններին, ծովեզրյա կամ գետեզրյա փողոցների ասֆալտի վրա, որովհետև գիշերները զբոսավայրերն ու պարտեզները կողպվում են, իսկ ոստիկաններն արգելում են փողոցներում քնել, և տնանկներն ստիպված են թափառել ամբողջ գիշեր։

Անգլիայում, Գերմանիայում և Ամերիկայում կան ավաններ ու գավառական քաղաքներ, որոնք ամբողջովին բաղկացած են գործազուրկներից։ Բերնլիի շրջանում (Անգլիա) կան մոտ մի տասնյակ քաղաքներ, որոնք հեղեղված են գործազուրկ մանածագործ բանվորների քաղցած ընտանիքներով։ Ցերենրախ քաղաքիկը Գերմանիայում ունի 18 հազ. հոգի բնակչություն։ Այդ բոլոր մարդիկ աշխատում էին ապակեղենի և փայտամշակման գործարաններում։ Այժմ բոլոր գործարանները փակված են, և ամբողջ բնակչությունից աշխատանք ունեն 20 մարդ միայն։

Նույնպիսի դրություն է նաև հարևան քաղաքներում՝ Մասսերբերգում, Շներտում, Հեյրախում, Վիլդենշտրինգում և այլն։ Ըստ գերմանական լրագրերի հաղորդագրության՝ Ավստրիայում մի շարք բանվորական ավաններ աստիճանաբար մահանում են։

## ԸՆԽԱՏԱՎԱՐՁԻ ԿՐՃԱՏՈՒՄ

Ոչ միայն գործազուրկներն են ստիպված քաղցած ապրել, այլև աշխատանք ունեցող բանվորները։ Յուրաքանչյուր բանվորի հետևում



կանգնած են յերկու-յերեք գործազուրկ։ Տերը ցանկացած ժամանակ կարող է բանվորին փոխարինել աշխատանք որոնող ուրիշ մարդով։ Բանվորին յուրաքանչյուր րոպե սպառնում է դարբասից դուրս նետված լինելու վտանգը։ Գործարանատերը ճգնաժամից դուրս գալու ձգտումով իջեցնում է բանվորի աշխատավարձը, հարկադրում է նրան օրական ավելի ժամեր աշխատել, նույն ժամանակի ընթացքում ավելի արտադրանք տալ և այլն։

Բոլոր յերկրներում բանվորների և ծառայողների աշխատավարձի համատարած իջեցում է կատարվում։ Ճգնաժամի տարիներին Ամերիկայում աշխատավարձն իջեցված է 35 $^0/_0$-ով, իսկ ածխարդյունաբերության բնագավառում՝ 70, Գերմանիայում—50 $^0/_0$-ով, Անգլիայում՝ 15, Ֆրանսիայում՝ 25։ Ամերիկայի բամբակեղենի արդյունաբերության մեջ տեղի ունի աշխատավարձի անընդհատ իջեցում և բանվորների շահագործման ուժեղացում։ Օրինակ, «Բիբկոմպանիան» մեկ ու կես տարվա մեջ յերեք անգամ իջեցրել է աշխատավարձը։ Ընդամենը այն բանվորը, որ առաջ 12 դազգյահի յեր սպասարկում և ստանում 24 դոլլար, սկսեց սպասարկել 24 դազգյահի և ստանալ միայն 16 դոլլար։

Կապիտալիստներն աշխատում են իրենց վնասները ծածկել նաև ապրանքների գներով։ Նույնիսկ այն ժամանակ, յերբ մեծածախ գները (այսինքն այն գները, որոնցով ֆաբրիկատերերն իրենց ապրանքները բաց են թողնում խոշոր վաճառականներին) խիստ ընկնում են, անգամ այդ ժամանակ մանրածախ առևտրի մեջ բանվոր սպառողը չի զգում այդ։ Վաճառականներն ու խանութպաններն իրենց գրպանն են դնում մեծածախ և մանրածախ գների տարբերությունը։ Բանվորի թալանը յերկու ծայրից է կատարվում, և՛ աշխատավարձի կողմից, և՛ ապրանքների բարձր գների կողմից։

## ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Ճգնաժամի պահին կրճատվում է ոչ միայն արդյունաբերական ապրանքների սպառումը, այլև գյուղատնտեսական մթերքների։ Յերբ աշխատավոր բնակչության միլիոնավոր մասսաները քաղցած են, չունեն գոյության միջոցներ, գյուղացիները հնարավորություն չունեն վաճառահանելու ամբողջ հացը, ամբողջ միսը, բոլոր ձվերը, բոլոր բանջարեղենը,—գյուղատնտեսական մթերքների գներն սկսում են ընկնել։ Ամերիկայում, օրինակի համար, վերջին յերեք տարվա մեջ գրեթե յեռապատիկ իջել են գյուղատնտեսական մթերքների գները։ Հացատրեստները չնչին գնով առնում-հավաքում են ֆերմերներից հացը և ծախում այն բարձր գներով։

Մթերքների վաճառքից ստացած գումարը թույլ չի տալիս գյու-




*Արդյունաբերական բանվորների աշխատավարձը մեծնում յեվ կապիտալիստական յերկրներում: Ցեթե 1928 թ. աշխատավարձն ընդունենք 100%, ապա կստացվի, վոր 1932 թ. ԽՍՀՄ-ում աշխատավարձն աճել ե 67%-ով, իսկ կապիտալիստական յերկրներում ընկել ե 15-ից մինչեվ 50%-ով:*

դացիներին վճարել վարձակալական վճարը, հարկերը, ծածկել պարտքերը, տալ վարկով գնված գործիքների գինը, ու նրանց տնտեսությունները ավերվում են, քայքայվում: Հացի այնպիսի ցածր գներ, վոր Ամերիկայում հացարեստներն են վճարում ֆերմերներին այժմ, համարյա հարյուր տարի չի յեղել այդ յերկրում:

Այնպես է դուրս գալիս, որ ոչ միայն բանվորները, այլև գյուղացիներն են քաղցած, չնայած որ կապիտալի յերկրներում խիստ շատ մթերք կա:

Յերբ վոր շուկայում ապրանքների քանակը գերակշիռ ե վճարունակ պահանջարկից—ապրանքների գներն ընկնում են: Յերբ վոր յերկրում ավելի հաց կա, քան թե կարող են գնել այն, նա եժանանում ե: Ի՞նչ են անում այն կապիտալիստները, վորոնք գյուղատնտեսական մթերքներ են վաճառում և կամենում են հացի համար բարձր գներ: Հացը պակասեցնելու ձգտումով նրանք վոչնչացնում են հացի մի մասը:

Մի շարք նահանգներում ամերիկական կառավարությունն արգելեց հացահատիկ ցանել և հրամայեց վոչնչացնել 1931 թ. բերքի մի յերրորդը: Կառավարությունն Ամերիկայի հարավային նահանգներին հրամայեց վոչնչացնել բամբակի ամբողջ բերքի յերրորդ մասը: Նույնը թե 1932 և թե 1933 թվականներին եր: Բրազիլիայում 2 միլիոն պարկ սուրճ ե թափած ծովը: Հնդկաստանում, Չինաստանում և այլ յերկրներում վոչնչացված ե բերքի մեծ մասը: Կալվածատերերն ու հարուստ ֆերմերները դրությունից դուրս են գալիս նրանով, վոր իրենց տնտեսության մեջ կիրառում են ավելի լավ մեքենաներ և ուժեղացնում են բատրակների, գյուղատնտեսական բանվորների շահագործումը: Կալվածատերերն ու ֆերմեր կուլակներն աշխատում են բանվորների ավելի գազանային շահագործումով վերադարձնել այն, ինչ վոր նրանք կորցնում են ճգնաժամի պատճառով: Մանր գյուղացիության միլիոնավոր մասսաների քայքայման ու ավերման պայմաններում շահագործման այդպիսի հնարավորությունը հեշտանում ե գործազրկության աճումով գյուղատնտեսության մեջ և աշխատուժի եժանացմամբ: Բայց մանր ֆերմերներն իվիճակի չեն դիմանալ ցածր գներին: Նրանք ավերվում են, ու նրանց նույն ցավալի վիճակն ե սպասում, ինչ վոր բանվորներին քաղաքում՝ սով, թափառումներ, տնանկություն, հիվանդություններ:

Սովի հողի վրա Յեվրոպայի և Ամերիկայի քաղաքներում աճել ե մահացությունը: Անգլիայում միայն 1931 թ. ընթացքում քաղաքների բնակչության մեջ մահացությունը բարձրացել ե 21%-ով, Ֆրանսիայում՝ 25, Գերմանիայում՝ 28%-ով:

# 3. ԻՆՉ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց արտադրության միջոցների, բանկերի, կալվածատիրական ագարակների և այլնի մասնավոր սեփականությանն ու նրանց դարձրեց պրոլետարական պետության սեփականություն: Դրանով իսկ ֆաբրիկաներն ու գործարանները դադարեցին կապիտալիստների համար շահույթներ քաշելու տեղ լինելուց, դադարեցին հավելյալ արժեքի յուրացման գործիք լինելուց, դադարեցին ծառայել վորպես վարձու բանվորների շահագործման միջոց: Մեր ֆաբրիկաների արտադրանքն ամբողջ բանվոր դասակարգի, նրա պետության սեփականությունն է հանդիսանում:

Յերբ բանվոր դասակարգն իր ձեռքն առավ գործարանները, ֆաբրիկաները, հանքահորերը և այլն, արդյունաբերության մեջ չքացավ շահագործողների դասակարգը, հետևաբար և չկա շահագործվողների դասակարգը ևս:

Մենք վերջ տվինք նույնպես կալվածատերերի դասակարգի գոյությանը, հետևաբար խոշոր հողատերերի կողմից էլ չկա շահագործում: Պրոլետարական պետության՝ աշխատավոր գյուղացիությանը ցույց տված միքանի տարվա ակտիվ օգնությունից հետո այդ գյուղացիությունը վճռականորեն շրջվեց դեպի կոլտնտեսությունների ուղին, և հետագայում համատարած կոլեկտիվիզացիայի հողի վրա մենք

ջախջախեցինք գյուղական շահագործողների ամենից բազմաքանակ դասակարգը—կուլակների դասակարգը։ Այժմ մնում է, վոր վերջնական հարված հասցնենք նրան։

Մեր սոցիալիստական տնտեսությունը պլանային տնտեսություն է։ Նրա մեջ չկա հակասություն արտադրության բնույթի և յուրացման բնույթի միջև։ Մեր յերկրում արտադրության հասարակական բնույթին համապատասխանում է արտադրանքի հասարակական յուրացումը։ Իսկ քանի վոր այդպես է, ուրեմն մեր տնտեսությունն ազատ է կապիտալիստական կարգին հատուկ բոլոր հակասություններից։

Կապիտալիստական սիստեմին հակադիր՝ խորհրդայինը ապահովում է բանվորական և աշխատավոր մասսաների նյութական դրության անընդհատ բարելավումը։ Դրա շնորհիվ հաջորդականորեն ընդլայնվում է նրանց գնողունակությունը։ Իսկ դա առաջացնում է պահանջների աճում, մեծացնում է պահանջարկն ապրանքների վերաբերմամբ ու հիմք ստեղծում արտադրության հետագա անընդհատ զարգացման համար։

Մեր սոցիալիստական տնտեսությունը զարգանում է առանց ճգնաժամերի և առանց կապիտալիստական մրցության ծախսերի, այսինքն առանց այն կորուստների և վնասների, վոր ունեն մրցության հետևանքով զանազան ֆիրմաները, ընկերություններն ու տրեստները։ ացի դրանից մեր տնտեսությունը չգիտե գործադուլներ, փողոցային մարտեր և դասակարգային պատերազմի այլ ձևեր՝ նման այն յերևույթներին, վորոնք տեղի յեն ունենում բուրժուական յերկրների ձեռնարկությունների մեջ, փողոցներում ու հրապարակներում։

Մեր յերկիրը նմանապես չգիտե ազգային բախումներ, պատերազմներ ԽՍՀՄ բնակվող ժողովուրդների մեջ։

Այսպիսով կապիտալիստականին հակադիր՝ խորհրդային սիստեմը ապահովում է արտադրողական ուժերի շատ ավելի արագ զարգացում։

## ՆՐԱՆՑ ՄՈՏ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԱՄԱՅԱՎԱՅՐԵՐ ԵՆ։ ՄԵԶԱՆՈՒՄ ԱՄԱՅԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՃՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Կապիտալիստական տնտեսությունն ուժգին թափով գլորվում է ցած։ Մեր ժողովրդական տնտեսությունն անընդհատ ու արագ կերպով վերել է գնում։ Դա ամենից լավ յերևում է նրանից, թե ինչպես է ընթացել արդյունաբերական արտադրանքի աճումը թեկուզ վերջին վեց տարվա մեջ։ Յեթե արդյունաբերության ամբողջ արտադրանքն ընդունենք 1928 թ. վորպես 100 %, ապա 1932 թ. Ամերիկայում նա ընկել է մինչ 56, Գերմանիայում՝ մինչ 55, Ֆրանսիայում՝ մինչ





35, իսկ կապիտալիստական ամբողջ արդյունաբերության համար՝ մինչ 67 %: Իսկ միևնույն ժամանակ ԽՍՀՄ արդյունաբերական արտադրանքն աճել է 219 %, իսկ 1925 թ. համեմատությամբ աճել է քառապատիկ:

Բուրժուական գործարաններն ու ֆաբրիկաներն ամայանում են, ամբողջ կորպուսներ կանգնած են կիպ մեխած դուռ ու լուսամուտներով, շատ գյուղեր ու քաղաքներ դառնում են գերեզմանոցներ, յերկաթուղիները տասնյակ հազարավոր դատարկ վագոններ ու հանգցրած շոգեկառքեր են քշում փակուղիները, նավաֆիրմաները անգործությունից ժանգոտող առաջնակարգ շոգենավեր են պահում նավահանգիստներում:

Իսկ մեզանում նոր գործարանների, ֆաբրիկաների, էլեկտրակայանների ահագին կորպուսները, կարծես թե հողի տակից, բուսնում են տափաստաններում, լեռներում, ճահիճներում և գետերի քարվաստներում (пороги):

Մանր քաղաքները, ավանները, գյուղերը, գետակները, վորոնք դեռ մի քանի տարի առաջ հայտնի չեյին սեփական գավառից դենը, այժմ ձեռք են բերում համաշխարհային հռչակ: Յերեք տարի առաջ նույնիսկ Ուրալում քիչ մարդ գիտեր, թե վորտեղ է գտնվում Մագնիտնայա սարը: Իսկ յերկրագնդի վրա այժմ վորտեղ չգիտեն, թե ինչ է Մագնիտոգորսկը: Սվիր գետը շատ քչերին եր հայտնի ԽՍՀՄ ներսում, իսկ այժմ Սվիրաշենը հայտնի յե անգամ մեր յերկրի սահմաններից դուրս: Ռոստոպովսկի խճուղու մոտի Սուկինո ճահճի մասին հազիվ թե իմացած լինեյին նույնիսկ հնաբնակ մոսկվացիները, բայց նրա վրա բարձրացած՝ գնդիկային և գլանիկային առանցքների (шариковые и роликовые подшипники) յերկրագնդի ամենախոշոր գործարանի մասին այժմ գիտեն և Հին, և Նոր աշխարհում (Յեվրոպայում և Ամերիկայում):

Ցարական ռեժիմի օրով կապիտալիստներն ու ինժեներները հարյուրավոր անգամներ զանազան յենթադրություններ են արել, թե ինչպես կարելի յե նավարկելի դարձնել Դնեպրն այն շրջանում, վորտեղ գետի մեջ ստորջրյա ժայռերով (քարվաստներով) բանդ է կապված: Բոլշևիկները նավարկելի դարձրին Դնեպրը, նրա վրա կառուցեցին ամենահզոր էլեկտրակայանը Յեվրոպայում—Լենինի անվան Դնեպրոգեսը: Այդ էլեկտրահսկայի շուրջը այժմ բարձրանում են տասնյակ մետալուրգիական և մետաղամշակողական գործարաններ:

Այժմ դեռ քիչ գիտեն Բալխաշաշենի, Խալիլաշենի և շատ ուրիշ հսկայական կառուցումների մասին: Մեկ-յերկու տարուց հետո նրանք կկազմեն նույնպիսի պատվավոր եջ ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության պատմության մեջ, ինչպես Դնեպրաշենը, Կուզնեցկշենը, Չելյաբտրակտորշենը և այլն: Ամերիկայում կա 385 դոմնայի վառա-

բան, որոնցից 1933 թ. սկզբին գործում եյին մոտ 50-ը միայն, իսկ ԽՍՀՄ այժմ աշխատում են արդեն ավելի, քան 100 հզոր դոմնա։

Մինչդեռ կապիտալի. յերկրներում գյուղատնտեսությունն ապրում ե ամենածանր արհավիրքներ, գյուղացիական տնտեսություններն ումասպառ են լինում ու քայքայվում, ցանքի տարածությունը կրճատվում ե և գյուղացիական մասսաները թշվառանում ու մատնըվում են սովի,—ԽՍՀՄ գյուղատնտեսությունը մեծ թափով զարգանում ե, աշխատավոր գյուղացիության դրությունը շարունակաբար արագորեն բարելավվում ե։ Այնտեղ, ուր առաջ տիրապետում եյին կալվածատերերն ու կուլակները, այժմ ստեղծվել են հզոր խորհտնտեսություններ ու կոլտնտեսություններ—ավելի քան 5 հազար խորհտնտեսություն ու ավելի քան 200 հազ. կոլտնտեսություն։ Այնտեղ, ուր առաջ գյուղատնտեսական գլխավոր գործիքը չուլթն եր, մանգաղը, այժմ գործում են տրակտորները, կոմբայնները, կալսիչ և այլ մեքենաները։ Այնտեղ, ուր ձին ու մեքենան չքավորության համար կալվածատիրական ու կուլակային շահագործման և ստրկացման միջոց եյին, այնտեղ այժմ ՄՏԿ-ները հզոր օգնություն են ցույց տալիս կոլտնտեսական գյուղացիությանը մեքենաներով, ինվենտարով՝ ամուր նեցուկ հանդիսանալով կուլակության դեմ ուղղված պայքարում։ 1928 թ. սկսած ԽՍՀՄ ցանքի տարածությունն աճել ե 21 միլ. հեկտարով։ 20 միլ. չքավորներ, որ առաջ ճնշված եյին, սոված ու հարստահարվում եյին կալվածատերերի ու կուլակների կողմից, այժմ կոլտնտեսությունների մեջ դարձել են միջակ գյուղացիներ, ապահովված մարդիկ։ Աճում ե կոլտնտեսական ամբողջ գյուղացիության ընդհանուր գույքը։ Յեվ այժմ, յերբ Ամերիկայում ու բուրժուական մյուս յերկրներում գյուղացիական հարյուր հազարավոր տնտեսություններ ավերված են, մենք մեր առաջ խնդիր ենք դնում ունևոր դարձնելու կոլտնտեսական ամբողջ գյուղացիությունը։

Այս ամենն այն բանի արդյունք ե, որ բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գյուղացիությանը տարավ գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղիով։ Սա արդյունքն ե այն հանգամանքի, որ գյուղում հաղթանակել ե կոլտնտեսական կարգը։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ

Ահա չորս տարի յե արդեն, որ մեր յերկիրը չգիտե, թե ինչ ե գործազրկությունը։ Ընդհակառակը, նա մեծ կարիք ե զգում որակյալ բանվորների և մասնագետների։ Ուստի մենք նույնիսկ բերել ենք տալիս արտասահմանից որակյալ բանվորներ ու մասնագետներ։



Տարեցտարի, ամսեամիս բարելավվում են խորհրդային բանվորների կյանքի պայմանները։ Աճում ե աշխատավարձը, մեծանում ընտանիքների աշխատող անդամների թիվը։ Հարյուր հազարավոր կանայք դուրս են հանված տնային մաշող տնտեսությունից և ներգրավված արտադրության մեջ։ Հասարակական ճաշարանների և լվացքարանների խիտ ցանցը պատել ե քաղաքները, ավանները, գործարանները, խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները, խոհանոցից ու տաշտակից ազատելով բանվորուհիներին ու գեղջկուհիներին։

Ներքնահարկերից ու հյուղերից միլիոնավոր բանվորական ընտանիքներ փոխադրված են և փոխադրվում են հարմար, լավ սարքավորված բնակարաններ ունեցող ընդարձակ տները։ Աճում են սոցիալիստական վիթխարի քաղաքները, աճում են ելեկտրականություն, գազ, կոյուղի ունեցող բանվորական նոր բնակատեղիների հսկայական կորպուսները։ Իսկ արտասահմանում տնատերերը բանվորական ընտանիքներին խմբերով դուրս են շպրտում փողոց։

Ընդարձակ տարածում ե ստացել գործարանային, կոլտնտեսական և այլ հիվանդանոցների ցանցը։ Ռուսական հին գյուղն անվանում եյին «քթատ»-գյուղ՝ նրան լափում եր սիֆիլիսը, նրան ուտում եյին զանազան համաճարակներ։ Իսկ այժմ բժշկական օգնությունն ապահովված ե անգամ ազգային ծայրագավառների հեռավոր անկյուններում։

Ընդարձակ ե մսուրների, մանկապարտեզների, դպրոցների և այլնի ցանցը։

Հարյուրավոր բուհեր, տեխնիկական բուհեր ու տեխնիկումներ պատրաստում են արդեն ոչ թե հազարավոր, այլ հարյուր հազարավոր ինժեներներ, տնտեսագետներ, ագրոնոմներ, տեխնիկներ և զանազան այլ մասնագետներ։ 1928 թվից մինչև 1933 թվականի ժամանակամիջոցում բուհերում և տեխնիկական բուհերում ուսանողների թիվը հասցված ե մեկ ու կես միլիոնի, իսկ նախահեղափոխական Ռուսաստանում համալսարաններում սովորում եյին միայն տասնյակ հազարներ։ Մենք գտնվում ենք անգրագիտության լիակատար վերացման նախօրյակին։ Ընդհանուր ուսուցումն ընդգրկում ե բոլոր յերեխաներին, դպրոցում սովորող մանուկների քանակն անցել ե 25 միլիոնից։

Նախահեղափոխական Ռուսաստանում, ասենք՝ կապիտալիստական ամբողջ աշխարհում ել այժմ բանվորներն ու գյուղացիները չգիտեյին և չգիտեն, թե ինչ ե կուրորտը, սանատորիումը, հանգիստը։ Ներկայումս Խորհրդային միության միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ թագավորների, իշխանների, գործարանատերերի, վաճառականների և ազնվականների նախկին պալատներում ու առանձնատներում, ինչպես և նոր կառուցված սանատորիումներում, հանգըս-




ԽՍՀՄ-ում տարեցտարի մեծանում են աշխատավորության սոցիալական ապահովագրման ծախսերը: Դիագրամում այդ ծախսերը ցույց են տրված միլիոն ռուբլիներով:

տյան տներում օգտվում են բուժումից, վայելում հանգիստ ու այն բոլոր բարիքները, վորոնք նախահեղափոխական Ռուսաստանում մատչելի եյին միայն արտոնյալ (բարձրագույն) դասակարգին և վորոնք բուրժուական յերկրներում մատչելի յեն կապիտալիստներին միայն:

Խորհրդային միության մեջ որավուր աճում է արտադրանքի արդյունագործումը: Յեվ յեթե մենք ապրանքների պակասություն ենք զգում, ապա դա նրանից է առաջ գալիս, վոր արտադրության աճման հետ միասին աճում է նաև մասսաների բարեկեցությունը և հետևաբար աճում է սպառումը, աճում է վճարունակ պահանջարկը ապրանքների վերաբերմամբ: Այդ պատճառով հաճախ չեն հերիքում և՛ մանուֆակտուրան, և՛ կոշկեղենը, և՛ գդալները, և՛ պատառաքաղները, և՛ ափսեները, և՛ բաժակները, և՛ մահճակալները, և՛ հեշտայեռները և այլն, չնայած վոր այդ ամենը 2—3 անգամ ավելի յե արտադրվում, քան թե պատերազմից առաջ:

Հեղափոխությունից առաջ մենք ամենևին չեյինք արտադրում ժամացույցներ, ռադիո-ընդունիչներ, գրամոֆոններ, լուսանկարչական ապարատներ, հեծանիվներ և այլն: Այժմ մենք դրանք արտադրում ենք տասնյակ հազարներով: Կոշկեղենի արտադրանքը 1928 թ. 36 միլիոն զույգից 1932 թվականին բարձրացել է 90 միլիոնի, կրկնակոշիկներինը՝ 37 միլիոն զույգից—74 միլիոն զույգի, 1933 թ. մանուֆակտուրա պետք է արտադրվի 3 միլիարդ ռուբլու, փոխանակ 1930 թվի $2\frac{1}{2}$ միլիարդի: Աճում է սննդարդյունաբերությունը, այժմ կառուցվում են



շաքարի 20 նոր գործարաններ, 34 մսակոմբինատ և 41 կոնսերվի գործարան:

Այսպես տարեցտարի մեր յերկրում բարելավվում են աշխատավորների նյութական-կենցաղային պայմանները:

## ՆՐԱՆՑ ՄՈՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏԱԺԱՆՔ Է: ՄԵԶԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է

Կապիտալիստական յերկրներում բուրժուազիան ու կառավարությունները շահագրգռված են, վոր մեծացնեն ձեռնարկությունների մեջ աշխատանքի որը: ԽՍՀՄ կառավարությունը ձեռնարկությունների մեջ կրճատում է աշխատանքի որը: ԽՍՀՄ 1932 թ. վերջում բոլոր բանվորների 83 % արդեն աշխատում եյին որական միայն 7 ժամ:

Կապիտալիստական յերկրներում և ԽՍՀՄ-ում տնտեսական սիստեմների տարբերության համեմատ նաև տարբեր վերաբերմունք կա դեպի աշխատանքը:

Կապիտալիստական յերկրներում բանվորական մասսաները կապիտալի ստրուկներն են հանդիսանում և իրենց գործարանին վերաբերվում են այնպես, ինչպես տաժանակիրը դեպի այն ձեռնասայլակը, վորին նա շղթայված է:

Խորհրդային պետության մեջ աշխատանքը պրոլետարական հասարակայնության կողմից ամենահարգվող և խրախուսվող գործն է: Շահագործումը, մակաբուծությունը, ուրիշի հաշվին ապրելը, անգործությունն ատելի յեն Խորհրդային պետության մեջ և հալածվում են պետության ու պրոլետարական հասարակայնության կողմից: Ֆաբրիկան ու գործարանը բանվորի համար մի ընդարձակ դաշտ է նրա ստեղծագործական ուժերի ազատ ու բազմակողմանի կիրառման համար, նրա կազմակերպչական և տեխնիկական ընդունակությունների արտահայտման համար, գիտելիքներ ձեռք բերելու և սոցիալիզմի պրակտիկ (գործնական) շինարարության համար: Ահա թե ինչու յեն մեր ձեռնարկությունների մեջ սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը հանդիսանում աշխատանքի ամենատարածված ձևը: Խորհրդային միության բանվորների համար աշխատանքը դառնում է, ինչպես ընկ. Ստալինն է ասել, «պատվի գործ, փառքի գործ, արիության ու հերոսության գործ»:

Կապիտալիստական ֆաբրիկայի բանվորների համար ռացիոնալացումը (տեխնիկական և արտադրական բարելավումներ մտցնելը) շահագործումն ուժեղացնելու կատարելագործված միջոց է: Բուրժուական յերկրներում ռացիոնալացումն իր հետ բերում է գործազրկու-

թյուն, աշխատավարձի իջեցում, բանվորների ուժասպառություն, վաղահաս մահ յեվ այլն:

*Խորհրդային ձեռնարկությունների բանվորներին ռացիոնալացումը բերում է* աշխատանքի թեթևացում, աշխատօրվա կրճատում, աշխատավարձի մեծացում, կուլտուրական հանգստի համար ավելի մեծ քանակությամբ ժամեր:

*Բուրժուական յերկրներում բանվորները նոր տեխնիկայի և նոր մեքենաների մեջ տեսնում են չարիք, վտանգ, մի մրցակից, վոր հետը բերում է քաղցի ու տառապանքների լրացուցիչ տանջանքներ: ԽՍՀՄ-ի բանվորներն իրենք են պայքարում նոր մեքենաներ մտցնելու համար, նոր տեխնիկայի համար, աշխատանքի մեքենայացման համար: Նրանք մեխանիզմի մեջ տեսնում են լավագույն օգնականին ու բարեկամին, վորը թեթևացնում է նրանց աշխատանքը և ավելի շատ արտադրանք տալիս: Արդեն կան նոր տեխնիկայի բազմաթիվ իսկական ենտուզիաստներ: ԽՍՀՄ-ի պրոլետարներից ով չգիտե հիմա հանքափոր* Իզոտովների *անունը!: Իսկ վորքան են դրանք, այդ Իզոտովները, տեխնիկայի իսկական հեղափոխականները յուրաքանչյուր ձեռնարկության մեջ, յուրաքանչյուր ցեխում, յուրաքանչյուր հանքահորում!: Խորհրդային պետության մեջ բանվորներն իրենք են հոգ տանում արտադրության բարելավման մասին, իրենք են կառուցում զանազան կոնստրուկցիաներ, դազգյահներ ու մեքենաներ, հարյուր հազարավոր առաջարկներ և գյուտեր են մտցնում արտադրական խորհրդակցությունների միջոցով, իրենց լրագրերի, գյուտարարների խմբակների միջոցով, տիրանում են տեխնիկային ու գիտության և այլն:*

*Մեր վիթխարի հաղթանակների հետևանքով մենք ստեղծեցինք* սոցիալիստական տնտեսության հաստատուն հիմքը:

*ԽՍՀՄ դարձել է սոցիալիզմի անխորտակելի բերդը, վոր վոգևորություն ու հեղափոխական վերելք է առաջացնում ամբողջ աշխարհի բանվորական մասսաների մեջ և իր նկատմամբ հարուցանում ճգնաժամից ցնցված միջազգային իմպերիալիզմի չարախնդրությունն ու ատելությունը: ԽՍՀՄ, ինչպես ընկ. Ստալինն է ասել, հանդիսանում է* բոլոր յերկրների պրոլետարիատի հարվածային բրիգադը:

## 4. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄՆ ՈՒ ԽՍՀՄ

### ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆ ԸՆԴԴԵՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐԻ

*Ի՞նչ հարաբերություններ գոյություն ունեն կապիտալիստական աշխարհի և Խորհրդային միության միջև:*

*Կապիտալիստական աշխարհը թշնամական դիրք ունի կառուցվող*



*սոցիալիզմի աշխարհի նկատմամբ: Սոցիալիստական տնտեսության ուժեղ վերելքը ԽՍՀՄ-ում աչքի ընկնող փաստ է արտասահմանի յուրաքանչյուր բանվորի համար, վորը դիտում է կապիտալիստական տնտեսության քայքայումն ու աշխատավոր մասսաների տանջանքներն ու արհավրալից դրությունը բուրժուական յերկրներում: ԽՍՀՄ—կառուցվող սոցիալիզմի յերկիրը—ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների առաջավոր բերդն է հանդիսանում սոցիալիզմի համար մղվող նրանց պայքարում, մշտական հիշեցումն կապիտալիզմի համար՝ սրա անխուսափելի կորուստի մասին:*

*Իմպերիալիստները յերազում են ԽՍՀՄ դարձնել իրենց գաղութը, վորից նրանք կարողանային դուրս տանել հացահատիկ, նավթ, հանք, ածուխ, փայտեղեն, վուշ և այլն և վորի վզին նրանք փաթաթեյին իրենց ապրանքները բարձր գներով, իրենց թալանչիական կարգերը, բանվորներին ու գյուղացիներին գազանաբար շահագործելու իրենց յեղանակները: Նրանք ուրախ կլինեյին, յեթե Հնդկաստանի կամ Չինաստանի դրությանը հասցնեյին ԽՍՀՄ-ը: Նրանք կկամենային մեր յերկրի գլուխ կանգնած տեսնել իրենց հնազանդ՝ ռուսաստանյան կալվածատերերի, կապիտալիստների և գեներալների կառավարությունը:*

*Բայց նրանք դրա փոխարեն գործ ունեն մի յերկրի հետ, վորը հաղթականորեն հետ մղեց համաշխարհային իմպերիալիզմի բոլոր գրոհները, վորն ուժգնաբար ամրացրեց իր ռազմական հզորությունը, վորը յեռանդուն կերպով պայքարում է իր տնտեսական լիակատար անկախության համար—անկախություն բուրժուական յերկրներից—և չեղած արագությամբ ու հետևողականությամբ կառուցում է սոցիալիստական նոր տնտեսություն:*

*Համաշխարհային իմպերիալիստները փորձ արին ջախջախելու Խորհրդային միությունը և զենքի ոգնությամբ վերականգնելու կապիտալիստական կարգերը: Նրանք հրացաններ, գնդացիրներ, տանկեր, փամփուշտ, ռազմական հանդերձանք և փող եյին հայթայթում Դենիկինին, Կոլչակին, Յուդենիչին և սպիտակ-գվարդիական զորաբանակների մյուս հրամանատար-գեներալներին: Նրանք իրենց զորաբանակներն եյին ուղարկում, զրահանավերն ու թնդանոթները՝ նվաճելու համար Ուկրայինայի հացը, Բագվի նավթն ու Արխանգելսկի փայտեղենը:*

*Յերբ Խորհրդային միությունը պայթեցնելու բոլոր փորձերը փլուզումն կրեցին, համաշխարհային կապիտալիստներն իրենց հույսը դրին այն բանի վրա, վոր խորհրդային իշխանությունն ինքնին «կվերասերվի» և կդառնա մի սովորական բուրժուական պետություն: Նրանք սպասում եյին, վոր ԽՍՀՄ վերջիվերջո այնուամենայնիվ գլուխ կխոնարհի համաշխարհային իմպերիալիզմի առաջ:*

Համոզվելով, վոր անհիմն են ակընկալությունները ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության տապալման նկատմամբ, կապիտալիստական յերկրներն ստիպված եյին առևտրական կապեր սահմանել ԽՍՀՄ-ի հետ։ Միևնույն ժամանակ համաշխարհային իմպերիալիստները վերսկսեցին իրենց թշնամական գործողությունները ընդդեմ Խորհուրդների յերկրի, իրենց վարձկան գործակալների միջոցով սարքելով հակահեղափոխական դավադրություններ, վնասարարություններ, զանազան պրովոկացիաներ, դավաճանություններ։ Այդ ամենը նախապատրաստություն եր իմպերիալիստների պատերազմական նոր արշավանքի (ինտերվենցիայի) համար ընդդեմ մեր յերկրի։ Գերմանիայում իշխանության գլուխն անցած ֆաշիզմը աշկարա հայտարարում ե ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ սկսելու իր մտադրության մասին, վորովհետև նրան, իբր թե, հողեր են հարկավոր Արևելքում, այսինքն մեր յերկրում։

Ինչո՞ւ յեն իմպերիալիստական պետությունները շահագրգռված պատերազմով։ Վորովհետև նրանք կարիք ունեն շուկաների։ Իսկ նոր շուկաներ անհնարին ե ստանալ այլ կերպ, քան միայն զենքի ուժով, պատերազմով։

Բացի դրանից իմպերիալիստական բուրժուազիային հիմա պատերազմի յե մղում այժմյան ճգնաժամը։ Զանազան յերկրների կապիտալիստները յենթադրում են, վոր բացի նոր շուկաներից պատերազմն ինքնին ել մեծ շահանքներ կբերի նրանց։ Այդ կապիտալիստները հույս ունեն, վոր պատերազմը կբերի արդյունաբերության և բուրժուական ամբողջ տնտեսության աշխուժացում։ Պատերազմն առանձնապես ձեռնտու յե այն ֆաբրիկատերերին, վաճառականներին ու չարաշահներին, վորոնք անմիջապես սպասարկում են պատերազմին, վորովհետև դա նրանց տալիս ե փող վաստակելու հնարավորություն՝ պատերազմական մատակարարումների միջոցով։

Պատերազմի ժամանակ աճում ե գրատների, (шинель), ճտքավոր կոշիկների, շալվարների, վոտի փաթաթանների, փամփուշտների, արկերի (снаряд), բինտերի, բամբակի, հեռադիտակների, ավտոմոբիլների, հացի, շաքարի, թնդանոթների, ինքնաթիռների, գնդացիրների, զրահակիրների և այլ իրերի պահանջը։

Պատերազմի ժամանակ ամբողջ արդյունաբերությունը տենդագին աշխատում ե ռազմաճակատի համար. կարի մեքենաներ արտադրող գործարանները պատրաստում են հրացաններ և փամփուշտ, զանազան գործարաններ և ֆաբրիկաներ արտադրում են գութանների փոխարեն գնդացիրներ, բամբակի ձեթի փոխարեն—վառոդ, դեղորայքի փոխարեն—թունավոր գազեր, տրակտորների փոխարեն—զրահապատներ (броневик) և տանկեր, ուսումնական պիտույքների փոխարեն — հենակներ և արհեստական վոտքեր։ Զորաբանակի համար գնվում-հավաքվում են պարենի, հագուստեղենի, խարի (фураж), պա-






Կապիտալիստները տենդորեն սպառազինվում են, պատրաստվելով նոր պատերազմի յեվ հարձակման ԽՍՀՄ վրա: Դիագրամում ցույց ե տրված, թե իմպերիալիստական խոշորագույն պետությունների ռազմական ծախսերը 1932 թվականին քանի տոկոսով են աճել 1913 թ. համեմատությամբ:

հածոնների, թիերի, փայտեղենի, մսերի մեծ պաշարներ,—ամեն ինչ հարկավոր ե ռազմաճակատի համար, պատերազմի ժամանակ բոլոր ապրանքները գնայուն են։

Ճգնաժամը դանակի ծայրին ե պահում աշխարհը։ Պատերազմը կարող ե բռնկել ամենաանսպասելի առիթով։ 1914 թ. համաշխարհային պատերազմը բռնկեց, ինչպես պնդում եր բուրժուազիան, ավստրիական կրոնպրինցի սպանության առիթով, վոր տեղի ունեցավ Սարայեվոյում։ Բայց դա, իհարկե, միայն արտաքին առիթ եր։ Պատերազմի իսկական պատճառները կապիտալիստական աշխարհի բուն կառուցվածքի մեջ են, վոր անխուսափելիորեն ծնում ե պատերազմներ, վորպես բուրժուազիայի ամբողջ քաղաքականության—թալանի, բռնության, հափշտակության քաղաքականության շարունակումը ռազմական յեղանակներով:

Այս պատճառով ել իմպերիալիստական ամեն մի պետություն, վոր առանց այն ել զինված ե վոտից գլուխ, այժմ տենդորեն շարունակում ե կառուցել ռազմական նավեր և սպանության ու կործանման զանազան գործիքներ։ Ահա մի քանի տարի յե, վոր բուրժուական պետությունների քմահաճ տնորինողները զանազան կոնֆերանսներում դատարկաբանում են զինաթափման մասին, իսկ սպառազինումները տարեցտարի աճում են։

Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկան, Ճապոնիան և Իտալիան այժմ տարեկան 5 միլիարդ ռուբլուց ավելի փող են ծախսում թնդանոթների, դրեդնոուտների, ռումբատարների, տանկերի և այլնի վրա։ Իսկ մինչև

պատերազմի այդ պետությունները միայն մեկուկես միլիարդ էին տարեկան ծախսում։ Սրանով է բացատրվում, վոր ռազմական արդյունաբերությունը միակն է, վոր չգիտե ճգնաժամ ասած բանը։

## ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Իմպերիալիստական պետությունները պատերազմ են պատրաստում ամենից առաջ ԽՍՀՄ—կառուցվող սոցիալիզմի յերկրի դեմ։ Կապիտալիստական աշխարհը չի կարողանում հաշտվել այն բանի հետ, վոր իր-կողքին գոյություն ունի Խորհուրդների յերկիրը՝ համաշխարհային հեղափոխության պատվարը (հենակետը)։

Իմպերիալիստական պետությունները ԽՍՀՄ շրջապատել են թշնամի պետությունների ողակով, նրանց սաստիկ զինել են և դարձրել ԽՍՀՄ վրա իմպերիալիստական հարձակում գործելու առաջավոր ջոկատներ։

Այս պատճառով էլ Խորհրդային միությունը, գտնվելով պատերազմի մշտական սպառնալիքի տակ, պետք է հոգ տանի Կարմիր բանակն ամրացնելու մասին, իր պաշտպանունակությունն ուժեղացնելու մասին։ Ներկայումս մենք ունենք հզոր Կարմիր բանակ, վորը զինված է ռազմական առաջնակարգ տեխնիկայով։ Սա հետևանք է արդյունաբերության շինարարության մեջ մեր ունեցած հսկայական հաջողությունների։ Մեր վիթխարի գործարանները և ֆաբրիկաները մեզ թույլ են տալիս այնպես զինել Կարմիր բանակը, վոր նա ըստ արժանույն կարողանա հանդիպել մեր սոցիալիստական շինարարության թշնամիներին, յեթե նրանք համարձակվեն հարձակվելու ԽՍՀՄ վրա։ Սրանից բխում է այն, վոր մեր սոցիալիստական ինդուստրիայի (արդյունաբերության) հետագա զարգացումը մեր պաշտպանունակությունն ամրացնելու գլխավոր պայմանն է։

Խորհրդային կառավարությունը չի յենթարկվում պատերազմական պրովոկացիաներին։ Նա պատերազմ չի ուզում, բայց պատրաստ է պաշտպանության, նա շահագրգռված է խաղաղությամբ։ Նա ձգտում է լիակատար կամ թեկուզ մասնակի ընդհանուր զինաթափման։ Իհարկե, Խորհրդային յերկիրը հասկանում է, վոր հաստատուն խաղաղություն կարող է բերել միայն ամբողջ աշխարհում կապիտալիզմը վոչնչացնելը։ Բայց քանի վոր կապիտալիզմն ամբողջ աշխարհում դեռ չի տապալված, Խորհրդային յերկիրը հարկադրված է օգտագործելու ամեն մի հնարավորություն, վոր թուլացնի պատերազմական վտանգը։

Չնայած ամբողջ այն թշնամության, վոր կապիտալիստական պետությունները տածում են դեպի Խորհրդային միությունը, խորհրդային կառավարությանը հաջողվում է իր քաղաքականությամբ քանդել



բուրժուական պետությունների իմպերիալիստական պլանները և ստեղծել արտաքին այնպիսի պայմաններ, վորոնք թույլատրում են մեր յերկրին շարունակելու սոցիալիզմի հաղթական շինարարությունը։

Խորհրդային պետության արտաքին քաղաքականությունը կայանում է նրանում, վոր օգտագործվի կապիտալիստական աշխարհի հակասությունները ԽՍՀՄ դեմ նյութվող պատերազմի վտանգը հեռացնելու և սոցիալիստական շինարարության հետագա զարգացումն ու յերկրի պաշտպանունակության ամրացումն ապահովելու համար։

«Ուրիշի վոչ մի թիզ հող չենք ուզում։ Բայց և մեր հողից վոչ մի վերշոկ վոչ վոքի չենք տա»։

Ընկ. Ստալինի այս խոսքերը կատարելապես բնորոշում են մեր քաղաքականությունը, վորպես խաղաղության քաղաքականություն։

### ԱՅՍՊԻՍՈՎ, ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻՑ ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ.

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի հետեվանքով՝ յերկրագնդի յերեսին գոյացան յերկու տարբեր աշխարհներ. աշխարհի մեկ վեցերորդական մասում գոյություն ունի կառուցվող սոցիալիզմի աշխարհ, աշխարհի մնացած մասում առաջվա պես դեռ տիրապետում է կապիտալիզմը։

Կապիտալիստական աշխարհն ապրում է ամենախորը յեվ տեվական մի ճգնաժամ, վոր յերբեվիցե գիտցել է կապիտալիզմի պատմությունը։ Այս ճգնաժամը հատկապես խորն է այն պատճառով, վոր նա տեղի յե ունենում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում, վորն սկիզբ առավ 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմով։

Կապիտալիզմի այս ընդհանուր ճգնաժամն իր հերթին հետեվանք է այն բանի, վոր կապիտալիզմը հասել է զարգացման իր վերջին աստիճանին—իմպերիալիզմին, այսինքն՝ մի աստիճանի, յերբ նա վերածվում է նեխվող, մեռնող կապիտալիզմի, յերբ հասարակության հետագա զարգացումն անհամատեղելի յե բուրժուազիայի դասակարգի գոյության հետ։

Հասարակության, նրա արտադրողական ուժերի զարգացման համար արդի պայմաններում անհրա-

ժեռս է՝ տապալել կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետությունը յեվ հաստատել բանվոր դասակարգի դիկտատուրա, վոչնչացնել գործարանների, հողի, յերկաթուղիների, բանկերի յեվ այլնի մասնավոր սեփականությունը յեվ դարձնել արտադրության բոլոր միջոցները հասարակական սեփականություն, վերջ տալ բանվորական յեվ գյուղացիական մասսաների շահագործմանը, դնել տնտեսության հիմքում վոչ թե շահագործողների յեվ ձրիակերների դասակարգերի հարստացումը, այլ բանվորական յեվ գյուղացիական մասսաների դրության անընդհատ բարելավումը յեվ սոցիալիստական հզոր շինարարությունը, վերջ տալ այս շինարարության ընթացքում մարդու կողմից մարդուն շահագործելուն, ստեղծել սոցիալիստական անդասակարգ հասարակություն:

Այս ամենը ներկայումս իրագործվում է ԽՍՀՄ մեջ—կառուցվող սոցիալիզմի յերկրում: ԽՍՀՄ մի աշխարհ է, վոր դեմ-հանդիման է կանգնած կապիտալիստական հին աշխարհին: Բուրժուական ամբողջ աշխարհում տիրում են տնտեսության փլուզում, նեխում, մասսաների թշվառություն, իմպերիալիստների գզգզոց, կատաղի սպառազինումներ յեվ պատերազմի պատրաստություն: ԽՍՀՄ մեջ սոցիալիստական տնտեսության բուռն աճում է, շահագործող դասակարգերի ջախջախում, բանվորական յեվ կոլտնտեսային մասսաների նյութական դրության ընդհանուր բարձրացում, ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների համերաշխ գործակցություն հանուն սոցիալիզմի պայքարում, հանուն խաղաղության պայքարում:

## ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### I ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. *Ինչո՞վ է արտահայտվում տնտեսական ներկա ճգնաժամը բուրժուական յերկրներում:*
2. *Պատմեցեք սոցիալիստական շինարարության հաջողությունների մասին մեզանում:*



3. *Ինչո՞ւ պրոլետարիատն իշխանությունը խլելուց հետո պետք է գրավի կապիտալիստներից յեվ կալվածատերերից նրանց գործարանները, հողերը, բանկերը յեվ այլն յեվ նրանց դարձնի հասարակական սեփականություն:*
4. *Ինչո՞ւ կապիտալիստական աշխարհում տասնյակ միլիոնավոր մարդիկ տառապում են սովից ու ցրտից այն ժամանակ, յերբ պահեստները տրաքվում են ապրանքների շատությունից:*
5. *Ո՞րն է կապիտալիստական յերկրների ճգնաժամերի հիմնական պատճառը:*
6. *Ո՞րն է պատճառը, վոր իմպերիալիզմի պայմաններում անխուսափելի յեն գաղութների համար, ոտար յերկրներ հափշտակելու համար մղվող պատերազմները:*
7. *Ո՞րն է պատճառը, վոր մեր խորհրդային տնտեսության մեջ ճգնաժամեր չկան:*
8. *Ինչո՞ւ միայն ԽՍՀՄ մեջ է պրոլետարիատը շահագրգռված այն բանով, վոր անշեղորեն բարձրացնի աշխատանքի արտադրողականությունը:*
9. *Ինչո՞ւ յե ուժեղանում կապիտալիստական աշխարհի կողմից ԽՍՀՄ դեմ պատրաստվող պատերազմի վտանգը:*
10. *Ինչո՞ւ մենք պետք է ամրացնենք յերկրի պաշտպանունակությունը:*





Գլուխ

# ՄԵՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԿՈՄՈՒՆԻԶՄՆ Է

Մենք պայքարում ենք կոմունիզմի համար: ԽՍՀՄ մեջ մենք արդեն թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը, այսինքն՝ կոմունիզմի առաջին ստադիան (շրջանը):

Կոմունիզմի թշնամիները յեվ հակառակորդները միշտ ձգտում եյին ապացուցել, թե կոմունիզմը մի դատարկ մտածում է, մի անիրագործելի բան, մի ֆանտազիա—ցնորք է, վորը յերբեք կյանքում չի իրականանալու:

Սակայն մեր յերկիրն իր փորձով փայլուն կերպով ապացուցեց, վոր ֆանտազյորներ (ցնորամիտներ) հենց նրանք են, ովքեր յերազում եյին, թե կապիտալիզմն իբրեվ թե հավիտյան է ապրելու:

Սոցիալիզմը դառնում է իրականություն, սոցիալիզմը տիրաբար կյանք է մտնում, սոցիալիզմը բուռն կերպով վերակառուցում է կյանքը: Իսկ կապիտալիզմին մնում է միայն յերազել իր վաղեմի զորության վերադարձի մասին:



Սոցիալ-դեմոկրատները հայտարարում են, վոր իբրեվ թե նրանք գիտեն դեպի սոցիալիզմ տանող ավելի լավ ուղի, քան այն ուղին, վորով բանվոր դասակարգին տանում են կոմունիստները: Նրանց ուղին իբրեվ թե լավ է այն պատճառով, վոր նա խաղաղ է, առանց հեղափոխության, առանց ցնցումների:

Մենք ստորեվ կքննարկենք յեվ կտեսնենք, թե արդյոք կարելի՞ յե սոցիալիզմի հասնել առանց պրոլետարական հեղափոխության յեվ պրոլետարական դիկտատուրայի, թե ո՞ւմ են ծառայում յեվ ո՞ւմ են ուզում խաբել սոցիալ-դեմոկրատները իրենց այն դատողություններով, վոր իբր թե կարելի յե սոցիալիզմի հասնել խաղաղ ճանապարհով. մենք կտեսնենք, թե ինչ ճանապարհով է ձեռք բերվում կոմունիզմի հաղթանակը:

Այս գլուխն ունի հետեվյալ բաժինները.

*1. Ի՞նչ բան է կոմունիզմը յեվ սոցիալիզմը:*

*2. Ի՞նչպես է կատարվում անցումը կապիտալիզմից կոմունիզմի:*

## 1. ԻՆՉ ԲԱՆ Է ԿՈՄՈՒՆԻԶՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

### ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

*1921 թ. մարտին Լենինը հանդես յեկավ տրանսպորտային (փոխադրող) բանվորների համագումարում: Յերբ Վլադիմիր Իլյիչը բարձրանում եր նիստերի դահլիճը՝ նա ուշադրություն դարձրեց մի լոզունգի վրա, վորի մասին նա հետո իր ճառում ասաց հետեվյալը.*

*«Այս րոպեյիս, ձեր դահլիճն անցնելով, յես հանդիպեցի մի պլակատի, վորի վրա մակագրված եր. «Բանվորների և գյուղացիների թագավորությանը վերջ չի լինի»: Յեվ յերբ յես կարդացի այս տարորինակ պլակատը, վորը, ճիշտ է, սովորական տեղում չեր կախված, այլ դրված եր անկյունում,—թերևս վորևե*

մեկը գլխի չի ընկել, վոր պլակատն անհաջող է, և մի կողմ է տարել այն,—յերբ յես կարդացի այդ տարօրինակ պլակատը՝ մտածեցի. ահա թե ինչպիսի այբբենական ու հիմնական բաների նկատմամբ մեզանում թյուրիմացություններ ու անճիշտ ըմբռնում կան:

Իսկապես, չէ՞ վոր, յեթե բանվորների և գյուղացիների թագավորությանը վերջ չլիներ, ապա այդ կնշանակեր, վոր յերբեք սոցիալիզմ չի լինի, վորովհետև սոցիալիզմ նշանակում է դասակարգերի վոչնչացում. իսկ քանի դեռ մնում են բանվորներն ու գյուղացիները՝ մինչև այդ մնում են զանազան դասակարգեր, և, հետևապես, չի կարող լիակատար սոցիալիզմ լինել»:

Ուրեմն և՝ սոցիալիզմը՝ դա հասարակություն է առանց դասակարգերի:

Իսկ ինչ բան են դասակարգերը: Լենինը գրել է.

«Դասակարգերը՝ դա մարդկանց այնպիսի խմբեր են, վորոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը՝ շնորհիվ հասարակական տնտեսության վորոշ դրվածքում (ուկլադում) նրանց գրաված տեղերի տարբերության»:

Յեթե մարդկանց մի խումբ յուրացնում է ամբողջ հողը և նրա շնորհիվ շահագործում է մյուս այն խմբին, վորը կառչած է այդ հողին, ապա ուրեմն, մենք ունենք, մի կողմից, կալվածատերերի դասակարգ և, մյուս կողմից՝ գյուղացիների դասակարգ:

Յեթե հասարակության մի խումբը տերն է բոլոր գործարանների, հանքերի, յերկաթուղիների և այլն, իսկ մյուս խումբն աշխատում է այս ձեռնարկություններում, ապա ուրեմն, մենք ունենք, մի կողմից՝ կապիտալիստների դասակարգ և, մյուս կողմից՝ պրոլետարների դասակարգ:

Դասակարգերի տարբերության հիմնական հատկանիշը դեպի արտադրության միջոցները յեղած այն հարաբերությունն է, այն դերն է, վոր խաղում է հասարակական արտադրության մեջ այս կամ այն խումբը:

Ի՞նչ հարաբերություն ունի կապիտալիստը դեպի արտադրության միջոցները: Նա նրանց սեփականատերն է: Ի՞նչ հարաբերությունների մեջ է գտնվում կապիտալիստական հասարակության մեջ պրոլետարիատը արտադրության միջոցների վերաբերմամբ: Նա շահագործման է յենթարկվում այն պատճառով, վոր արտադրության միջոցները կապիտալիստների մասնավոր սեփականությունն են կազմում:

Իսկ ինչ հարաբերությունների մեջ է գտնվում պրոլետարիատը արտադրության միջոցների նկատմամբ մեր պրոլետարական պետության մեջ: Իբրև պետություն կազմակերպված պրոլետարիատի դասակարգին են պատկանում, վորպես ամբողջության, արտադրության բոլոր միջոցները:



Բուրժուազիան, նրա գիտնականներն ու տերտերներն իրենց ամբողջ ուժով ջանում են համոզելու բանվորներին ու աշխատավորներին, վոր դասակարգեր միշտ գոյություն ունեցել են և միշտ ել գոյություն են ունենալու: Արդյո՞ք սա այսպես է: Վո՛չ, այսպես չէ:

Յեղել է մի ժամանակ, յերբ մարդկային հասարակությունը չի գիտցել, թե ինչ բան է դասակարգը: Շատ հազարավոր տարիներ առաջ յեղել է ամենուրեք հասարակություն առանց դասակարգերի,—յեղել է, ինչպես նրան անվանում են, նախնադարյան կոմունիստական մի հասարակություն, վոր հիմնված է յեղել ընտանեկան կամ ցեղական (նահապետական) կապի վրա:

Զարգացման հաջորդ աստիճանում ծագում է դասակարգային հասարակության առաջին ձևը—ստրկատիրական հասարակակարգը, վորտեղ հիմնական դասակարգեր են ստրկատերերը և ստրուկները: Ստրկատերերը տիրանում եյին վոչ միայն արտադրության բոլոր միջոցներին, այլև մարդկանց—ստրուկներին: Այն ժամանակվա օրենքներով՝ այդ մարդիկ ընդունվում եյին վորպես իրեր, վոր ամբողջապես գտնվում եյին ստրկատերերի իրավունքի տակ: Ստրուկներին վաճառում եյին և գնում, ինչպես վոր վարվում են ծխախոտատուփերի կամ վոչխարների հետ: Այս հասարակության մեջ ստրկատիրական դասակարգը տիրապետող եր: Մի կողմից՝ ստրուկների և, մյուս կողմից՝ ստրկատերերի միջև յերկար դարերի ընթացքում տեղի յեր ունենում դասակարգային պայքար:

Ապա ստրկատիրական հասարակակարգին հաջորդեց ճորտատիրական—ֆեոդալական հասարակակարգը: Ճորտատիրության ժամանակ հիմնական դասակարգեր եյին կալվածատերերը (ֆեոդալները) և ճորտերը: Կալվածատերը, լինելով սեփականատեր հողի, վորին ամրակցված (ամրագրված) եյին գյուղացիները, տեր եր գյուղացիների աշխատանքի, իրավունք ուներ՝ նրանց վաճառելու, տնօրինելու նրանց յեկամուտները, հարկադրելու նրանց, վոր կատարեն բազմաթիվ ծանր պարհակներ և այլն: Միջանի դարերի ընթացքում տեղի յեր ունենում ճորտերի դասակարգային պայքարն ընդդեմ կալվածատերերի:

Առևտրի և արդյունաբերության զարգացմանը համեմատ առաջ յեկավ նոր դասակարգ—կապիտալիստների դասակարգը: Այս դասակարգն իր տիրապետությանը հասավ ֆեոդալների (կալվածատերերի) տիրապետությունը հեղափոխականորեն տապալելու միջոցով: XVIII դարի վերջերից և XIX դարի ընթացքում ամբողջ աշխարհի վրայով անցան բուրժուական հեղափոխություններ:

Անգլիայում բուրժուական հեղափոխությունն սկսվեց դեռևս 1640 թ., Ֆրանսիայում—1789 թ., Գերմանիայում—1848 թ., Ճապոնիա-

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՄՈՍԿՈՎՍԿԻՅԵ ՎԵԴՈՄՈՍՏԻ» («ՄՈՍԿՎԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ») ԹԵՐԹԻՑ 1859 ԹՎԻՆ՝ ՃՈՐՏԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

31) Ծախվում են մարդիկ. 30 տ. աղջիկ, վարպետուհի և ժանյակներ (հաշիա) գործելու յեվ այլ կարվածք անելու, գինն է 200 ռ.: Ծախվում են 2 գյուղացի աղջիկներ, 17-ական տարեկան. մեկը 100 ռուբլու, մյուսը 400 ռ.

7) 15 քաղաքամասում, 2-րդ թաղում, 4-րդ Մեշչանսկայա փողոցում, № 111-ում ծախվում է մի աղջիկ, որ կարող է սպիտակեղեն կարել յեվ այլ կարվածք անել, արդուկել ու ոսլայել, մասամբ յեվ կերակուր պատրաստել: Հենց այստեղ վաճառվում են ադամանդե իրեր յեվ գունավոր քարեր, յեվ լավ ջուտայի ցուլ ու կով, ձեռնտու գնով.:—7

յում—1868 թվին: Կապիտալիստական հասարակությունը, որ կառուցված է վարձու աշխատավորների դասակարգի շահագործման վրա՝ դասակարգերի պայքարի մի նոր շրջան է իրենից ներկայացնում, յերբ տիրապետողը կապիտալիստների դասակարգն է, յեվ նրա տապալման համար պայքար է մղում պրոլետարների դասակարգը:

Այսպիսով՝ մարդկային հասարակության ամբողջ պատմությունը մի հասարակակարգի հաջորդական փոխարկն է (փոխարինումն) մի այլ հասարակարգով: «Նախընթաց ամբողջ հասարակության պատմությունը դասակարգերի պայքարի պատմությունն է»,—գրում էյին «Կոմունիստական մանիֆեստում» Մարքսն ու Էնգելսը:

Դասակարգային ամեն մի հասարակություն դասակարգային պայքարի հասարակություն է: Արտադրողական ուժերի աճումը զարգացման յուրաքանչյուր նոր աստիճանում վորպես իշխող ուժ նոր դասակարգ է առաջ մղում: Ճորտատիրական կարգը արգելակում է արդյունաբերության զարգացումը, այս պատճառով էլ արդյունաբերական բուրժուազիայի դասակարգը ձգտում է տապալել ճորտատիրական ռեժիմը և սահմանել կապիտալիստական ռեժիմ: Կապիտալիզմն իր զարգացման բարձրագույն աստիճանում արգելակ է դառնում արտադրողական ուժերի հետագա աճման համար: Նրանց հետագա զարգացման համար պետք է այլ հասարակակարգ—սոցիալիստական հասարակակարգ: Այս նոր հասարակակարգի կրիչը հանդիսանում է պրոլետարիատը:

Մի հասարակակարգի փոխարկը մի այլ հասարակակարգով, այսինքն՝ մի դասակարգի տիրապետության փոխարկը մի այլ դասակարգի տիրապետությամբ՝ կատարվում է տիրապետող դասակարգի միմիայն բանի տապալման միջոցով, հեղափոխության միջոցով: Բանվոր դասակարգի՝ իշխանության գլուխ անցնելը նույնպես անհնարին է առանց բուրժուազիայի տիրապետությունը հեղափոխական ճանապարհով, պրոլետարական հեղափոխությամբ տապալելու:



## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչի՞ համար է պրոլետարիատը կատարում իր հեղափոխությունը: Նրան ինչի՞ համար է պետք պրոլետարական դիկտատուրան: Իր իշխանությունը հավերժացնելու համար: Վոչ, դրա համար չէ: Բանվոր դասակարգը պայքարում է կոմունիզմի համար: Իշխանության նվաճումը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը բանվոր դասակարգին հարկավոր են նրա համար, վոր ապահովի սոցիալիզմի և ապա լիակատար կոմունիզմի հաղթանակը:

Ի՞նչ բան է կոմունիզմը: Ի՞նչպես է կազմակերպվելու կոմունիստական հասարակությունը:

Դասակարգերի և դասակարգային պայքարի չքացումով մարդկանց միջև յեղած հարաբերությունների հիմքում կդրվեն ընկերությունն ու գործակցությունը: Ամբողջ հասարակությունը կազմելու յե մի աշխատանքային կոլեկտիվ, վորը գործում է աշխատանքի ճիշտ կազմակերպման և նպատակահարմար բաշխման հիման վրա, ընկերական կարգապահության (դիսցիպլինայի) հիման վրա:

Հասարակական հարաբերությունների այս նոր ձևերն ավելորդ կդարձնեն պետության և հարկադրանքի նրա ապարատի գոյությունը: Սրա հետևանքով՝ պետական իշխանության մարմինները (օրգանները) չքանալու յեն: Յուրաքանչյուր պետություն մի դասակարգի տիրապետության կազմակերպումն է մի այլ դասակարգի վրա: Պետությունը ծագել է դասակարգերի առաջացման հետ միասին՝ տիրապետող դասակարգի իշխանությունն ապահովելու համար: Տիրապետող այդ դասակարգը հենվում է՝ վոստիկանության, դատարանների, բանակի վրա,—հարկադրանքի բոլոր օրգանների վրա, դպրոցի, թատրոնի, մամուլի վրա—համոզման և դաստիարակման բոլոր օրգանների վրա:

Պետությունը դասակարգային հասարակության արդյունք է: Կոմունիստական հասարակության մեջ ընդհանրապես դասակարգեր չեն լինի, ուստի և կոմունիզմի ժամանակ չի էլ լինի պետություն:

Կոմունիստական ինտերնացիոնալի ծրագիրն ասում է, թե պետական իշխանությունը,

«...լինելով դասակարգային պետության մարմնացում՝ չքանում է դասակարգերի չքացմանը համեմատ: Նրա (պետական իշխանության) հետ միասին աստիճանաբար չքանում են հարկադրանքի բոլոր և ամեն տեսակի ձևերը»:

Սակայն, ինչպես են անհետանում դասակարգերը: Չէ՞ վոր դասակարգերն իրենք իրենց չեն կարող անհետանալ: Պարզ է, վոր վերացվող դասակարգերի դիմադրությունը պետք է ամենակատաղի պայքարում խորտակվի:

Դեպի կոմունիզմը տանող անցման շրջանը—պրոլետարիատի դիկ-

տատուրան—մի շրջան ե, յերբ ամբողջ տնտեսությունն արմատական վերակառուցման ե յենթարկվում, և վերանում են շահագործող դասակարգերը, ապա և, տնտեսական նոր հարաբերությունների հիման վրա, վերանում են առհասարակ դասակարգերը և դասակարգային ամեն տեսակի տարբերություններն ու դասակարգային հասարակության մնացուկները:

Մարդկային յեռանդը (էներգիան), վորը կապիտալիստական հասարակության մեջ ծախսվում ե դասակարգային պայքարի վրա և սպառվում ե ծանր աշխատանքների մեջ և գոյության ծանր կռվում, կոմունիզմի ժամանակ ամբողջապես կգնա գիտության և տեխնիկայի զարգացման ուղղությամբ, կգնա բնության ուժերը մարդկությանը յենթարկելու ուղղությամբ: Կապիտալիզմի պայմաններում գիտության և տեխնիկայի բոլոր նվաճումները դառնում են կապիտալիստների սեփականություն և նրանց կողմից օգտագործվում են այն չափով, ինչ չափով դա ձեռնտու յե բուրժուազիային՝ նրա հարստացման համար և բանվորների շահագործումն ուժեղացնելու համար: Կոմունիզմի ժամանակ գիտության և տեխնիկայի նվաճումները կդառնան ամբողջ հասարակության սեփականություն, նրանք անհապաղ և լայնորեն կգործադրվեն (կկիրառվեն) կյանքում: Արտադրությունը կազմակերպվելու յե միասնական պլանի հիման վրա: Յեվ մարդկային յեռանդի այն հսկայական մասսան, վորը կապիտալիզմի ժամանակ շպրտվում ե մրցման, արտադրության անարխիայի, ավերիչ ճգնաժամերի վրա, ժողովուրդները միմյանց դեմ գրգռելու (սադրելու), բանակի, սպառազինումների, պատերազմների, կործանման վրա՝ կգնա արտադրության զարգացման, կուլտուրական շինարարության, մարդկային ամբողջ հասարակության համար օգտակար նպատակների վրա:

Կոմունիզմի ժամանակ, ինչպես ասում ե Կոմունիստական ինտերնացիոնալի ծրագիրը՝ «մարդկությունն առաջին անգամ պատմության մեջ իր բախտը վերցնում ե իր ձեռքը»:

## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Կոմունիստական հասարակության մեջ տեխնիկայի հսկայական աճման կապակցությամբ սաստիկ կբարձրանա աշխատանքի արտադրողականությունը: Բացի դրանից, վորքան վոր աշխատավորները աշխատելու յեն իրենք իրենց համար, ամբողջ հասարակության համար, և վոչ թե (ինչպես ե կապիտալիզմի ժամանակ) տղրուկ-սեփականատերերի համար՝ այնքան ել աշխատանքը դադարելու յե հարկադրական լինելուց, նա կսկսի հիրավի ցույց տալ արտադրողականության հրաշքներ: Աշխատանքը կդառնա ամեն մարդու համար մի հասարակ, առողջ պահանջ, կենսական անհրաժեշտություն: Աշխատանքը



կդառնա ինչպես ազատ և ստեղծագործ աշխատանք և ամբողջապես նվիրված կլինի մարդկային հասարակության ընդհանուր շահերին: Լենինն ասում եր.

«Աշխատանքի կապիտալիստական արտադրողականության հանդեպ՝ կոմունիզմը կամավոր, գիտակից, միավորված, առաջավոր տեխնիկան օգտագործող բանվորների աշխատանքի բարձրագույն արտադրողականություն ե»:

Կոմունիզմի ժամանակ կանհետանան զբաղմունքները, վորոնց կարծես ամրացված են բանվորները մինչև կյանքի վերջը: Մարդիկ այնքան բարձր զարգացում կունենան կամ, ինչպես ասում են, պոլիտեխնիկորեն (բազմակողմանի) այնքան կրթված կլինեն, վոր կարող կլինեն ազատ անցնել մի աշխատանքից մի այլ աշխատանքի, որինակ, գործարանական մեքենայի մոտ աշխատելուց՝ գիտական հիմնարկում աշխատելու: Մեքենայի մոտ աշխատելն անբաժան կլինի լաբորատորիայում աշխատելուց: Գիտական աշխատանքը և դազգյահի մոտ աշխատելը կլինեն մի պրոցես, նրանք կլրացնեն միմյանց, մի աշխատանքը կշարունակի մյուս աշխատանքը: Կանհետանա մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած տարբերությունը: Աշխատավորն արդյունաբերական ձեռնարկության մեջ վոչ միայն հսկելու յե լծակներին, վոչ միայն շարժման մեջ ե դնելու մեխանիզմները, մեքենաները և հետևելու յե նրանց գործելուն, այլև ինքը մտցնելու յե կազմակերպական բարելավումներ, հայտնագործություններ, տեխնիկական կատարելագործումներ և այլն:

Հսկայական չափերով կզարգանան գիտությունը, արվեստը և տեխնիկան: Մարդկությունը վոտք կդնի մեծագույն գյուտերի, հայտնագործությունների և ստեղծագործական նվաճումների շրջանը:

Ինչպես պահանջում ե հասարակության շահը, աշխատանքն ամենուրեք կդառնա ընկերական արտադրական մրցակցության ձև: Ստեղծագործական խանդավառությունը (էնտուզիազմ) կդառնա հասարակության և առանձին անհատի կոլեկտիվ կյանքի հիմնական շարժիչը՝ նոր նվաճումների, բնության ուժերը մեզ յենթարկելու համար մղվող պայքարում:

Գիտության և կուլտուրայի հսկայական զարգացումը և նրանց լայնագույն մասսաների սեփականություն դառնալը կջնջեն սնոտիապաշտությունների բոլոր մնացորդները, կրոնական նախապաշարմունքները և հին կենցաղի այլանդակ մնացուկները: Մասնավոր սեփականության անհետացման հետ միասին կանհետանան նույնպես մասնավոր սեփականության դեմ կատարվող հանցագործությունները և, հետևաբար, կանհետանան բանտերը և մասնավոր սեփականության դեմ կատարված հանցագործությունների համար տրվող պատիժները: Անհնարին կդառնան ամեն տեսակի գործազրկությունը, պոռնկությունը,

գոյությունը և մյուս այլանդակ յերևույթները, վորոնք անխուսափելի յեն կապիտալիզմի ժամանակ։

Գյուղատնտեսության մեքենայացման և ելեկտրավորման հսկայական աճման հիման վրա կանհետանա քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրությունը, կանհետանա գյուղի կուլտուրական հետամնացությունը։

Հզոր ելեկտրակայանքները ելեկտրական եներգիան ուղղելու յեն գյուղատնտեսական արտադրանքի գործարանները։ Ոդերևութաբանությունը [1]) (մետեորոլոգիա), ագրոնոմիան, հողագիտությունը, քիմիան կհասնեն այնպիսի զարգացման, յերբ չեն լինի վատ ու լավ հողեր, պիտանի և վոչ պիտանի հողեր, չի լինի յերաշտ (չորայնություն) և բնական այլ արգելքներ գյուղատնտեսության զարգացման գործում։

Դաշտում, բանջարանոցում, այգում, կաթնաֆերմում և այլնում կատարվող աշխատանքն իսկ վերածվելու յե նույն բանին, ինչ և արդյունաբերության մեջ, այն է՝ վերածվելու յե եներգետիկ կայարաններ, մեխանիզմներ և այլն կառավարելու գործի։

Գետերի, ջրվեժների, ջրանցքների (կանալների), վոռոգիչ կառուցումների ոգտագործումը ելեկտրական եներգիա ստանալու համար հնարավորություն կտա ստեղծելու արդյունաբերական նոր կենտրոններ այնպիսի շրջաններում, վորտեղ այժմ իշխում է գյուղական անդորրությունը։

Դրա հետ մեկտեղ միանգամայն կփոխեն իրենց կերպարանքը մեծ քաղաքները, վորտեղ, ինչպես ասում եր Ենգելսը, «մարդիկ շնչահեղձ են լինում իրենց սեփական աղբի մեջ»։ Քաղաքները կծածկվեն պարտեզներով, պարկերով (զբոսապուրակներով), բուլվարներով (զբոսարաններով), քաղաքների, փողոցների և հրապարակների կազմությունն այնպես է լինելու, վոր նպաստի մարդկանց առողջության բարձրացման,— դրանք կլինեն քաղաք-պարտեզներ։

Տրանսպորտի կատարելագործված բոլոր տեսակների լայն ծավալումը հնարավորություն կտա աշխարհի ամբողջ բնակչությանը բնակություն հաստատել՝ հաշվի առնելով միայն մարդու հարմարությունները՝ նրա կուլտուրական պահանջները, նրա հակումները։ Այս ամենը տանում է դեպի քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրության լիակատար վերացում։ Բոլորովին կանհետանա տղամարդու և կնոջ միջև յեղած ամեն մի անհավասարություն թե հասարակության մեջ, թե արտադրության մեջ և թե կենցաղում։

Ընտանեկան կյանքն ամբողջապես այնպես կվերակառուցվի, վոր կինը կդադարի տնային ստրկուհի լինելուց, վորի պարտականությունն է կերակուր յեփելը, սպիտակեղեն լվանալը, գուլպաներ կարկատելը և

[1]) Ոդերևութաբանությունը մի գիտություն է, վոր ուսումնասիրում է ոդում տեղի ունեցող յերևույթները, յեղանակը և այլն։



այլն։ Հասարակական ճաշարանները, գործարան-խոհանոցները, արհեստանոցները, մանկական հիմնարկները և այլն՝ այս բնագավառում լիապես կփոխարինեն կնոջ անհատական աշխատանքը և անձնական հոգատարությունը։ «Տանտիրուհի» գաղափարը բոլորովին կանհետանա մարդկանց գիտակցությունից։

Կանհետանա նույնպես ժողովուրդների միջև յեղած անհավասարությունը։ Հետամնաց ժողովուրդներն առաջավոր ժողովուրդների ոգնությամբ և աջակցությամբ իրենց զարգացումով արագորեն կհասնեն տնտեսական և կուլտուրական տեսակետից առաջավոր այդ ժողովուրդներին։ Ազգային տարբերությունները կանհետանան։ Ազգային կուլտուրաները կմիաձուլվեն և կկազմեն համամարդկային միասնական մի կուլտուրա՝ ամբողջ մարդկության համար ընդհանուր մի լեզվով։

## ԱՄԵՆ ՄԵԿԻՑ՝ ԸՍՏ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՄԵՆ ՄԵԿԻՆ՝ ԸՍՏ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

Կոմունիստական հասարակակարգում յուրաքանչյուր մարդ հասարակությանը կտա այն, ինչ ընդունակ է տալու, և կստանա այն, ինչ պետք է նրան։

Մեքենական տեխնիկայի բարձր մակարդակը հասարակական տնտեսության բոլոր բնագավառներում հնարավորություն կտա արտադրելու այն քանակությամբ և՛ արդյունաբերական, և՛ թե գյուղատնտեսական արդյունքներ (մթերքներ), վոր նրանցով կարելի կլինի լիովին բավարարել մարդու բոլոր պահանջները։

Կոմունիզմ նշանակում է՝

«Ամեն մեկից՝ ըստ նրա ընդունակությունների, ամեն մեկին՝ ըստ նրա պահանջների»։

Կապիտալիստական տնտեսությունն ապրանքային տնտեսություն է։ Սա մենք արդեն գիտենք։ Գործարանում պատրաստվող արտադրանքը գնում է շուկա, և դրանով իսկ նա դառնում է ապրանք։ Կոմունիստական հասարակության մեջ շուկա չի լինի, և արտադրանքը բաշխվելու յե խստորեն վորոշված պլանով։ Յեվ քանի վոր արդյունքները վոչ թե վաճառվելու յեն, այլ բաշխվելու, ապա սա ավելորդ է դարձնում փողի գոյությունը։ Արդյունքները բաշխման համար կհավաքվեն հանրային պահանոցներում, պահեստներում, բաշխման կետերում, այդտեղից նրանք կգնան սպառողներին։ Յուրաքանչյուրը կարող է ստանալ այնքան արդյունքներ (ապրանքներ), վորքան նրան հարկավոր է։

Արդյոք հիմք կա՞ յերկյուղ կրելու, թե մեկն անչափ շատ կվերցնի, իսկ մյուսի համար վոչինչ չի մնա վերցնելու։ Վոչ, դրանից չպետք է յերկյուղ կրել։ Կոմունիստական հասարակության մեջ, ար-

տադրողական ուժերի չտեսնված զարգացման հետևանքով, այնքան արդյունքներ կլինեն, վոր կարելի կլինի ազատորեն բավարարել մարդկանց բոլոր պահանջները, վորքան և մեծ լինեն այդ պահանջները։ Յեվ քանի վոր բոլոր պահանջները լիապես բավարարվելու յեն՝ ով ցանկություն կունենա պարզեխպարզ ավելի շատ «պոկելու»։ Իսկ յեթե մեկնումեկը նույնիսկ այդ բանը ցանկանար, ապա դրանից նա վոչ մի օգուտ չեր ունենա. չէ՞ վոր վոչ վոք չի լինի, վորին կարելի լինի վաճառել արդյունքները։

Մարդուն արդյունքներ ավելի հարկավոր չեն, քան պահանջվում է նրա կարիքների համար։ Բացի դրանից՝ մարդկանց գիտակցության մակարդակն այնքան բարձր կլինի, վոր պոկողականության — կապիտալիզմի խայտառակ ժառանգության — վոչ մի հետքը չի մնա։

Կոմունիզմը միանգամ ընդմիշտ վերջ կտա կապիտալիստական հասարակության այնպիսի մնացուկներին, ինչպիսիքն են ագահությունը, շահասիրությունը, մոլթեպաշտությունը, ժլատությունը, եգոիզմը (յեսամոլությունը)։ Այս ամենն արդյունք է սեփականատիրական այն սովորությունների, վոր ծնել է կապիտալիզմը։

Այս ամենից յերևում է, վոր մարդիկ կոմունիզմի ժամանակ բոլորովին այլ կերպարանք կունենան, քան կապիտալիզմի ժամանակ։

Ընկ. Ստալինն ամերիկյան բանվորական առաջին պատգամավորության հետ 1927 թ. զրուցելիս՝ այն հարցին, թե «արդյոք կարող եք դուք համառոտակի տալ մեզ ապագա այն հասարակության բնորոշումը, վորը փորձում է ստեղծել կոմունիզմը» — պատասխանեց՝

«Կոմունիստական հասարակության ընդհանուր բնութագիրը տրված է Մարքսի, Էնգելսի և Լենինի աշխատությունների մեջ։ Յեթե համառոտակի տալու լինենք կոմունիստական հասարակության անատոմիան [1] (անդամազննությունը), ապա դա կլինի այնպիսի հասարակություն,

ա) վորտեղ արտադրության գործիքների և միջոցների մասնավոր սեփականություն չի լինի, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականություն, բ) վորտեղ չեն լինի դասակարգեր և պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի և գյուղատնտեսության աշխատավորներ, վոր տնտեսապես կառավարվում են վորպես աշխատավորների ազատ ասոցիացիա, գ) վորտեղ ժողովրդական տնտեսությունը, վոր պլանով է կազմակերպված, կխարսխվի ինչպես ինդուստրիայի բնագավառում, այնպես և գյուղատնտեսության բնագավառում բարձրագույն տեխնիկայի վրա, դ) վորտեղ չի լինի հակադրություն քաղաքի և գյուղի միջև, ինդուստրիայի և գյուղատնտեսության միջև, ե) վորտեղ

[1] Անատոմիան օրգանիզմի կազմության նկարագիրն է։



արդյունքները կբաշխվեն ֆրանսիական հին կոմունիստների սկզբունքով՝ «ամեն մեկից՝ ըստ ընդունակությունների, ամեն մեկին՝ ըստ պահանջների», զ) վորտեղ գիտությունը և արվեստը օգտվելու յեն այնպիսի պայմաններից, վորոնք բավականաչափ նպաստավոր են՝ լիակատար բարգավաճման հասնելու համար, է) վորտեղ անձնավորությունը, ազատ մի կտոր հացի հոգսից և «աշխարհի ուժեղներին» հաճոյանալու անհրաժեշտությունից՝ հիրավի ազատ կդառնա»։

## ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՍՏՈՐԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄՆ Է

Սակայն կոմունիզմն այդպիսի բարձրության, իր բարձրագույն աստիճանին մեկեն չի հասնի։ Նրան նախորդում է մի ավելի վաղ շրջան, յերբ հասարակությունը դեռևս ամբողջապես չի ազատված կապիտալիստական հասարակության առանձին մնացուկներից։ Կոմունիզմի այս ստորին աստիճանը կոչվում է սոցիալիզմ։

Լիակատար ավարտուն կոմունիզմից սոցիալիզմն ամենից առաջ տարբերվում է արտադրողական ուժերի զարգացման իր աստիճանով և արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրության արդյունքների բաշխման իր ձևերով։

Սոցիալիզմի ժամանակ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը դեռևս այնպիսի բարձրության վրա չեն կանգնած, վոր հնարավոր լիներ լիապես բավարարելու ամբողջ բնակչության կարիքները՝ անկախ նրանից, թե յուրաքանչյուր աշխատավոր առանձին վերցրած ինքն անձնական վորքան աշխատանք կտա հասարակությանը։

Կապիտալիզմի այն մնացուկներից մեկը, վորը վորոշ ժամանակ պահպանվում է և սոցիալիզմի ժամանակ՝ դա դեպի աշխատանքը յեղած հին՝ դեռ չվերացված վերաբերմունքն է, վոր կապիտալիստական հասարակությունից է անցել։ Այս աստիճանում դեռևս հնարավոր են լոդրություն և կորզողություն (պոկողականություն) աշխատավորության հետամնաց խմբերի մեջ։ Աշխատանքը դեռևս բոլորի համար չի հանդիսանում մարդու կենսական առաջին պահանջը։ Այդպիսին նա դառնում է միայն լիակատար կոմունիզմի շրջանում։

Այս պատճառով սոցիալիզմի ժամանակ արդյունքների բաշխումը բնականորեն իր մեջ կրում է աշխատանքի լավագույն օրինակները խրախուսելու և վատթարագույն օրինակները դատապարտելու գծեր։ Սոցիալիզմի ժամանակ դեռևս հնարավորություն չկա ամեն մեկին տալու «ըստ պահանջների», ինչպես վոր այդ կլինի կոմունիզմի ժամանակ։ Սոցիալիզմի ժամանակ ամեն մեկն ստանում է այն քանակությամբ արդյունքներ, վոր համապատասխան է նրա ծախսած աշխա-

տանքի քանակին ու վորակին, վոր համապատասխան է նրա ունեցած գիտելիքներին, ընդունակություններին, վորակավորմանը, բարեխղճությանը, աշխատունակությանը յեվ այլն: *Իսկ լոդրը, դատարկապորտը նույնիսկ վոչինչ էլ չի ստանում. «Ով չի աշխատում, նա չի ուտում»,—ահա սոցիալիզմի օրենքը:*

*Այսպիսով սոցիալիզմ դեռևս չի նշանակում լիակատար հավասարություն: Իսկապես վոր, յեթե սոցիալիզմի ժամանակ ամեն մեկն ստանում է ծախսված աշխատանքի համապատասխան, ապա բնական է, վոր անհավասարությունն այս շրջանում դեռևս պահպանվում է, վորովհետև աշխատողներից մեկը ֆիզիկապես ավելի յե առողջ, մյուսը՝ պակաս, մեկն ավելի յե աշխատունակ, մյուսը՝ պակաս, մեկն ավելի յե վորակավոր, մյուսը՝ պակաս, ուստի և՝ մեկն արտադրում է ավելի, մյուսը՝ պակաս: Մեկն ընտանիք չունի, մյուսն ունի ընտանիք և այլն: Առաջինի նյութական դրությունն ավելի լավ կլինի, քան յերկրորդինը:*

*Սոցիալիզմի ժամանակ մնում է աշխատանքի և սպառման նորմավորումը (չափավորումը): Լենինը գրել է, վոր մինչև այն ժամանակ, յերբ կգա կոմունիզմի բարձրագույն փազը (աստիճանը), անհրաժեշտ է* «թե հասարակության կողմից յեվ թե պետության կողմից ամենախիստ հսկողություն *աշխատանքի չափի և սպառման չափի վերաբերմամբ»:*

*Սոցիալիստական հասարակությունը (թեև սոցիալիզմի ժամանակ դասակարգեր արդեն չկան)՝ մանավանդ սկզբները վորոշ չափով շարունակում է դեռևս պահպանել առաջվա հասարակության գծերը՝ դասակարգային տարբերությունների մնացորդները, հին սովորությունների և հարաբերությունների մնացորդները:*

*Սա նրանից է առաջ գալիս, վոր սոցիալիստական հասարակության մարդկանց թվում քիչ չեն այնպիսիները, վորոնք դուրս են յեկել նախկին մանր սեփականատերերի միջավայրից, նախկին կուլակներից, նախկին առևտրականներից, և վոչ թե միայն պրոլետարներից: Բուրժուական միջավայրից դուրս յեկածները դիմադրում են հասարակության սոցիալիստական վերակառուցմանը:*

*Դեռ այս քիչ է, հարկավոր է լինում հաղթահարել քաղաքի և գյուղի մանր-սեփականատիրական մնացուկների դիմադրությունը՝ մանր և մանրագույն տնտեսատերերի միլիոնավոր մասսաների սովորության և անշարժության ուժը: Այս խնդիրը հատկապես դժվար է: Քաղաքային և գյուղական մանր բուրժուազիայի սոցիալիստական վերադաստիարակությունը՝ դա տասնյակ և հարյուր միլիոնավոր գյուղացիների, տնայնագործների և արհեստավորների վերադաստիարակություն է: Այս խավերի մանր-սեփականատիրական բնույթը նրանց մեջ առաջացնում է տատանումներ, յերերանքներ, նրանք, այն*



*էլ միայն կադրային պրոլետարիատի և նրա կուսակցության ազդեցությամբ, շատ դանդաղորեն են վերացնում մանր տնտեսատերերի իրենց սովորությունները և շահերը: Բանվոր դասակարգն էլ դեռևս տևական վերադաստիարակման կարիք ունի: Չէ՞ վոր վոչ բոլոր բանվորներն են, վոր միանգամից վերացնում են այն սովորքները, վոր գոյացել են նրանց մոտ կապիտալիստական պայմաններում: Մեռածը դեռևս յերկար ժամանակ բռնում է (քարշ է տալիս) վողջին, բուրժուական հին սովորքների ժանգը փորձ է անում ուտելու սոցիալիստական հասարակարգը:*

*Այս ամենը հենց այն է նշանակում, վոր նույնիսկ սոցիալիստական հասարակության մեջ, մանավանդ սկզբնական շրջանում,* դասակարգային տարբերությունների մնացորդները յեվ դասակարգային պայքարի տարրերը դեռևս վորոշ ժամանակ պահպանվում են, *հետևապես՝ պահպանվում է և պետությունը, հարկադրանքի և սոցիալիստական կարգերի ու հասարակական սոցիալիստական սեփականության պաշտպանության օրգանները:*

*Պայքար պետք է մղվի ձրիակերության, կորզողության (պոկողականության), հավասարեցման, դեպի աշխատանքը յեղած վոչ-սոցիալիստական վերաբերմունքի մնացորդների դեմ, հասարակական սոցիալիստական սեփականության հափշտակումների դեմ, կապիտալիստական հասարակության մնացուկների դեմ:*

*Այսպիսով, սոցիալիզմը* կոմունիզմի սկզբնական, ստորին աստիճանն է, այսինքն՝ մի աստիճան է, վորի վրա նոր հասարակությունը դեռևս բոլորովին ազատ չէ բուրժուական հասարակարգի բոլոր մնացորդներից: *Կոմունիստական ինտերնացիոնալի ծրագիրն ասում է, վոր կոմունիստական հասարակությունն այս աստիճանի վրա*

> *«դուրս է գալիս՝ ծածկված բոլոր կողմերից,—թե տնտեսական, թե բարոյական, թե մտավոր կողմերից,—այն հասարակության բնական (ծնական) խալերով, վորի ծոցից նա ծնվում է»:*

*Սոցիալիզմը՝ դա անդասակարգ հասարակություն է: Այս հասարակության մեջ իրագործվում է այս լոզունգը՝* «Ով չի աշխատում, նա չի ուտում» յեվ՝ «Հավասար աշխատանքի համար՝ հավասար քանակով արդյունքներ»:

## ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ՎՈՏՔ ԿՈԽԵՑ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ

*Մեզանում արդեն վոչնչացված է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունն արդյունաբերության մեջ և գյուղատնտեսության ճնշող մասում: Վերջնականապես ջլատված են կուլակության—մեր յերկրի կապիտալիստական վերջին լուրջ դասակարգի—ուժերը, մնում է նրան ծեծապատ անել (հարվածելով վերջ տալ), վորպեսզի*

շահագործող այս դասակարգն էլ ամբողջապես լիկվիդացիա լինի (վերացվի)։

ՍՍՀՄ ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ սոցիալիստական ուժերը ներկայումս վճռապես հաղթել են կապիտալիստական ուժերին։

1921 թվին Լենինի դրած «ո՞վ ում»-ի հարցը, այսինքն այն հարցը, թե սոցիալիզմի և կապիտալիզմի ամենակատաղի պայքարում ո՞ր ուժերը կհաղթեն՝ յերկրի ներսում վերջնականապես լուծված է հօգուտ սոցիալիզմի։

Մենք կառուցել ենք սոցիալիստական տնտեսության ամուր, հաստատուն հիմք։ Սոցիալիստական էկոնոմիկայի (տնտեսության) հիմքն ավարտված է։ Մեր յերկիրը վերջնականապես հաստատվել է սոցիալիստական ճանապարհի վրա։

Մեզանում չկա գործարանների, հանքահորերի (շախտաների), բանկերի, յերկաթուղիների, հողի, անտառների, ջրային տրանսպորտի (ջրուղիների), հեռագրի, ոդային նավատորմի և այլնի մասնավոր սեփականություն։

Մեզանում արդյունաբերության մեջ չկա բանվորների հասարակական աշխատանքի արդյունքի յուրացում, հետևաբար և՝ չկա մեզանում շահագործում։

Մեզանում չկա արտադրության անարխիա, մեզանում տնտեսությունը պլանային է, ուստի և՝ մեզանում չկան և չեն էլ կարող լինել ճգնաժամեր (կրիզիսներ)։

Մեզանում տեղի յե ունենում արտադրողական ուժերի՝ աշխարհում չտեսնված աճում, գիտական և տեխնիկական գործունեության զարգացում, բնական հարստությունների լայն մշակում, վիթխարի կառուցումների ծավալում և աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության ստեղծում,—և այս ամենը կատարվում է վոչ թե կապիտալիստների անձնական հարստացման նպատակներով, այլ աշխատավոր բոլոր մասսաների (զանգվածների) օգուտի համար։

Մենք ավարտում ենք գյուղատնտեսության կոլեկտիվացումը և սրա հիման վրա՝ կուլակության, վորպես դասակարգի, վերացումը։

Խորհրդային հասարակակարգի հիմքը հանրային՝ սրբազան և անձեռնմխելի՝ սեփականությունն է։ Ֆաբրիկաներից, գործարաններից, տրանսպորտից, խորհտնտեսություններից (խորհտնտներից), կոլտնտեսություններից (կոլտնտներից) և այլնից ստացվող յեկամուտները գնում են արդեն վոչ թե կապիտալիստական տղրուկների գրպանները, այլ աշխատավորական մասսաների իրենց—նրանց պետության տրամադրության տակ, և սա հանդիսանում է բանվորների և կոլտնտեսային գյուղացիության դրության անընդհատ բարելավման աղբյուր։

Այս ամենը թույլ է տալիս, վոր կուսակցության, բանվոր դասա-



կարգի և աշխատավոր բոլոր մասսաների առջև դրվի սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցելը, վորպես ամենամոտ ժամանակներս իրագործելի մի հարց։

Կուսակցական XVII կոնֆերանսն այս խնդիրն արտահայտեց հետևյալ ծրագրով, վորը պետք է իրագործվի յերկրորդ հնգամյակի ընթացքում (1933—1937 թ. թ.).

«Կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարբերություններ և շահագործում ծնող (առաջացնող) պատճառների լիակատար վոչնչացումը, և կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի աշխատավոր ամբողջ բնակչությունը սոցիալիստական անդասակարգ հասարակության գիտակից և ակտիվ կերտողներ դարձնելը»։

## ՔԱՂՔԵՆԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՎ ՀԱՎԱՍԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Բուրժուական քաղաքագետները, մասսաներին կոմունիզմից վախեցնելու համար, սոցիալիզմը հաճախ նկարագրում են (պատկերում են) վորպես մի ընդհանրական բաժանք, վորն սկսվում է, յերբ ֆաբրիկաներն ու գործարանները և հողերը կապիտալիստներից ու կալվածատերերից արդեն խլված են։ Իրականում այդպիսի բաժանքը սոցիալիզմի հետ վոչ մի ընդհանուր բան չունի։ Սոցիալիզմը կառուցվում է խոշոր տնտեսության հիման վրա՝ առանց մասնավոր սեփականության։ Իսկ ընդհանրական բաժանք — իրապես ամենևին չի նշանակում սոցիալիզմի կառուցում, այլ նշանակում է մանր, գաճաճային տնտեսությունների և միլիոնավոր մանր տնտեսատերիկների ստեղծում։ Իսկ չէ՞ վոր մանր տնտեսատերիկներից աճում են միջակները, իսկ միջակներից՝ խոշորները, մի խոսքով՝ սա նշանակում է նորից ստեղծել կապիտալիզմ, և վոչ թե սոցիալիզմ կառուցել։

Մենք այլևս չենք խոսում այն մասին, վոր գույքի (ունեցվածքի) այդպիսի ընդհանրական բաժանքն առհասարակ անկարելի գործ է։ Հիրավի, ինչպես կարելի յե բաժանել միմյանց միջև, որինակ, հանքահորը, շոգենավը, յերկաթուղային կայարանը կամ հնոցը (հրահալոցը)։ Բայց յեթե նույնիսկ հնարավոր լիներ սա, ապա ո՞վ շահագրգռված կլիներ մի այդպիսի բաժանքում։ Արտադրության միջոցների ընդհանրական բաժանքի մեջ բանվոր դասակարգը շահագրգռված չի։ Նրա մասին կարող են յերազել միայն մանր սեփականատերերը։ Այդ «սոցիալիզմը» վոչ թե պրոլետարական, այլ մանր-բուրժուական կամ, ինչպես մենք էլ ասում ենք՝ մեշչանական է։

Դեպի մանր-բուրժուական, մեշչանական այդ սոցիալիզմը մեր յերկրում էլ վորոշ ձգտում (ձգողություն) է նկատվում բանվորների

և գյուղացիների հետամնաց խավերի կողմից: Այդ ձգտումն արտահայտվում է գլխավորապես դեպի ընդհանրական հավասարեցումը յեղած ձգտողության ձևով: Ինչպես գիտենք՝ լիակատար հավասարությունը հնարավոր է միայն լիակատար կոմունիզմի ժամանակ. սոցիալիզմն ստիպված է դեռևս պահպանելու վորոշ անհավասարություն: Սոցիալիզմի ժամանակ դեռևս հնարավորություն չկա բավարարելու բոլոր աշխատավորներին ըստ պահանջների: Սոցիալիզմի ժամանակ աշխատանքն ինքը հսկայական չափով թեթևանում է (հեշտանում է). գործածության են մտնում շատ մեքենաներ, վոր փոխարինում են ձեռքի աշխատանքը, կրճատվում է աշխատանքային (բանելու) օրը, աշխատանքն ավելի բարձր է վարձատրվում, տարեցտարի լավանում են աշխատավորների նյութական և կենցաղային պայմանները: Սակայն՝ աշխատավորների նյութական պայմանները միատեսակ չեն. նյութական բարիքները բաշխվում են վոչ թե հավասարապես, այլ նայած նրան, թե ով ինչպես է աշխատում, թե ով ինչպես է մասնակցում ժողովրդական տնտեսության զարգացման գործին, սոցիալիստական շինարարությանը: Այս պատճառով էլ սխալ է, յեթե կոլտնտեսություններում արդյունքները և յեկամուտները միմյանց միջև բաշխում են ըստ ուտողների թվի: Այս պատճառով էլ սխալ է միատեսակ վարձատրել վոչ միայն վորակյալ ինժեներին ու վորակյալ բանվորին, այլև գործարանային յերկու բանվորի, յեթե նրանք կատարում են տարբեր աշխատանք, մեկը՝ ծանր, մյուսը՝ թեթև աշխատանք, և յեթե նրանք տարբեր վերաբերմունք ունեն դեպի իրենց գործը. յեթե մեկը բարեխիղճ է վերաբերվում, իսկ մյուսը՝ անփույթ, յեթե մեկը՝ հարվածային է, իսկ մյուսը՝ չվուն (չվող) և հարբեցող:

Կարլ Մարքսը մատնանշել է, վոր սոցիալիզմի ժամանակ սպառման մեջ չի կարող հավասարություն լինել, վորովհետև վոր բաշխումը կատարվում է վոչ թե ըստ պահանջների, այլ ըստ աշխատանքի: Ի՞նչ իմաստով է հավասարություն սահմանվում: Այն իմաստով, վոր հավասար աշխատանքը միատեսակ է վարձատրվում:

«Հավասարությունը կայանում է նրանում, վոր չափելը կատարվում է հավասար չափանիշով — աշխատանքով: Բայց մեկը ֆիզիկապես[1]) կամ մտավորապես գերազանցում է մյուսից, հետևաբար և՝ միևնույն ժամանակում տալիս է ավելի մեծ քանակով աշխատանք, կամ ընդունակ է ավելի յերկար աշխատելու, իսկ վորպեսզի աշխատանքը կարողանա ծառայել վորպես չափանիշ՝ նա պիտի վորոշվի ըստ իր տևականության կամ ըստ իր ինտենսիվության (լարվածության), հակառակ դեպքում նա կդադարեր վորպես չափանիշ ծառայելուց: Այս հավասար իրավունքն անհավասար իրավունք է անհավասար աշխատանքի համար»:

1) Ֆիզիկապես — իր ուժով:



Միայն կոմունիզմի ժամանակ վերջնականապես կվերացվի այս անհավասարությունը: Լիակատար

«...արտադրություն և հավասարություն կոմունիզմի առաջին փուլը, հետևաբար, դեռևս չի կարող տալ. տարբերություններ, և անիրավացի տարբերություններ, հարստության կողմից կմնան, բայց անհնարին կլինի մարդու շահագործումը մարդու կողմից, վորովհետև չի կարելի զավթել և մասնավոր սեփականություն դարձնել արտադրության միջոցները, գործարանները, մեքենաները, հողը և այլն»,— ահա թե ինչ էր գրում Լենինը կոմունիզմի առաջին փուլի, այսինքն՝ սոցիալիզմի մասին:

## ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ

Մենք հսկայական ճանապարհ ենք անցել՝ սոցիալիստական անդասակարգ հասարակություն կերտելու համար: Մենք, ինչպես ասում էր Լենինը, «սոցիալիզմը քաշեցինք-բերինք առօրյա կյանք»: Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ մեր յերկրի բանվոր դասակարգը ցույց է տալիս համաշխարհային ամբողջ պրոլետարիատին, թե ինչպես պետք է պայքարել սոցիալիզմի — աշխարհի բոլոր առաջավոր գիտակից բանվորների այս նվիրական գաղափարի համար:

Իսկ չէ՞ վոր շատ էլ վաղուց չէ (1926—1927 թ. թ.), վոր մեր կուսակցության թշնամիները տրոցկիստները Զինովյեվի և Կամենևի հետ միասին ապացուցում եյին, թե հնարավոր չէ սոցիալիզմ կառուցել մի յերկրում: Կուսակցությունը տրոցկիստների հակահեղափոխական այս թեորիային (տեսությանը) անխնա հակահարված տվեց:

Ինչի՞ վրա յե հիմնված պրոլետարական հեղափոխության հաղթանակի—մի յերկրում սոցիալիզմ կառուցելու—լենինյան թեորիան, մի թեորիա, վորն առանձնապես լիակատար և բազմակողմանի կերպով զարգացրեց ընկ. Ստալինը: Այն բանի վրա, վոր կապիտալիզմը զարգանում է անհավասարաչափ, թռիչքաձև:

«Տնտեսական և քաղաքական զարգացման անհավասարաչափությունը կապիտալիզմի անպայման (բացարձակ) օրենքն է,— ասել է Լենինը: Այս անհավասարաչափությունը, ինչպես մատնանշել ենք մենք, առանձնապես շեշտակի դարձավ իմպերիալիզմի շրջանում. նա դարձավ թռիչքաձև:

Ի՞նչ է նշանակում կապիտալիզմի զարգացման այս թռիչքաձևությունը կապիտալիզմի վերջին ստադիայում (աստիճանում), այսինքն՝ իմպերիալիզմի դարաշրջանում: Կապիտալիզմը միշտ այնպես է զարգացել, վոր յերկրներից վոմանք առաջ են անցել, իսկ մյուսները հետ են մնացել: Գործն այսպես էր ընթանում շատ և շատ տարի-

ներ: Բոլոր յերկրները զարգանում եյին, և կապիտալիստական սիստեմում նրանցից յուրաքանչյուրը գրավում էր ավելի կամ նվազ վորոշ տեղ: Սակայն յերբ սկսվեց իմպերիալիզմի դարաշրջանը, յերբ սաստկացավ մրցությունը (կոնկուրենցիան)՝ սկսեցին արագորեն մեծանալ բուրժուական պետությունների միջև յեղած պայքարը, նրանց զարգացման անհավասարաչափությունը: Յերկրներից վոմանք արագաթափ զարգանում, գնում եյին դեպի վեր, մինչդեռ մյուսները վոչ միայն ավելի դանդաղ եյին զարգանում, այլև թեքվում եյին դեպի անկում: Իմպերիալիզմի թռիչքաձև նմանորինակ զարգացման ժամանակ նրա միասնական շղթան կարող է պատռվել (ճեղքվել) ամենաթույլ տեղում. պրոլետարական հեղափոխությունը կարող է հաղթել այն յերկրում, վորը համաշխարհային իմպերիալիզմի ամենաթույլ օղակըն է:

Ցարական Ռուսաստանում կապիտալիզմը Հոկտեմբերի շրջանում արդեն նշանակելիորեն աճել, ստացել էր իմպերիալիստական վառ գծեր: Սակայն, շնորհիվ ինքնակալական ռեժիմի, բուրժուազիան իր ուժերը չկարողացավ այնպես լավ կազմակերպել, ինչպես Ռուսաստանի բուրժուազիայից առաջ անցած կապիտալիստական մի շարք յերկըրներում էր: Մյուս կողմից, պրոլետարիատը, վոր քանակապես նշանակելի չափով աճել էր և յեփվել ինքնակալության դեմ ունեցած մարտերում, կանգնած էր ավելի թույլ բուրժուազիայի դիմաց, քան կապիտալիստական մյուս յերկրների բուրժուազիան էր: Ահա թե ինչու Ռուսաստանը կապիտալիզմի սիստեմում ամենաթույլ օղակը դուրս յեկավ:

Յեվ վորովհետև Ռուսաստանում պրոլետարիատն գլխավորում էր մի այնպիսի հզոր կուսակցություն, վորպիսին բոլշևիկյան մեր կուսակցությունն է, ուստի և պրոլետարիատը շղթան հենց այս օղակումն էլ պատռեց: Ըստ վորում՝ նա կարողացավ վոչ միայն պատռել համաշխարհային կապիտալիզմի շղթան, այլև ամրացնել իր հաղթանակը և ապա հսկայական չափերով ծավալել սոցիալիզմի կառուցումը:

Մեր յերկիրն իմպերիալիզմի շղթայում ամենաթույլ օղակն էր, սակայն նա տնտեսապես բավականաչափ պատրաստ և հասուն էր՝ սոցիալիզմի համար պայքարելու, թեև պայքարելու ավելի դժվար պայմաններում, քան կլինեյին Յեվրոպայի և Ամերիկայի առաջավոր յերկրները, յեթե նրանցից մեկն ու մեկը դառնար սոցիալիստական շինարարության յերկիր: Այժմ, հեղափոխությունից 16 տարի անց, ժողովրդական ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում մեր ունեցած հսկայական հաջողություններից հետո, յերբ մենք ընդհուպ ենք մոտեցել անդասակարգ հասարակություն կերտելու գործին՝ անիմաստ է վիճել հակահեղափոխական





դատարկ պնդումների դեմ տրոցկիզմի, վորը վիճարկում է (վիճելի յե համարում) այն, ինչ արդեն իրականության մեջ գոյություն ունի:

Այժմ ծիծաղելի յե խոսել մեր տնտեսական և տեխնիկական հետամնացության մասին, յերբ, շնորհիվ ինդուստրացման այն քաղաքականության, վորն ամրակուռ կենսագործել է մեր կուսակցությունն ընկ. Ստալինի գլխավորությամբ՝ ԽՍՀՄ դարձել է մի յերկիր, վորն ունի բարձր զարգացման հասած արդյունաբերություն յեվ աշխարհում ամենախոշոր գյուղատնտեսությունը, մի յերկիր, վորն իր հսկայական չափով մեքենայացված է:

Այժմ մենք վերջ ենք տալիս (ծեծասպան ենք անում) մեր յերկրի կապիտալիզմի վերջին մնացորդներին: ԽՍՀՄ հաստատվել է սոցիալիստական ճանապարհի վրա թե քաղաքում և թե գյուղում: Ապահովված է սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում: Յեվ սա ամենալավ պատասխանն է տրոցկիստական հակահեղափոխական այն դատարկաբանության, թե անհնարին է մեր յերկրում սոցիալիզմ կառուցել:

# 2. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՆՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալիզմը դասակարգերի լիակատար վոչնչացումն է նշանակում: Սոցիալիզմի զարգացումը լիակատար կոմունիզմի վերածվելու համար կատարվում է աստիճանաբար, վորպես հետևանք դասակարգային հին հասարակության մնացուկները, մնացորդները հաղթահարելու: Կոմունիզմի բարձրագույն փուլը (աստիճանը) աճում է սոցիալիզմից, այսինքն, կոմունիզմի սկզբնական աստիճանից: Իսկ անցումը կապիտալիզմից սոցիալիզմին չի կարող այլ կերպ կատարվել, քան պրոլետարիատի ամենակատաղի պայքարի միջոցով ընդդեմ կապիտալիստների դասակարգի: Սոցիալիզմը գալիս է փոխարինելու կապիտալիզմին միայն ի հետեվանք պրոլետարական հեղափոխության յեվ պրոլետարիատի դիկտատուրայի: Սոցիալիզմի հաղթանակի համար անհրաժեշտ է, վոր ուժով տապալվի բուրժուազիայի տիրապետությունը և հաստատվի (սահմանվի) պրոլետարիատի տիրապետությունը:

Միայն այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգը կխլի պետական իշխանությունը, կստեղծի իր պրոլետարական պետությունը՝ նա կարող է ծավալել սոցիալիստական շինարարություն և կառուցել սոցիալիստական հասարակություն:

Պետությունն իշխանության գլուխ կանգնած դասակարգի տիրապետության կազմակերպությունն է: Բուրժուական պետությունը բուրժուազիայի տիրապետության կազմակերպությունն է: Պրոլետարական

պետությունը բանվոր դասակարգի տիրապետության կազմակերպությունն է։ Բուրժուազիան պետական իշխանությունն օգտագործում է շահագործումը և ճնշումն ամրացնելու համար։ Բանվոր դասակարգը պետական իշխանությունն օգտագործում է շահագործողներին ճնշելու համար, շահագործման և ճնշման իսկ հնարավորությունը վոչնչացնելու համար, դասակարգերը և դասակարգային տարբերությունները վերացնելու համար, սոցիալիստական անդասակարգ հասարակություն կերտելու համար։

Կարող են հարց տալ՝ իսկ բանվոր դասակարգի ինչին է պետք իշխանությունը, քանի վոր նա ձգտում է կոմունիզմի, այսինքն՝ մի հասարակակարգի, վորտեղ չկան դասակարգեր և պետական իշխանություն։

Բայց ապա ուրիշ ինչ կերպ կարելի յե խլել բուրժուազիայից և կալվածատերերից նրանց գործարաններն ու կալվածները։ Ապա ուրիշ ինչ կերպ կարելի յե խորտակել շահագործող դասակարգերի այն դիմադրությունը, վոր նրանք ցույց են տալիս սոցիալիզմի կառուցմանը։ Ապա ուրիշ ինչ կերպ կարելի յե գյուղացիության և այլ աշխատավորության միլիոնավոր զանգվածները (մասսաները) պատրաստել և տանել սոցիալիզմի ուղով։

Սոցիալ-դեմոկրատները, մենշեվիկները փորձում են ապացուցել, թե կարելի յե սոցիալիզմի հասնել առանց պրոլետարական հեղափոխության և առանց պրոլետարիատի դիկտատուրա (տիրապետություն) սահմանելու։ Նրանք ասում են, թե սոցիալիզմը կարելի յե «մտցնել» դեմոկրատիկ ճանապարհով — պառլամենտի միջոցով, այսինքն՝ բոլոր դասակարգերից ընդհանուր ընտրությունների միջոցով ներկայացուցիչներ ուղարկելով որենքներ հրատարակող հիմնարկը։ Իբրև թե՝ բավական է միայն, վոր բանվորական պատգամավորները պառլամենտում ստանան տեղերի մեծամասնություն — և սոցիալիզմ հնարավոր կլինի մտցնել օրենսդրական ճանապարհով։ Սոցիալ-դեմոկրատները փորձում են բանվորների աչքը թող փչել, հեքիաթներ են պատմում այն մասին, վոր իբրև թե սոցիալիզմի կարելի յե հասնել մոտավորապես այսպես, բանվորական մեծամասնությունը պառլամենտի քննարկմանը կդնի սոցիալիզմ մտցնելու մասին մի շարք որենքներ, կքվեարկի և ձեռքերը բարձրացնելով կանցկացնի նրանց։

Իհարկե, այս ամենն ամբողջապես (մի գլուխ) խարդախություն և ժուլիկություն (սինլքորություն) է, բանվորական մասսաներին խաբելու համար է։ Յերբեք վոչ սոցիալ-դեմոկրատները կմտցնեն պառլամենտ նման որենքներ, և վոչ էլ յերբեք այդպիսի որենքները կանցնեն։ Գերմանիայում, Անգլիայում, Բելգիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, Չեխո-Սլովակիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Լատվիայում, Ֆինլանդիայում և այլ յերկրներում սոցիալ-դեմոկրատները մի



Այսպես է մամուլի «ազատությունը» բուրժուական «դեմոկրատիայի» յերկրներում։




անգամ կամ մի տարի չէ, վոր իշխանության գլուխ են կանգնած յեղել։ Սակայն վոչ միայն «սոցիալիզմ» մտցնելու, այլև բանվորական մասսաների դրությունը վորևե կերպ, թեկուզ ամենափոքր չափով բարելավելու վերաբերյալ վոչ մի որենք նրանք վոչ մտցրել են, վոչ էլ անցկացրել։ Ընդհակառակը, նրանք պաշտպանում եյին բուրժուազիայի հարձակումը աշխատավարձի և գործազուրկների նպաստների վրա։

Անգլիայում այսպես կոչված «բանվորական» կուսակցությունն իշխանության գլուխ է կանգնած յեղել յերկու անգամ և յերկու անգամն էլ հոգատարությամբ փրկում եր կապիտալիզմը, հլու-հնազանդ կատարում եր անգլո-ճակատ իմպերիալիստների բոլոր պահանջները։ Յերկարացրեց հանքափորների (շախտյորների) աշխատանքային որը (բանվորօրը), իջեցրեց մանածագործների, յերկաթուղայինների և նավաբանվորների (դոկերների) աշխատավարձը, կրճատեց գործազուրկների նպաստները, բանվորների ու գյուղացիների արյունով վողողեց Հնդկաստանը և այլ գաղութներ։ Հետագայում «բանվորական» կուսակցության առաջնորդ Մակդոնալդը կանգնեց անգլո-ճակատների, հեղափոխական բանվոր դասակարգի ամենակատաղի թշնամիների կառավարության գլուխ։

Գերմանիայում սոցիալ-դեմոկրատները մի քանի անգամ կանգնած են յեղել իշխանության գլուխ, բայց նրանք միայն օգնում եյին բուրժուազիային, վոր վերջինս ամրացնի իր տիրապետությունը, հարձակվի բանվորների աշխատավարձի և գործազուրկների նպաստների վրա, ծառայողների և գյուղացիների կենսական մակարդակի վրա՝ հարկերն ավելացնելու միջոցով։

Դեհ, մեզանում, Ռուսաստանում էլ, յերբ 1917 թվին, ցարի տապալումից հետո, իշխանության գլուխ անցան մենշևիկներն ու էսեր-

ները՝ նրանք Միլյուկովի, Գուչկովի և կապիտալիստների ու կալվածատերերի այլ ներկայացուցիչների ծափ տալով էին պար գալիս։ Կերենսկին և Չերնովը, էսերական կուսակցության առաջնորդները, նրանց հետ նույնպես ռուս մենշևիկների առաջնորդները կազակներին, սպաներին և յունկերներին ուղարկում էին՝ բանվորների և զինվորների հեղափոխական ցույցերը ճնշելու, ինչպես և գյուղացիների յելույթները գյուղերում կալվածատերերի դեմ ճնշելու համար։ Հետագայում, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, էսերները և մենշևիկները սատարում էին (աջակցում էին) սպիտակ-գվարդիական հակահեղափոխությանը, մասնակցում էին սպիտակ-գվարդիական կառավարությունների մեջ, իրենք էին կազմակերպում սպիտակ-գվարդիական հրոսակներ (բանդաներ), դավադրություններ և մահափորձեր էին սարքում խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության առաջնորդների դեմ։ Էսերուհի Կապլանը գնդակ արձակեց (կրակեց) Լենինի վրա։ Էսերներն սպանեցին ընկերներ Վոլոդարսկուն և Ուրիցկուն։ Էսերներն ու մենշևիկները հակահեղափոխական ապստամբություններ էին կազմակերպում Ուկրայինայում, Սիբիրում, Միջին Ասիայում, Անդրկովկասում և այլ շրջաններում։ Պրոլետարական դիկտատուրայի ամբողջ ժամանակաշրջանում մենշևիկները և էսերները մեր յերկրում չէին դադարեցնում և այժմ էլ շարունակում են կատարել հակահեղափոխական աշխատանք և ինտերվենցիա յեն պատրաստում ԽՍՀՄ դեմ։

Իսկ չէ՞ որ ռուս մենշևիկներն էլ, էսերներն էլ մի ժամանակ յերդվում էին, վոր սոցիալիզմ «կմտցնեն» պառլամենտի միջոցով, Սահմանադիր ժողովի միջոցով։

Այս ամենը կատարյալ պարզությամբ ցույց է տալիս, թե ինչ արժեք ունեն սոցիալ-դեմոկրատական զանազան կուսակցությունների դատողություններն այն մասին, թե սոցիալիզմին կարելի յե հասնել խաղաղ ճանապարհով։

Բայց նույնիսկ յենթադրենք, թե վորևէ յերկրում գտնվեյին այնպիսի սոցիալ-դեմոկրատներ, վորոնք քաջություն ունենային պառլամենտ «օրենք» մտցնելու սոցիալիզմ «մուծելու» մասին և ձայների մեծամասնությամբ անցկացնեյին այդ օրենքը։ Ի՞նչ բան կստացվեր սրանից։ Մի՞թե բուրժուազիան յերբևիցե կենթարկվեր այդ օրենքին։

Պարզ է, վոր բուրժուազիան միայն կծիծաղեր այդ օրենքի վրա։ Բուրժուազիան հոժարակամ յերբեք իշխանությունը չի զիջի բանվոր դասակարգին։ Բուրժուազիան առանց կռվի յերբեք չի զիջի իր կապիտալները, պալատները, հարստությունները և ճոխությունը։ Բուրժուազիան յերբեք չի հաշտվելու մի ռեժիմի (կարգի) հետ, վորը թեկուզ մասնակի դիպչեր նրա դասակարգային շահերին։

Յեթե սոցիալ-դեմոկրատները յերբեմնակի իշխանության գլուխ



են կանգնում, ապա դա կատարվում է բուրժուազիայի կամքով միայն, վորովհետև սոցիալ-դեմոկրատիան, մանավանդ մասսաների հեղափոխականության աճման պայմաններում, հանդիսանում է բուրժուազիայի սոցիալական (դասակարգային) լավագույն հենարանը։ Կապիտալիստներն իրենց շահերը գերադասում են պաշտպանել և ճնշել հեղափոխությունը սոցիալ-դեմոկրատների ձեռքերով։ Յեթե սոցիալ-դեմոկրատիան իշխանության գլուխ է անցնում, ապա այդ չի նշանակում, թե իշխանությունն անցնում է այլ դասակարգի ձեռքը. այդ նշանակում է միայն այն, վոր պրոլետարական հեղափոխության դեմ առաջ է քաշվում բուրժուական ամենահարմար առաջակալը (զասլոն)։ Սոցիալ-դեմոկրատիայի իշխանության գլուխ անցնելը բուրժուազիայի դիկտատուրան փրկելու միջոցներից մինն է նշանակում միայն։

Սոցիալ-դեմոկրատները խոսք չեն գտնում գովելու բուրժուական դեմոկրատիան, այսինքն՝ բուրժուական «ազատությունները», պառլամենտի և կառավարության վորպես թե ամբողջ ժողովրդի ներկայացուցիչներից ընտրվելը։ Բայց այս գոված դեմոկրատիան բուրժուազիայի տիրապետության վարագուրված ձևն է միայն։

Բայց կապիտալիստների դասակարգն այս «դեմոկրատիան» էլ պահում է մինչև այն ժամանակ, քանի այդ «դեմոկրատիան» նրա պետական իշխանությանը բավականաչափ կայունություն է տալիս, քանի նա ի վիճակի յե ապահովելու նրա տիրապետությունը։ Սակայն վորքան սրվում է դասակարգային պայքարը, վորքան աճում է բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժումը, այնքան էլ թե պառլամենտարիզմի սիստեմը և թե բուրժուական «դեմոկրատիան» ի չիք են դառնում։ Բուրժուազիայի դիկտատուրայի սքողված, դիմակավոր ձևի փոխարեն սկսում է գործել բացորոշ կամայականության սիստեմը։ Բուրժուազիան դիմում է դիկտատուրայի ֆաշիստական ձևին և գործում է բացահայտ բռնությամբ, տեռորով։ Ֆաշիստական դիկտատուրայի այդպիսի ձև ներկայումս գոյություն ունի Գերմանիայում, Իտալիայում, Լեհաստանում։

Ֆաշիզմի կուսակցությունները խոշոր կապիտալի կուսակցություններն են։ Բայց նրանք իրենց մարդկային ուժերը հիմնականում ստանում են սնանկացած մանր բուրժուազիայի միջից, հուսալքված, սովահար խեղճ (սոորին) մարդկանց միջից։ Ֆաշիստները խաբում են քաղաքի և գյուղի մանր բուրժուազիային, աշխատավորության հետամնաց խավերին նրանով, վոր խարդախորեն խոստանում են փրկել յերկիրը ճգնաժամից, կարիքից և գործազրկությունից։ Գյուղացիներին, քաղաքի մանր խանութպաններին և այլ մանր սեփականատերերին, ինչպես և պաշտոնյաներին ու աշխատավորության փչացած տարրերին ֆաշիստները վախեցնում են հեղափոխության «սարսափներով»։ Ֆաշիստները մանր բուրժուազիային խոստանում են փրկել նրա սեփա-

կանությունը սնանկացումից ու փլուզումից և կարողանում են սրանով մանր բուրժուազիային դարձնել խոշոր կապիտալի և նրա դիկտատուրայի հաստատման պաշտպան։ Ֆաշիստները մանր բուրժուազիայի մարդկանցից կազմակերպում են հակահեղափոխական ջոկատներ, նրանց թունավորում են թշնամանքով և ատելությամբ դեպի այլ ժողովուրդները (շովինիզմ), հատկապես՝ ատելությամբ դեպի հրյաները (անտիսեմիտիզմ), թունավորում են նրանց ռազմական մոլուցքով։ Ֆաշիստները գործում են հակահեղափոխական ջոկատները բանվորական կազմակերպությունների դեմ գրգռելու յեղանակով, կոմունիստական կուսակցությունները քարուքանդ անելու, կոմունիստներին սպանելու, առաջավոր բանվորներին բանտարկել անելու յեղանակով։

Սոցիալ-դեմոկրատիան, բոլոր միջոցներով պաշտպանելով կապիտալիստների իշխանությունը, ջանասիրությամբ բաց է անում ճանապարհ ֆաշիզմի համար։ Այս բանն ամենից լավ տեսնում ենք Գերմանիայի օրինակից, վորտեղ սոցիալ-դեմոկրատներն իրենց քաղաքականությամբ, իրենց ձեռքով իշխանության գլուխ դրին Հիտլերին, հեղափոխական պրոլետարիատի ամենակատաղի թշնամուն, իսկ սրանից հետո հլու-հնազանդ սկսեցին կատարել ֆաշիստական դիկտատորների բոլոր հրամանները, հլու-հնազանդ սկսեցին սպասավորել նրանց։ Հենց այն պատճառով են սոցիալ-դեմոկրատները սոցիալ-ֆաշիստներ կոչվել, վոր իրականում նրանք ֆաշիզմի օգնականներն, նրա ծառաներն են։ Ֆաշիստներն ու սոցիալ-դեմոկրատները՝ դրանք յերկվորյակներ են, ասում է ընկ. Ստալինը։

Սոցիալ-ֆաշիստների դատողությունները այն մասին, թե սոցիալիզմն ինքն իրեն կգա, առանց հեղափոխության և պրոլետարական դիկտատուրայի, ինչպես մենք տեսնում ենք այդ՝ մի նպատակ ունեն— բանվորներին հետ պահել պայքարից, փրկել կապիտալիզմը պրոլետարական հեղափոխությունից։

Պրոլետարական հեղափոխության ամբողջ պատմությունը մեր յերկրում ակնբախ հերքում է մենշևիկյան այն տեսությունը, թե սոցիալիզմին կարելի յե հասնել «խաղաղ ճանապարհով»։ Բուրժուազիան տապալվում է միմիայն հեղափոխության միջոցով, բանվոր դասակարգի զինված ապստամբության միջոցով։ Տապալված դասակարգերի դիմադրությունը պրոլետարական հեղափոխությունից վոչ թե թուլանում է, այլ, ընդհակառակը, ավելի յե կատաղի դառնում։ Տապալված դասակարգերը բոլոր միջոցներով դիմադրում են սոցիալիզմի կառուցմանը, ջանալով քանդել խորհրդային հասարակակարգի հիմքը — հասարակական սրբազան և անձեռնմխելի սեփականությունը։ Միմիայն դասակարգային ամենակատաղի կռվով է, վոր կարելի յե ճնշել տապալված դասակարգերի դիմադրությունը։



## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Կապիտալիզմի և կոմունիզմի միջև ընկնում է մի անցողիկ շրջան, յերբ բանվոր դասակարգը, իշխանությունն իր ձեռքը գրավելով, նրան օգտագործում է այն նպատակով, վոր ջնջի (սրբի) կապիտալիստական հասարակության մնացորդները և կառուցի սոցիալիստական հասարակություն։ Այս ժամանակաշրջանը պրոլետարական դիկտատուրայի ժամանակաշրջանն է։

Կոմունիզմին անցնելը հեշտ գործ չէ։ Այդ անցումը կատարվում է կապիտալիզմի բոլոր ուժերի անընդհատ և համառ դիմադրության պայմաններում, դասակարգային ամենակատաղի պայքարի պայմաններում։

Բանվոր դասակարգն իշխանությունը պահելու պայքար ստիպված է լինում մղել վոչ միայն ներքին հակահեղափոխության դեմ, այլև կապիտալիստական գիշատիչների ամբողջ աշխարհի դեմ։ Այնպես վոր բանվոր դասակարգի կողմից իշխանություն վերցնելը և իր բուրժուազիային տապալելը միաժամանակ նշանակում է պայքարել համաշխարհային հակահեղափոխության դեմ։

> «Մի յերկրում տապալված բուրժուազիան,— ասում է ընկ. Ստալինը,— շատ պատճառներով դեռևս յերկար ժամանակ ավելի ուժեղ է մնում, քան նրան տապալած պրոլետարիատը»։

Հետևաբար, դասակարգային ավելի ուժեղ այդ թշնամուն դիմադրելու համար պրոլետարիատը պետք է կազմակերպի իր զինված ուժը, պետք է ստեղծի դասակարգային թշնամուն ճնշելու հզոր ապարատ և պաշտպանություն, ուրիշ խոսքով՝ նա պետք է ստեղծի իր ամրակուռ պրոլետարական պետությունը — պրոլետարիատի դիկտատուրան։

> «Պրոլետարիատի դիկտատուրան,— ասել է Լենինը,— մի համառ պայքար է, արյունալի և անարյուն, բռնի և խաղաղ, պատերազմական և տնտեսական, մանկավարժական և վարչական պայքար՝ հին հասարակության ուժերի և ավանդությունների դեմ»։

Իհարկե պրոլետարական պետությունը միանգամայն տարբեր է առաջ յեղած և այժմ յեղող բուրժուական պետություններից։

Ամեն մի հեղափոխության ժամանակ իշխանության գլուխ անցած դասակարգն իր պետական մեքենան այնպես է սարքում, վոր ավելի լավ ապահովի իր դասակարգային շահերը։ Բուրժուական վոստիկանությունը, բանակը, պարլամենտները, դատարանները, բանտերը, մինիստրությունները և այլն՝ կազմում են բուրժուական դիկտատուրայի պետական մեքենան,— աշխատավորներին բուրժուազիայի շահերի համար ճնշելու մեքենան։

Իշխանությունը կալվածատերերի դասակարգից բուրժուազիայի

դասակարգին անցնելիս կալվածատիրական պետության բյուրոկրատիկ-ռազմական մեքենան բուրժուազիան հիմնականում պահում է, վորովհետև այդ մեքենան հարմարված է այնպիսի կարգերի, վորոնք հիմնված են շահագործման վրա։ Բոլորովին այլ բան է, յերբ բուրժուազիայի իշխանությունը տապալում է պրոլետարիատը, վորը ստեղծում է իր դիկտատուրան։

Պրոլետարական դիկտատուրան իր առջև նպատակ է դնում՝ վոչընչացնել ամեն տեսակի շահագործում և սրա համար ամենից առաջ ճնշել շահագործող դասակարգերի դիմադրությունը և վերացնել այդ դասակարգերը։ Բուրժուազիայի պետական մեքենան, իհարկե, այս նպատակի համար անպետք է։

Բայց ջարդելով բուրժուական դիկտատուրայի պետական հին մեքենան, բանվոր դասակարգը նրա փոխարեն պետք է ստեղծի պրոլետարական դիկտատուրայի նոր մեքենա։

Իսկ պրոլետարական դիկտատուրան ինչ խնդիրներ պետք է լուծի՝ սոցիալիզմ պատրաստելու և կառուցելու համար։

Ընկ. Ստալինը հետևյալ կերպ է բնորոշում պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը.

«1. Պրոլետարիատի իշխանության օգտագործումը՝ շահագործողներին ճնշելու, յերկիրը պաշտպանելու, այլ յերկրների պրոլետարների հետ ունեցած կապերն ամրացնելու, բոլոր յերկրներում հեղափոխությունը ծավալելու և հաղթանակելու համար։

2. Պրոլետարիատի իշխանության օգտագործումը՝ աշխատավոր և շահագործվող մասսաները բուրժուազիայից վերջնականապես կտրելու (հեռացնելու), պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրապնդելու, այդ մասսաները սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու, պրոլետարիատի կողմից այդ մասսաների պետական ղեկավարությունն իր վրա վերցնելու համար։

3. Պրոլետարիատի իշխանության օգտագործումը՝ սոցիալիզմ կազմակերպելու, դասակարգերը վոչնչացնելու, առանց դասակարգերի հասարակության, առանց պետության հասարակության անցնելու համար»։

Այս նպատակներին էլ պետք է ծառայի պրոլետարիատի պետական կազմակերպությունը, պրոլետարական դիկտատուրայի ամբողջ սիստեմը։

Վորպեսզի այս սիստեմը հաջողությամբ աշխատի սոցիալիզմի կառուցման համար՝ նա պետք է ունենա իր ամրակուռ պետական ապարատը։ Ահա թե ինչու բանվոր դասակարգն իր առաջին գործը համարեց վոչնչացնել պետական հին ապարատը և ստեղծել իր ապարատն այն բանից հետո, յերբ նա մեր կուսակցության ղեկավարությամբ գրավեց իշխանությունը։ Իշխանությունն անցավ բանվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդներին։ Բուրժուական պետության բոլոր հիմնարկները — մինիստրությունները, դատարանները, վոստիկանությունը, բանակը, բանկերը փոխարինվեցին այլ կերպ կառուցված ուրիշ հիմնարկներով, վորոնք պետք է ապահովեին բանվոր դասակարգի տիրապետությունը։ Ամբողջ արդյունաբերությունը կազմակերպվեց ժողովրդական տնտեսության խորհրդի ղեկավարությամբ։ Բանվոր դասակարգն իր ձեռքը գրավեց զանազան կապիտալիստների մասնավոր բանկերը և ստեղծեց իր Պետական բանկը։ Խորհրդային իշխանությունը ցրեց ցարական հին դատավորներին ու դատախազներին և խորհրդային դատարանի գլուխ կանգնեցրեց բանվորներին ու գյուղացիներին։ Բանվոր դասակարգն ստեղծեց իր Կարմիր բանակը, բանվորա-գյուղացիական իր միլիցիան, հեղափոխության պահպանման իր օրգանները — Արտակարգ Հանձնաժողովը (ՉԿ — հետագայում Միացյալ պետքաղվարչությունը)։ Հեղափոխությունն աշխատավոր գյուղացիությանը տվեց ցարական, մասնավոր և յեկեղեցապատկան բոլոր հողերը։ Խորհրդային իշխանության ձեռքն անցավ յերկաթուղիների, ջրային տրանսպորտի, փոստի և հեռագրի կառավարչությունը։ Պրոլետարական պետությունն իր ձեռքը վերցրեց դպրոցները, գրադարանները, թատրոնները, թանգարանները, թերթերը, գրահրատարակչությունները, համալսարանները և նրանց դարձրեց բուրժուական պրոպագանդի գործիքից՝ բուրժուազիայի դեմ պայքարելու, սոցիալիզմ կերտողներին դաստիարակելու գործիք։ Նահանգապետների, մենշևիկյան կոմիսարների, վարչությունների (ուպրավաների), իսպրավնիկների, ուրյադնիկների և նմանների փոխարեն իշխանությունն ամենուրեք — թե քաղաքում և թե գյուղում — կենտրոնացավ խորհուրդների ձեռքում։

Այսպիսով, բանվոր դասակարգի հեղափոխականորեն իշխանության գլուխ անցնելը չի նշանակում սոսկ «կառավարության փոփոխում»։ Սա նշանակում է միանգամայն նոր տեսակի պետության ստեղծում՝ բուրժուական վոչնչացված պետության փոխարեն։

Մեր յերկրի բանվոր դասակարգը չէր կարող մնալ իշխանության գլուխ, չէր կարող իր ձեռքում պահել բուրժուազիայից խլած ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը և բանկերը, յեթե նա չստեղծեր պետական իր ապարատը և չճնշեր հայրենի և արտաքին (օտարերկրյա) հակահեղափոխության ընդդիմադրությունը։ Շնորհիվ այդ ապարատն ստեղծելու և մանավանդ շնորհիվ իր Կարմիր բանակն ստեղծելու՝ բանվոր դասակարգին հաջողվեց վոչ միայն պաշտպանել պրոլետարական հեղափոխության նվաճումները, այլև մեր յերկիրը դարձնել համաշխարհային պրոլետարական հեղափոխության ամրոց։

Մեր յերկրի բանվոր դասակարգը, կանգնած լինելով իշխանության գլուխ և հենվելով իր դիկտատուրայի վրա՝ բոլշևիկյան կուսակցության կարող ղեկավարությամբ ստեղծեց հաստատուն դաշինք գյուղացիության հետ, կարողացավ ապացուցել գյուղացիական և աշխատավորական այլ մասսաներին բոլոր այն առավելությունները, վոր սոցիալիզմն ունի կապիտալիզմի հանդեպ, խլեց այդ մասսաներին բուրժուազիայի ազդեցության տակից և դարձրեց նրանց սոցիալիզմի կառուցման ակտիվ մասնակիցներ։ Իսկ պրոլետարիատի և գյուղացիության միջև ամրակուռ դաշինք ստեղծելը մի անհրաժեշտ պայման է պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման և սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի հաջողության համար։ Լենինն ասել է.

«Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը՝ դա պրոլետարիատի դաշինքի պահպանումն է գյուղացիության հետ, վորպեսզի նա կարողանա պահել ղեկավար դերը և պետական իշխանությունը»։

Վերջապես, հենվելով իր դիկտատուրայի վրա, բանվոր դասակարգը կարողացավ վոչ միայն ճնշել բուրժուազիային և կալվածատերերին, այլև ջախջախել շահագործողների ամենից բազմաքանակ դասակարգը—կուլակությունը։ Բանվոր դասակարգը պայքարում է դասակարգերի լիակատար վոչնչացման, սոցիալիզմի լիակատար կառուցման համար։

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎ ԵՆ։ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Պրոլետարական պետությունը՝ դա խորհրդային պետությունն է։ Ինչումն են կայանում խորհրդային սիստեմի հիմնական գծերը։ Ամենից առաջ՝ նրանում, վոր այդ սիստեմը կառուցված է աշխատավորների միլիոնավոր մասսաները պետություն կառավարելու գործին մասնակից անելու (ներգրավելու) վրա։

Հեղափոխության ծավալման զուգընթաց՝ բանվորական պատգամավորների խորհուրդները քանի գնում ավելի ու ավելի են դառնում բանվորների, գյուղացիների, կարմիր-բանակայինների, աշխատավորության մասսայական կազմակերպություններ։

Խորհուրդներն այնպիսի կազմակերպություն են հանդիսանում, վորն ամրապնդում է բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ և միևնույն ժամանակ ապահովում է պրոլետարիատի ղեկավարությունն աշխատավորական բոլոր մասսաների նկատմամբ։

Միաժամանակ խորհուրդներն ամենադեմոկրատիկ որգաններ են, վոր կանգնած են ժողովրդական զանգվածների մեջտեղում, արտացոլում են մասսաների տրամադրությունները և ապահովում են նրանց



շահերն ու կարիքները։ Խորհուրդները մասսաների ինքնագործունեության մարմիններ են։ Նրանք տասնյակ միլիոնավոր բանվորների և գյուղացիների հնարավորություն են տալիս հայտաբերելու իրենց ձեռներեցությունը, դնելու և լուծելու հարցեր, մասնակցելու նոր օրենքների մշակման գործին, առաջ քաշելու հարյուր հազարավոր նոր կազմակերպիչներ, վարչագետներ (ադմինիստրատորներ) և տնտեսության ղեկավարներ՝ բանվորներից և գյուղացիներից, այն դասակարգերից, վորոնք կապիտալիզմի ժամանակ պետություն կառավարելու գործին մոտ չեն թողնվում։

Մեր յերկրում գործարանների, խորհտնտեսությունների, տրեստների, խորհուրդների և նարկոմատների գլուխ են կանգնած տասնյակ հազարավոր փականագործներ, դարբիններ, բրիչներ (զաբոյշչիկներ), գլանիչներ, ձուլիչներ, ներկարարներ, մեքենավարներ, հյուսներ, գրաշարներ, ջուլհակուհիներ, հացթուխներ, խոհարարուհիներ, լվացարարուհիներ, բատրակներ, հովիվներ, կոլտնտեսականներ և այլն։ Այս մարդկանց՝ կուսակցության ղեկավարությամբ առաջ են քաշել, բարձրացրել և դաստիարակել խորհուրդները։ Այս մարդիկ յերբեք չէին մասնակցի պետության և տնտեսության կառավարելու գործին, յեթե մեր յերկրում չլիներ պրոլետարական դիկտատուրա, յեթե նրանում չլինեին խորհուրդներ, վորոնք աշխատավորության ամենամասսայական կազմակերպություններն են։

Սրանումն է խորհուրդների գլխավոր առանձնահատկությունը (հատկանիշը)։ Նրանք պետական շինարարությանը մասնակից անելու յեն բերում այն մասսաներին, վորոնք կապիտալիզմի ժամանակ՝ շնորհիվ նրանց շահագործվելուն և իրավազուրկ լինելուն, ամենից խեղճ և ամենից ճնշված են։

Հենց սրանումն է պրոլետարական դիկտատուրայի յերկրում գոյություն ունեցող դեմոկրատիայի և բուրժուական «դեմոկրատիայի» գլխավոր տարբերությունը։

Բուրժուական դեմոկրատիան՝ դա հարուստ փոքրամասնության դեմոկրատիա յէ. իսկ ժողովրդի մեծամասնության համար՝ դա վոստիկանություն, բանտեր և կեղեքումն են։

Խորհրդային դեմոկրատիան աշխարհումս ամենալայն դեմոկրատիան է, նա ժողովրդի մեծամասնության դեմոկրատիա յէ ընդդեմ մի բուռն շահագործողների, կեղեքիչների յեվ նրանց գործակատարների։ Բուրժուական դեմոկրատիայի ուժը՝ մեծամասնությունը պետության գործերին մասնակցելուց հեռու պահելու մեջ է։ Խորհուրդների ուժը, ընդհակառակը, աշխատավորներին, մեծամասնությունը, պետություն կառավարելու գործին ներգրավելու (մասնակից անելու) մեջ է։

«... մեր պետական ապարատը մեկեն, մի հարվածով տասնապատկելու մի «հրաշագործ միջոց» ունենք մենք,—գրում էր

Լենինը Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ,—մի միջոց, վորը կապիտալիստական վոչ մի պետություն յերբեք չի ունեցել և ունենալ էլ չի կարող։ Այդ հրաշագործ բանը՝ պետություն կառավարելու ամենօրյա գործին աշխատավորներին ներգրավելը, չքավորներին ներգրավելն է»։

Խորհրդային սիստեմը պետական շինարարությանը և պետության կառավարելուն մասնակից է դարձնում բոլոր այն մասսաներին, վորոնք կապիտալիստների և կալվածատերերի տիրապետության ժամանակ գիտակցաբար դեն են շպրտվում, դրվում են իրավազուրկ ծառուկ կացության մեջ։

Խորհրդային սիստեմը տարբերություն չի դնում բանվորի և բանվորուհու, գեղջուկի և գեղջկուհու իրավունքների միջև։ «Յուրաքանչյուր խոհարարուհի պետք է սովորի պետություն կառավարել»—մատնանշում է Լենինը։ Խորհրդային իշխանությունը տարբերություն չի դնում ռուս բանվորի կամ գյուղացու և ուկրայինացի, ուզբեկ, հրյա, թաթար, վրացի, թյուրք բանվորի կամ գյուղացու միջև և այլն։

Խորհրդային սիստեմը տարբերում է միմյանցից միմիայն շահագործողների և շահագործվողների դասակարգերը։ Խորհրդային սիստեմը թույլ չի տալիս պետական մարմիններում աշխատելու յեվ նրանց ընտրություններին մասնակցելու կապիտալիստներին, կալվածատերերին, կուլակներին, տերտերներին։

Ամեն մի դիկտատուրա հենվում է բռնության վրա։

Բուրժուական դիկտատուրան հիմնված է մի բուռն կապիտալիստների կողմից միլիոնավորների վերաբերմամբ կազմակերպված բռնության վրա։ Պրոլետարական դիկտատուրան սահմանում է միլիոնավորների տիրապետությունը մի բուռն շահագործողների նկատմամբ և այդ մի բուռնի վերաբերմամբ բռնության է դիմում, վոր խորտակի նրանց դիմադրությունը, նրանց հակահեղափոխական աշխատանքը, կապիտալիստների տիրապետությունը վերադարձնելու նրանց փորձը։

Բուրժուական դիկտատուրան՝ դա բռնություն է՝ դասակարգային անհավասարությունը և շահագործումը հավերժացնելու համար։ Պրոլետարական դիկտատուրան կիրառում է բռնությունը՝ դասակարգային և ամեն տեսակի անհավասարությունը և մարդու կողմից մարդուն շահագործելը վոչնչացնելու համար։

Հենց այս պատճառով էլ պրոլետարական դիկտատուրան իր նպատակներով և իր էությամբ պետական կազմակերպության ամենադեմոկրատիկ ձևն է։

«Պրոլետարիատի դիկտատուրան,—ասել է ընկ. Ստալինը,—դասակարգային հասարակության պայմաններում հանդիսանում է դեմոկրատիայի բարձրագույն տիպը, ձևը պրոլետարական դե-



մոկրատիայի, վորն արտահայտում է մեծամասնության (շահագործվողների) շահերն ի հակակշիռ կապիտալիստական դեմոկրատիայի, վորն արտահայտում է փոքրամասնության (շահագործողների) շահերը»։

Խորհրդային իշխանությունը կառուցված է վերից վար ընտրականության, փոխելիության (ընտրվածներին փոխելու) և մասսաների առջև հաշվետու լինելու սկզբունքի վրա։ Հենց այս կապակցությամբ է, վոր, մասսաներին խորհուրդներին մոտեցնելու համար, մեզանում խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ձեռնարկությունների, խորհտնտեսությունների, գյուղերի։ Սրանից են սկզբնավորվում նույնպես ապարատի բոլոր թերությունների դեմ վճռական պայքար մղելու գիծը, «չնայած անձանց» ինքնաքննադատությունը։ Սրանից է, վոր մեր կուսակցությունը շարունակ հոգ է տանում պետապարատի առողջացման և բանվորացման մասին և դարձրել է ԲԳՏ կուսակցության և խորհուրդների մի հատուկ օրգանը (ԿՎՀ—ԲԳՏ), վորի նպատակն է պետական իշխանության ապարատը մոտեցնել մասսաներին, հաղթահարել բյուրոկրատիզմը և քաշքշուկը (վոլոկիտան)։

Բուրժուազիայի մոտ, ասում էր Լենինը, «պարլամենտում միայն դատարկաբանում են «հասարակ ժողովրդին» խաբելու հատուկ նպատակով»։

Մեզանում իշխանությունն այնպես է կառուցված, վոր նրա մարմինները վոչ թե խոսարաններ են, այլ գործողության մարմիններ, վորոնք միևնույն ժամանակ թե՛ օրենքներ են մշակում և թե՛ կատարում են այդ օրենքները։

## ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր պետությունը կոչվում է Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն—ԽՍՀՄ։ Նա այդպես է կոչվում այն պատճառով, վոր նա իրենից ներկայացնում է սոցիալիզմի համար պայքարող խորհրդային ինքնուրույն հանրապետությունների կամավոր մի միություն։

Խորհրդային միության մեջ մտնում են՝

1. Ռուսաստանի սոցիալիստական ֆեդերատիվ խորհրդային հանրապետությունը—ՌՍՖԽՀ։

2. Ուկրայինայի սոցիալիստական խորհրդային հանրապետությունը—ՈւՍԽՀ։

3. Բելոռուսիայի սոցիալիստական խորհրդային հանրապետությունը—ԲՍԽՀ։

4. Անդրկովկասյան սոցիալիստական ֆեդերատիվ խորհրդային
հանրապետությունը—ԱՍՖԽՀ:

5. Ուզբեկստանի սոցիալիստական խորհրդային հանրապետու-
թյունը—ՈւզՍԽՀ:

6. Թուրքմենստանի սոցիալիստական խորհրդային հանրապե-
տությունը—ԹուրքՍԽՀ:

7. Տաջիկստանի սոցիալիստական խորհրդային հանրապետու-
թյունը—ՏաջՍԽՀ:

Այս հանրապետությունները կազմում են միասնական Խորհըր-
դային միությունը և կոչվում են դաշնակից հանրապետու-
թյուններ: Դաշնակից այս հանրապետություններից յուրաքան-
չյուրն իր ներքին կազմությունն ինքն է վորոշում խորհուրդ-
ների հանրապետական իր համագումարներում: Յուրաքանչյուր հան-
րապետություն կառավարվում է խորհրդային իր կառավարությամբ՝
համապատասխան իր հիմնական որենքների, վորոնք կոչվում են սահ-
մանադրություններ: Դաշնակից յուրաքանչյուր հանրապետություն
ունի իր սահմանադրությունը:

Սրա հետ միասին գոյություն ունի և Խորհրդային ամբողջ մի-
ության ընդհանուր՝ սահմանադրություն: Այս սահմանադրությունը
մի որենք է, վոր վորոշում է Միության կազմության ընդհանուր հիմ-
քերը:

Դաշնակից հանրապետությունների անունների թվարկումից
մենք տեսնում ենք, վոր այդ հանրապետություններից յերկուսը—
Ռուսաստանինը և Անդրկովկասյանը—ֆեդերատիվ են կոչվում: Ֆեդե-
րացիա նշանակում է դաշինք, կամավոր միավորում: Դա նշանակում է,
վոր Խորհրդային միության մեջ մտնող այդ յերկու հանրապետու-
թյուններն իրենցից նույնպես ներկայացնում են մի շարք հանրապե-
տությունների միավորում, վորոնցից յուրաքանչյուրն ունի իր ավտո-
նոմ (ինքնուրույն) կազմությունը: Նրանք կազմում են միավորված մի-
քանի ավտոնոմ հանրապետությունների և մարզերի, այսինքն՝ այն-
պիսի հանրապետությունների, վորոնք ինքնուրույնություն ունեն
ֆեդերացիայի ներսում:

ՌՍՖԽՀ կազմի մեջ մտնում են ավտոնոմ հետևյալ հանրապետու-
թյունները. Բաշկիրյան, Բուրյատա-մոնղոլյան, Դաղստանի, Կարելյան,
Ղրիմի, Կիրգիզյան, Կազակստանի, Կարա-Կալպակյան, Թաթարական,
Չուվաշյան, Յակուտսկի և Պովոլժյեյի գերմանացիների հանրապետու-
թյունը:

ՌՍՖԽՀ կազմի մեջ մտնում են հետևյալ մարզերը. Լենինգրադի-
Արևմտյան, Մոսկվայի, Կենտրոնասևահողյան, Իվանովյան արդյու-
նաբերական մարզը և Ուրալյան մարզը, և հետևյալ յերկրները. Հյուսիս-
կովկասյան, Ներքնավոլգյան, Միջնավոլգյան, Գորկյան (նախկին Նի-



ժեգորոդյանը), Հյուսիսային, Արևմտասիբիրյան, Արևելասիբիրյան և
Հեռավորարևելյան (ՀԱՅԵ): Յերկրների մեջ մտնում են մի շարք ազ-
գային ավտոնոմ հանրապետություններ և մարզեր. Հյուսիսկովկա-
սյանի մեջ մտնում են հետևյալ ավտոնոմ մարզերը. Ադիգեյան, Ինգու-
շյան, Կաբարդինո-Բալկարյան, Կարաչայեվյան, Հյուսիսոսական,
Չերքեզական; Չեչենական ավտոնոմ մարզերը և Դաղստանի հանրապե-
տությունը: Ներքնավոլգյան յերկրի մեջ մտնում են Պովոլժյեյի գեր-
մանացիների հանրապետությունը և Կալմիկյան մարզը. Գորկյան յերկ-
րի մեջ—Չուվաշյան ավտոնոմ հանրապետությունը, Ուդմուրտյան և
Մարիների ավտոնոմ մարզերը. Միջնավոլգյան յերկրի մեջ—Մորդո-
վյան ավտոնոմ մարզը. Հյուսիսային յերկրի մեջ—Կոմի-Զիրյանյան
ավտոնոմ մարզը և Նենեցյան ազգային շրջանը (ոկրուգը). Արևմտա-
սիբիրյան յերկրի մեջ—Ոյրատյան, Խակասյան ավտոնոմ մարզերը և
Նարիմյան ազգային շրջանը, Արևելասիբիրյան յերկրի մեջ մտնում
են Բուրյատա-մոնղոլյան ավտոնոմ հանրապետությունը, Վիտիմա-
Ոլեկմինյան, Տայմիրյան, Եվենկինյան ազգային շրջանները. Հեռավոր-
արևելյան յերկրի մեջ—Կորյակյան, Ներքնամուրյան, Ոխոտա-Եվեն-
կինյան և Չուկոտյան ազգային շրջանները: Ուրալյան մարզի մեջ
մտնում են ազգային հետևյալ շրջանները. Ոստյակ-Վոգուլյանը և
Յամալա-Նենեցյանը:

ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնում են Ադրբեջանի, Հայաստանի և Վրաս-
տանի հանրապետությունները: Վրաստանի հանրապետության մեջ իր
հերթին մտնում են Աջարական (Աջարստանի) և Աբխազական ավ-
տոնոմ հանրապետությունները և Հարավոսական (Հարավոսեթյան) ավ-
տոնոմ մարզը: Ադրբեջանի հանրապետության մեջ մտնում են Նախի-
ջևանի ավտոնոմ հանրապետությունը և ավտոնոմ մարզ Լեռնային Ղա-
րաբաղը:

Ուկրայինայի հանրապետությունն իր կազմում ունի Մոլդավյան
ավտոնոմ հանրապետությունը և բաժանվում է յոթը մարզի. Դոնեցի,
Խարկովի, Կիևի, Վիննիցայի, Դնեպրոպետրովսկի, Ոդեսայի և
Չերնիգովի մարզերի:

Տաջիկստանի դաշնակից հանրապետության մեջ մտնում է
Լեռնա-Բադախշանյան ավտոնոմ մարզը: (Խորհրդային միության սխե-
ման կբերվի գրքի յերկրորդ պրակում):

Խորհրդային իշխանությունը կառուցված է ընտրական և փո-
խելիության սկզբունքը խստիվ կիրառելու, ընտրական ստորին մար-
մինները բարձրագույն մարմիններին և ընտրողների մասսաներին իսկ
հաշվետվության և հսկողության կողմից յենթարկելու սկզբունքը խստիվ
կիրառելու վրա: Իշխանության բարձրագույն մարմինը Խորհրդային
միության մեջ Խորհուրդների համամիութենական համագումարն է:
Այս համագումարի համար պատգամավորներ են ընտրվում դաշնակից

հանրապետությունների խորհուրդների հանրապետական համագումարներում: Հանրապետական և բոլոր այլ համագումարների (երկրային, մարզային, ավտոնոմ) համար ընտրությունները կատարում են խորհուրդների ստորադաս համագումարները: Ընտրական սկզբնական միավորը բանվորների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ընտրական ժողովներն են հանդիսանում:

Ինչպես մենք արդեն ասել ենք՝ ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկված են այն անձինք, վորոնք յեկամուտ ստանալու համար շահագործում են ուրիշի աշխատանքը և, առհասարակ, այդ իրավունքից զրկված են բոլոր նրանք, ովքեր ապրում են անաշխատ յեկամուտներով, որինակ, վաշխառությամբ ապրողները, առևտրականները, սպեկուլյանտները (չարաշահները), միջնորդները և այլն, զանազան դավանությունների տերտերները, նախկին վոստիկանները, ժանդարմները և այլն: Բացի դրանից՝ ընտրություններին մասնակցելու իրավունք չունեն խելագարները, հոգեկան հիվանդները, այսինքն՝ մարդիկ, վորոնք գործին գիտակից վերաբերմունք չեն կարող ունենալ, այլև նրանք, ովքեր դատապարտված են քրեական զանազան հանցանքների համար:

Խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավունքից ոգտվում են՝ ամենքը 18 տարեկանի հասնելուց հետո՝ բոլոր աշխատավորները,—բանվորները, գյուղացիք, ծառայողները, ուրիշի աշխատանքը չշահագործող տնայնագործները, տնտուհիները (բանվորների և ծառայողների կանայք), գեղջկուհիները, կարմիր-բանակայինները և կարմիր-նավատորմայինները:

Խորհուրդների համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում պետության կառավարությունն իրագործում են համագումարներում ընտրված մարմինները. շրջաններում, մարզերում, յերկրներում և հանրապետություններում համագումարներում ընտրվում են գործադիր համապատասխան մարմիններ—գործադիր կոմիտեներ (գործկոմներ): Դաշնակից և ավտոնոմ հանրապետություններում նրանց կենտրոնական գործկոմները նշանակում են ժողովրդական կոմիսարների խորհուրդներ (ժողկոմխորհներ): Գործադիր կոմիտեները՝ շրջաններում, մարզերում և յերկրներում և ժողկոմխորհները՝ հանրապետություններում ստեղծում են բաժիններ և ժողկոմատներ, վորոնք աշխատանք են կատարում տնտեսական և կուլտուրական շինարարության առանձին բնագավառներում և պատասխանատու յեն այդ աշխատանքի համար:

Տեղական խորհուրդները—քաղաքայինները և գյուղականները—ստեղծում են սեկցիաներ, պատգամավորական (խորհրդային) խմբակներ, զանազան հանձնաժողովներ, վորոնց մասնակցում են բացի խորհուրդների պատգամավորներից նույնպես բանվորների ու բանվո-



րուհիների, գեղջուկների և գեղջկուհիների հսկայական զանգվածներ: Խորհուրդների ամենորյա աշխատանքների մեջ այս սեկցիաների միջոցով լրացուցիչ ներգրավվում են աշխատավորության հսկայական զանգվածներ: Սեկցիաները, պատգամավորական խմբերը և հանձնաժողովները այն «հրաշագործ միջոցի» գործնական կիրառումն է, վորի մասին Լենինն ասում էր, թե նա հնարավորություն է տալիս մեկեն տասնապատկելու պետական ապարատը:

Խորհուրդների համամիութենական համագումարներում ընտրվում է ԽՍՀՄ Խորհուրդների կենտրոնական գործադիր կոմիտեն (ԽՍՀՄ ԿԳԿ): ԽՍՀՄ ԿԳԿ-ն նշանակում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ (ժողկոմխորհ): Կենտրոնական գործադիր կոմիտեն խորհուրդների համագումարների ժամանակամիջոցում հանդիսանում է մեր յերկրի բարձրագույն իշխանությունը: ԿԳԿ նստաշրջաններով է նիստեր ունենում, այսինքն՝ վորոշ ժամանակը մի անգամ պարբերաբար հավաքվում է, վոր լուծի բոլոր կարևորագույն հարցերը և հաստատի խորհրդային իշխանության որենքներն ու դեկրետները: Նստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում գործը վարում է ԿԳԿ Նախագահությունը:

ԽՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեն բաղկացած է յերկու խորհրդից՝ Միութենական խորհրդից և Ազգությունների խորհրդից: Ազգությունների խորհուրդ կազմակերպելու վորոշումն ընդունվել է կուսակցության XII համագումարում ընկ. Ստալինի առաջարկով, վորն ասում էր, թե Ազգությունների խորհուրդը մեզ պետք է ծառայի «վորպես՝ առանց բացառության բոլոր հանրապետությունների և ազգությունների կարիքների և պահանջների արտացոլում»:

> «Չի կարելի,—ասում էր ընկ. Ստալինը,—... կառավարել, չունենալով մեր առջև այստեղ, Մոսկվայում, բարձրագույն մարմնում այդ ազգությունների ուղարկյալներին, վորոնք արտացոլեյին վոչ միայն ամբողջ պրոլետարիատի համար ընդհանուր շահերը, այլև առանձին, հատուկ, սպեցիֆիկ ազգային շահերը»:

Ազգությունների խորհուրդը բաղկացած է բոլոր հանրապետությունների և ավտոնոմ մարզերի ներկայացուցիչներից (հնգական՝ յուրաքանչյուր դաշնակից հանրապետությունից և մեկական՝ ավտոնոմ մարզից), առանձին նիստերում նա քննարկում է ԿԳԿ-ի առջև դրված բոլոր հարցերը՝ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների շահերին այդ հարցերը համապատասխան լինելու տեսակետից:

ԽՍՀՄ ԿԳԿ և Ժողկոմխորհը հանդիսանում են խորհրդային կառավարությունը: Խորհրդային իշխանության քաղաքականությունը Խորհրդային միության տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի առանձին բնագավառներում կենսագործելու համար ստեղծ-



Մ. Ի. Կալինին

# ԽՍՀՄ ԿԳԿ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ



Ա. Գ. Չերվյակով



Գ. Ի. Պետրովսկի



Գ. Մուսաբեկով



Ն. Այտակով



Ֆ. Խոջայեվ



Նուսրատուլլա Մաքսում



վում են առանձին ժողկոմատներ, վորոնք գործը վարում են ժողկոմ-
խորհի ղեկավարությամբ:
Ժողկոմատների գլուխ են կանգնած ժողովրդական կոմիսարնե-
րը, վոր իրենց առընթեր ունեն կոլեգիաներ: (ԽՍՀՄ իշխանության
մարմինների կառուցվածքը կբերվի գրքի յերկրորդ պրակում [1]):

## ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՊԵՏՔ Է ՏԱՆԻ ԴԵՊԻ ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԵՆԱԳ ՈՒԺԻՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՋԱԽՋԱԽՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԴԵՄ ԱՆՀԱՇՏ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼՈՒ ՄԻՋՈՎ

Մենք նպատակ ենք դնում յերկրորդ հնգամյակի (1933—1937
թիվը) ընթացքում կառուցել անդասակարգ հասարակություն: Հասարա-
կության դասակարգային բաժանման պատճառները մենք վոչնչաց-
նում ենք, վորովհետև վերջնականապես վոչնչացնում ենք արտա-
դրության միջոցների մասնավոր սեփականությունը, արմատախիլ
ենք անում կապիտալիստական տարրերի արմատներն իսկ և այսպի-
սով վերացնում ենք դասակարգերի գոյության հողը:
Անդասակարգ հասարակության համար մղվող պայքարը ներկա-
յումս ընթանում է գյուղի և քաղաքի կապիտալիստական ուժերի այն

---

[1]) Նկատի ունենալով, վոր ընկ. Ինգուլովն իր այս աշխատության մեջ բավա-
կանացել է ԽՍՀՄ կառավարչության մարմինների կառուցվածքի մեջ մտնող անուն-
ների մեծ մասը միայն համառոտագրություններով տալով, մինչդեռ կարևոր է, վոր
գրքի բոլոր ընթերցողներին միության կառավարչական բոլոր մարմինների վոչ միայն
համառոտագրված, այլև լրիվ անունները հայտնի լինեն՝ մենք ստորև ըստ կառուց-
վածքի տալիս ենք այդ անունները թե ամբողջությամբ, առանց համառոտագրելու և
թե մեծ մասի համառոտագրությամբ:

1) ԽՍՀՄ Խորհուրդների Համագումար — ԽՍՀՄ Խոր. Համ.
2) ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտե — ԽՍՀՄ ԿԳԿ
3) Միութենական Խորհուրդ — Միութխորհ
4) Ազգությունների Խորհուրդ — Ազգխորհ
5) ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահություն — ԽՍՀՄ ԿԳԿ Նախ.
6) ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ — ԽՍՀՄ Ժողկոմխորհ (ԺԿԽ)
7) Բյուջեական Հանձնաժողով — Բյուջհանձ
8) Կոմունալ Տնտեսության Համամիութենական Խորհուրդ — Կոմտնտհամխորհ
9) ԽՍՀՄ Գերագույն Դատարան — ԽՍՀՄ Գերդատ
10) ԽՍՀՄ Դատախազ
11) Պետական Քաղաքական Միավորյալ Վարչություն — Պետքաղ ՄՎ
12) Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդ (ՍՏՕ) — ԱՊԽ
13) ԽՍՀՄ Պետական Պլանային Հանձնաժողով — ԽՍՀՄ Պետպլան
14) Կատարման հանձնաժողով — կատհանձ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ

15) Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատ — Արտգործ ԺԿ
16) Արտաքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատ — Արտառ ԺԿ

մնացորդներին վճռապես հաղթահարելու գծով, վորոնք սոցիալիզմի կառուցմանը կատաղի դիմադրություն են ցույց տալիս:

Անդասակարգ հասարակություն ստեղծելու պայքարը պահանջում է, վոր վոչ թե թուլացնենք, այլ ուժեղացնենք պրոլետարիատի դիկտատուրան և ամենաանխնա պայքար մղենք շահագործող դասակարգերի մնացորդների դեմ: (Այս մասին ավելի մանրամասն մենք խոսում ենք յոթերորդ գլխում):

Անդասակարգ հասարակության համար սոցիալիզմի համար մղվող պայքարում, ինչպես մենք արդեն տեսանք, պայքարի բոլոր շրջաններում—թե կապիտալիստական հասարակության պայմաններում յեվ թե պրոլետարական դիկտատուրայի պայմաններում ղեկավար ուժը բանվոր դասակարգն է:

Պրոլետարիատը միակ դասակարգն է, վորը մինչև վերջը շահագրգռված է բուրժուազիան տապալելու, պրոլետարական դիկտատուրա սահմանելու և սոցիալիստական հասարակություն կերտելու մեջ:

---

17) Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ — Ռազմծով ԺԿ

18) Ծանր Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ — Ծանրարդ ԺԿ

19) Անտառային Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ—Անտարդ ԺԿ

20) Խորհրդային Տնտեսությունների Ժողովրդական Կոմիսարիատ—Խորհտնտ ԺԿ

21) Հաղորդակցության Ճանապարհների Ժողովրդական կոմիսարիատ — Հաղճան ԺԿ

22) Ջրային Տրանսպորտի Ժողովրդական Կոմիսարիատ — Ջրտրանս ԺԿ

23) Կապի Ժողովրդական Կոմիսարիատ — Կապի ԺԿ

ՄԻԱՎՈՐՅԱԼ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ (№ № 24—28)

24) Թեթև Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ — Թեթևարդ ԺԿ

25) Հողային Ժողովրդական Կոմիսարիատ — Հողժողկոմատ (ՀԺԿ)

26) Մատակարարման Ժողովրդական Կոմիսարիատ — Մատժողկոմատ (ՄատԺԿ)

27) Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատ — Ֆինժողկոմատ (ՖԺԿ)

28) Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարիատ — Բանգյուղտեսչության ԺԿ (ԲԳՏ ԺԿ)

29) Խճուղային ու Գրունտային Ճանապարհների և Ավտոտրանսպորտի Կենտրոնական Վարչություն — (Ցուգորտրանս) — Ճանտրանսի ԿՎ

30) Քաղաքացիական Ոդային Նավատորմի Գլխավոր Վարչություն — Քաղոդնավ ԳՎ

31) Ժողովրդատնտեսական Հաշվառման Կենտրոնական Վարչություն—Ժողտնհաշվ ԿՎ (ԺՏՀԿՎ)

32) Պետական Արբիտրաժ — Պետարբիտրաժ

33) ԽՍՀՄ ԿԳԿ-ին առընթեր Տեխնիկական բարձրագույն կրթության համամիութենական Կոմիտե — Տեխբարձկրթկոմ (կազմվել է 1933 թ. հոկտեմբերի 17-ի վորոշմամբ, ուստի ընկ. Ինգուլովի կազմած սխեմային է ավելացվում):

ԿՈՒՍՀՐԱՏ



Բայց վորպեսզի բանվոր դասակարգն ինքը կարողանա հաջողությամբ պայքարել այս նպատակների համար և իր հետևից տանել աշխատավորության հսկայական զանգվածները՝ նրան անհրաժեշտ են յերկաթե կարգապահություն, դասակարգային տոկուն կազմակերպություն: Միմիայն կոմունիստական կուսակցությունն է, վոր կարող է պրոլետարիատին տալ այս կազմակերպվածությունը:

ԱՅՍՊԻՍՈՎ, ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻՑ ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ.

Մեր վերջնական նպատակը կոմունիստական հասարակություն կառուցելն է, այսինքն՝ մի այնպիսի հասարակություն կառուցելը, վորտեղ չի լինի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, չեն լինի շահագործողներ յեվ շահագործվողներ յեվ, առհասարակ, չեն լինի դասակարգեր. վորտեղ չի լինի պետություն. վորտեղ արտադրությունը յեվ բաշխումը կազմակերպված կլինեն՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ նրա պահանջների» սկզբունքով. վորտեղ տեխնիկան, գիտությունը յեվ արվեստը կհասնեն չտեսնված ծաղկման, յեվ մարդու աշխատանքը կդառնա նրա համար ամենօրյա ստեղծագործական պահանջ:

Սոցիալիզմը կոմունիզմի ստորին աստիճանն է, յերբ արտադրողական ուժերի մակարդակը թույլ է տալիս բավարարել բնակչության պահանջները միայն համապատասխան աշխատավորի (գործավորի) ծախսած աշխատանքի: Սոցիալիզմի ժամանակ դասակարգեր չկան, բայց դեռևս մնում է պետության ապարատը, յեվ պայքար է մղվում դասակարգային հասարակության մնացուկները, մնացորդները հաղթահարելու համար: Մեր յերկիրը վոտք է կոխել սոցիալիզմի շրջանը յեվ կառուցում է սոցիալիստական անդասակարգ հասարակություն:

Սոցիալիզմին անցնելը հնարավոր է միմիայն վորպես հետեվանք պրոլետարական հեղափոխության՝ բանվոր դասակարգի կողմից պետական իշխանու-



Մ. Ի. Կալինին

# ԽՍՀՄ ԿԳԿ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ



Ա. Գ. Չերվյակով



Գ. Ի. Պետրովսկի



Գ. Մուսաբեկով



Ն. Այտակով



Ֆ. Խոջայև



Նուսրատուլլա Մաքսում



վում են առանձին ժողկոմատներ, վորոնք գործը վարում են ժողկոմխորհի ղեկավարությամբ։

Ժողկոմատների գլուխ են կանգնած ժողովրդական կոմիսարները, վոր իրենց առընթեր ունեն կոլեգիաներ։ (ԽՍՀՄ իշխանության մարմինների կառուցվածքը կբերվի գրքի յերկրորդ պրակում [1])։

## ԴԵՊԻ ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՋԱԽՋԱԽՎԱԾ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԴԵՄ ԱՆՀԱՇՏ ՊԱՅՔԱՐ ՄՂԵԼՈՒ ՄԻՋՈՎ

Մենք նպատակ ենք դնում յերկրորդ հնգամյակի (1933—1937 թիվը) ընթացքում կառուցել անդասակարգ հասարակություն։ Հասարակության դասակարգային բաժանման պատճառները մենք վոչնչացնում ենք, վորովհետև վերջնականապես վոչնչացնում ենք արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, արմատախիլ ենք անում կապիտալիստական տարրերի արմատներն իսկ և այսպիսով վերացնում ենք դասակարգերի գոյության հողը։

Անդասակարգ հասարակության համար մղվող պայքարը ներկայումս ընթանում է գյուղի և քաղաքի կապիտալիստական ուժերի այն

---

1) Նկատի ունենալով, վոր ընկ. Ինգուլովն իր այս աշխատության մեջ բավականացել է ԽՍՀՄ կառավարչության մարմինների կառուցվածքի մեջ մտնող անունների մեծ մասը միայն համառոտագրություններով տալով, մինչդեռ կարևոր է, վոր գրքի բոլոր ընթերցողներին միության կառավարչական բոլոր մարմինների վոչ միայն համառոտագրված, այլև լրիվ անունները հայտնի լինեն՝ մենք ստորև ըստ կառուցվածքի տալիս ենք այդ անունները թե ամբողջությամբ, առանց համառոտագրելու և թե մեծ մասի համառոտագրությամբ։

1) ԽՍՀՄ Խորհուրդների Համագումար — ԽՍՀՄ Խոր. Համ.
2) ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտե — ԽՍՀՄ ԿԳԿ
3) Միութենական Խորհուրդ — Միութխորհ
4) Ազգությունների Խորհուրդ — Ազգխորհ
5) ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահություն — ԽՍՀՄ ԿԳԿ Նախ.
6) ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ — ԽՍՀՄ Ժողկոմխորհ (ԺԿԽ)
7) Բյուջեական Հանձնաժողով — Բյուջհանձ
8) Կոմունալ Տնտեսության Համամիութենական Խորհուրդ — Կոմտնտհամխորհ
9) ԽՍՀՄ Գերագույն Դատարան — ԽՍՀՄ Գերդատ
10) ԽՍՀՄ Դատախազ
11) Պետական Քաղաքական Միավորյալ Վարչություն — Պետքաղ ՄՎ
12) Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդ (ՍՏՕ) — ԱՊԽ
13) ԽՍՀՄ Պետական Պլանային Հանձնաժողով — ԽՍՀՄ Պետպլան
14) Կատարման հանձնաժողով — կատհանձ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ

15) Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատ — Արտգործ ԺԿ
16) Արտաքին Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատ — Արտառ ԺԿ

*միացորդներին վճռապես հաղթահարելու գծով, վորոնք սոցիալիզմի կառուցմանը կատաղի դիմադրություն են ցույց տալիս:*

*Անդասակարգ հասարակություն ստեղծելու պայքարը պահանջում է, վոր վոչ թե թուլացնենք, այլ ուժեղացնենք պրոլետարիատի դիկտատուրան և ամենաանխնա պայքար մղենք շահագործող դասակարգերի մնացորդների դեմ: (Այս մասին ավելի մանրամասն մենք խոսում ենք յոթերորդ գլխում):*

Անդասակարգ հասարակության համար սոցիալիզմի համար մղվող պայքարում, ինչպես մենք արդեն տեսանք, պայքարի բոլոր շրջաններում— թե կապիտալիստական հասարակության պայմաններում յեվ թե պրոլետարական դիկտատուրայի պայմաններում ղեկավար ուժը բանվոր դասակարգն է:

*Պրոլետարիատը միակ դասակարգն է, վորը մինչև վերջը շահագրգռված է բուրժուազիան տապալելու, պրոլետարական դիկտատուրա սահմանելու և սոցիալիստական հասարակություն կերտելու մեջ:*

---

*17) Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ — Ռազմծով ԺԿ*

*18) Ծանր Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ — Ծանրարդ ԺԿ*

*19) Անտառային Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ—Անտարդ ԺԿ*

*20) Խորհրդային Տնտեսությունների Ժողովրդական Կոմիսարիատ—Խորհտնտ ԺԿ*

*21) Հաղորդակցության Ճանապարհների Ժողովրդական կոմիսարիատ — Հաղճան ԺԿ*

*22) Ջրային Տրանսպորտի Ժողովրդական Կոմիսարիատ — Ջրտրանս ԺԿ*

*23) Կապի Ժողովրդական Կոմիսարիատ — Կապի ԺԿ*

*ՄԻԱՎՈՐՅԱԼ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ (№ № 24—28)*

*24) Թեթև Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ — Թեթևարդ ԺԿ*

*25) Հողային Ժողովրդական Կոմիսարիատ — Հողժողկոմատ (ՀԺԿ)*

*26) Մատակարարման Ժողովրդական կոմիսարիատ — Մատժողկոմատ (ՄատԺԿ)*

*27) Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատ — Ֆինժողկոմատ (ՖԺԿ)*

*28) Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարիատ — Բանգյուղտեսչության ԺԿ (ԲԳՏ ԺԿ)*

*29) Խճուղային ու Գրունտային ճանապարհների և Ավտոտրանսպորտի Կենտրոնական Վարչություն — (Ցուգորտրանս) — Ճանտրանսի ԿՎ*

*30) Քաղաքացիական Օդային Նավատորմի Գլխավոր Վարչություն — Քաղօդնավ ԳՎ*

*31) Ժողովրդատնտեսական Հաշվառման Կենտրոնական Վարչություն—Ժողտնհաշվ ԿՎ (ԺՏՀԿՎ)*

*32) Պետական Արբիտրաժ — Պետարբիտրաժ*

*33) ԽՍՀՄ ԿԳԿ-ին առընթեր Տեխնիկական բարձրագույն կրթության համամիութենական կոմիտե — Տեխբարձկրթկոմ (կազմվել է 1933 թ. հոկտեմբերի 17-ի վորոշմամբ, ուստի ընկ. Ինգուլովի կազմած սխեմային և ավելացվում):*

*ԿՈՒՍՀՐԱՏ*



*Բայց վորպեսզի բանվոր դասակարգն ինքը կարողանա հաջողությամբ պայքարել այս նպատակների համար և իր հետևից տանել աշխատավորության հսկայական զանգվածները՝ նրան անհրաժեշտ են յերկաթե կարգապահություն, դասակարգային տոկուն կազմակերպվածություն:* Միմիայն կոմունիստական կուսակցությունն է, վոր կարող է պրոլետարիատին տալ այս կազմակերպվածությունը:

ԱՅՍՊԻՍՈՎ, ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼԽԻՑ ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ.

Մեր վերջնական նպատակը **կոմունիստա-կան** հասարակություն կառուցելն է, այսինքն՝ մի այնպիսի հասարակություն կառուցելը, վորտեղ չի լինի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, չեն լինի շահագործողներ յեվ շահագործվողներ յեվ, առհասարակ, չեն լինի դասակարգեր. վորտեղ չի լինի պետություն. վորտեղ արտադրությունը յեվ բաշխումը կազմակերպված կլինեն՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ նրա պահանջների» սկզբունքով. վորտեղ տեխնիկան, գիտությունը յեվ արվեստը կհասնեն չտեսնված ծաղկման, յեվ մարդու աշխատանքը կդառնա նրա համար ամենօրյա ստեղծագործական պահանջ:

**Սոցիալիզմը** կոմունիզմի ստորին աստիճանըն է, յերբ արտադրողական ուժերի մակարդակը թույլ է տալիս բավարարել բնակչության պահանջները միայն համապատասխան աշխատավորի (գործավորի) ծախսած աշխատանքի: Սոցիալիզմի ժամանակ դասակարգեր չկան, բայց դեռևս մնում է պետության ապարատը, յեվ պայքար է մղվում դասակարգային հասարակության մնացուկները, մնացորդները հաղթահարելու համար: Մեր յերկիրը վոտք է կոխել սոցիալիզմի շրջանը յեվ կառուցում է սոցիալիստական անդասակարգ հասարակություն:

Սոցիալիզմին անցնելը հնարավոր է միմիայն վորպես հետևանք պրոլետարական հեղափոխության՝ բանվոր դասակարգի կողմից պետական իշխանու-

թյունը նվաճելու, յեվ պրոլետարական դիկտատուրա հաստատելու: Սոցիալիստական հասարակություն ստեղծելու ուրիշ ճանապարհ չկա:

Մեր յերկիրը պրոլետարական դիկտատուրայի յերկիր է: Խորհրդային սիստեմը բանվոր դասակարգի տիրապետության կազմակերպությունն է, բանվոր դասակարգի, վորը, գյուղացիության հետ դաշինք կնքած, բոլշեվիկների կուսակցության ղեկավարությամբ պայքարում է սոցիալիստական անդասակարգ հասարակություն կերտելու համար:

## ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### II ԳԼԽԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ

1. *Կոմունիստական հասարակության զարգացման մեջ ի՞նչ յերկու փուլ (ֆազա) յեն նշում Մարքսը յեվ Լենինը:*
2. *Կոմունիստական հասարակության այս փուլերն ինչո՞վ են տարբերվում իրարից.*
   *ա) արտադրական ուժերի մակարդակի բնագավառում,*
   *բ) բաշխման բնագավառում,*
   *գ) դեպի աշխատանքն ունեցած վերաբերմունքի բնագավառում:*
3. *Ի՞նչ բան է կապիտալիզմից կոմունիզմ տանող անցողիկ շրջանը:*
4. *Ի՞նչ կերպ է տեղի ունենալու դասակարգերի վոչնչացումը:*
5. *Ի՞նչ է պատճառը, վոր դասակարգային տարբերությունների մնացորդները յեվ դասակարգային պայքարի տարրեր շարունակում են դեռևս վորոշ ժամանակ գոյություն ունենալ յեվ դասակարգերի վոչնչացումից հետո:*
6. *Ի՞նչ է պատճառը, վոր անցումը դեպի սոցիալիզմ անկարելի յե առանց պրոլետարական հեղափոխության յեվ պրոլետարիատի դիկտատուրայի: Այս հարցի մասին ի՞նչ են ասում կոմունիստները յեվ ի՞նչ են ասում սոցիալ-ֆաշիստները:*
7. *Ինչո՞ւ հավասարեցումը սոցիալիզմի մանր-բուրժուական աղճատում է:*
8. *Ինչո՞ւ մեր յերկիրը խորհուրդների յերկիր է կոչվում:*
9. *Ի՞նչպես են կառուցված խորհրդային իշխանության ղեկավար մարմինները:*
10. *Արդյոք լա՞վ են աշխատում ձեր ձեռնարկության մեջ պատգամավորական խմբակները:*





Գլուխ

# ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցությունը պրոլետարիատի միակ հեղափոխական կուսակցությունն է: Մինչեվ հեղափոխությունը յեվ հեղափոխության առաջին տարիները բացի մեր բոլշեվիկյան կուսակցությունից Ռուսաստանում գոյություն ուներ նայեվ մենշեվիկյան կուսակցություն, վորը փորձում եր ձեվացնել իրեն վորպես «բանվորական» կուսակցություն: Արտասահմանում կոմունիստական կուսակցությունների կողքին կան սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ, վորոնք իրենց «բանվորական» կուսակցություն են անվանում:

Ի՞նչն է կոմունիստական յեվ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների տարբերությունը: Ի՞նչն է պատճառը, վոր մեր բոլշեվիկյան կուսակցությունը դարձել է բանվոր դասակարգի, ամբողջ աշխատավորության ճանաչված (ընդունված) առաջնորդը, մինչդեռ մենշեվիկյան կուսակցությունը

վռնդված յեվ ջախջախված է խայտառակությամբ ու ատելությամբ: Ի՞նչն է պատճառը, վոր մեր բոլշևիկյան կուսակցությունն որինակ է հանդիսանում պրոլետարիատի միջազգային հեղափոխական ամբողջ շարժման համար, մինչդեռ մենշևիկյան կուսակցությունը միջազգային հակահեղափոխության մոնք է հանդիսանում:

Մեր բոլշևիկյան կուսակցությունը ղեկավարում է պրոլետարիատի պայքարը սոցիալիզմ կառուցելու համար:

Ի՞նչպես է ղեկավարում նա այդ պայքարը: Ի՞նչպես է կուսակցությունը կառուցված: Ի՞նչպես է կապվում նա մասսաների հետ: Կուսակցությունն ի՞նչպես է իր շարքերը լրացնում, զտում յեվ ամրացնում: Ի՞նչ պարտականություններ ունեն կուսակցության անդամները: Ի՞նչ բան է կուսակցական կարգապահությունը (դիսցիպլինան): Ի՞նչպես է կուսակցությունը պահպանում իր միասնությունը:

Այս բոլոր հարցերը լուսաբանված են յերրորդ գլխում: Այս գլխում մենք տալիս ենք հետեվյալ բաժինները.

1. *Կուսակցությունը պրոլետարիատի առաջավոր ջոկատն է:*
2. *Կուսակցությունը պրոլետարիատի կազմակերպված ջոկատն է:*
3. *Կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային կազմակերպման բարձրագույն ձևն է:*
4. *Կուսակցությունը պրոլետարիատի դիկտատուրայի գործիքն է:*
5. *Կուսակցության միասնությունը:*
6. *Կուսակցությունը զտում է իրեն օպորտունիստական յեվ խորթ մարդկանցից:*

## 1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ Է

### Ի՞ՆՉ ԲԱՆ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Թե ինչ բան է կոմունիստական կուսակցությունը՝ այս մասին Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագիրը հետևյալն է ասում.*



*«Կուսակցությունը բանվոր դասակարգի ավանգարդն է[1]), վոր բաղկացած է դասակարգի ամենից գիտակից, ակտիվ և արի (անվեհեր) անդամներից: Նա մարմնավորում է պրոլետարական ամբողջ պայքարի միակից (միագումար) փորձը: Հենվելով մարքսիզմի հեղափոխական թեորիայի (տեսության) վրա, ներկայացնելով իր ամբողջությամբ վերցրած դասակարգի ընդհանուր և տևական շահերը՝ կուսակցությունը մարմնավորում է պրոլետարական սկզբունքների, պրոլետարական կամքի, պրոլետարական հեղափոխական գործողության միասնությունը: Նա մի հեղափոխական կազմակերպություն է, վոր շաղկապված է յերկաթե կարգապահությամբ և դեմոկրատական ցենտրալիզմի հեղափոխական խըստագույն կարգով, վոր ձեռք է բերվում (ստացվում է) պրոլետարական ավանգարդի գիտակցականությամբ և դեպի հեղափոխությունն ունեցած նվիրվածությամբ, պրոլետարական զանգվածների հետ անխզելի կապ ունենալու նրա ընդունակությամբ, քաղաքական ղեկավարության ճշտությամբ, մի ղեկավարություն, վորն ստուգվում և պարզվում է մասսաների իսկ փորձով»:*

*Սակայն վորքան էլ վոր մասսաները լավ գիտենան, թե բանվոր դասակարգին կապիտալիստական տաժանքից (տաժանակիր աշխատանքից) իսկական փրկություն բերողը միմիայն սոցիալիզմն է վորքան էլ վոր մասսաները լավ գիտենան, թե սոցիալիզմ կարող է նվաճել միմիայն պրոլետարական հեղափոխությունը, բայց հեղափոխությունն անկարող է հաղթել, յեթե միայն պրոլետարիատի ուժերը միավորված չեն լինի՝ վորպես հեղափոխական մի կառուցիկ (գեղակառույց) կազմակերպություն:*

*Պատմությունը քիչ դեպքեր չգիտե, յերբ շահագործողների դեմ յեղած ապստամբությունները և հեղափոխությունները ջախջախվել են սոսկ այն պատճառով, վոր ապստամբ դասակարգերը լավ կազմակերպված չեն յեղել: Պարիզի կոմունան (1871 թ.) գլխավորապես այն պատճառով ընկավ, վոր ապստամբված հեղափոխական մասսաները շարժման գլուխ չունեյին ամրակուռ, լավ կազմակերպված պրոլետարական կուսակցություն: Գերմանական 1917 թ. հեղափոխությունը պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի չբերեց այն պատճառով, վոր Գերմանիայի բանվոր դասակարգն այդ պահին դեռևս չեր կարողացել ստեղծել իր ամրակուռ կոմունիստական կուսակցությունը, պրոլետարիատի մասսայական կուսակցությունը, և սրա հետևանքով էլ սոցիալ-դեմոկրատիան հնարավորություն ստացավ հեղափոխությունը մատնելու (դավաճանելու):*

*Ուրեմն և՝ կոմունիստական կուսակցությունն է այն ուժը, վորը բանվորական զանգվածին պարզաբանում է պայքարի նպատակները*

1) *Ավանգարդ — առաջավոր ջոկատ:*

և յեղանակները, կազմակերպում է պայքարը, ինքն է կանգնում դասակարգի գլուխ և տանում է նրան իր հետևից։ Կոմունիստական կուսակցությունն է բանվոր դասակարգի առաջավոր, գլուխ ջոկատը։

Գլուխ ջոկատը՝ դա ամբողջ բանակը չէ։ Հետևաբար, կուսակցությունն ամբողջ դասակարգը չէ, նա նրա միայն առաջավոր, ամենագիտակից և ամենաակտիվ մասն է, որ իր մեջ է առել բուրժուազիայի դեմ մղվող պայքարում ամենից փորձված լավագույն պրոլետարներին։

Բուրժուազիան նույնպես իր կուսակցություններն ունի։ Քաղաքական յուրաքանչյուր կուսակցություն դասակարգային կազմակերպություն է։ Յուրաքանչյուր այդպիսի կուսակցություն իր դասակարգի շահերի պաշտպանությունն է նպատակ դնում։

Ուստի և յուրաքանչյուր կուսակցություն շահագրգռված է այն բանում, որ հենց նա կանգնած լինի իշխանության գլուխ։

Թե բուրժուական և թե կալվածատիրական կուսակցությունների մեջ մտնում են ոչ թե բոլոր կապիտալիստներն ու բոլոր կալվածատերերը, այլ միայն նրանք, ովքեր ավելի լավ են հասկանում իրենց ամբողջ դասակարգի շահերը և ավելի յեն հոգատարված հանրադասակարգային այդ շահերով։ Իսկ հոգատարված է բուրժուական կուսակցության գործարանատեր-անդամը կապիտալիստների ամբողջ դասակարգի կարիքներով ոչ այն պատճառով, որ նա անհանգստանում է իր մրցակցի կամ նույնիսկ կոմպանյոնի (գործընկերոջ) շահերի առթիվ, տեղն յեկած ժամանակ նա նրանցից ամեն մեկի տակն էլ փոս կփորի։ Նա իր դասակարգի ամբողջության մասին հոգ է տանում այն պատճառով, որ հասկանում է, թե նա չի կարող իր սեփական կաշին պահպանել, յեթե գործարանատերերի և ֆաբրիկանտների ամբողջ դասակարգը կազմակերպված չի լինի նրա դասակարգային թշնամու — պրոլետարիատի դեմ կռվելու համար։

Բանվորները տարբեր շահեր չունեն։ Յեթե կապիտալիստական յերկրներում յերբեմն այնպես էլ է լինում, որ բանվորների զանազան խմբերի շահերը բախվում են, ապա դա նրանից է միայն, որ բուրժուազիան որոշ դեպքերում շատ ճարպիկ կերպով կարողանում է նրանց գրգռել միմյանց դեմ (օրինակ, տարբեր ազգությունների բանվորներին, գործազուրկներին՝ գործ ունեցողների դեմ, գործադուլարեկներին՝ գործադուլավորների դեմ և այլն), և ոչ թե նրանից է, թե բանվորների տնտեսական շահերը տարբեր են։

Բուրժուազիան պրոլետարիատի մեջ իսկ ունեցած իր արբանյակների (գործակալների) միջոցով ամեն կերպ աշխատում է քայքայում առաջ բերել բանվոր դասակարգի շարքերում։

Ի հաշիվ բանվորների հիմնական մասսայի շահագործման և նամանավանդ ի հաշիվ գաղութների թալանից ստացված յեկամուտների՝ կապիտալիստները կարողացել են ստեղծել բանվոր դասակարգի ներ-



սում լավ վարձատրվող բանվորների մի արտոնյալ վերնախավ, այսպես կոչված՝ բանվորական արիստոկրատիա, որը վայելում է առանձին արտոնություններ, աջակցություն և խրախուսանք։ Բուրժուազիայի կողմից կաշառված մարդկանց այս խավը հանդես է գալիս կապիտալիստների շահերը պաշտպանելու համար, որովհետև նրանց շահերը հյուսված են ավելի նրանց տերերի շահերի, քան բանվորների ամբողջ մասսայի շահերի հետ։ Բանվորական արիստոկրատիայի աջակցությունը բուրժուազիան գնում է բարձրացված աշխատավարձով, զանազան պարգևատրումներով, շահավետ պաշտոններով։ Սա այն խավն է, որը «բուրժուացված պրոլետարիատ» են անվանել Մարքսը, Ենգելսը և Լենինը։

Սակայն բանվոր դասակարգի շարքերը կազմալուծելու միայն այս յեղանակով չի սահմանափակվում բուրժուազիան։ Նա օգտագործում է պետական մեքենայի ամբողջ կարողությունը՝ պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը հալածելու, քայքայելու և արգելելու համար։ Նա գործում է ոստիկանական պրովոկացիայի, կուսակցության առաջնորդների ձերբակալումների, բանտարկումների և գնդակահարությունների միջոցներով և այլն։

Բանվոր դասակարգի շարքերի պառակտման համար բուրժուազիան լայնորեն կիրառում է կաշառքը, լրտեսներ վարձելու, բանվոր դասակարգի ներսը գժտություններ սերմանելու, դավաճանությունների, շտրեյկբրեխերության միջոցով, օգտագործում է ազգային և կրոնական նախապաշարմունքները և գլխավորապես՝ լայնորեն օգտագործում է սոցիալ-դեմոկրատներին, մենշևիկներին, որ խաբի և պառակտում առաջ բերի բանվոր դասակարգի շարքերում։ Սոցիալ-ֆաշիստները բանվոր դասակարգի ներսում բուրժուազիայի գլխավոր հենարանն են։

Պրոլետարիատն իր դասակարգային գիտակցականությամբ միատեսակ չէ, նրա շարքերում կան թե ավելի գիտակից, թե պակաս գիտակից, թե առաջավոր և թե հետամնաց բանվորներ։ Բանվոր դասակարգի կազմում կան հին, այսպես կոչված՝ տոհմական պրոլետարներ, կան թե գյուղից հենց նոր յեկած գյուղացիներ և թե սնանկացած մանր առևտրականների միջից դուրս յեկածներ և այլն։ Պրոլետարիատի բոլոր այս խմբերը դասակարգային տեսակետով վերցրած՝ չեն կարող միատեսակ յեփված և դաստիարակված լինել։ Ամբողջ բանվոր դասակարգի շահերի համար ավելի լավ պայքարելու համար՝ ամենաառաջավոր և ամենագիտակից բանվորները պետք է միավորվեն որպես կոմունիստական կուսակցություն։ Բանվոր դասակարգի առաջավոր լավագույն տարրերը կուսակցություն կազմելով է միայն, որ հնարավորություն ունեն ազդելու նաև մյուս բանվորների վրա, վերադաստիարակելու և կազմակերպելու նրանց։ Լենինն այսպես է գրել

քաղաքական կուսակցության, վորպես դասակարգի առաջավոր ջոկատի նշանակության մասին։

«Վորպեսզի վորոշ դասակարգի մասսան սովորի ըմբռնել իր շահերը, իր դրությունը, սովորի իր քաղաքականությունը վարել՝ հենց դրա համար էլ անհապաղ և ինչ ուզում է լինի՝ անհրաժեշտ է ունենալ դասակարգի առաջավոր տարրերի կազմակերպություն, թեկուզ և այդ տարրերը սկզբներում կազմեն դասակարգի չնչին մասը»։

Յերբ դասակարգի լավագույն ամենագիտակից մասը կազմակերպված է՝ նա ի վիճակի կլինի իր հետևից տանելու հսկայական զանգվածներ։ Սրանումն է կազմակերպության ուժը։ Այն մասին, թե ինչ ուժ է կազմակերպությունը՝ Լենինը այսպես է գրել.

«Կուսակցությունը դասակարգի գիտակից, առաջավոր խավը, նրա ավանգարդն է։ Այդ ավանգարդի ուժը 10, 100 և ավելի անգամ է մեծ, քան նրա քանակը։

Արդյոք հնարավո՞ր բան է սա։ Արդյոք կարո՞ղ է հարյուրի ուժը հազարի ուժից գերազանց լինել։ Կարող է և գերազանցել, յերբ վոր հարյուրը կազմակերպված է։

Կազմակերպությունը տասնապատկում է ուժերը»։

Կարող են հարցնել՝ յեթե կուսակցությունն առաջավոր պրոլետարների ջոկատն է այն յերկրներում, վորտեղ իշխանության գլուխ է կանգնած բուրժուազիան, վորտեղ կապիտալիստները կաշառքներով ազգային թշնամանք մտցնելով և այլն՝ աշխատում են խախտել բանվոր դասակարգի միասնությունը, ապա, թերևս, կուսակցության և ամբողջ դասակարգի միջև չկա՞ տարբերություն ԽՍՀՄ մեջ, վորտեղ իշխանության գլուխ է կանգնած բանվոր դասակարգն ինքը։ Վոչ, ԽՍՀՄ մեջ էլ կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է նույնպես։

Կոմունիստական ինտերնացիոնալի կոնգրեսը (համագումարը) կուսակցության վերաբերյալ բանաձևում 1920 թ. մատնանշել է, վոր

«... բանվոր դասակարգին կոմունիստական կուսակցությունը հարկավոր է վոչ միայն մինչև իշխանություն նվաճելը և վոչ միայն իշխանություն նվաճելու ժամանակ, այլև այն բանից հետո, յերբ իշխանությունն անցել է բանվոր դասակարգի ձեռքը»։

Մեր յերկրումն էլ բանվոր դասակարգը վոչ ամբողջապես է միատեսակ։

Ռուսաստանյան կապիտալիզմի պայմաններում շատ տասնամյակների ընթացքում կադրային բանվորների շարքերն ստեղծվում, աճում և դաստիարակվում եյին ցարիզմի և բուրժուազիայի դեմ պայքարելու վոգով։ Գործարանային այս բանվորների շարքերից, վոր անցած



են յեղել ցարական միապետության վոստիկանական ռեժիմի և բուրժուազիայի դեմ ունեցած գործադուլային և հեղափոխական մարտերի շկոլան (դպրոցը)՝ մշակվում եյին պրոլետարական մարտական հեղափոխականների կադրեր։ Կոփված հին բանվորների այս զանգվածը միշտ յեղել է և այժմ էլ հանդիսանում է պրոլետարական դիկտատուրայի կմախքը։

Բայց պրոլետարիատը միայն կադրային բանվորներից չէ բաղկացած։ Արագաթափ աճում են մեր արդյունաբերությունը, տրանսպորտը, խորհտնտեսությունները, արագաթափ աճում է մեր յերկրում և պրոլետարիատի քանակը։ Բանվոր դասակարգի շարքերը շարունակ լրացվում են այնպիսի նոր մարդկանցով, վոր յեկել են թե քաղաքային և թե գյուղական բնակչության զանազան խավերից։ Քաղաքից բանվորների կազմի մեջ աստիճանաբար ներգրավվում են տնայնագործները, արհեստավորները, ծառայողների ընտանիքներից և մանր բուրժուազիայից դուրս յեկածները։ Սակայն բանվորների նոր խըմբեր գլխավորապես մատակարարողը գյուղն է։ Բանվորների միլիոնավոր զանգվածներ՝ դա յերեկվա գյուղացիներն են։

Այս մարդկանց գիտակից պրոլետարներ դարձնելու համար քաղաքական-դաստիարակչական մեծ աշխատանք է պահանջվում, վորովհետև նրանք իրենց հետ բանվոր դասակարգի շարքերն են բերում այնպիսի թե տրամադրություններ, թե սովորքներ, վոր հատուկ են մյուս դասակարգերին և մանավանդ մանր բուրժուազիային։

Կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգն աստիճանաբար վերադաստիարակում է բանվորների այս նոր և հետամնաց զանգվածները. Նրանք վերաձուլվում են պրոլետարական կաթսայում, վերացնում են իրենց հետամնաց հայացքները և տրամադրությունները և աստիճանաբար դառնում են սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ։

Առաջամարտիկ-պրոլետարները սոցիալիստական մրցակցությամբ, հարվածայնությամբ, դեպի արտադրությունը գիտակից վերաբերմունք ունենալով, սոցիալիզմի ամենօրյա կառուցումով բանվորների հետամնաց խավերին էլ գրավում են սոցիալիզմի համար պայքարելու գործի մեջ։ Գյուղից յեկած նոր բանվորների նշանակելի մասը կոլտնտեսություններումն է անցել սոցմրցակցության և հարվածայնության շկոլան և այնտեղ է ստացել քաղաքական ընդհանուր պատրաստությունը։ Սրանով հեշտանում է կոլտնտեսային գյուղերից յեկածների դասակարգային դաստիարակության խնդիրը։

Լենինի փորձված կուսակցությունն է ղեկավարում այն տատանումների և յերերանքների դեմ մղվող պայքարը, վոր բերում են հետամնաց տարրերը—այլ դասակարգերից դուրս յեկածները։ Լենինի կուսակցությունն իր մեջ է վերցրել իր դասակարգի ամենագիտակից

և ամենահեղափոխական ներկայացուցիչներին: Կուսակցությունն աճել և կոփվել է բազմամյա այն պայքարում, վոր նա մղել է ցարական միապետության, ճորտատիրության մնացորդների դեմ և հայրենի ու միջազգային կապիտալիզմի դեմ, այլև դավաճանական բոլոր կուսակցությունների (մենշևիկների, եսերների և այլն) և ոպորտունիստական զանազան հոսանքների դեմ: Կուսակցությունն այս պայքարում նվաճեց բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների հսկայական վստահությունը և դարձավ նրանց միակ ճանաչված առաջնորդը:

Կուսակցությունը գլխավորում է ամբողջ դասակարգի և վոչ թե նրա հետամնաց առանձին խմբերի շահերի համար մղվող հեղափոխական պայքարը: Պրոլետարիատի լավագույն մարտիկների այս ջոկատը պրոլետարական հեղափոխության ամբողջ ընթացքում հանդիսանում է բանվոր դասակարգի անհերթափոխ և միակ առաջնորդը:

Այդ ջոկատը՝ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունն է:

## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԸ

Արդյոք կարող է բանվոր դասակարգի մղած պայքարը սոցիալիզմի համար հաջող լինել, յեթե այդ պայքարը մղվում է վոչ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ:

Կուսակցությունը պրոլետարիատի շարժումը վստահորեն է ղեկավարում այն պատճառով, վոր նա գիտե հասարակության շարժման օրենքները և բանվոր դասակարգի պայքարի ու հաղթանակի ուղիները: Այդ գիտենալը պրոլետարիատի կուսակցությանը տվել է Մարքս-Ենգելս-Լենին-Ստալինի ուսմունքը:

Մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական այս տեսությունը (ուսմունքը) հզորագույն զենքն է կոմունիստական կուսակցության ձեռքում: Տեսության (թեորիայի) ուժը նրանումն է, վոր նա հնարավորություն է տալիս շարժումն ուղիղ ճանապարհով տանելու, խուսափելու պայքարում ավելորդ զոհերից, նշել և իրականում կենսագործել ճիշտ քաղաքականություն: Մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական տեսությունը կոմունիստական կուսակցությանը հնարավորություն է տալիս գիտենալու, թե ինչ օրենքներ և ուժեր պրոլետարիատի շահերի համար են գործում և ինչ՝ նրա դեմ: Իսկ սա թույլ է տալիս նշել այն պայքարի լավագույն ուղիները և յեղանակները, վոր բանվոր դասակարգը մղում է կոմունիզմի համար: Պրոլետարիատի կուսակցությունը հեղափոխական տեսության զենքը հեղափոխական պայքարի համար է օգտագործում, կիրառում է այդ տեսությունը պրակտիկայում, իրականում:

«Տեսությունն անառարկայական է դառնում, — ասաց



ընկ. Ստալինը, — յեթե նա չի շաղկապվում հեղափոխական պրակտիկայի հետ, նմանապես, ինչպես և պրակտիկան է կույր դառնում, յեթե նա չի լուսավորում իր ճանապարհը հեղափոխական տեսությամբ: Սակայն տեսությունը կարող է դառնալ բանվորական շարժման մեծագույն ուժը, յեթե նա կազմվում է հեղափոխական պրակտիկայի հետ ունեցած անխզելի կապակցությամբ, վորովհետեվ նա, յեվ միմիայն նա յե, վոր կարող է շարժմանը տալ վստահություն, կողմնորոշվելու կարողություն յեվ շրջապատող իրադարձությունների ներքին կապի ըմբռնում, վորովհետեվ նա, միմիայն նա յե, վոր կարող է պրակտիկային օգնել հասկանալու վոչ միայն այն, թե ինչպես յեվ ո՛ւր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլեվ այն, թե ի՛նչպես յեվ ո՛ւր են շարժվելու նրանք մոտակա ապագայում»:

Մեր բոլշևիկյան կուսակցությունն իր մեջ է ներծծել կապիտալիզմի դեմ պրոլետարիատի ունեցած դասակարգային ամբողջ ատելությունը: Նա ստեղծվել և ամրացել է իր դասակարգային թշնամիների դեմ պրոլետարիատի վարած դասակարգային պայքարի բազմամյա փորձով: Նա անցել է ցարական ընդհատակի ծանր տարիների միջով, բանտերի, տաժանքի և ծանրագույն հալածանքների միջով: Նա անցել է յերեք հեղափոխության բարիկադներով, քաղաքացիական պատերազմի, ապստամբությունների և ինտերվենցիայի կրակի միջով: Նա իր ճանապարհին խորտակել է հարյուրավոր հակահեղափոխական դավադրություններ, խռովարարություններ և դավաճանություններ: Նա աճել և հասունացել է բանվորական շարժման մեջ յեղած մանր-բուրժուական, համաձայնողական բոլոր կուսակցությունների ու հոսանքների դեմ և մարքսիզմ-լենինիզմի ոպորտունիստական բոլոր աղճատումների դեմ մղած պայքարում: Կուսակցությունն ստեղծվել է վորպես կամքի միասնության հզոր մի կազմակերպություն՝ նրա յերկաթե կարգապահությունը խախտելու բազմաթիվ փորձերի դեմ պայքար մղելով: Ուստի հանուն սոցիալիզմի պայքարի միայն նա յե ընդունակ բանվոր դասակարգը կազմակերպելու և նրա հեղափոխական ու ստեղծագործական բոլոր ուժերը միավորելու:

Ինչպիսի՞ պետք է օժտված լինի կուսակցությունը, վոր նա ի վիճակի լինի ղեկավարելու բանվոր դասակարգին:

Ընկ. Ստալինը մատնանշել է, վոր կուսակցությունը պետք է ունենա հատկությունները

«... մարտական կուսակցության, հեղափոխական մի կուսակցության, վորը պետք է լինի բավականաչափ համարձակ, վոր պրոլետարիատը տանի իշխանության համար պայքարելու, բավականաչափ փորձառու, վոր ըմբռնի հեղափոխական իրադրության բարդ պայմանները, և բավականաչափ ճկուն, վոր խուսա-

փի դեպի նպատակը տանող ճանապարհին ընկած ամեն և ամեն տեսակի ստորջրյա քարերից»:

Միայն մարտական կուսակցությունն է, որը, լի հեղափոխական վճռականությամբ, կարող է բանվոր դասակարգին առաջնորդել իշխանության համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար պայքարելու:

Պրոլետարիատի պայքարը հեղափոխական բարդ պայմաններում կարող է ղեկավարել մի կուսակցություն միայն, որն ունի մարտական մեծ փորձ, որն ընդունակ է հաշվի առնելու և օգտագործելու պայքարի բոլոր պայմանները, որ հաղթանակի հասնի ամենափոքր զոհողություններով:

Սա միաժամանակ նշանակում է և այն, որ կուսակցությունը որոշ պայմաններում պետք է կարողանա գործադրել պայքարի համապատասխան յեղանակներ, պետք է կարողանա ընդունել և տալ հակառակորդին մարտ հենց այնտեղ, որտեղ այդ ձեռնտու յե պրոլետարիատին և ոչ թե նրա դասակարգային թշնամուն:

Բուրժուական այն յերկրներում, որտեղ բանվորական զանգվածների մեջ դեռևս ուժեղ է սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան) կուսակցությունների ազդեցությունը՝ պրոլետարիատի ուժերը թուլանում են շնորհիվ այդ կուսակցությունների դավաճանական քաղաքականության, որ հեռու յեն պահում բանվոր դասակարգն իշխանության համար հեղափոխական պայքար մղելուց:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն իրենց ձևացնում են որպես բանվոր դասակարգի կուսակցություններ: Իրականում նրանք կուսակցություններ են, որ անցկացնում և պաշտպանում են բուրժուազիայի շահերը: Նրանք պառակտում և քայքայում են բանվոր դասակարգի շարքերը, թուլացնում են նրա մարտունակությունը, հեշտացնում են բուրժուազիայի գործը՝ բանվորների հետագա շահագործման համար և պրոլետարիատի հեղափոխական շարժումը ճնշելու համար:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առաջնորդները կապիտալիզմի հավատարիմ յեվ հլու-հնազանդ ծառաներն են:

Յերբ նրանք բուրժուազիայի շահերն են պաշտպանում՝ դրանով նրանք պաշտպանում են իրենց սեփական բարօրությունը, իրենց սեփական յեկամուտները և տաքուկ պաշտոնները, որ նրանց շնորհել են կապիտալիստները:

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները բուրժուազիայի սոցիալական (դասակարգային) գլխավոր հենարանն են՝ պրոլետարական հեղափոխության դեմ մղած նրա պայքարում:

Ռուսաստանում մենշևիկներն ու էսէռները թե մինչև Փետրվարյան հեղափոխությունը և թե նրանից հետո, յերբ նրանք իշխանության գլուխ անցան՝ վարում եյին բանվոր դասակարգին դավաճանե-



լու քաղաքականություն: Նրանք կոչ եյին անում բանվորներին և գյուղացիներին, որ հաշտ ու համերաշխ ապրեն բուրժուազիայի հետ, չդիպչեն նրանց գործարաններին և կալվածներին, չդիմադրեն նրանց շահագործմանը: Մենշևիկները և էսէռները պաշտպանում և հաճախ գլխավորում եյին այն հակահեղափոխական պայքարը, որ մղում եյին բուրժուազիան և կալվածատերերը խորհրդային իշխանության դեմ: Նրանք այժմ էլ են սպասավորում միջազգային իմպերիալիզմին՝ օգնելով նրան, որ ԽՍՀՄ ներսում վնասարարական և դավադրական կազմակերպություններ ստեղծի, պատրաստելով իմպերիալիստական պետությունների զինվորական շտաբների հետ միասին նոր ինտերվենցիա Խորհուրդների յերկրի դեմ:

Թե պրոլետարիատից յերկաթե ինչպիսի տոկունություն, ամրակուռ կազմակերպություն, մարտունակություն, կարգավարժվածություն և դասակարգային գիտակցականություն են պահանջվում կապիտալիզմի դեմ հաղթանակ տանելու համար՝ կարելի յե տեսնել նրանից, թե դասակարգային թշնամին մեր յերկրում ինչպես հուսահատորեն է դիմադրում սոցիալիզմի շինարարությանը, թե ինչպիսի ջանքեր են պետք կապիտալիզմի մնացորդներն արմատախիլ անելու համար:

Ոչ ամեն մի բանվոր ունի այդ տոկունությունը և գիտակցականությունը: Բայց բանվոր դասակարգը, որպես մի ամբողջություն՝ կարող է այս հատկություններն ստանալ, յեթե նրա շարքերի լավագույն, առաջավոր, ամենաանձնվեր պրոլետարական մարտիկները միավորվում են որպես ուժեղ կոմունիստական կուսակցություն: Այն ժամանակ նրանք իրենց շուրջն են համախմբում բանվորների ամբողջ բազմությունը, հաղթականորեն նրանց տանում են իրենց հետևից իրենց ղեկավարությամբ:

«Միմիայն կոմունիստական կուսակցությունն է,—ասել է Լենինը,—յեթե նա իրապես հանդիսանում է հեղափոխական դասակարգի ավանգարդը, յեթե նա իր մեջ է ներառում այդ դասակարգի բոլոր լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա կազմված է միանգամայն գիտակից և անձնվեր կոմունիստներից, որ կրթվել և յեփվել են հեղափոխական համառ պայքարի փորձով, յեթե այդ կուսակցությունը կարողացավ իրեն անխզելիորեն կապել իր դասակարգի ամբողջ կյանքի հետ, և նրա միջոցով շահագործվողների ամբողջ բազմության հետ և կարողացավ լիակատար վստահություն ներշնչել այդ դասակարգին և այդ բազմությանը,—միմիայն այսպիսի կուսակցությունն է, որ ընդունակ է ղեկավարելու պրոլետարիատին՝ կապիտալիզմի բոլոր ուժերի դեմ մղվող ամենակատաղի, վճռական, վերջին պայքարում»:

Այսպիսով՝ բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչնե-

րին իր շարքերում միավորող կոմունիստական կուսակցությունն է, վոր կազմում է պրոլետարիատի առաջավոր ջոկատը և հանդիսանում է նրա քաղաքական առաջնորդը: Կոմունիստական կուսակցությունը պրոլետարիատի քաղաքական այն կազմակերպությունն է, վորը միայնակ ընդունակ է պրոլետարիատին քաղաքական հզոր ուժ դարձնելու և տանելու նրան դեպի սոցիալիզմի հաղթանակը:

Կոմունիստական կուսակցությունը նոր տիպի կուսակցություն է, վորը միանգամայն տարբերվում է առաջ գոյություն ունեցած կուսակցություններից և այժմյան սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից: Սա մի մարտական կուսակցություն է, վորը զինված է մարքս-լենինյան տեսությամբ, վորն իր մեջ է ներծծել բանվոր դասակարգի պայքարի հեղափոխական վողջ փորձը և լի յե պրոլետարական հեղափոխության հաղթանակի և սոցիալիզմի կառուցման համար մինչև վերջը պայքարելու վճռականությամբ:

## 2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՋՈԿԱՏՆ Է

### ԾՐԱԳԻՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է հանդիսանում: Վորպեսզի կուսակցությունը կարողանա հաջող կերպով ղեկավարել բանվոր դասակարգի պայքարը, նա պետք է վոչ միայն գիտենա այդ պայքարի նպատակները, այլև ճիշտ կազմի իր շարքերը:

Կուսակցության նպատակները, այդ նպատակների համար մղելիք նրա պայքարի յեղանակներն ու կուսակցությունը կառուցելու կազմակերպական ձևերը վորոշված են ծրագրով ու կանոնադրությամբ: Այդ յերկու փաստաթղթերն էլ պետք է լավ հայտնի լինեն կուսակցության բոլոր անդամներին: Առանց դրան նրանք չեն կարող գիտենալ, թե ինչի և ինչպես է ուզում հասնել կոմունիստական կուսակցությունը: Առանց դրան նրանք չեն կարող լինել կուսակցական կյանքի ներգործոն մասնակիցները, չեն կարող լինել կուսակցության անդամներ: «Չի կարող լինել մի կոմունիստ, վոր չգիտե իր կուսակցության ծրագիրը, կանոնադրությունն ու այդ կուսակցության կարևորագույն քաղաքական և կազմակերպական վճիռները»—ասված է կուսակցության զտման մասին ՀԿ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ վորոշման մեջ:

Ծրագիրն իր մեջ պարունակում է շարադրանքն ու հիմնավորումը վախճանական նպատակի, վոր կանգնած է կոմունիստական կուսակցության առաջ, վորպես բանվոր դասակարգի գլխավորիչ ջո-



կատի: Նա վորոշում է նայեվ թե այդ նպատակին հասնելու ուղիները յեվ թե այն հիմնական ուժերը, վորոնց վրա հենվում է բանվոր դասակարգը սոցիալիզմի համար մղվող պայքարում: Կանոնադրությունը սահմանում է, թե ով կարող է լինել կուսակցության անդամ, ինչպես է կառուցվում կուսակցությունը, այսինքն ինչպես են կառուցվում նրա կազմակերպությունները, ով յեվ ինչպես է ղեկավարում դրանք, վորոնք են կուսակցական կազմակերպությունների յեվ կուսակցության անդամների պարտականությունները:

Կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը սերտորեն կապված են իրար հետ: Կուսակցության կանոնադրությունը, վոր վորոշում է կուսակցության կազմակերպական ձևերը (այսինքն կառուցման ձևերը)՝ նպատակ ունի այնպես կազմելու կուսակցության շարքերը, վորպեսզի լավագույն կերպով ապահովվի կուսակցական ծրագրի կատարումը, ապահովվի կոմունիզմի լիակատար հաղթանակը:

Ծրագրի մեջ հիմնականն այն է, վոր նա նպատակ ունի կապիտալիզմի վոչնչացումը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը, դասակարգերի լիկվիդացիան, ամբողջ մարդկության կյանքի վերակառուցումը կոմունիզմի հիմունքներով: Ծրագիրը կառուցված է ինչպես առհասարակ կապիտալիզմի զարգացման օրենքների, այնպես էլ մեր յերկրի պատմական առանձնահատկությունների և նրա զարգացման հիմնական ետապների ուսումնասիրության վրա:

Մեր կուսակցության ծրագիրն իր այժմյան ձևով ընդունված է 1919 թ. կուսակցության VIII համագումարի կողմից:

Ծրագիրն սկսվում է մի ներածությամբ, վորի մեջ սահմանվում է, վոր 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությամբ «սկսվեց պրոլետարական համաշխարհային կոմունիստական հեղափոխության դարաշրջանը»: Այնուհետև Մարքսի և Էնգելսի ուսմունքի հիման վրա այդ ներածությունը պարզաբանում է կապիտալիզմի զարգացման ու փլուզման և սոցիալիզմի հաղթանակի օրենքները:

Մեր կուսակցության ծրագիրն առաջին անգամ ընդունվել է II համագումարի կողմից 1903 թվականին: Այդ համագումարի նախապատրաստումն ու ծրագրի նախագծի մշակումը անցկացրեց «Իսկրա» լրագիրը, վորի խմբագրության մեջ ղեկավար դեր եր խաղում Լենինը: Ծրագրի մշակման ժամանակ Լենինն ստիպված եր պայքար մղել Պլեխանովի դեմ, վորը խեղաթյուրում եր պրոլետարիատի դիկտատուրայի նշանակությունը և հարկավոր չեր համարում մտցնել ծրագրի մեջ պրոլետարական կուսակցության համար այդ կարևորագույն հարցը: Ուստի Լենինն առանձնապես մանրամասն մշակեց և ծրագրի քննության ժամանակ պաշտպանեց պրոլետարիատի դիկտատուրայի հարցը:

II համագումարի կողմից ընդունված ծրագիրը կուսակցության և

բանվոր դասակարգի առաջ դնում էր պրոլետարական հեղափոխությունը նախապատրաստելու և անցկացնելու խնդիրը, նպատակ ունենալով «կապիտալիստական արտադրական հարաբերությունները փոխարինումը կոմունիստական հարաբերություններով», այսինքն կապիտալիզմի տապալումը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը և սոցիալիզմի կառուցումը: Ծրագիրը նշում էր, վոր

«Այդ սոցիալական հեղափոխության անհրաժեշտ պայմանը կազմում է պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն այնպիսի քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից, վորը թույլ կտա նրան ճնշել շահագործողների ամեն մի դիմադրություն»:

Ծրագիրն ընդունվեց այնպիսի շրջանում, յերբ Ռուսաստանում բանվորական շարժումը դեռ նոր էր սկսում դուրս գալ ցարիզմի դեմ ուղղված պայքարի լայն ճանապարհը: Այդ պայմաններում կուսակցության գլխավոր մերձավորագույն խնդիրն ինքնակալության տապալումն էր և ճորտատիրության մնացորդների վոչնչացումը: Ուստի ծրագիրը պրոլետարիատի վախճանական նպատակին—կոմունիզմին հասնելու—կողքին առաջադրում էր ցարական ինքնակալության տապալումը, վորպես մերձավորագույն խնդիր և վորպես պայման պրոլետարիատի դիկտատուրայի համար մղելիք հետագա հաղթական պայքարի:

Այդ մերձավորագույն խնդիրը—ինքնակալության տապալումն ու ճորտատիրական կարգի մնացորդների վոչնչացումը—շարադրված էր ծրագրի հատուկ մասում, վոր կոչվում էր «մինիմում-ծրագիր»:

Բայց ծրագրի հիմքը կազմում էր պրոլետարիատի դիկտատուրայի համար, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար մղելիք պայքարը: Այդ խնդիրը և նրա լուծման ուղիները շարադրված էին ծրագրի այն մասում, վոր կոչվում էր «մաքսիմում-ծրագիր»:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը տարավ դեպի ինքնակալության տապալումը: Իր առաջ դնելով պրոլետարական դիկտատուրայի հաստատման խնդիրը, պրոլետարական հեղափոխությունը 1917 թվի հոկտեմբերին «միջանկյալ», «վոտի վրա» վոչնչացրեց ճորտատիրության բոլոր մնացորդները: Մինիմում-ծրագիրն իրագործված էր: Պրոլետարական դիկտատուրայի ժամանակաշրջանն առաջադրում էր այլ խնդիրներ. բանվոր դասակարգի իշխանության ամրապնդումն, շահագործողական դասակարգերի դիմադրության ճնշումը, տնտեսավարման սոցիալիստական ձևերի զարգացումը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումն, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, հզոր առաջխաղացման զարգացումն, սոցիալիզմի համար մղվող կռվում և սոցիալիզմի բուն կառուցումը:

Բացի դրանից փոփոխություններ տեղի ունեցան վոչ միայն մեր



յերկրի տնտեսական ու քաղաքական կազմության մեջ, այլև համաշխարհային կապիտալիզմի մեջ կատարվեցին խորը փոփոխություններ: Կուսակցության հին ծրագիրը տալիս էր նախկին ձևի կապիտալիզմի մանրամասն վերլուծությունը, յերբ այդ կապիտալիզմը դեռևս չէր հասել իր բարձրագույն աստիճանին—իմպերիալիզմին: Կապիտալիզմի նոր, իմպերիալիստական աստիճանը նոր, ավելի բարձր մակարդակի վրա բարձրացրեց դասակարգային պայքարը:

Այս ամենը պահանջում էր կուսակցության հին ծրագրի փոփոխումն, նոր ծրագրի մշակում: Այդ էլ հենց արեց կուսակցության VIII համագումարը 1919 թվի մարտին:

Մեր ծրագիրը մի մարքսիստական-լենինյան ծրագիր է, վոր հիմնված է կապիտալիզմի, մասնավորապես նրա բարձրագույն և վերջին աստիճանի—իմպերիալիզմի օրենքների գիտելության վրա, դասակարգային պայքարի օրենքների և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու ու կոմունիզմի լիակատար հաղթանակի ուղիների գիտելության վրա:

Մեր ծրագիրը ծրագիրն է հեղափոխական պրոլետարիատի, վորը պայքարում է կոմունիզմի համար համաշխարհային ամբողջ բանվոր դասակարգի հետ միասին:

Մեր կուսակցության ծրագիրը միջազգային ամբողջ կոմունիստական շարժման հզորագույն ջոկատներից մեկի ծրագիրն է, վորպիսի շարժման ղեկավարն է համաշխարհային կոմունիստական կուսակցությունը—Կոմունիստական Ինտերնացիոնալը: Կուսակցության ծրագրում ասված է՝

«Պրոլետարիատի ազատագրական պայքարի ղեկավար հանդիսանում է միայն նոր[1]), III Կոմունիստական Ինտերնացիոնալը, վորի ջոկատներից մեկն է հանդիսանում ՀԿ(բ)Կ»:

Մեր ծրագիրը սահմանում է այն խնդիրները, վորոնք կանգնած են կուսակցության առաջ պրոլետարական դիկտատուրայի շրջանում քաղաքական բնագավառում, ազգային հարաբերությունների բնագավառում, ռազմական, դատաստանական, ժողովրդական լուսավորության, կրոնի բնագավառում, տնտեսական բնագավառում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, բաշխման, բանկային գործի, ֆինանսների, բնակարանային հարցի, աշխատանքի պահպանման ու սոցիալական ապահովության, ժողովրդական առողջապահության բնագավառում: Այսպիսով ծրագիրը սահմանում է պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրները սոցիալիզմի կառուցման, տնտեսական և

1) Ծրագրում ասված է «նոր», վորովհետև մինչպատերազմը գոյություն ունեցած II Ինտերնացիոնալը 1914 թ. քայքայվեց, նրա առաջնորդներն անցան բուրժուազիայի կողմը: III Կոմունիստական Ինտերնացիոնալը վերջնականապես ստեղծեց Լենինը 1919 թվին:

կուլտուրական շինարարության, ՍՍՀՄ-ի բանվորների և աշխատավորների նյութական ու կուլտուրական դրության անընդհատ բարելավման ապահովման բոլոր բնագավառներում:

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր կուսակցությունը կոչվում էր «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն (բոլշևիկների)»: Կուսակցության VII համագումարում (1918 թ.) կուսակցությունը փոխեց իր անունը և սկսեց կոչվել կոմունիստական:

Սոցիալ-դեմոկրատների անվան հետ աշխարհի բոլոր գիտակից բանվորներն այժմ կապում են այն դավաճանություններն ու վոճիրները սոցիալիզմի դեմ, վոր կատարել և կատարում են այժմյան սոցիալ-ֆաշիստները:

Կուսակցությունն անվանեց իրեն կոմունիստական — նույնպես, ինչպես Մարքսն ու Էնգելսն էին անվանում իրենց՝ 1847 թ. ստեղծած կուսակցությունը: Միայն մեր կուսակցությունն ու III Ինտերնացիոնալի մյուս կուսակցություններն ունեն իրավունք այդ անունը կրելու, վորովհետև միայն նրանք են հանդիսանում ուղղակի հաջորդները Մարքսի և Էնգելսի ղեկավարած «Կոմունիստների միության» ու I Ինտերնացիոնալի հեղափոխական գաղափարների:

Կուսակցությունն իր կանոնադրությունը վերաքննել է մի քանի անգամ այն պայմանների փոփոխման համեմատ, վորոնց մեջ վիճակված է յեղել կուսակցությանն աշխատել: Ցարական ինքնակալության ժամանակ մեր կուսակցությունն ստիպված է յեղել աշխատել մի կարգի պայմաններում, իշխանությունը վերցնելուց հետո, քաղաքացիական պատերազմի շրջանում, սոցիալիստական ծավալուն առաջխաղացման շրջանում — այլ պայմաններում:

Բայց կուսակցության ամբողջ պատմության ընթացքում կանոնադրությունը մնում էր գլխավոր բանում անփոփոխ — այն բանում, վոր բանվոր դասակարգի կուսակցությունը պետք է կառուցվի վորպես գաղափարային միասնականությամբ ու պրոլետարական յերկաթե կարգապահությամբ ներքնորեն միախռնված կուսակցություն:

Կուսակցության կանոնադրությունը սահմանում է, թե ով կարող է լինել կուսակցության անդամ, ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն կուսակցության անդամները, ինչպես պետք է աշխատեն կուսակցական կազմակերպությունները, ինչպես են ընտրվում նրա օրգանները և այլն, մի խոսքով — ինչպես է կառուցվում ամբողջ կուսակցությունը վարից մինչև վեր:

Կանոնադրության առաջին պարագրաֆն ասում է կուսակցության անդամության մասին.

«Կուսակցության անդամ համարվում է յուրաքանչյուր վոք, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում նրա



կազմակերպություններից մեկում, յենթարկվում է կուսակցության վորոշումներին և մուծում անդամավճարները»:

Հետևյալ գլխում մենք կծանոթանանք այն պայքարին, վոր կուսակցության II համագումարում մղվեց բոլշևիկների և մենշևիկների միջև այս պարագրաֆի շուրջը:

Իսկ առայժմ սահմանենք, վոր կուսակցության անդամից պահանջվում է կուսակցության ծրագրի ընդունումն, աշխատանք իր կուսակցական կազմակերպության մեջ, անպայման յենթարկումն կուսակցության բոլոր վճիռներին ու վորոշումներին և անդամավճարների ճշտապահ մուծում: Վոչ վոք չի կարող լինել կուսակցության անդամ, յեթե այս պայմաններից թեկուզ մեկը չի պահում:

Անցնենք մեր կուսակցության կազմակերպական հիմքերին:

## ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻԶՄ

Մեր կուսակցությունն այնպես է կառուցվում, վոր ապահովի՝ նախ, գաղափարային ներքին լիակատար միասնականությունը, յերկրորդ, կուսակցության մեջ պրոլետարական խստագույն կարգապահության զուգակցումը կուսակցական մասսայի ամենալայն ինքնագործունեության ու ակտիվության հետ:

Այս յերկու պայմաններն էլ իրագործվում են նրանով, վոր կուսակցությունը կառուցված է դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով:

Դեմոկրատական ցենտրալիզմը — դա մի այնպիսի կարգ է, վորի պարագայում կուսակցության բոլոր օրգաններն ընտրական են յեվ իրենց գործունեության մեջ ընտրողների առաջ հաշվետու, ընդսմին այդ ընտրականությունն ու հաշվետու լինելը զուգակցվում են խստագույն կարգապահության յեվ այն հանգամանքի հետ, վոր բոլոր ստորադաս օրգանները յենթարկվում են վերադասներին:

Դեմոկրատական ցենտրալիզմն իր մեջ պարունակում է լավագույն պայմանները կուսակցության անդամների քաղաքական ակտիվության զարգացման յեվ կուսակցության շինարարությանը նրանց առօրյական մասնակցման համար:

Դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով բոլոր ստորադաս կազմակերպությունները յենթարկվում են վերադասներին՝ յերկրային և մարզային կազմակերպությունները յենթարկվում են Կենտրոնական կոմիտեյին, — շրջանային կազմակերպությունները յենթարկվում են իրենց մարզային, յերկրային կամ հանրապետական կոմիտեներին, — բջիջները յենթարկված են շրջկոմներին, խոշոր ձեռնարկությունների մեջ՝ գործարանային կուսկոմներին:

Կուսակցության համագումարների և Կենտրոնական կոմիտեյի

բոլոր վորոշումները պետք է ի կատար ածվեն ամբողջ կուսակցության կողմից,—հանրապետական, յերկրային կամ մարզային կոնֆերենցիաների և կոմիտեների վորոշումները պետք է ի կատար ածվեն այդ հանրապետությունների, յերկրների և մարզերի շրջանային կազմակերպությունների կողմից,—շրջանային կոնֆերենցիաների և կոմիտեների վորոշումները պարտադիր են այդ շրջանի գործարանային, գյուղական, կոլտնտեսական կուսկազմակերպությունների համար։

Կուսակցության բոլոր օրգանները ընտրովի են՝ սկսած բջիջի բյուրոյից և վերջացրած Կենտրոնական կոմիտեյով ու Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովով։ Կուսակցության բոլոր օրգաններն ընտրվում են կուսակցական ժողովներում, կոնֆերենցիաներում, համագումարներում։ Բացի դրանից այդ օրգանները հաշվետու յեն իրենց կազմակերպությունների առաջ այն ժողովներում, վորոնք նրանց ընտրում են (կոնֆերենցիաներ, համագումարներ)։

Կոնֆերենցիայից — կոնֆերենցիա իր ամբողջ գործունեյության ընթացքում կուսակցական կոմիտեն կամ բջիջի բյուրոն գտնվում է վոչ միայն կուսակցության համապատասխան օրգանների հսկողության, այլև կուսակցության՝ տվյալ կազմակերպության անդամների ամբողջ զանգվածի հասարակական վերահսկողության տակ։

Այն դեպքերում, յերբ ընտրված օրգանը չի կարողանում գլուխ հանել իր խնդիրներից և չի ապահովում կուսակցական ճիշտ գծի կիրառումը, այդ օրգանը կարող է մինչ ժամկետը փոխարինվել բարձրագույն օրգանների վորոշմամբ կամ ստորին օրգանների և կազմակերպությունների նախաձեռնությամբ՝ արտակարգ կոնֆերենցիայի գումարման միջոցով։

Բոլշևիկներն ամենից վեր դասում են բանվոր դասակարգի և նրա կուսակցության շահերը։ Կուսակցության ներքին կազմակերպման բոլոր ձևերը բոլշևիկները յենթարկում են այդ շահերին—պրոլետարիատի շարքերի լավագույն կազմակերպման խնդրին։ Սրանից բղխում է այն, վոր, ինչպես արդեն վերը նշել ենք, կազմակերպման մեկ ձևը պիտանի յե ընդհատակյա գոյության պայմաններում, մյուսը՝ քաղաքացիական պատերազմի պայմաններում, և մի այլ ձև՝ ժողովրդական տնտեսության վերականգնման պայմաններում։

Յերբ կուսակցությունն աշխատում եր ընդհատակյա, կազմակերպությունները միշտ եյ հնարավորություն չունեյին կոնֆերենցիաներ գումարելու՝ կոմիտեյի ընտրման համար։ Հաճախ եյին լինում ձերբակալություններ։ Ուստի ընդհատակյա աշխատանքի պայմաններում ընտրականության կողքին անխուսափելի յեր և կոոպտացիան, այսինքն իր իսկ կոմիտեյի կամ կուսակցական վերադաս օրգանի վորոշմամբ կոմիտեյի կազմի մեջ նոր անդամներ մտցնելը՝ պայքարի մեջ



ամենից փորձված և կոփված բոլշևիկների շարքից կատարվող ընտրանքի միջոցով։

Քաղաքացիական պատերազմի պարագաներում նույնպես միշտ եյ հնարավոր չեր կուսակցական տեղական կոնֆերենցիաների գումարումը,—կազմակերպությունների եվակուացիաներ եյին տեղի ունենում (այսինքն հեռացում հակառակորդի գրաված վայրերից) և վերադարձներ՝ առաջխաղացման և նահանջի կապակցությամբ։ Այս պարագաներում ամեն տեղ եյ հնարավոր չեր կուսակցական կոմիտեների լիակատար ընտրականությունն ապահովելը, և այդ դեպքերում կուսակցական օրգանների ղեկավարությունը յերբեմն նշանակվում եր կուսակցության վերադաս ղեկավար օրգանների կողմից։

Այսպիսով դեմոկրատական ցենտրալիզմը ներկայացնում է կուսակցության կազմակերպական կառուցման մի ճկուն սիստեմ, վորն ապահովում է բոլոր պայմանները՝ զուգակցելու անդամների ամբողջ մասսայի գիտակցական ու ակտիվ մասնակցությունը կուսակցական կյանքում կուսակցության և բանվոր դասակարգի գործունեյության ու պայքարի կենտրոնացված ղեկավարության լավագույն ձևերի հետ։

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Կուսակցությունը ճկուն կերպով իր կազմակերպական ձևերը հարմարեցնում է տնտեսության ու սոցիալիստական շինարարության առանձին ճյուղերի յուրահատկություններին, կազմակերպությունների յերկրային (այսինքն ըստ մարզի, շրջանի և այլն) կառուցումը զուգակցելով արտադրականի հետ։

«Մինչդեռ արևմտայեվրոպական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները կառուցվում եյին ըստ յերկրային սկզբունքի, այսինքն կուսակցության անդամները միավորվում եյին ըստ բնակավայրի հատկանիշի,—գրում է ընկ. Կագանովիչը,—մեր կուսակցությունը կառուցված է ըստ արտադրական հատկանիշի»։

«Կոմունիստական կուսակցության կազմակերպության հիմք,—ասված է Կոմինտերնի կանոնադրության 4-րդ կետում,—հանդիսանում է ձեռնարկության (գործարանի, ֆաբրիկայի, հանքահորի, գրասենյակի, խանութի, կալվածքի և այլնի) բջիջը, վորը միավորում է կուսակցության՝ տվյալ ձեռնարկության մեջ աշխատող բոլոր անդամներին»։

Արտադրական հատկանիշի համեմատ կառուցված բջիջները յենթարկվում են յերկրամասային կուսօրգաններին—շրջկոմներին և այլն։ Խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և ՄՏԿ կուսակցական-քաղաքական ղեկավարությունն ուժեղացնելու համար կուսակցությունը 1933 թ. սկզբին ստեղծեց քաղբաժիններ, նրանց վրա

բարդելով վոչ միայն ընդհանուր քաղաքական ու մասսայական աշխատանքը խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների մեջ, այլև խորհտնտեսական ու կոլտնտեսական կուսակցական բջիջների անմիջական ղեկավարությունը:

Ինչն է դրդել անելու այդ: Նախ և առաջ այն անհագին հաղթանակները, վոր ունեցավ կուսակցությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

Կոլտնտեսական կարգի հաղթանակը գյուղում պահանջում է, վորպեսզի կոլտնտեսության մեջ կուսակցական կազմակերպության ղեկավարությունը լինի կոնկրետ ու կոլտնտեսության արտադրական և՛ տնտեսական խնդիրներին հարմարեցված: Դրա համար պետք եր ստեղծել ինքնուրույն կոլտնտեսական բջիջներ, զատելով դրանք ընդհանուր գյուղական բջիջներից: Գյուղական բջիջների մեջ մտնում են գյուղական բոլոր կոմունիստները, վորոնք աշխատում են գյուղխորհրդում, կոոպերացիայում, միլիցիայում, դպրոցներում և այլն, ուստի նրանք քիչ եյին զբաղվում կոլտնտեսությունների արտադրական կյանքով, նրանք կտրված եյին կոլտնտեսությունների կարիքներից: Նույն չափով կտրված եյին և շրջկոմները, վորքան վոր նրանք գյուղական բջիջների միջոցով եյին ղեկավարում կոմունիստների աշխատանքը կոլտնտեսությունների մեջ: Հենց կոլտնտեսություններից կուսակցական յերկրամասային կազմակերպությունների այդ կտրվածության հետևանքով կոլտնտեսությունների մեջ թափանցելու հնարավորություն եյին ստանում կուլակները, թշնամական տարրերը:

Կուսակցական ազդեցությունը կոլտնտեսությունների մեջ ուժեղացնելու և կոլտնտեսությունների կուսակցական քաղաքական ղեկավարությունն ամրապնդելու համար կուսակցությունն անհրաժեշտ գտավ կոլտնտեսությունների կոմունիստներին զատել ի հատուկ բջիջներ, նրանց ղեկավարությունը հանձնելով այն ՄՏԿ քաղբաժիններին, վորոնք սպասարկում են տվյալ կոլտնտեսություններին: Բոլոր այն մշտական արտադրական բրիգադների մեջ, վորտեղ կա յերեք և ավելի կոմունիստ, ստեղծվում են կուսխմբակներ:

Քաղբաժինները կոլտնտեսական բջիջներին ղեկավարում են ՄՏԿ աշխատանքի բոլոր հարցերում, այսինքն բոլոր արտադրական և տնտեսական հարցերում և կոլտնտեսականների մեջ կատարվող կազմակերպական-մասսայական աշխատանքի բոլոր հարցերում: Բոլոր մնացած հարցերի նկատմամբ (խորհրդային շինարարություն, ֆինանսներ, լուսավորություն, պրոպագանդ և այլն) կոլտնտեսական բջիջներին ղեկավարում են շրջկոմները:

ԿԿ՝ 1933 թ. հունիսի 15-ի վորոշման մեջ հետևյալն է ասված քաղբաժինների աշխատանքի մասին.

«Գյուղում կատարվող աշխատանքի նոր պայմաններում,



վորոնք վորոշվում են կոլտնտեսական կարգի վերջնական հաղթանակով տնտեսության մասնավոր ձևի դեմ մղած պայքարի մեջ և դասակարգային թշնամու ուժերի ջախջախումով, ել ավելի յե աճում քաղբաժինների մասսայական քաղաքական ու կազմակերպչական աշխատանքների նշանակությունը»:

Քաղբաժիններ գոյություն ունեն նույնպես Կարմիր բանակում, տրանսպորտի մեջ, քաղաքացիական ոդանավատորմում: Նրանք վարում են կազմակերպական-մասսայական ամբողջ քաղաքական աշխատանքը և ղեկավարում են համապատասխան կուսակցական բջիջներին:

Արդյունաբերության միքանի ճյուղերում (ածխային) կուսկազմակերպությունների գլուխ կանգնած են կուսակցության վերադաս կազմակերպությունների կողմից նշանակված կուսկազմակերպիչներ:

Քաղբաժիններն ու կուսկազմակերպիչները կապ են պահպանում տեղական կուսկազմակերպությունների հետ կուսակցության տեղական կոմիտեների աշխատանքին մասնակցելու միջոցով:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Կուսակցության կանոնադրության մեջ ասված է.

«Կուսակցական խստագույն կարգապահությունը հանդիսանում է կուսակցության բոլոր անդամների և կուսակցական բոլոր կազմակերպությունների առաջնագույն պարտականությունը: Կուսակցական կենտրոնների վորոշումը պետք է ի կատար ածվի արագ ու ճշգրիտ կերպով: Դրա հետ միասին կուսակցության ներսում կուսակցական կյանքի բոլոր վիճելի հարցերի քննությունը միանգամայն ազատ է մինչ այն ժամանակ, քանի վճիռը չի ընդունված»:

Կարգապահությունը պարտադիր պայմանն է կուսակցական կյանքի կանոնավոր զարգացման: Առանց կարգապահության հնարավոր չե վորեե կազմակերպություն: Առավել ևս ամրապինդ, ճշմարտապես յերկաթե կարգապահություն է պետք կոմունիստական կուսակցությանը և՛ այն ժամանակ, յերբ նա պայքար է մղում պրոլետարական դիկտատուրայի համար, և՛ այն ժամանակ, յերբ նա ղեկավարում է պրոլետարական) դիկտատուրայի յերկիրը:

Կուսակցական կարգապահության հիմքը կազմում է կուսակցական կազմակերպությունների և առանձին կոմունիստների կողմից կուսակցության ծրագրի և կանոնադրության ու կուսակցական վերադաս կազմակերպությունների և օրգանների բոլոր վճիռների ու ցուցումների կատարումը:

Կարգապահությունը պարտադիր պայմանն է ներկուսակցական

դեմոկրատիայի իրագործման: Իսկապես ի՞նչ գին կունենա կուսակցական դեմոկրատիան, յեթե կազմակերպության մեջ փոքրամասնությունը չհպատակվի մեծամասնությանը: Ի՞նչ օգուտ կլինի ամենադեմոկրատիկ ճանապարհով կազմակերպության կողմից ընդունված ամենալավագույն վճռից, յեթե կազմակերպության անդամները չկիրառեն այդ վճիռը:

Կոմունիստական կուսակցության մեջ կարգապահությունը հիմնված է կուսակցության անդամի՝ իր պարտականությունների նկատմամբ ունեցած գիտակցական վերաբերմունքի վրա:

Կուսակցության մեջ մտնում են կամավոր կերպով բանվոր դասակարգի լավագույն մարդիկ: Իսկ կուսակցության մեջ մտնելով, բանվորը կամովին իր վրա յե վերցնում կուսակցության ծրագրից և կանոնադրությունից բխող բոլոր պարտականությունները: Յեվ նրա առաջին պարտականություններից մեկը կուսակցական կազմակերպությունն ամրացնելն է, նրա կարգապահությունը պահելը: Քանի նա անկուսակցական է, կուսակցությունը դաստիարակում է նրան իր դասակարգի շահերն ըմբռնելու վոգով, կոչելով նրան կազմակերպված գործելու ամբողջ բանվոր դասակարգի հետ միասին: Իսկ կուսակցության անդամին, վոր կուսակցական կյանքի ներգործոն մասնակիցն է, կամովին և գիտակցորեն պարտականություն է բարդել իր վրա անպայման կատարելու կուսակցական վճիռները՝ կուսակցությունն առաջադրում է բոլշևիկյան խիստ կարգապահություն կրելու պահանջը:

Ի՞նչ է պահանջում կոմունիստից կուսակցական կարգապահությունը:

Նա պահանջում է, վոր կոմունիստը գիտենա կուսակցության վճիռները և կյանքում կիրառի դրանք: Նա կոմունիստից պահանջում է հեղափոխական ակտիվություն և գիտակցականություն: Դա գիտակցական կարգապահության պարտադիր պայմանն է: Յեթե կարգապահությունը լիներ կառուցված վոչ թե կուսակցության անդամի գիտակցական վերաբերմունքի վրա դեպի իր պարտականությունները, վոչ թե իր ուժերը կուսակցության դիրեկտիվների և լոզունգների (այսինքն կուսակցության վճիռների) իրագործման համար տալու պատրաստակամության վրա, ապա այդ կարգապահությունը կլիներ վոչ թե բոլշևիկյան և հեղափոխական կարգապահություն, այլ ձևական, զորանոցային:

Լենինը նշել է այն յերեք գլխավոր պայմանները, վորոնց վրա հիմնված է մեր կուսակցության բոլշևիկյան կարգապահությունը:

«Ինչո՞վ է պահպանվում,— հարց է տալիս Լենինը,— պրոլետարիատի հեղափոխական կուսակցության դիսցիպլինը: Ինչո՞վ է ստուգվում նա: Ինչո՞վ է ամրապնդվում»:



Յեվ պատասխանում է.
«Նախ, պրոլետարական ավանգարդի գիտակցականությամբ
ու նվիրվածությամբ հեղափոխությանը, նրա տոկունու-
թյամբ, ինքնազոհողությամբ, հերոսությամբ: Յերկրորդ, աշխա-
տավորների ամենալայն մասսայի, առաջին հերթին պրոլետարա-
կան մասսայի, բայց նույնպես վոչ պրոլետարական աշխատա-
վորական մասսայի հետ կապվելու, վորոշ չափով մերձենալու,
յեթե կամենում եք, ձուլվելու նրա հմտությամբ: Յերրորդ,
այդ ավանգարդի կողմից իրագործվող քաղաքական ղեկավարու-
թյան ճշտությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի և տակտի-
կայի ճշտությամբ՝ պայմանով, վոր ամենալայն մասսաներն
իրենց սեփական փորձով համոզվեն այդ ճշտությանը»:
Կուսակցական կարգապահության նշանակությունը նրանում
է կայանում, վոր նա ապահովում է կուսակցության մարտունակու-
թյունը: Առանց իր շարքերի կարգապահության կուսակցությունն
ի վիճակի չեր լինի բանվոր դասակարգի և գյուղացիության հաղթա-
նակին հասնել կապիտալիստների և կալվածատերերի վերաբերմամբ
և անզոր կլիներ պահել պրոլետարիատի դիկտատուրան և հաղթակա-
նորեն ծավալել պայքարը սոցիալիզմի համար:
Կուսակցությունը մինչև 1933 թ. հունվարի 1-ը ուներ 3,172
հազար անդամ և թեկնածու: Յեվ յեթե կուսակցության անդամների
և թեկնածուների ամբողջ մասսան միավորված չլիներ կամքի ու
գործողության ընդհանրությամբ և միասնականությամբ, ապա կուսակ-
ցության մեջ անխուսափելիորեն տեղի կունենար ուժեղագույն
տարագնացություն: Իսկ այն կուսակցությունը, վորի մեջ տարագնա-
ցություն կա, կուսակցություն չե, այլ ամբոխ:
Դասակարգային թշնամին այլ բան չի ուզի, քան տարագնա-
ցություն կուսակցության մեջ: Դա մեկեն նրա համար հազարավոր
հնարավորություններ կբանար պրոլետարական դիկտատուրան պայ-
թեցնելու համար:
Կուսակցությունը վայելում է բանվորական մասսաների անսահ-
ման վստահությունը: Այդ վստահությունը հնարավոր չեր լինի, յե-
թե կուսակցության նպատակներն ու քաղաքականությունը սխալ
լինեյին, յեթե կուսակցությունը յուրաքանչյուր որ, յուրաքանչյուր
ժամ ամուր կապված չլիներ մասսաների հետ և յեթե պրոլետարական
յերկաթե կարգապահությունը չմիավորեր կուսակցությանը:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Կարգապահությունը մեր կուսակցության ներսում կառուցվում է
այն գիտակցական, ակտիվ մասնակցության վրա, վոր ամբողջ կու-

սակցությունն ունի իր առաջ դրված հարցերի լուծման մեջ։ Այս գիտակցական կարգապահությունը զուգակցվում է մեր կուսակցության մեջ ներկուսակցական դեմոկրատիայի լայն կիրառման հետ։ Ներկուսակցական դեմոկրատիան վոչ միայն «... չի բացառում, այլ յենթադրում է կուսակցության ներսում կարծիքների քննադատություն և պայքար»,—ասում է ընկ. Ստալինը։

«Բայց յերբ կարծիքների պայքարը վերջացած է, քննադատությունն սպառված ու վճիռն ընդունված, կուսակցության բոլոր անդամների կամքի միասնականությունն ու գործողության միասնականությունը այն անհրաժեշտ պայմանն է հանդիսանում, առանց վորի անմտածելի յեն թե միասնական կուսակցությունը, թե յերկաթե կարգապահությունը կուսակցության մեջ»։

Թե ինչ է ներկուսակցական, պրոլետարական դեմոկրատիան, սահմանել է կուսակցական X համագումարը, վորը նշել է, թե դա

«... այնպիսի կազմակերպական ձև է կուսակցական կոմունիստական քաղաքականության կիրառման ժամանակ, վորը կուսակցության բոլոր անդամների համար, ամենից հետամնացները ներառյալ՝ ապահովում է ակտիվ մասնակցություն կուսակցության կյանքում, նրա առաջ դրվող բոլոր հարցերի քննության մեջ, այդ հարցերի լուծման մեջ, հավասարապես և ակտիվ մասնակցություն կուսակցական շինարարության մեջ»։

Պրոլետարական դեմոկրատիան ու հաջող պայքարն ընդդեմ Մարքս-Լենինի ուսմունքի խեղաթյուրումների, ընդդեմ կուսակցության գծի բուրժուական ու օպորտունիստական խեղաթյուրումների անհնարին են առանց ինքնաքննադատության լայն զարգացման կուսակցական կյանքի բոլոր հարցերում, առանց այն առաջարկներն անելու, վորոնք վերաբերում են այս կամ այն կուսակցական կազմակերպությունների և նրանց օրգանների աշխատանքների բարելավման ու նրանց գործունեության մեջ նկատված թերությունների շտկման։ Ինքնաքննադատությունը կուսակցության ուժի նշան է։ Միայն թույլ կուսակցություններն են վախենում խոստովանել իրենց սխալներն ու ուղղել դրանք։ Լենինն ասում էր.

«Պրոլետարիատը չի վախենում խոստովանել, վոր հեղափոխության մեջ իր այս-ինչ բանը հոյակապ դուրս յեկավ, իսկ այս-ինչը դուրս չեկավ։ Հեղափոխական բոլոր կուսակցությունները, վորոնք մինչև այժմ կործանվել են,—կործանվել են նրանից, վոր մեծամտանում էյին և տեսնել չգիտեյին, թե իրենց ուժն ինչի մեջ է, ու վախենում էյին խոսել իրենց թուլությունների մասին։ Իսկ մենք չենք կործանվի, վորովհետև չենք վախենում խոսել մեր թուլությունների մասին և կսովորենք թուլությունը հաղթահարել»։



Ինքնաքննադատությունը կուսակցության անդամների ամբողջ մասսայի ակտիվության այնպիսի զարգացումն է նշանակում, վորը բարձրացնում է յուրաքանչյուր կոմունիստի պատասխանատվության զգացումը կուսակցության ամբողջ աշխատանքի և քաղաքականության համար։

Նա կարևորագույն պայմանն է կուսակցության, բանվոր դասակարգի և բոլոր աշխատավոր մասսաների քաղաքական դաստիարակության։ Ինքնաքննադատությունը բարձրացնում է ինքնագործունեությունն ու միլիոնավոր աշխատավորներ ներքաշում սոցիալիստական շինարարության մեջ։

«Բայց միլիոնավոր մասսաներին գրավելու համար,—ասել է ընկ. Ստալինը,—պետք է պրոլետարական դեմոկրատիան ծավալել բանվոր դասակարգի բոլոր մասսայական կազմակերպությունների մեջ ու նախ և առաջ իսկ կուսակցության ներսում։ Առանց այս պայմանի ինքնաքննադատությունը զերո յէ, դատարկ բան, ֆրազ»։

Բոլշևիկյան ինքնաքննադատությունը ինքնաքննադատություն է «առանց անձերի խտրության», դա անխնա մերկացումն ու վերացումն է այն բոլոր յերևույթների, վորոնք խանգարում են կուսակցության ու բանվոր դասակարգի՝ սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարին։ Այդ յերևույթների դեմ ուղղված լինելով, ինքնաքննադատությունն ուղղված է և նրանց կրողների դեմ—բյուրոկրատների, խարդախների, մորթապաշտների, յենթակուլակների, օպորտունիստների, վերասերվածների և այլոց դեմ։ Բոլշևիկյան ինքնաքննադատությունը հանդիսանում է կուսակցությունը զտելու գործիք նրա շարքերը սողոսկած խորթ և քայքայված տարրերից։ «Զտումը մեր կուսակցության բոլշևիկյան ինքնաքննադատության արտահայտությունն է»,—ասված է ՀամԿ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ՝ 1933 թ. ապրիլի 29-ի վորոշման մեջ։

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցության գերագույն օրգանը Համամիութենական կուսակցական համագումարն է։ Համագումարների արանքի ժամանակամիջոցին կուսակցության ղեկավար օրգան հանդիսանում է նրա Կենտրոնական կոմիտեն, վորն ընտրվում է համագումարի կողմից։

Միութենական հանրապետությունների մեջ (Ուկրայինա, Բելոռուսիա, Թյուրքմենստան, Ուզբեկստան և Տաջիկստան) ու Անդրկովկասյան ֆեդերացիան կազմող հանրապետությունների մեջ (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) կուսակցական բարձրագույն օրգաններ հանդիսանում են հանրապետական համագումարները։ Այդ համա-

գումարներում ընտրվում են ավյալ հանրապետության կուսակցության կենտրոնական կոմիտեները, վորոնք համագումարների արանքի շըրջանում կուսակցության ղեկավար օրգաններն են հանդիսանում։ Կուսակցության հանրապետական կազմակերպությունների կենտրոնական կոմիտեները հավասարեցվում են յերկրային կոմիտեներին,—նրանք ղեկավարում են բոլոր կուսակցական մարզային (Ուկրայինա), շրջանային ու ստորին կազմակերպությունների աշխատանքը հանրապետության մեջ և ամբողջովին յենթարկվում են Համկ(բ)Կ ԿԿ-ին։

Կուսակցության բարձրագույն օրգաններ ավտոնոմ հանրապետությունների, մարզերի և յերկրների մեջ հանդիսանում են հանրապետական, մարզային ու յերկրային կոնֆերենցիաներն ու նրանց կողմից ընտրված կուսակցական յերկրային ու մարզային կոմիտեները։

Շրջաններում տարեկան մեկ անգամից վոչ պակաս հավաքվում են շրջանային կուսակցական կոնֆերենցիաները։ Կոնֆերենցիաներն ընտրում են շրջանային կոմիտեներ, վորոնք կոնֆերենցիաների արանքի ժամանակամիջոցին ղեկավարում են գործարանային, կոլտնտեսական, խորհտնտեսական և այլ կազմակերպությունները։

Կուսակցության համամիութենական համագումարն ընտրում է նույնպես Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով։ ԿՎՀ (և տեղական վերահսկիչ հանձնաժողովների) խնդիրն է՝ աջակցել կուսակցությանը նրա միասնականության ամրացման գործում, վճռականորեն հաղթահարելով կուսակցության ներսում վորևէ խմբավորում կամ ֆրակցիա կազմելու ամեն տեսակ փորձերը, պահպանել կուսակցությունը խորթ մարդկանցով աղտոտվելուց, զտել կուսակցությունը վատ կոմունիստներից, քայքայված և վերասերված մարդկանցից, կուսակցության գծը խեղաթյուրողներից, օպորտունիստներից, բյուրոկրատներից, յենթակուլակներից և այլն։

ԿՎՀ միևնույն ժամանակ հանդիսանում է Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատ։ Այդ օրգանները նույնպես են կառուցված յերկրներում, հանրապետությունների մեջ, մարզերում և շրջաններում. տեղական ՎՀ միևնույն ժամանակ ԲԳՏ տեղական օրգաններն են։ ԿՎՀ և ԲԳՏԺԿ այս միացումը կատարվեց Լենինի նախաձեռնությամբ։ ԿՎՀ—ԲԳՏ այժմ պայքար է մղում այն ամենի դեմ, ինչ վոր խանգարում է սոցիալիստական շինարարությանը վոչ միայն կուսակցության ներսում, այլև պետական ապարատում։ ԿՎՀ—ԲԳՏ դաժանորեն հալածում է բյուրոկրատիզմը, անտնտեսվարությունը, քյալլագյողությունը, հանցավոր անփութությունը, վատնողությունը, անգործունեյությունը, անբարեխիղճ վերաբերմունքը դեպի գործը և այլն։

Կուսակցության անդամների մեծ քանակ ունեցող արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների մեջ գոյություն ունեն կուսակ-



ցական կոմիտեներ (վորոնք ընտրվում են գործարանային կոնֆերենցիաների կողմից), ցեխային բջիջներ (կամ կոլեկտիվներ), օղակային բջիջներ և կուսխմբակներ։

Նույնպիսի կազմակերպություն գոյություն ունի և միքանի խոշոր խորհտնտեսությունների մեջ։ Մնացած բոլոր ձեռնարկություններում, հիմնարկներում և կոլտնտեսությունների մեջ կուսակցության ստորին կազմակերպություն հանդիսանում է կուսբջիջը, վորի գլուխ է կանգնած նրա ընտրած բյուրոն։

## ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

Մեր կուսակցության ԿԿ պատմականորեն կազմավորվել է ցարիզմի, բուրժուազիայի ու նրա մենշևիկյան, էսէրական ու օպորտունիստական գործակալության դեմ ուղղված պայքարի յերկար տարիների ընթացքում, խորհրդային իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պրոցեսում և պրոլետարական դիկտատուրայի յերկիրը ղեկավարելու պրոցեսում։ Նա կուսակցության կողմից ջոկված է յերկար տարիների ընթացքում բոլշևիկյան տակուն ղեկավարության համար մղված պայքարում։ Մեր կուսակցության ԿԿ մարտական քաղաքական և տեսական շտաբն է հանդիսանում ու սոցիալիզմի կառուցման ղեկավարը։

ԿԿ բաղկացած է լավագույն լենինյաններից, վորոնք ստուգված են կուսակցության կողմից նրա պատմության վանազան շրջաններում, հեղափոխական պայքարի, քաղաքացիական պատերազմի և սոցիալիստական շինարարության զանազանակերպ ճակատամասերում։

ԿԿ անդամների մեջ կան մեր լավագույն կուսակցականներ՝ տնտեսավարները, կոոպերատորները, կուսակցական գործիչները, ռազմական աշխատողները, պրոպագանդիստները, տեսաբանները, կազմակերպիչները, խորհրդային գյուղատնտեսության, ազգային քաղաքականության և այլնի գիտակները։

Ահա թե ինչու յե մեր ԿԿ-ում, ինչպես ընկ. Ստալինն է ասել, «կենտրոնացված մեր կուսակցության իմաստությունը»։

ԿԿ 69 անդամից 35-ը մինչ 1905 թ. կուսակցական ստաժ ունեն և 34-ը՝ մինչ 1917 թ.։

ԿԿ իր շարքերում ունի 46 ժառանգական բանվորներ, վորոնք մեծացել են փականագործների, ճախարակագործների, դերձակների, կոշկակարների, յերկաթուղայինների, բատրակների և այլոց ընտանիքներում։

ԿԿ մյուս անդամների ամբողջ կյանքը—անցյալում յեղել են ուսուցիչներ, բժիշկներ, ինժեներներ և այլն—անց է կացել բանվոր դասակարգի միջավայրում և այդ դասակարգի համար։



## ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ի. Վ. Ստալին



Վ. Մ. Մոլոտով



Լ. Մ. Կագանովիչ



Կ. Յե. Վորոշիլով



Գ. Կ. Օրջոնիկիձե



Մ. Ի. Կալինին



Վ. Վ. Կույբիշև





Ա. Ա. Անդրեյև



Ս. Մ. Կիրով



Ս. Վ. Կոսիոր

## ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԲՅՈՒՐՈՅԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ



Ա. Ի. Միկոյան



Գ. Ի. Պետրովսկի



Վ. Յա. Չուբար



ՀամԿ(բ)Կ ԿՎՀ
Նախագահ
Յա. Ե. Ռուձուտակ



ՀամԿ(բ)Կ ԿԿ
Քարտուղար
Պ. Պ. Պոստիշև

Կուսակցության քաղաքականության բոլոր հիմնական, կարևորագույն հարցերը քննում և լուծում են ԿԿ պլենումները։

ԿԿ իր քաղաքական աշխատանքի համար կազմակերպում է Քաղաքական բյուրո (Քաղբյուրո), կազմակերպական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունն իրագործում է Օրգբյուրոն, կազմակերպական և կատարողական ընթացիկ աշխատանքը դրված է Քարտուղարության վրա։ Քաղբյուրոն կազմված է հետևյալ ընկերներից՝ Ի. Վ. Ստալին, Վ. Մ. Մոլոտով, Լ. Մ. Կագանովիչ, Մ. Ի. Կալինին, Կ. Ե. Վորոշիլով, Գ. Կ. Օրջոնիկիձե, Վ. Վ. Կույբիշև, Ա. Ա. Անդրեյև, Ս. Մ. Կիրով յեվ Ս. Վ. Կոսիոր։ Քաղբյուրոյի թեկնածուներ հանդիսանում են ընկերներ Ա. Ի. Միկոյանը, Գ. Ի Պետրովսկին, Վ. Յա. Չուբարը։

ՀամԿ(բ)Կ ԿԿ քարտուղարներ են ընկ. ընկ. Ի. Վ. Ստալինը (գլխավոր քարտուղար), Լ. Մ. Կագանովիչը և Պ. Պ. Պոստիշևը։

ԿՎՀ նախագահն է ընկ. Յա. Ե. Ռուձուտակը։

## ԿՈՄԲՋԻՋ

Կուսակցության ստորին հիմնական կազմակերպությունը բջիջն է արտադրության մեջ (ֆաբրիկա, գործարան, կոլտնտեսություն, խորհնտեսություն), հիմնարկում, ուսումնական հիմնարկներում։

Ստորին բջիջների նշանակությունն ահագին է, վորովհետև կուսակցությունը նրանցով անմիջականորեն կապվում է բանվորների և աշխատավորների լայն մասսաների հետ։ Նրանց մեջ դաստիարակչական լայն աշխատանք է կատարվում կուսակցության անդամների և թեկնածուների մեջ։ Կուսակցության ու Խորհրդային պետության կյանքի բոլոր կարևորագույն հարցերը կուսակցության անդամները քննում են բջիջներում (ցեխային և օղակային բջիջներում) և կուսխմբակներում։ Կուսակցության այսպիսի կազմակերպումը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կոմունիստին ակտիվ մասնակցելու կուսակցական կյանքում, քննելու սոցիալիստական շինարարության ու կուսակցական վճիռների հարցերը։

Բջիջի աշխատանքի մեջ ամենակարևորն այն է, վոր նա ամբողջությամբ վերցրած և նրա յուրաքանչյուր անդամն առանձնապես գիտակցեն, թե բջիջը մի մասն է անխզելի ամբողջի, մի մասն ամբողջ կուսակցության և այն մասը, վորը գտնվում է հենց այն ճակատամասում, վորտեղ կուսակցությունն ուղղակի կապակցության մեջ է մտնում բանվորների, ծառայողների և կոլտնտեսական գյուղացիության ամբողջ մասսայի հետ։ Հետևաբար բջիջը պետք է զգա այն ամբողջ պատասխանատվությունը, վոր կրում է ինքը կուսակցության առաջ, ամբողջ բանվոր դասակարգի առաջ։ Ընկ. Կագանովիչն այսպես է ասել գործարանային բջիջի նշանակության մասին.



«Մեր կուսակցությունը ներկայացնում է միասնական օրգանիզմ։ Յուրաքանչյուր բջիջ օղակն է միասնական մեծ շղթայի։ ահագին կուսակցության օղակը, և տվյալ օղակի աշխատանքից, նրա ամրությունից է մեծ չափով կախված ամբողջ շղթայի ամրությունը։ Չի կարելի այսպես մտածել. մեր բջիջը փոքրիկ է, փոքրիկ գործարանում,—յեթե մեզանում մեր աշխատանքի մեջ ճեղքվածք լինի, դա չի կարող մեծ նշանակություն ունենալ կուսակցության աշխատանքի համար։ Պետք է հիշել, վոր յուրաքանչյուր բջիջ օղակն է միասնական շղթայի և մեկ օղակի ճեղքվածքը զգալ է տալիս իրեն ամբողջ շղթայում։ Ահա թե ինչու յուրաքանչյուր բջիջ—փոքրիկ թե մեծ, գործարանային թե խորհրդային, բուհական թե կարմիր-բանակային, կոլտնտեսական թե խորհնտեսական—պետք է իր վրա սևեռի մեր ուշադրությունը, վորպեսզի քննարկման առնենք անգամ նրա կազմության ու ներքին կյանքի կոնկրետ հարցերը»։

Բջիջը պետք է զբաղվի ամբողջ ձեռնարկության կյանքի և աշխատանքի բոլոր հարցերով, սակայն նա չպետք է իրենով փոխարինի մյուս կազմակերպությունները՝ գործարկոմը, խորհրդային ղեկավարությունը, կոոպերացիան,—նա պետք է ղեկավարի այդ կազմակերպությունների աշխատանքը, բայց վոչ իրենով փոխարինի նրանց։ Բջիջի աշխատանքի մեջ ամենագլխավորը բոլշևիկյան ազդեցությամբ գործարանի, ցեխի, բրիգադի բոլոր բանվորներին ընդգրկելն է։ Դրա համար բջիջներն ստեղծում են կուսխմբակներ և նշանակում օղակային կազմակերպիչներ, վորոնք կուսակցական աշխատանք են վարում առանձին հերթափոխների և բրիգադների մեջ։ Կուսխմբակներն ու օղակային կազմակերպիչները հոգ են տանում կոմունիստների ճիշտ բաշխման մասին հերթափոխի կամ բրիգադի մեջ՝ յուրաքանչյուր ագրեգատի բաժնում։ Դրանով ապահովվում է կոմունիստական ազդեցությունը հերթափոխի և բրիգադի բոլոր բանվորների մեջ, հետևաբար ձեռնարկության բանվորների ամբողջ մասսայի մեջ,—դրանով գլուխ է գալիս բանվորների քաղաքական ամենօրյա դաստիարակությունը։ Յեվ գործարանային կուսկոմները, և ցեխային բջիջները, և կուսխմբակները, և յուրաքանչյուր կոմունիստ՝ առանձնապես վերցրած՝ պետք է լինեն ակտիվ, արձագանքեն բանվորների բոլոր կարիքներին, հարցումներին ու տարակույսներին։ Պետք է նկատի ունենալ, վոր մեր յերկրում վիթխարի չափերով աճում է բանվորների թիվը՝ առաջին հնգամյակին բանվորների թիվը ԽՍՀՄ-ում գրեթե կրկնապատկվել է։ Գործարան յեկող բանվորների զանգվածի մեջ մեծ մասը գյուղացիներ են, վորոնք գյուղում չեն ստացել քաղաքական բավականաչափ պատրաստություն, այդ նրանց պետք է գործարանը տա, առաջին հերթին՝ գործարանային բջիջը։

Կուսակցական բջիջը ձեռնարկության մեջ ղեկավարում է քաղաքա-
կան ու մասսայական ամբողջ աշխատանքը: Այդ աշխատանքը կատա-
րելիս նա պայքարում է արդֆինպլանի համար, ձեռնարկության
բոլոր տնտեսական խնդիրների կատարման համար: Նա չպետք է ձեռ-
նարկության մեջ հրամանատարություն անի, նա չպետք է փոխարինի դի-
րեկտորին, որը կրում է ամբողջ պատասխանատվությունը ձեռնարկության
աշխատանքի համար: Նա չպետք է խախտի միանձնյա կառավարման
սկզբունքը, այսինքն այնպիսի կարգը, որի ժամանակ դիրեկտորն է
կառավարում ձեռնարկությունը և լիակատար պատասխանատվություն
կրում նրա տնտեսական-արտադրական կյանքի ղեկավարության
համար: Ընկ. Կագանովիչը այսպես է պարզաբանել բջիջի դերը ձեռ-
նարկության մեջ.

«Բջիջն ու նրա բյուրոն ունեն իրենց ուղղակի պարտա-
կանությունները, որոնց համար նրանք անմիջականորեն պա-
տասխանատու յեն, նրանք ղեկավարում են կուսակցական աշ-
խատանքը, կիրառում կուսակցության դիրեկտիվները: Բջիջը
հսկողություն ունի ամեն բանի վրա: Բայց հսկել ամեն բանի
վրա, ղեկավարել ամենքին—դա չի նշանակում աշխատել բոլորի
փոխարեն: Այդ պետք է տարբերել: Բջիջի բյուրոն պետք է
ղեկավարի և բոլոր անկյունները մտնի, գիտենա ամենը, ինչ
որ կատարվում է գործարանում, բայց չպետք է աշխատի բո-
լորի փոխարեն, չպետք է ձեռք մեկնի ամեն ինչի»:

Զանազան համագումարների և կոնֆերանսների մասնակցող, նմա-
նապես և խորհուրդներում, պրոֆմիութենական, կոոպերատիվ և այլ




Կուսակցության կազ-
մակերպության
սխեման ձեռնար-
կության մեջ:



ընտրական հասարակական կազմակերպությունների մեջ աշխատող
կոմունիստները միավորվում են, որպես այդ կազմակերպություննե-
րի կոմունիստական ֆրակցիաներ: Այդ ֆրակցիաները նպատակ ունեն
կենսագործելու տվյալ կազմակերպության մեջ կուսակցական գիծը:
Ֆրակցիաներին ղեկավարում են կուսակցական համապատաս-
խան կոմիտեները: Վերադաս կազմակերպությունների ֆրակցիաներն
իրավունք չունեն ղեկավարելու ստորադաս կազմակերպություն-
ների ֆրակցիաներին:

Բջիջն իրավունք ունի ընդունելու կուսակցության անդամներին,
նույնպես և վտարելու վատ կոմունիստներին կուսակցությունից,—
Ֆրակցիան այդպիսի իրավունքներ չունի:

Բջիջը հավաքվում է որոշ ժամանակամիջոցներին և քննում է
կուսակցության կյանքի և քաղաքականության հիմնական հարցերը:
Իսկ ֆրակցիան հավաքվում է քննելու համար այն կարևորագույն
հարցերը, որ պետք է լուծի տվյալ խորհրդային, պրոֆմիութենա-
կան կամ կոոպերատիվ կազմակերպությունը: Ֆրակցիայի վճիռները
պարտադիր են տվյալ կազմակերպության բոլոր կոմունիստների հա-
մար, և նրանք պարտավոր են ոչ-կուսակցական կազմակերպության
ժողովներում քվեարկել հօգուտ այդ վճիռների ու կյանքում կիրառել
դրանք:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերբ որ բանվորը մտնում է կուսակցության մեջ, նա այդ
անում է նրա համար, որ ակտիվորեն ու կազմակերպված պայքար
մղի սոցիալիզմի համար. բայց սոցիալիզմն անհնարին է կառուցել
առանց գիտակցական վերաբերմունքի դեպի արտադրությունը, առանց
մշտական հոգացողության արտադրական պլանի կատարման նկատ-
մամբ, առանց աշխատանքային խանդավառության:

Կոմունիստի առաջին պարտականությունն է լինել արտա-
դրության մեջ առաջավոր, լինել աշխատանքային կարգապահության տի-
պար և ցույց տալ արտադրական պլանի իրագործման համար մղվող
պայքարի մեջ իրական հոգացողություն, ջանասիրություն, ինքնա-
րություն, յեռանդ, նախաձեռնություն ու խանդավառության օրի-
նակ: Օրինակելի հարվածային աշխատանք — առանց գործալքումների,
առանց ուշացումների, առանց խոտանի — ահա կոմունիստի առաջին
պարտականությունն արտադրության մեջ:

Կոմունիստը պետք է լինի հարվածային, պետք է լինի սոցիա-
լիստական մրցության մասնակիցների առաջին շարքերում, պետք է
մրցության մեջ ներգրավի հետ մնացողներին, պետք է տիրի իր գործի
տեխնիկային, պետք է պայքարի ընդդեմ մորթապաշտության, գործո-

դուծյան, փախստականության, սոցիալիստական հասարակական սեփա-կանության հափշտակման և այլն:

Գնալ լավագույն արտադրականների տողանում (шеренга) — ահա սո-ցիալիզմի ակտիվ կառուցողի պարտքը, կոմունիստի պարտքը:

Գործարաններում, ֆաբրիկաներում, հանքահորերում, կոլտնտե-սություններում, պետական հիմնարկներում, կոոպերացիայի մեջ — ամենուրեք, վորտեղ սոցիալիզմի կառուցումն տեղի ունի, դասակար-գային թշնամին փորձ է անում դժվարացնելու մեր գործը, վնասելու, սաբոտաժ անելու, քայքայելու և կործանելու մեր շինարարությունը: Յեվ բանվորների մեջ (մանավանդ ձեռնարկության նոր յեկածների շարքերում) պատահում են դեռևս անգիտակից տարրեր, վորոնք չեն ազատվել խորթ ազդեցություններից: Ուստի կուսակցականը, վորտեղ էլ գտնվելիս լինի նա, պետք է գիտակցի, վոր ինքը մարտիկ է դասա-կարգային պայքարի դիրքերում, ու բոլոր միջոցներով ամրացնի պրոլե-տարական դիկտատուրայի հզորությունը: Նա միշտ պետք է աչա-լուրջ լինի, հետ մղի կուլակի յերդակիցների պրովոկացիաները, կռվի սոցիալիստական շինարարությունը քայքայելու ամեն մի փորձի դեմ:

Կան կոմունիստներ, վորոնք կարծում են, վոր յեթե իրենք մար-թապաշտներ, յենթակուլակներ չեն, ապա դրանով իսկ նրանք արդեն արդարացրել են կոմունիստների իրենց կոչումը: Վոչ, դա քիչ է՝ կուսակ-ցականը չի կարող չտեսնել, վոր իր կողքին կանգնած մարթապաշտ-ները, գողերը, լոդրերն իրենց գործողություններով ու իրենց ագիտացիայով օգնում են դասակարգային թշնամուն: Ուստի կոմու-նիստը չի կարող անտարբեր վերաբերվել դեպի արտադրության այդ կործանիչների զանցանքներն ու ագիտացիան: Այդ քիչ է, վոր կո-մունիստը նման չէ նրանց: Նա չի կարող բավականանալ միայն այն գիտակցությամբ, թե ինքը նրանցից լավ է: Նա պետք է ամենավճռա-կան կերպով պայքար մղի դասակարգային թշնամու բոլոր գործա-կալների դեմ. մերկացնի նրանց ժողովներում ու պատի լրագրում, ձգտի, վոր անուղղելիներն ու սոցիալիզմի գործին դավաճանողները վտարվեն, կուսակցության շուրջը միախմբի բանվորներին: Կոմու-նիստը պետք է անխնա լինի նրանց վերաբերմամբ, ովքեր, իր իսկ բանվոր դասակարգի շարքերում գտնվելով, դավաճանաբար կործա-նում են սոցիալիստական շինարարությունը:

Ե՛լ ավելի մեծ չափով անհաշտ պետք է լինի կոմունիստը կու-սակցական քաղաքականության խեղաթյուրումների նկատմամբ, մա-նավանդ յեթե այդպիսի խեղաթյուրման փորձեր անում են իրենք իսկ կուսակցության անդամները:

Կուսակցությունը չի կարող թույլ տալ, վոր իր անունից քա-



րոզվեն հայացքներ, վորոնք խորթ են իրեն և վորոնք չեն համա-պատասխանում կուսակցության գլխավոր գծին:

Յուրաքանչյուր կոմունիստի պարտականությունն է պայքարել կուսակցական գծի համար ընդդեմ ոպորտունիստական խեղաթյուրում-ների: Նա պետք է հակահարված տա ոպորտունիստական բոլոր ար-տելքներին (вылазка) ինչպես ընդհանուր հարցերի քննության ժամա-նակ՝ այնպես էլ ամբողջ պրակտիկ աշխատանքի մեջ: Նա միևնույն ժամանակ պետք է մերկացնի յերկերեսանիներին, վորոնք խոսքով կուսակցության գծի կողմն են, իսկ գործով խեղաթյուրում են այն:

Բայց ինչպես կարող է այդ անել մի կոմունիստ, վորը չգիտե կուսակցության ծրագիրը, կանոնադրությունն ու հիմնական վճիռնե-րը: Պարզ է, վոր նա իվիճակի չէ այդ անել լիակատար կերպով: Համկ(բ)Կ ԿԿ և ԿՀՎ 1933 թ. ապրիլի 29-ի վորոշումը զտման մասին զուր չէ ընդգծում, վոր «չի կարող լինել մի կոմունիստ, վոր չգիտե իր կուսակցության ծրագիրը, կանոնադրությունն ու այդ կուսակցու-թյան կարևորագույն քաղաքական և կազմակերպական վճիռները»:

Կուսակցության անդամի քաղաքական գիտակցականությունը քա-ղաքական կյանքի և կուսակցական աշխատանքի մեջ նրա ակտիվ մասնակցության անհրաժեշտագույն պայմանն է: Առանց դրան նա չի կարողանա կատարել կուսակցության գլխավոր գծի պաշտպանի իր դերը:

Այս պայմանից բղխում է կուսակցության անդամի պարտա-կանությունը՝ բարձրացնելու իր քաղաքական մակարդակը, պարա-պելու կուսակցական դպրոցում, յուրացնելու կուսակցության ծրա-գիրն ու կանոնադրությունը, կարդալու լրագրեր և գիտենալու կու-սակցության բոլոր վճիռները, ճշտապահորեն հաճախելու կուսակցա-կան ժողովները, ուսումնասիրելու Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստա-լինի աշխատությունները:

Ընկ. Ստալինն ասում է.

«Չկա ավելի բարձր բան, քան կոչումն այն կուսակցու-թյան անդամի, վորի հիմնադիրն ու ղեկավարն է հանդիսանում ընկեր Լենինը: Ամեն վոք չի կարող լինել այդպիսի կուսակցու-թյան անդամ, ամեն վոք չի կարող դիմանալ այն ձախորդու-թյուններին ու փոթորիկներին, վորոնք կապված են այդպիսի կուսակցության անդամության հետ: Բանվոր դասակարգի զա-վակները, կարիքի և պայքարի զավակները, անորինակ զրկանք-ների և հերոսական ճիգերի զավակները, — ահա թե ովքեր պետք է նախ և առաջ լինեն այդպիսի կուսակցության անդամներ»:

Կուսակցության անդամը պետք է միշտ հիշի իր վրա ընկած մեծ պատասխանատվությունը: Կուսակցության անդամը պարտա-վոր է.

1. Հաստատ գիտենալ, թե ինչի համար է պայքարում կուսակցությունը, գիտենալ նրա գլխավոր գիծը, նրա կարևորագույն վճիռներն ու հերթական խնդիրները:

2. Առաջավոր լինել ձեռնարկության մեջ և սոցիալիստական շինարարության ամեն մի այլ ճակատամասում, լինել լավագույն հարվածային, արդֆինպլանի նախաձեռնողն ու մարտիկը:

3. Լինել անդադրում մարտիկը կուսակցության գլխավոր գծի համար, ընդդեմ այդ գծի ամեն տեսակ օպորտունիստական խեղաթյուրումների, լինել կուսակցության առաջ ճշմարտախոս ու ազնիվ յեվ կարգապահ կոմունիստ:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

*Կուսակցությունն, ինչպես տեսնում ենք, շատ բարձր պահանջներ է առաջադրում իր անդամներին: Այդ պահանջները նրանից են բղխում, վոր կուսակցությունը ձգտում է իր շարքերում ունենալ միայն ամենից գիտակից, ամենից հաստատակամ և բանվոր դասակարգի շահերին ամենից նվիրված պրոլետարներին ու աշխատավորներին:*

*Կուսակցությունը շատ է հոգում խորթ տարրերից իրեն պաշտպանելու մասին:*

*Նա մի ամբողջ շարք հատուկ պայմաններ է սահմանել կուսակցության մեջ ընդունելու համար, վորպեսզի խուսափի իր շարքերի աղբոտումից: Կուսակցությունն իր կազմին խիստ հետևում եր դեռևս ցարիզմի ժամանակ, վորպեսզի իր շարքերը չթողնի վոստիկանության գաղտնի գործակալներին ու առհասարակ այն մարդկանց, վորոնք թշնամաբար են վերաբերվում կամ խորթ են բանվոր դասակարգի շահերին: Այժմ կուսակցությունն էլ ավելի մեծ հոգացողությամբ է հետևում իր կազմին: Դա միանգամայն հասկանալի յե, վորովհետև այժմ կոմունիստական կուսակցությունը մի կուսակցություն է, վորը պետությունն է ղեկավարում, կառավարական կուսակցություն: Այդպիսի կուսակցության մեջ անխուսափելիորեն սողոսկել են ջանում զանազան կարյերիստներ, բյուրոկրատներ ու սրիկաներ, վորպեսզի անձնական շահամոլության տեսակետից օգտագործեն իրենց դրությունը:*

*Ուստի կուսակցությունն անդադրում հետևում է իր կազմին: Նա չի վախենում աճումից: Ընդհակառակը, նա ձգտում է, վոր իր կազմի մեջ* լավագույն *պրոլետարների շարունակական ներհոսում լինի: Բայց կուսակցությունը կամենում է, վոր իր աճումը նպաստի իր շարքերի* ամրապնդման, *մասսաների հետ ունեցած կապի ուժեղացման և իր պրոլետարական միջուկի ընդլայնման:*

*Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի կուսակցությունն է: Բայց նրա շարքերում կան գյուղացի կոլտնտեսականներ,*






*ՀամԿ(բ)Կ աճումը: Դիագրամի վրա ցույց է տված ՀամԿ(բ)Կ անդամների յեվ թեկնածուների քանակը տարվա սկզբին (հազարներով):*

*ծառայողներ, տնայնագործներ, ուսուցիչներ, տեխնիկական և այլ մասնագետներ, վորոնք նվիրված են պրոլետարիատի շահերին:*

*Սակայն կուսակցության անդամների գլխավոր մասսան կազմում են բանվորները:* Բանվորների միջուկը կուսակցության մեջ տարեցտարի աճում է: *1928 թ. կուսակցության մեջ բանվորները կազմում էին 57,8%, իսկ 1932 թ. վերջում բանվորների տոկոսն աճեց մինչև 64,5: Այդ ժամանակվա ընթացքում ծառայողների տոկոսը 20-ից իջել է 7,7-ի, իսկ գյուղացի կոլտնտեսականների տոկոսը 23,3-ից բարձրացել է 27,8-ի:*

*Կուսակցության մեջ ընդունվելու համար արդյունաբերական բանվորները պետք է ներկայացնեն յերկու հանձնարարական այնպիսի կոմունիստներից, վորոնք կուսակցության մեջ են վոչ պակաս քան մեկ տարի: Վոչ-արդյունաբերական բանվորներն ու նախկին բանվոր և գյուղացի կարմիր-բանակայինները կուսակցության մեջ մտնելու համար պետք է ունենան յերկու հանձնարարական կուսակցության՝ յերկու տարվա ստաժ ունեցող անդամներից: Առանց վարձու աշխատանքի բանող գյուղացիներն ու տնայնագործները պետք է ունենան յերեք հանձնարարական յերկու տարվա ստաժ ունեցող կոմունիստներից: Ծառայողները կուսակցության մեջ ընդունվելու համար պետք է ներկայացնեն հինգ հանձնարարական այնպիսի կոմունիստներից, վորոնք կուսակցության մեջ են վոչ պակաս, քան հինգ տարի:*

*Մինչև հաստատումը* թեկնածուներ *են համարվում բոլոր կուսակցության մեջ նոր մտնողները: Թեկնածուների թվում նրանց յեղած ժամանակ կուսակցական կազմակերպությունը պարտավոր է ստուգել,*




ՀամԿ(բ)Կ սոցիալական կազմը 1933 թ. հունվարին (դիագրամի վրա թվերը տոկոս են նշանակում):

թե ինչ չափով են նրանք նվիրված կուսակցությանը և արդյոք բավականաչափ ակտիվ են նրանք ու գիտակից, ինչ չափով են նրանք տիրել կուսակցական քաղաքականության հիմունքներին, վորպեսզի կուսակցության անդամներ դառնան: Բանվորների համար թեկնածուական ժամկետը սահմանված է կես տարի, գյուղացիների և տնայնագործների համար՝ մի տարի, իսկ ծառայողների համար՝ յերկու տարի:

Ընդունելության այս ավելի կոշտ պայմանները վոչ-պրոլետարական խմբակների համար առաջ են յեկել կուսակցության՝ դասակարգայնորեն ավելի հետևողական կազմ ստեղծելու ձգտումից, վորպեսզի բանվորներն ունենան մեծ գերակշռություն:

Կուսակցությունն իր կազմը պաշտպանում է աղբոտումից վոչ միայն նոր անդամների ընդունելության ժամանակ: Նա, ինչպես արդեն վերը նշել ենք, նույնպես ուշադիր հետևում է, վոր իր շարքերը մաքրի այն մարդկանցից, ովքեր արատավորում են կուսակցությունն ու կոմունիստի անունը:

Բոլշևիկյան կուսակցությունը պետք է ազատ լինի պրոլետարական շահերին խորթ ամեն բանից:

Լեգալ (բացահայտ) կերպով աշխատող կոմունիստական կուսակցության համար, մանավանդ իշխանության գլուխ կանգնած կուսակցության համար միանգամայն անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ կատարել իր շարքերի ընդհանուր զտումներ: Դա ուղղակի նշված է Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ կուսակցությունների մտնելու պայմաններում: Այդ պայմաններից մեկը պահանջում է հետևյալը.

«Բոլոր այն յերկրների կոմունիստական կուսակցությունները, վորտեղ կոմունիստները լեգալ են վարում իրենց աշխատանքը, պետք է պարբերական զտումներ (վերացուցակագրումներ) կատարեն կուսակցական կազմակերպությունների անձնական կազմի, վորպեսզի սիստեմատիկ կերպով մաքրեն կուսակցությու-






Թվանշանները ցույց են տալիս ՀամԼԿՑԵՄ անդամների քանակը (միլիոններով): Նկարում—կոմյերիտականների ժողովը:

նը նրա մեջ անխուսափելիորեն սողոսկող մանր-բուրժուական տարրերից»:

Կուսակցությունն իր վերահսկիչ հանձնաժողովների միջոցով շարունակական ստուգումներ է կատարում իր կազմի և ժամանակ առ ժամանակ՝ ընդհանուր զտումներ:

1929—30 թ. զտման ժամանակ կուսակցությունից վտարվեցին ավելի քան 100 հազ. մարդ, վորոնք անարժան եյին կոմունիստներ լինելու: Նրանց փոխարեն կուսակցության մեջ մտան առաջավոր պրոլետարների, լավագույն հարվածայինների և սոցիալիզմի անձնանվեր մարտիկների նոր զորասյուներ:

Կուսակցությունն իր շարքերի ընդհանուր զտում է կատարում նաև 1933 թ.:

## 3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՁԵՎՆ Է

### ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի միակ կազմակերպությունը չէ: Բանվոր դասակարգն ունի բազմաթիվ այլևայլ կազմակերպություններ՝ արհմիությունները, խորհուրդները, յե-

րիտասարդության կոմունիստական միությունը, կոոպերատիվ, զանազան կուլտուրական ու հասարակական կազմակերպությունները և այլն։

Այդ կազմակերպությունները միավորում են բանվորների տարբեր խավերը, վորոշ խնդիրներ դնում իրենց առաջ։ Բանվորական, գյուղացիական յեվ կարմիր-բանակային պատգամավորների խորհուրդները պրոլետարական դիկտատուրայի պետական օրգաններն են։ Խորհուրդները ամենամասսայական կազմակերպությունն են, նրանց միջոցով կուսակցությունը կապվում է քաղաքի և գյուղի միլիոնավոր աշխատավորների մասսաների հետ և նրանց ներգրավում խորհրդային պետության կառավարման մեջ։ Արհեստակցական միությունները ընդգրկում են բոլոր բանվորներին ու ծառայողներին։ Արհմիությունները դաստիարակում են նրանց կոմունիստական վոգով, ներգրավում սոցիալիստական շինարարության մեջ, պետապարատի բարելավման, արդֆինպլանի կատարման համար, մասսաների նյութական և կուլտուր-կենցաղային դրության բարձրացման համար մղվող պայքարի մեջ։ Սպառողական և մանավանդ արտադրական (կոլտնտեսություններ) կոոպերացիայի միջոցով կուսակցությունը սոցիալիստական շինարարության մեջ է ներգրավում քաղաքի և գյուղի բազմամիլիոն աշխատավորների մասսաները։ Վտարելով մասնավոր առևտրական կապիտալը, սպառողական կոոպերացիան բանվորական և աշխատավորական մասսաների մատակարարման գործը կազմակերպում է այնպիսի հիմքի վրա, վորը բացառում է շահատացությունը և ապահովում բանվորական ու գյուղացիական մասսաների սպառողական կարիքների լավ սպասարկումը։ Կոոպերացիայի միջոցով կուսակցությունը զարգացնում է խորհրդային առևտուրը, նրա միջից արտաքսելով նեպմանական (վաճառականական) վոգին և դարձնելով այն քաղաքի ու գյուղի զոդման գործիք։ Կոոպերացիան վոչ միայն առևտրի կազմակերպություն է, այլև աշխատավորական մասսաների զանազան կենցաղային կարիքների լայն սպասարկման։

Կոոպերացիան զարգացնում է հասարակական սնունդը, աստիճանաբար իրագործելով Լենինի լոզունգը՝ «միանձնյա տնային մանր տնտեսությունից հանրայնացված խոշորին անցնելու» վերաբերմամբ։

Սոցիալիստական շինարարությանն աջակցելու գործում մեծ դեր է խաղում տնայնագործական կոոպերացիան։ Արտելների մեջ կազմակերպելով մանր ապրանքարտադրողներին, ոգնություն ցույց տալով նրանց վարկով, հումքով, արտադրության գործիքներով, կուսակցությունը դարձնում է նրանց հասարակական արտադրության մասնակիցներ, սոցիալիստական շինարարության մասնակիցներ։ Բայց սոցիալիստական շինարարության մեջ միլիոնավոր մանր ապրանքարտադրողներ—գյուղացիներ ներգրավող արտադրական կոոպերացման ամե-



նալայն և կարևոր ձևը հանդիսանում է կոլտնտեսական շարժումը։ (Կոլտնտեսական շարժման տնտեսական և քաղաքական նշանակության մասին մանրամասն պատմված է վեցերորդ գլխում)։

Յերիտասարդության կոմունիստական միությունը (կոմյերիտմիությունը) բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպությունն է, այդ կազմակերպության մեջ ղեկավար դեր խաղում է բանվորական յերիտասարդությունը։ Կոմյերիտմիության միջոցով կուսակցությունը կազմակերպում է, սոցիալիստական շինարարության մեջ ներգրավում և դաստիարակում յերիտասարդությանը, իսկ կոմյերիտմիության միջոցով ղեկավարվող պիոներական կազմակերպությամբ՝ նաև մանուկներին։ Կոմյերիտմիությունը կուսակցության պահեստազորն է։

Իսկ ինչպես կարելի յե հասնել այնպիսի դրության, վորպեսզի բանվոր դասակարգի այդ բոլոր կազմակերպություններն իրոք կազմակերպեն պրոլետարիատին կոմունիզմի համար մղվող պայքարի համար։ Դրան հասնել կարելի յե միայն նրանով, վոր բանվոր դասակարգի քաղաքական գլխավոր կազմակերպությունը՝ կոմունիստական կուսակցությունը կապահովի այդ կազմակերպությունների ամուր միասնական ղեկավարությունը։

Կոմունիստական կուսակցությունն իր ղեկավարությամբ կարգի յե գցում բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունների կանոնավոր գործունեությունը։ Պրոլետարիատը շահագրգռված է այն բանում, վոր վոչնչացնի կապիտալիզմն ու ստեղծի սոցիալիստական հասարակություն։ Այս խնդրին պետք է ծառայեն պրոլետարիատի բոլոր կազմակերպությունները։ Պայքարի հաջողության համար բոլոր կազմակերպությունները տարբեր ուղիներով, զանազան ճակատամասերում պետք է գնան դեպի միևնույն նպատակը։ Դրա համար նրանք պետք է լավագույն կերպով տեսնեն իրենց շարժման գլխավոր ուղղությունը, լինեն կուսակցության գլխավոր գծին անցկացնողները։

Գլխավոր ուղղությունը տեսնելու և նրանով ավելի հաջող կերպով շարժվելու այդ ընդունակությունը կազմակերպություններին տալիս է մարքսիստական-լենինյան ուսմունքով զինված բոլշևիկյան կուսակցությունը։ Բանվորների բոլոր մյուս կազմակերպությունները կազմում են մի տեսակ «շարժաղորդ փոկեր» կուսակցությունից դեպի դասակարգը, մասսաները, վորպիսի փոկերի ոգնությամբ կուսակցությունը կազմակերպում, վերադաստիարակում է ամենալայն մասսաները սոցիալիզմի համար մղվող պայքարի և կապիտալիզմի նկատմամբ տարվելիք հաղթանակի համար։

Այսպիսով կուսակցությունը հանդիսանում է մի կազմակերպություն, վորը գլուխ է կանգնած պրոլետարիատի բոլոր այլ կազմա-

կերպությունների, նա հանդիսանում է, ինչպես ընկ. Ստալինն է ասել, «պրոլետարիատի դասակարգային կազմակերպման բարձրագույն ձևը»:

Մեր կուսակցությունը ղեկավարում է բոլոր կազմակերպությունները, գործում է պրոլետարական հասարակայնության բոլոր ճակատներով, որպեսզի թույլ չտա տարաձայնություն (разнобой):

Սակայն ինչպես է կուսակցությունը ղեկավարում պրոլետարական բոլոր այլ կազմակերպությունները: Այս հարցին այսպես է պատասխանում ընկ. Ստալինը.

«Այդ, իհարկե, չի նշանակում, թե անկուսակցական կազմակերպությունները, արհմիությունները, կոոպերատիվները և այլն պետք է ձևականորեն ենթարկված լինեն կուսակցական ղեկավարության: Բանն այն է միայն, որ կուսակցության՝ այդ կազմակերպությունների կազմի մեջ մտնող անդամները, որպես անտարակույս ազդեցիկ մարդիկ, ձեռք առնեն համոզելու բոլոր միջոցները, որպեսզի անկուսակցական կազմակերպություններն իրենց աշխատանքի մեջ մոտենան պրոլետարիատի կուսակցությանը և կամովին ընդունեն նրա քաղաքական ղեկավարությունը»:

## 4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԳՈՐԾԻՔ Է

### ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՇՏԱԲՆ Է

Պրոլետարիատի դասակարգային կազմակերպման բարձրագույն ձևը լինելով, կուսակցությունը չի կարող միևնույն ժամանակ դիտել իրեն, որպես բանվոր դասակարգից առանձնացած մի կազմակերպություն: Նրա ամբողջ գործունեությունն ի սպաս է դրված բանվոր դասակարգին, նրա նպատակներին, նրա պայքարին: Նա ինքը հանդիսանում է դասակարգի գործիքը նրա պայքարի մեջ:

Ընկ. Ստալինը հետևյալն է ասել այս առթիվ.

«Կուսակցությունը ոչ միայն պրոլետարների դասակարգային միավորման բարձրագույն ձևն է,— նա միևնույն ժամանակ գործիք է պրոլետարիատի ձեռքում դիկտատուրայի նվաճման համար, երբ նա դեռևս նվաճված չէ, դիկտատուրայի ամրացման և ընդլայնման համար, երբ նա արդեն նվաճված է: Կուսակցությունն իր նշանակությամբ չէր կարողանա այնպես վեր բարձրանալ, և նա չէր կարողանա իրենով ծածկել պրոլետարիատի կազմակերպման բոլոր մնացած ձևերը, եթե պրոլետարիատը կանգնած չլիներ իշխանության հարցի առաջ...»:





Կապիտալիստական բոլոր յերկրներում դասակարգային պայքարի հիմնական հարցը իշխանության՝ բանվոր դասակարգին անցնելու հարցն է, պրոլետարական հեղափոխության հարցը, բանվոր դասակարգի դիկտատուրայի հարցը։ Կոմունիստական կուսակցությունները պրոլետարական դիկտատուրայի նվաճումն իրենց առջև դրել են վորպես առաջին և մերձավորագույն խնդիր։

Մեր յերկրում կուսակցության քաղաքական խնդիրը պրոլետարական դիկտատուրայի ամրացումն է ու նրա հիմքի վրա սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցելը։ Կուսակցությունը մարտական շտաբն է հանդիսանում պրոլետարական դիկտատուրայի ամրացման համար մղվող պայքարում ճիշտ այնպես, ինչպես նա այդպիսի շտաբ էր պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման համար մղվող պայքարում։

Ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան, էլ ավելի լայն ծավալել սոցիալիստական շինարարությունը, վերջնականապես վերացնել կապիտալիստական դասակարգերի մնացորդները և սոցիալիզմ կառուցել հնարավոր է միայն կուսակցության շուրջը միավորելով մասսայական կազմակերպությունների բոլոր ջանքերն ու նրանց գործունեությունը տոգորելով պրոլետարական կամքի միասնականությամբ։ Սա իր կողմից պահանջում է բանվոր դասակարգի լայն մասսաների մեջ մարտական ամուր կարգապահության դաստիարակում և ամենավճռական պայքար բանվորական մասսայի մեջ մանր-բուրժուական քայքայման վոգու թափանցման դեմ։

Կուսակցությունը հարկավոր է բանվոր դասակարգին, վորպեսզի [illegible] կազմակերպի նա շարքերը, առաջնորդի նրան պայքարի՝ պրոլետարական դիկտատուրայի համար, նվաճի այն, պահի յեվ ամրապնդի այն, պայքար ծավալի սոցիալիզմի համար յեվ կառուցի սոցիալիստական անդասակարգ հասարակություն։

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԵՋ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐՆ Է

Սակայն սխալ կլիներ անել այն յեզրակացությունը, թե քանի վոր կուսակցությունը պրոլետարիատի բարձրագույն ղեկավար կազմակերպությունն է և միաժամանակ պրոլետարական դիկտատուրայի գործիքը, ապա հետևաբար կարելի յե կարծել, վոր պրոլետարիատի դիկտատուրան ու պրոլետարիատի դիկտատուրայի ղեկավարումը կուսակցության կողմից—միևնույն բանն է։

Կուսակցությունը ղեկավար ցուցումներ է տալիս խորհուրդներին, արհմիություններին, կոոպերացիային, կոմյերիտական ու այլ կազմակերպություններին, և նրանք այդ ցուցումները կիրառում են

կյանքում: Այդ կազմակերպություններն իրենց հերթին կուսակցական ցուցումների կենսագործման մեջ են ներգրավում բանվորների և գյուղացիների լայն մասսաներին: Կուսակցությունը չի կարող և չի փորձում իրենով փոխարինել պրոլետարական դիկտատուրայի ամբողջ սիստեմը: Կուսակցությունը ղեկավարում է մասսաների պայքարը, բայց չի փոխարինում պրոլետարիատի մասսայական կազմակերպություններին: Կուսակցությունը դասակարգային պայքարի գլխավոր շտաբն է հանդիսանում, բայց գլխավոր շտաբը չի կարող զորաբանակին փոխարինել:

Կուսակցությունը պրոլետարիատի ղեկավար ուժն է, նա, Լենինի արտահայտությամբ, «պրոլետարիատի կառավարող ավանգարդն է», բայց նա յերկիրը կառավարում է պրոլետարական դիկտատուրայի որգանների միջոցով — խորհուրդների, պետական իշխանության որգանների միջոցով: Կուսակցական կազմակերպություններն ու պետական իշխանության որգանները—խորհուրդները միևնույն բաները չեն:

Կուսակցությունը ղեկավարում է խորհրդային որգանների գործունեությունը, բայց սրանից չի կարելի յեզրակացություն անել, թե իբր խորհուրդները, պետական որգանները կամ արդյունաբերության տրանսպորտի, բանակի կամ կոմունալ տնտեսության ղեկավարման որգանները կուսակցության անմիջական որգաններն են հանդիսանում: Պետական իշխանության որգանների մեծ մասի գլուխ կանգնած են կոմունիստները, վորովհետև կոմունիստներն ամենից գիտակից և բանվոր դասակարգին նվիրված մարդիկն են, նրանք գործում են կուսակցության վերահսկողության և ղեկավարության տակ, և այսպիսով ապահովվում է նրանց գործունեության յենթարկումը պրոլետարիատի դասակարգային ընդհանուր շահերին: Բայց դա չի նշանակում, թե ղեկավարության որգանները, ասենք, կոմունալ տնտեսության որգանները վորևէ չափով հանդիսանում են կուսակցության հիմնարկները և վոչ թե պետական իշխանության:

Ուստի բոլորովին սխալ է կարծել, թե մեզանում կուսակցության դիկտատուրա յե: Մեզանում դիկտատուրա յե պրոլետարիատը, վորին ղեկավարում է կուսակցությունը: Լենինը յերբեմն գործ է ածում «կուսակցության դիկտատուրա» բառերը, բայց միայն պրոլետարական դիկտատուրայի որգանները կուսակցության կողմից ղեկավարվելու իմաստով: Իսկ այդ ղեկավարությունն անհրաժեշտ է բանվոր դասակարգի այն ընդհանուր պայքարի շահերի տեսակետից, վոր մղվում է սոցիալիստական հասարակության կառուցման համար: Քանի վոր կուսակցությունը պրոլետարիատի ավանգարդը, ղեկավարն է հանդիսանում, ապա ուրեմն նա հանդիսանում է և պրոլետարական դիկտատուրայի ղեկավարը: Այդ պատճառով սխալ է վոչ միայն կուսակցության ղեկավարության ու պրոլետարիատի դիկտատուրայի նույնացումը, այլ



և կուսակցական ղեկավարությունը պրոլետարական դիկտատուրային հակադրելը:

Պրոլետարական դիկտատուրան միայն կուսակցության ղեկավարությամբ հնարավորություն ունի հաջողությամբ պայքարելու իր դասակարգային թշնամիների դեմ, հասնելու նրանց վոչնչացմանը և կառուցելու անդասակարգ հասարակություն:

«Չի կարելի,—ասում է ընկ. Ստալինը,—պրոլետարիատի դիկտատուրան հակադրել կուսակցության ղեկավարությանը («դիկտատուրային»): Չի կարելի, վորովհետև կուսակցության ղեկավարությունը գլխավորն է պրոլետարիատի դիկտատուրայի մեջ, յեթե նկատի ունենանք վորքանեև հաստատուն ու լիակատար դիկտատուրա և վոչ թե այնպիսին, վորպիսին եր, օրինակ, Պարիզի կոմունան, վոր ներկայացնում եր վոչ-լիակատար ու վոչ-հաստատուն դիկտատուրա: Չի կարելի, վորովհետև պրոլետարիատի դիկտատուրան ու կուսակցության ղեկավարությունն ընկած են, այսպես ասած, աշխատանքի մեկ գծի վրա, գործում են մեկ ուղղությամբ»:

## 5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԿԱՄՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՅՔԱՐ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ԴԵՄ

Բանվոր դասակարգի կուսակցությունը կոմունիզմի համար մղվող իր պայքարում գործ ունի վոչ միայն դասակարգային թշնամու դիմադրության հետ, այլև այն ճնշման, վոր գործում են իր վրա բանվոր դասակարգը շրջապատող վոչ-պրոլետարական հասարակական խավերը: Բանվոր դասակարգը բոլոր յերկրներում շրջապատված է քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի զանազան խավերով՝ մանր առևտրականներով, խանութպաններով, արհեստանո-ցատերերով, գյուղացիներով և այլն:

Բանվոր դասակարգը չի պատվարված չինական պատով այդ վոչ-պրոլետարական խավերից: Պրոլետարիատն ինքն իր կազմով միատեսակ չէ: Ինչպես ասել ենք արդեն, կադրային հին պրոլետարների կողքին բանվորների դասակարգի շարքերը թափվում են բանվորների նոր խմբեր—դրսեկներ այդ վոչ-պրոլետարական դասակարգերից:

Ուրիշ դասակարգերից սերած այդ դրսեկների միջոցով պրոլետարիատի ներսն են թափանցում մանր-բուրժուական խորթ ազդեցություններ: Նրանք բանվոր դասակարգի մեջ մտցնում են մանր-բուրժուական տատանումներ, յերերումներ, զանազան շեղումներ պրոլետարիատի դասակարգային ուղղակի շահերից: Պրոլետարիատի ներ-

սում ամենից անկայուն տարրերը յենթարկվում են այդ ազդեցություններին և տատանումներն ու յերերումները տանում նաև կուսակցության ներսը:

Մինչդեռ բանվոր դասակարգի ներքին կազմակերպվածությունը, կարգապահությունը, պրոլետարական հետևողականությունն ու հեղափոխական ակտիվությունը չեն կարող ապահովված լինել այն դեպքում, յեթե նրա ավանգարդի ներսում իսկ, կուսակցության ներսում լինեն մանր-բուրժուական տատանումներ: Ահա թե ինչու պետք է պրոլետարիատի կուսակցությունը միշտ անխնա պայքար մղի այդ մանր-բուրժուական ազդեցությունների դեմ:

Ցեվ մեր կուսակցությունն առաջ Լենինի ղեկավարությամբ, իսկ հետո Ստալինի ղեկավարությամբ միշտ մղել է և մղում է դաժան պայքար ընդդեմ այդ տատանումների: Մեր կուսակցության ամբողջ պատմությունը հանդիսանում է մի պայքար ընդդեմ դասակարգային այն խորթ ազդեցությունների, վորոնք ներգործել կարող են պրոլետարիատի յեվ նրա կուսակցության վրա: Այդ ազդեցությունները մեր կուսակցության ներսում յերևան եյին գալիս զանազան ոպորտունիստական թեքումների, ոպոզիցիաների և կուսակցության դեմ կատարված յելույթների ձևով:

Ոպորտունիզմը բուրժուազիայի հետ համաձայնություն կնքելու գիծն է, դավաճանումն պրոլետարիատի շահերին: Ոպորտունիստները խեղդում են կուսակցության լենինյան ճիշտ գիծը հօգուտ բուրժուազիայի: Բոլշևիկյան կուսակցությունն իր ամբողջ պատմության ընթացքում պայքար է մղել բանվորական շարժման մեջ յերևան յեկած ոպորտունիզմի յերկու հիմնական տեսակների դեմ: Նրանցից մեկը միշտ արտահայտվել է բուրժուազիայի հետ բացահայտորեն համաձայնություն կնքելու յեվ համագործելու քաղաքականության մեջ, վերջին հաշվով բանվոր դասակարգի շահերին ուղղակի դավաճանելու յեվ բուրժուազիայի շահերը պաշտպանելու քաղաքականության մեջ: Ոպորտունիզմի մյուս տեսակը՝ դա պրոլետարական կարգապահությունը քայքայող մանր-բուրժուական սանձարձակությունն է, դասակարգային թշնամու դեմ հետևողական, տոկուն պայքար մղելու անընդունակությունը յեվ նահանջը դասակարգային թշնամու առաջ հեղափոխական կեղծ բառաբանությամբ քողարկելու փորձերը: Ոպորտունիզմի յերկու տեսակն էլ զանազան ձևերով թափանցում են նաև կուսակցության ներսը անկայուն տարրերի և միջնախավերի շնորհիվ, արտահայտվելով ոպորտունիստական զանազան թեքումների՝ կուսակցության գծից կատարվող աջ և «ձախ» թեքումների ձևով:

Աջ ոպորտունիզմը ներկայումս բանվոր դասակարգի յեվ նրա կուսակցության շարքերում հանդիսանում է ուղղակի պաշտպանը դասա-



Գործիք դասակարգային թշնամու ձեռքում:




կարգային թշնամու շահերի: Նա հանդիսանում է դասակարգային թշնամու գործակալությունը, կուլակության գործակալությունը:

Առաջին հնգամյակի սկզբին աջ թեքումը հանդես յեկավ ընդդեմ յերկրի ինդուստրացման արագ տեմպերի, ընդդեմ կոլեկտիվացման քաղաքականության ակտիվ կիրառման, ընդդեմ խորհտնտեսությունների կազմակերպման, ընդդեմ հակակուլակային անխնա պայքարի: Աջ ոպորտունիզմը քարոզում է ինքնահոսի, դասակարգային պայքարից հրաժարվելու, դժվարությունների առաջ նահանջելու քաղաքականությունը: Աջ թեքման գիծը վոչ թե պայքարը դասակարգային թշնամու դեմ ուժեղացնելու, վոչ թե կուլակությունը վերացնելու գիծն է, այլ այդ թշնամու հետ հաշտություն կնքելու, այսինքն կուլակությունն ուժեղացնելու և հետևաբար պրոլետարիատի դիկտատուրան պայթեցնելու գիծը:

Աջ թեքման այդ հայացքները հիմքում հակասում են մարքսիզմ-լենինիզմի ուսմունքին ու կուսակցության գլխավոր գծին: Ընկ. Ստալինը ՀամԿ(բ)Կ XVI համագումարում (1930 թ. հունիս-հուլիս) ասաց.

«Չի կարող տարակույս լինել, վոր աջ թեքման հաղթությունը մեր կուսակցության մեջ կնշանակեր բանվոր դասակարգի լիակատար զինաթափումը, կապիտալիստական տարրերի սպառազինումը գյուղում և ԽՍՀՄ-ում կապիտալիզմի ռեստավրացիայի հաջողության հավանականության աճումը»:

Ինչ վերաբերում է «ձախ» ոպորտունիզմին, ապա նա արտացոլում է մանր բուրժուազիայի յերևակայական «հեղափոխականությունը»: Կապիտալիզմը շահագործում է վոչ միայն բանվոր դասակարգին, այլև

քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիային: Նա ճնշում ու
ավերում է այդ բուրժուազիային: Բայց մանր բուրժուազիան անըն-
դունակ է կազմակերպված պայքար մղելու կապիտալիզմի դեմ:

Մանր բուրժուազիայի «հեղափոխականությունը» — դա հուսահա-
տություն է, կատաղություն յեվ վոչ թե կարգապահված ու կազմակերպված
պայքար:

Մանր բուրժուազիան չի հանդուրժում պրոլետարական դիկտա-
տուրայի ռեժիմը: Նա կկամենար կամ վորեւե կերպ պահպանել իր
մանր տնտեսությունը, սահմանափակելով խոշոր կապիտալիստների
մրցությունը, կամ մեկեն ուղղակի թռիչք գործել սոցիալիզմի ղարա-
շրջանը:

Բայց նա չի գիմանում պրոլետարական դիկտատուրայի դաժան
ռեժիմին, հնի ջախջախմանը և համառ, անհողդողդ, ահագին դժվարու-
թյունների հետ կապված պայքարին, վոր մղվում է նորի կառուցման
համար:

Նա կկամենար ցատկել սոցիալիզմի մեջ առանց պրոլետարիատի
դիկտատուրայի, այնպես, վոր այսօր քուն մտնի վորպես մանր սե-
փականատեր, իսկ վաղը զարթնի սոցիալիստական դրախտում: Մա-
նըր-բուրժուական «հեղափոխականության» այդ հոսանքը բանվորա-
կան շարժման ներսում գտել է իր արտահայտությունը զանազան տե-
սակ անարխիստական և կիսաանարխիստական թեորիաների ձևով:

Պրոլետարական դիկտատուրայի կարգից դժգոհ մանր բուրժուա-
զիայի տրամադրությունները յերբեմն իրենց արտահայտությունն են
գտնում նաև մեր կուսակցության ներսում՝ իր մանր-բուրժուական, ապար-
կող «ձախ» թեքման ձևով:

«Ձախ» թեքումը միայն իր կեղծ «հեղափոխական» շաղակրատան-
քով է թվում «ձախ»: Իսկ իրոք չկա ավելի հեղափոխական, ավելի
ձախ կուսակցություն, քան մեր բոլշեվիկյան կուսակցությունը:

Կուսակցական գծից կատարվող յերկու թեքումն էլ՝ թե աջը և
թե «ձախը»՝ տանում են դեպի նույն բանը — դեպի պրոլետարիատի
դիկտատուրայի քաղաքականության խախտումը, դեպի պրոլետարիա-
տի դիրքերի թուլացումը և բանվոր դասակարգի թշնամիների դիրքե-
րի ամրացումը: Ահա թե ինչու հազվադեպ չէ, յերբ նրանք միավոր-
վում են կուսակցության դեմ միահամուռ պայքար մղելու համար:

«Այդ յերկու վտանգներն էլ, — և «ձախը» և աջը, — ասում էր
ընկ. Ստալինը, — այդ յերկու թեքումն էլ լենինյան գծից, և աջը
և «ձախը», տանում են դեպի միևնույն արդյունքը, թեպետ և
զանազան ծայրերից»:

Մեր կուսակցությունը միշտ մղել և մղում է պայքարը յերկու
ճակատի գծով — և աջ օպորտունիզմի դեմ և «ձախ»: Այդ պայքարը



յերկու ճակատի գծով մեր կուսակցության զարգացման օրենքն է հանդի-
սանում: Նա զարգացման օրենք է հանդիսանում նաև ամբողջ միջազ-
գային բոլշևիզմի համար:

Պայքարելով յերկու ճակատի գծով, կուսակցությունը վորոշ պայ-
մաններում կրակը կենտրոնացնում է տվյալ մոմենտի համար գլխավոր
վտանգի վրա: Այսպես, այժմ գլխավոր վտանգը աջ օպորտունիզմն է
հանդիսանում: Ինչու՞ հենց աջ օպորտունիզմն է այժմ գլխավոր վտանգը:

Մենք պայքար ենք մղում սոցիալիստական անդասակարգ հասա-
րակության համար: Մենք վերջ ենք տալիս ջախջախված դասակար-
գային թշնամու ուժերի մնացորդներին: Մենք վերջ ենք տալիս կու-
լակության: Մենք այրելով վոչնչացնում ենք կապիտալիզմի բոլոր
հին կոճղերը: Իսկ դա առաջ է բերում շահագործողական դասակար-
գերի մնացորդների կատաղի դիմադրությունը սոցիալիստական շինա-
րարությանը: Նրանք աշխատում են կամաց-կամաց, «քայլառքայլ ա-
ռաջացող բռունցքով» («тихой сапой») քայքայել կոլտնտեսությունները,
կործանել մեր արդյունաբերությունը, խախտել կարգապահությունը
ձեռնարկություններին, խորհտնտեսությունների և կոլտնտեսություն-
ների մեջ, փչացնել տրակտորները, կոտրել մեքենաները, գողանալ
խորհրդային կարգի հիմքը՝ սոցիալիստական սեփականությունը, —
նրանք ամեն կերպ ձգտում են ձախողեցնել սոցիալիստական շինա-
րարությունը և վերականգնել կապիտալիզմը:

Աջ օպորտունիզմը դասակարգային թշնամու գործակալությունն
է հանդիսանում: Նա առաջարկում է վոչ թե վերացնել կուլակությունն
ու կապիտալիստական դասակարգերի մյուս մնացորդները, այլ ընդհա-
կառակը, ազատ զարգանալու հնարավորություն տալ նրանց: Ահա թե
ինչու յե այժմ աջ օպորտունիզմը գլխավոր վտանգը:

«Ինչու՞ յե այժմ կուսակցության մեջ աջ թեքումը հանդի-
սանում գլխավոր վտանգ, — հարց էր տալիս ընկ. Ստալինը XVI
համագումարում: — Այն պատճառով, — պատասխանում էր նա, —
վոր նա արտացոլում է կուլակային վտանգը, իսկ կուլակային
վտանգը տվյալ մոմենտին, ծավալուն հարձակման և կապիտա-
լիզմի արմատները հանելու մոմենտին, հանդիսանում է յերկրում
գլխավոր վտանգը»:

## ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԵՐԿԵՐԵՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուսակցության ներսում կան մարդիկ, վորոնք, տեսնելով դա-
ժան պայքարն ընդդեմ օպորտունիզմի, վշտացած տարակուսում են.
«Միթե չի կարելի համաձայնության գալ, զիջել միմյանց, գտնել
վորևէ «միջին» գիծ»:

Այս դատողությունները քաղքենիական են: Քանի վոր խոսքը

բանվոր դասակարգի հեղափոխական քաղաքականությանն է վերաբերում, այստեղ այն չէ բանը, վոր «մի կերպ» համաձայնություն ստեղծվի, այլ այն, վոր մշակվի կուսակցության ճիշտ գիծ, վորը միակ ապահովողը լինի բանվոր դասակարգի շահերն ու սոցիալիզմի հաղթանակը: Յեթե մեր կուսակցությունը չհաղթահարեր օպորտունիստական թեքումները, այլ համաձայնության գար նրանց հետ, զիջեր նրանց, բանը կվերջանար նրանով, վոր մեր կուսակցությունը վերածվելով կդառնար մի սովորական օպորտունիստական կուսակցություն, վորը վոչնչով չի տարբերվում մենշևիկյան կամ արտասահմանյան վորևե սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից: Հենց դա էլ կազմում է սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առանձնահատկությունը, վոր նրանք իրենց մեջ հաշտեցնում են տարաձայնություններն ու հակասությունները և վոչ թե հաղթահարում, վերացնում նրանց պայքարի մեջ:

Ընկ. Ստալինն ասում է.

«Կամ մեկ կամ մյուս կարգի սկզբունքները պետք է հիմքը դարձվեն կուսակցության աշխատանքի: Սկզբունքային հարցերի նկատմամբ «միջին» գիծը գլուխների աղոտման «գիծն» է, տարաձայնությունների սքողարկման «գիծն» է, կուսակցության գաղափարային վերասերման «գիծը», կուսակցության գաղափարային մահվան «գիծը»:

Այնուհետև ընկ. Ստալինն ընդգծում է, վոր

«... Սկզբունքային «միջին» գծի քաղաքականությունը թառամող վերասերվող կուսակցությունների քաղաքականությունն է, ... մեր կուսակցության պատմությունը ներկուսակցական հակասությունների հաղթահարման և այդ հաղթահարման հիմքի վրա մեր կուսակցության շարքերի անշեղ ամրացման պատմությունն է»:

Ուստի նրանք, ովքեր փորձ են անում կուսակցությունը հաշտեցնելու թեքումների հետ, իրոք աջակցում են օպորտունիզմին, իրենք հանդիսանում են օպորտունիզմի թաքնված կրողները:

Հետևաբար չի կարելի հաջող կերպով իսկական պայքար մղել օպորտունիզմի և զանազան օպոզիցիաների կործանարար գործողությունների դեմ, յեթե միաժամանակ պայքար չմղվի թեքումների նկատմամբ ցուցաբերվող հաշտվողականության դեմ: Հաշտվողականությունը՝ դա բարեհոգի վերաբերմունքն է դեպի թեքումները նրանց դեմ ուղղված վճռական պայքարի փոխարեն: Ըստ էության հաշտվողականությունը թեքումները քողարկելու և հետևապես խրախուսելու փորձ է:

Չի կարելի լինել բոլշևիկ և միաժամանակ խաղաղ կենակցել բոլշևիզմից կատարվող թեքումների հետ, չպայքարել նրանց դեմ. յեթե կոմունիստը տեսնում է բոլշևիկյան գծի աղավաղումը արտահայտվող



հայացքներում կամ պրակտիկ աշխատանքի մեջ և հանդիստ անցնում է նրա կողքով, կռվի չի բռնվում այդ աղավաղման հետ,—նա կոմունիստ չէ, այլ քաղքենի: Եվ ավելին. այն կոմունիստը, վոր տեսնում է կուսակցության գլխավոր գծի կամ բոլշևիկյան ուսմունքի հիմքերի աղավաղումը և չի պայքարում դրա դեմ, իրոք քողարկում է այդ աղավաղումը, աջակցում թեքումներին, գիտակցաբար բռնում թեքվողականների կողմն ընդդեմ կուսակցության:

1928 թ. հանդես գալով աջ թեքման նկատմամբ ցուցաբերվող հաշտվողականության դեմ, ընկ. Ստալինն այսպես է բնորոշել հաշտվողականության այդ ձևը.

«Մեզանում կուսակցության մեջ կան մարդիկ, վորոնք, խիղճ մաքրելու համար, պատրաստ են պայքար ազդարարելու աջ վտանգի դեմ, ինչպես տերտերներն են յերբեմն ազդարարում «ալելուիա, ալելուիա»,—բայց ձեռք չեն առնում վոչ մի, բացարձակապես վոչ մի գործնական միջոց, վորպեսզի այդ պայքարն ընդդեմ աջ թեքման դնեն հարկավոր բարձրության վրա ու հաղթահարեն այն, բուն այդ թեքումն իրականում: Այդպիսի հոսանքը մեզանում կոչվում է հաշտվողական հոսանք՝ բացահայտորեն օպորտունիստական աջ թեքման վերաբերմամբ: Դժվար չէ հասկանալ, վոր պայքարն այդպիսի սեռի հաշտվողականության դեմ բաղկացուցիչ մասն է աջ թեքման, աջ վտանգի դեմ մղվող ընդհանուր պայքարի: Վորովհետև անկարելի յե հաղթահարել օպորտունիստական աջ թեքումը, սիստեմատիկ պայքար չմղելով օպորտունիստներին իր թևի տակ թաքցնող հաշտվողականության դեմ»:

Այդպիսի հաշտվողականությունը թեքումների նկատմամբ վերջիվերջո տանում է դեպի այդ թեքումների ուղղակի պաշտպանությունը: Հաշտվողականը հաճախ դիմում է կուսակցության առաջ ուղղակի ստության, յերկերեսանության:

Յերկերեսանության նողկալի օրինակներ ցույց տվին իր ժամանակին տրոցկիստներն իրենց պայքարի մեջ ընդդեմ կուսակցության: Նրանք փորձ եյին անում խաբելու կուսակցության աչալրջությունը, օգտագործելու կազմակերպական բոլոր հնարավորությունները, վորպեսզի գումարեն հատուկ ֆրակցիոն ժողովներ, պայթեցնեն կուսակցական կարգապահությունը, կուսակցական մասսային գրգռեն կենտրոնական կոմիտեյի դեմ: Գործելու նույնպիսի յեղանակների եյին դիմում 1928—1029 թ.թ. և աջ թեքվողականները:

Ներկա պայմաններում յերկերեսանությունը շատ դեպքերում արտահայտվում է նրանով, վոր խոսքով ընդունում են կուսակցության քաղաքականության և դիրեկտիվների ճշտությունը և գործով

գիտակցաբար աղավաղում կամ սաբոտաժի յենթարկում (թագնված դիմադրություն, չկատարում)։

Այդպես եր, օրինակ, 1933 թ. մայիսին, յերբ վոր Դոնբասի ածխարդյունաբերության մի շարք աշխատողներ զանազան բանաձևերում և ճառերում վողջունում եյին կուսակցության ԿԿ վճիռը այդ արդյունաբերության ղեկավարության վերակառուցման մասին, իսկ իրոք սաբոտաժի եյին յենթարկում այդ վորոշումը և ձախողեցնում։

«Յերկերեսանությունը,—ասում ե ընկ. Կագանովիչը,—վոչ այլ ինչ ե, բայց յեթե բուրժուական հին, կուլակային «առաքինությունը» կուսակցության շարքերը, պրոլետարիատի շարքերը մտցնելը, վորովհետև խաբեյությունը, կեղծավորությունը, յերկերեսանությունը առաքինություն եյին համարվում բուրժուազիայի, առևտրականների և կուլակների մոտ։ Այն կուլակը, այն առևտրականը, վորը չեր խաբում, ինքն իրեն «չեր հարգում»։ Իզուր չե, վոր գոյություն ունի հին առևտրա-կուլակային առածը. «չխաբես—չես ծախի»։

«Յերկերեսանությունը կուլակային և վաճառականական բարոյականություն ե։ Այն մարդը, վոր ընդունակ ե յերկերեսանություն անելու, ընդունակ ե խաբեյականորեն թագցնելու կուսակցությունից իր իրական հայացքները, բռնում ե կուսակցությանը դավաճանելու ուղին»։

Ահա թե ինչու յե կուսակցությունը սիստեմատիկորեն պայքար մղում յերկերեսանության դեմ և իր շարքերը մաքրում յերկերեսանիներից։

Յերկերեսանությունն անհնարին է այնտեղ, ուր արթուն է կուսակցության անդամների բոլշևիկյան աչալրջությունը։ Յերկերեսանությունն անհնարին ե այնտեղ, ուր կոմունիստները հաշտվողականությանը վերաբերվում են նույնպիսի անհանդուրժողությամբ, ինչպես և կուսակցական գծից կատարվող թեքումներին։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Պայքարն ընդդեմ ոպորտունիզմի անհնարին ե առանց այն պայքարի, վոր մղվում ե կուսակցության ներսում խմբավորումներ ու ֆրակցիաներ գոյացնելու դեմ։

Մեր կուսակցության յերկաթե կարգապահությունը, ինչպես նշել ենք արդեն, հիմնված ե մեր կուսակցության շարքերի բոլշևիկյան միասնականության վրա։ Այդ կարգապահությունը հնարավոր ե միայն այն պարագայում, վոր կուսակցությունը միասնական ե իր



խոհերի, իր քաղաքականության, իր գործնական աշխատանքի և իր կազմակերպական կառուցվածքի մեջ։

«Յերկաթե կարգապահությունը կուսակցության մեջ անհնարին ե առանց կամքի միասնականության, առանց կուսակցության բոլոր անդամների գործողության լիակատար ու անպայման միասնականության»,—ասել ե ընկ. Ստալինը։

Բայց կուսակցության մեջ չի կարող լինել վոչ կարգապահություն, վոչ միասնականություն, յեթե նրա շարքերի բոլշևիկյան կազմակերպությունը, բոլշևիկյան միախմբվածությունը խախտվում են կուսակցության ներսում ֆրակցիաների և խմբավորումների գոյացմամբ։ 1921 թ. X կուսակցական համագումարը «Կուսակցության միասնականության մասին» ընդունած բանաձևում վորոշեց անհապաղ ցրել համագումարից առաջ գոյացած բոլոր խմբերը և հանձնարարեց՝

«... բոլոր կազմակերպություններին՝ խստագույն կերպով հետևել, վոր թույլ չտրվի վորևե ֆրակցիոն յելույթ։ Համագումարի այս վորոշման չկատարումը,—ասված ե այնուհետև բանաձևի մեջ,—պետք ե տանի դեպի անպայման և անհապաղ վտարումը կուսակցությունից»։

Լենինի ձեռքով գրված այս վորոշմամբ ե կուսակցությունը միշտ առաջնորդվել ֆրակցիոն խմբավորումների և զանազան ոպորտունիստական ոպոզիցիաների դեմ պայքարելիս։

Ինչու՞ յե կուսակցությունը այնպես կատաղի պայքարել իր ամբողջ պատմության ընթացքում Համ Կ(բ)Կ շարքերում ֆրակցիաներ գոյացնելու դեմ։ Վորովհետև կուսակցության ներսում ֆրակցիաները վոչնչացնում են կուսակցության միասնականությունը։ Ֆրակցիաների գոյությունը ղեկավարության միքանի կենտրոնի գոյություն է ենթադրում միասնական կուսակցության ներսում։ Իսկ ում համար պարզ չե, վոր վոչ մի միասնական կուսակցություն գոյություն չունի այնտեղ, ուր գոյություն ունեն մի քանի ղեկավար կենտրոններ։ Իսկ յերբ չկա միասնական ղեկավար կենտրոն, չկա և գործողությունների միասնականություն, տեղի յե ունենում տարագնացություն, կուսակցության փոշիացում, կարգապահության քայքայում։ Հարց ե ծագում, թե ինչ իմաստ ունի մի կուսակցություն, վորի մեջ չկա կարգապահություն, չկա միասնականություն, վորի մեջ թագավորում ե մտքերի շփոթ։ Այդպիսի կուսակցությունը հարկավոր չե բանվոր դասակարգին։ Կուսակցության այդպիսի թուլացումը ձեռնտու յե միայն պրոլետարիատի թշնամիների համար։ Ահա թե ինչու յե ընկ. Ստալինն ասել, վոր կուսակցությունը «կամքի միասնականություն է, որն անհամատեղելի յե ֆրակցիաների գոյության հետ»։

# 6. ՄԱՔՐՎԵԼՈՎ ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻՑ ՅԵՎ ԽՈՐԹ ՏԱՐՐԵՐԻՑ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՑՆՈՒՄ Ե ԻՐԵՆ

## ՕՊՈՐՏՈՒՆԻԶՄԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կուսակցության ներսում ֆրակցիոնության աղբյուր հանդիսանում են օպորտունիստական տարրերը։ Նրանք չեն կարողանում հաշտվել կուսակցության յերկաթե կարգապահության հետ, փորձում են ջարդել այն, քանդում են կուսակցության միասնականությունը։ Ուստի կուսակցությունն անխնա պայքար է մղում այդ տարրերի դեմ, վտարում նրանց իր շարքերից։ Առանց դրան նա չեր լինի պրոլետարիատի մարտական ղեկավար/շտաբը, չեր կարողանա ապահովել իր ներսում կամքի միասնականությունը և հետևաբար՝ գործողության միասնականությունը։ Միայն օպորտունիստական բեռից ազատվելով է նա վերացնում իր սեփական շարքերում տարագնացության ու քայքայման վտանգը և իր միասնականությունն ամրացնում։

Կուսակցությունն իր շարքերից վտարեց տրոցկիստներին, վորոնք հետագայում դարձան բացահայտ հակահեղափոխականներ բուրժուական հակահեղափոխության ավանգարդը։ Կուսակցությունը սիստեմատիկորեն մաքրում է իրեն անուղղելի «ձախական» չափազանցողներից։ Կուսակցությունը XVI համագումարում աջ օպորտունիստների հայացքներն անհամատեղելի ճանաչեց Համ Կ (բ)Կ պատկանելու հետ, նա անխնա կերպով դուրս է անում իր շարքերից աջ օպորտունիստներին, իբրև կուլակային գործակալների, նա դուրս է շպրտում կուսակցության գծի բոլոր չարանենգ խեղաթյուրողներին։

1932 թ. կեսին կուսակցությունը լիկվիդացիայի յենթարկեց Ռյուտին-Գալկինի և մյուսների ընդհատակյա խմբակը, վոր բաղկացած եր ջախջախված աջ օպոզիցիայի բեկորներից ու միքանի նախկին տրոցկիստներից։ Այդ խմբակի մեջ մտնում եյին մարդիկ, վորոնք մասամբ առաջ եյին վտարված կուսակցությունից և մասամբ մնում եյին նրա մեջ, բայց յերկերեսանիորեն խաբում եյին նրան։

1932 թ. վերջում կուսակցությունը լիկվիդացիայի յենթարկեց մյուս, Եյսմոնտ-Տոլմաչովի խմբակը, վոր բաղկացած եր աշկարա սպիտակ-գվարդիականության դիրքերը գլորված վերասերվածներից։

Օպորտունիստական բոլոր օպոզիցիաները կուսակցության ներսում ձգտում եյին «դեմոկրատիայի» և «գաղափարային պայքարի» ցուցանակի տակ իրավունք ձեռք բերել անարգել կերպով անցկացնելու համար իրենց կործանարար աշխատանքը, վորպեսզի այդպիսով հնարավորություն ստանան ազատ քարոզելու կուսակցության ներսում իրենց կործանարար գաղափարները, քայքայելու կուսակցությունը։



Բոլշեվիզմի յեվ յերկու ճակատի գծով օպորտունիզմի դեմ մղած նրա անխնա պայքարի ամբողջ հարուստ հեղափոխական փորձը վճռականորեն ի կողմ է նետում օպորտունիզմը կուսակցության ներսում «մաշելու» թեորիան։ Այդ սկզբունքը հետևյալ յերևելի խոսքերի մեջ է արտահայտել ընկ. Ստալինը.

«Օպորտունիստական տարրերին կուսակցության ներսում գաղափարային պայքարի միջոցով «հաղթահարելու» թեորիան, մի կուսակցության շրջանակների մեջ այդ տարրերին «մաշելու» թեորիան փտած և վտանգավոր թեորիա յե, վորն սպառնում է կուսակցությունը դատապարտել կաթվածահարության ու քրոնիկական տկարության, սպառնում է օպորտունիզմի ճարակ դարձնել կուսակցությունը, սպառնում է առանց հեղափոխական կուսակցության թողնել պրոլետարիատին...»։

Կուսակցությունն անխնա հեռացնում է իր շարքերից այն բոլոր տարրերին, վորոնք իրենց հետ բերում են նեխումն ու քայքայում։ Դրանով իսկ նա ամրացնում է ինքն իրեն։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՈՒՄԸ

Կուսակցությունն արագ աճում եր հետհոկտեմբերյան տարիներին,—նա իր մեջ առավ միլիոնավոր լավագույն առաջավոր պրոլետարներ։ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ կուսակցությունն ուներ ընդամենը 115 հազ. անդամ, իսկ 1933 թ. սկզբում նա ընդգրկում եր արդեն մոտ 3.200 հազ. անդամ։

Կուսակցության այդ վիթխարի աճումը, ասում է Կագանովիչը, հանդիսանում է՝

« ... վկայականն այն ահագին վստահության, սիրո և սատարման, վոր կուսակցությանն են ցույց տալիս բանվորական և կոլտնտեսական լայն մասսաները։ Կուսակցությունը գիտե այդ, և կուսակցությունը հպարտ է դրանով»։

Պրոլետարների և կոլտնտեսականների մասսայական ներհոսումները կուսակցության շարքերը կապված են սոցիալիստական շինարարության հաջողությունների հետ։ Այդ հաղթանակները բարձրացնում եյին մասսաների վոչ միայն արտադրական խանդավառությունը, այլև քաղաքական ակտիվությունը, վորը նրանցից լավագույններին բերում եր մեր կուսակցության շարքերը։

Բայց և դրա կողքին առանձին դեպքերում կուսակցության շարքերը միջամուխ են լինում օտար տարրեր, դասակարգային թշնամու գործակալներ, յերկերեսանիներ, կարյերիստներ և այլն։

Ընկ. Կագանովիչն ասաց իր ճառում, որ նվիրված է կուսակ-
ցության զտմանը.

«. . . կուսակցության շարքերի զտումն անհրաժեշտ պրո-
ցես է, նույնպիսի պրոցես, ինչպես որ առողջ օրգանիզմի մա-
քրման պրոցեսն է անառողջ տարրերից»:

Մինչ հեղափոխությունը, ցարական ռեժիմի օրով կուսակցու-
թյան զտումը տեղի չէր ունենում բնական կարգով, առանց հատուկ
զտումների: «Ով որ թույլ էր, նա նահանջում էր»: Կուսակցության
զտումը հոգնած, անառողջ, անկարգապահ, մինչև վերջը բանվոր դա-
սակարգի գործին չնվիրված տարրերից մեծ մասամբ բնական մաղ-
ման միջոցով էր կատարվում:

Այդպես չէր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ, բան-
վոր դասակարգի հաղթանակի կապակցությամբ, պրոլետարիատի լա-
վագույն մարդկանց կողքին կուսակցության մեջ սողոսկեցին խորթ
տարրեր: Լենինը նշում էր, որ

«. . . վոչ մի խոշոր և հզոր ժողովրդական շարժում պատ-
մության մեջ չի անցել առանց կեղտոտ փրփուրի, — առանց ան-
փորձ նորագործներին հարող ավանտյուրիստների և սինլքորնե-
րի, պարծենկոտների և կոկորդ պատռողների»:

Կուսակցությունը միշտ անխնա պայքար է մղել այդ տարրերի
դեմ, իր շարքերի պարբերական զտումներ սարքելով:

1933 թ. անցկացվող զտումն անհրաժեշտ է այն պատճառով, որ
դասակարգային պայքարի արդի պայմաններում հեղափոխական աչա-
լրջությունն է պետք դասակարգային թշնամու վերաբերմամբ. նա
ջախջախված է, բայց դեռևս չի վոչնչացված, նա փոխում է պայքա-
րի իր տակտիկան, գործելով գաղտուկ, սողոսկելով վոչ միայն կոլ-
տնտեսությունների և խորհտնտեսությունների, այլև կուսակցու-
թյան մեջ, որպեսզի ավելի լավ ապահովագրի իրեն և ներսից քայքա-
յի սոցիալիստական շինարարությունը:

Ումից է զտում կուսակցությունն իր շարքերը: Այս հարցին
այսպես է պատասխանում Համկ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ՝ 1933 թ. ապրիլի 29-ի
վորոշումը «Կուսակցության զտման մասին»:

Կուսակցությունից զտվում են.

1) դասակարգայնորեն խորթ և թշնամական տարրերը,
որոնք խաբեբայական ճանապարհով սողոսկել են կուսակցու-
թյան մեջ և մնում են այնտեղ՝ կուսակցական շարքերը քայքայելու
համար.

2) կուսակցությանը խաբելով ապրող յերկերեսանիները,
որոնք նրանից թագցնում են իրենց իրական ձգտումները և
կուսակցությանը «հավատարիմ» լինելու սուտ յերդման վարա-



գույրի տակ գործով փորձում են ջլատել կուսակցության քա-
ղաքականությունը.

3) կուսակցության և պետության յերկաթե կարգապահու-
թյան բացահայտ և թագնված խախտողները, որոնք չեն կա-
տարում կուսակցության ու կառավարության վճիռները, տա-
րակույսի յեն յենթարկում և վարկաբեկում կուսակցության վճիռ-
ներն ու սահմանած պլանները, շաղակրատելով նրանց «վոչ ռեալ»
և «անիրագործելի» լինելու մասին.

4) վերասերվածները, որոնք միաձուլվել են բուրժուա-
կան տարրերի հետ, չեն ցանկանում իրոք պայքարել դասակար-
գային թշնամիների դեմ, չեն պայքարում իրոք կուլակային տար-
րերի, գռփողների, լոդրերի, գողերի և հասարակական սեփա-
կանությունը հափշտակողների դեմ.

5) կարյերիստները, մորթապաշտներն ու բյուրոկրատացած
տարրերը, որոնք կուսակցության մեջ լինելը և խորհրդային
պետությանը ծառայելը օգտագործում են իրենց անձնական,
մորթապաշտական նպատակների համար, որոնք կտրված են
մասսայից և արհամարհում են բանվորների և գյուղացիների կա-
րիքներն ու հարցմունքները.

6) բարոյապես քայքայվածները, որոնք իրենց անվայել
վարքով գցում են կուսակցության արժանապատվությունը, աղ-
տոտում կուսակցության դրոշը»:

Դրա կողքին քիչ չեն և այն կոմունիստները, որոնք խորապես
նվիրված են կուսակցությանը, բայց միևնույն ժամանակ չեն կարո-
ղանում բավականաչափ խելամուտ լինել կուսակցության քաղաքա-
կանությանը, չգիտեն նրա ծրագիրը, նրա կանոնադրությունը, ծա-
նոթ չեն կուսակցության հիմնական վճիռներին: Կուսակցությունն
իրենից չի վանում այդ մարդկանց, նա նրանց փոխադրում է թեկնա-
ծուների կամ համակրողների շարքը և դրանով իսկ հնարավորու-
թյուն է տալիս նրանց նախապատրաստվելու, դառնալու համար հա-
սուն, քաղաքականապես պատրաստված կուսակցականներ:

Այժմ կուսակցության շուրջը բացի թեկնածուներից կազմակերպ-
վում են համակրողներն էլ: Դա այն ակտիվն է, որն ընդհուպ մոտե-
ցել է կուսակցությանը, կանգնած է կուսակցության շեմքին և գոր-
ծում է կուսակցության ուղղակի ղեկավարությամբ ու ցուցումնե-
րով: Համակրողները՝ դա վաղվա կոմունիստներն են:

Մեր շարքերի պարբերական զտումները մեր կուսակցության ա-
հագին ուժի նշան են: Միայն ուժեղ կուսակցությունն է ընդունակ
անցկացնելու իր շարքերի այդպիսի զտում, որի մեջ ստուգվում է
յուրաքանչյուր կազմակերպության և կուսակցության առանձին վեր-
ցրած յուրաքանչյուր անդամի աշխատանքը, այն էլ ստուգվում բա-

*ցահայտ կերպով, ամենալայն անկուսակցական մասսաների մասնակցությամբ։*

*Ազատելով իրեն աղբից ու շլակից, կուսակցությունն ել ավելի յե ամրացնում իր շարքերը, բարձրացնում կուսակցության անդամների գաղափարային-քաղաքական մակարդակը, ուժեղացնում ինքնաքննադատությունը, դարձնելով այն գործուն, բոլշևիկյան։ Զտումն ավելի ուժեղ ե միախռնում անկուսակցական աշխատավորական մասսաներին կուսակցության շուրջը, մասսաների վստահությունը բարձրացնում դեպի մեր կուսակցությունը։*

*1933 թվականի զտումից կուսակցությունը դուրս կգա ել ավելի մարտունակ, գաղափարայնորեն-միաձույլ, պատրաստ նոր մեծ սխրագործությունների գնալու յերկրորդ հնգամյակի համար, սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցելու համար մղվող պայքարում։*

### ԱՅՍՊԻՍՈՎ, ՅԵՐՐՈՐԴ ԳԼԽԻՑ ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ.

Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն ե հանդիսանում։ Նա կազմակերպում ե բանվոր դասակարգի ուժերը, քաղաքականապես ղեկավարում ե նրան, միավորում բանվոր դասակարգի բոլոր կազմակերպությունների հեղափոխական յեռանդը յեվ ուղղում այն կոմունիզմի համար մղվող պայքարի մեջ։

Բանվոր դասակարգին իր պայքարի հաջողության համար անհրաժեշտ ե մարտական, մարքսիստա-լենինյան թեորիայով, դասակարգային պայքարի որենքների գիտելությամբ զինված, գաղափարայնորեն կոփված, կազմակերպորեն միախռնված, պրոլետարական յերկաթե կարգապահությամբ պնդված մի կուսակցություն։ Այդ բոլոր հատկությունները ունի մեր բոլշեվիկյան կուսակցությունը։ Այդ հիմքերի վրա յեն կառուցվում արտասահմանում մեր յեղբայրական կոմունիստական կուսակցությունները։

Մեր կուսակցության այդ բոլոր հատկությունները արմատապես տարբերում են նրան սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից, վորոնք պրոլետարներին խաբում են նրանով, վոր իրենց անվա-



նում են «բանվորական» կուսակցություններ։ Մեր կուսակցությունն իր նպատակներով, իր գործողություններով, իր կառուցվածքով նոր տիպի կուսակցություն ե, պրոլետարիատի դասակարգային թշնամիների յեվ նրանց բացահայտ կամ թաքնված ոպորտունիստական գործակալների դեմ ուղղված անհաշտ պայքարի կուսակցություն, պրոլետարական դիկտատուրայի նվաճման ու իրագործման յեվ սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցման կուսակցություն։ Իր ամբողջ պատմության ընթացքում մեր կուսակցությունը անխնա պայքար ե մղել յերկու ճակատի վրա—«ձախ» յեվ աջ ոպորտունիզմի դեմ ու ոպորտունիստական թեքումների նկատմամբ ցուցաբերվող հաշտվողականության դեմ։ Յերկու ճակատի վրա մղվող այդ պայքարը բոլշեվիզմի զարգացման որենքն ե։ Յերկու ճակատի վրա մղվող պայքարում կուսակցությունը միշտ տարբերել ե տվյալ շրջանի համար գլխավոր հանդիսացող վտանգը յեվ այդ կողմն ե ուղղել իր կրակը, չդադարեցնելով պայքարը ոպորտունիզմի այլ տեսակների յեվ արտահայտությունների դեմ։

Ներկայումս գլխավոր վտանգ հանդիսանում ե աջ ոպորտունիզմը։

Կուսակցությունը կոփվում ու իրեն ամրացնում ե նրանով, վոր իր շարքերը մաքրում ե ոպորտունիստներից յեվ խորթ տարրերից։

## ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### III ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*1. Ինչո՞ւ յենք մենք կոմունիստական կուսակցությունն անվանում պրոլետարիատի առաջավոր ջոկատ։*

*2. Ի՞նչ միջոցներով ե փորձում բուրժուազիան կազմալուծել, քայքայել բանվոր դասակարգի շարքերը։ Ի՞նչպիսի ուղիներով ե նա մթագնում բանվորների գիտակցությունը։*

*3. Ինչո՞ւ մեր կուսակցությունը չեր տանի հաղթանակ, յեթե միշտ անհաշտ պայքար չմղեր լենինյան գծից կատարվող ոպորտունիստական թեքումների դեմ։*

4. Ինչո՞ւ այժմ գլխավոր վտանգը աջ ոպորտունիզմն է:

5. Ինչի՞ մեջ է կայանում բոլշևիկյան կուսակցության կարգապահությունը:

6. Ի՞նչպես է կուսակցությունը ղեկավարում մասսայական կազմակերպությունները: Ի՞նչպես են կազմակերպվում ու աշխատում ոչ-կուսակցական ընտրական կազմակերպությունների կոմֆրակցիաները:

7. Ինչո՞վ է կուսակցության ծրագիրը տարբերվում կանոնադրությունից.

8. Ինչի՞ մեջ են կայանում կոմունիստների պարտականությունները արտադրության մեջ:

9. Ինչո՞ւ կուսակցությունը ֆրակցիոնություն չի թույլ տալիս իր շարքերում:

10. Ինչի՞ համար է կուսակցությունը պարբերաբար անցկացնում իր շարքերի զտումը:

11. Ինչի՞ մեջ է կայանում կուսակցության պայքարը յերկու ճակատի գծով:

12. Ի՞նչ է յերկերեսանությունը:

13. Ցույց տվեք, թե ինչ դրական կողմեր յեվ ինչ թերություններ կան գործարկոմի ֆրակցիայի, կոմյերիտմիության բջիջի, ԲՓԲ ֆրակցիայի յեվ այլնի նկատմամբ ցույց տված ձեր բջիջի ղեկավարության մեջ:





Գլուխ

# ՀԱՄ Կ(բ)Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՏԱՊՆԵՐԸ

Բոլշևիզմի պատմական արմատները հասնում են այն հեղափոխական խմբակներին, որ ստեղծել են Լենինն ու իր զինակիցները անցյալ դարի 90-ական թվականներին: Այդ հեղափոխական խմբակների կազմակերպումն ու աշխատանքի առաջին քայլերն ընթացել են անհաշտ պայքարում՝ ինչպես բանվոր դասակարգի բացահայտ թշնամիների դեմ, այնպես էլ բանվորական շարժման ներսում յերեվան յեկած ոպորտունիստական հոսանքների դեմ:

Այդ թշնամիների դեմ պայքարելով է աճել ու ամրացել բոլշևիզմը: Այդ պայքարում ռուսական բանվորական շարժման արշալույսին մեծագույն դեր խաղացին Լենինի հիմնած «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը» (1895 թ.) յեվ «Իսկրա» լրագիրը (1900 թ.), որը կազմակերպեց կուսակցության II համագումարի՝ բոլշևիզմի ձևավորման համագումարի հրավիրումը:

Բոլշևիզմը,— ասում է Լենինը,— որպես քաղաքական մտքի հոսանք յեվ որպես քաղաքական

կուսակցություն գոյություն ունի 1903 թվականից:

Բոլշևիզմն աճեց բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետ միասին, ղեկավարել յեվ ղեկավարում է այդ շարժումը, հաղթանակի հասցրեց այն աշխարհի մեկ վեցերորդ մասում, առաջնորդում է դեպի հաղթանակ ամբողջ աշխարհում:

Ռուսաստանի բանվոր դասակարգը յերեք հեղափոխություն է կատարել բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ՝ մեկը 1905 թ. յեվ յերկուսը 1917 թ.:

Դա հեղափոխական փորձի այնպիսի հարուստ աղբյուր է, վորից սովորում են աշխարհի բոլոր կոմունիստական կուսակցությունները:

Բոլշևիկյան կուսակցության պատմությունն ո ւ ս ո ւ ց ա ն ո ւ մ է պայքարել պրոլետարիատի դիկտատուրայի համար, կոմունիզմի համար: Դրանում է մեր կուսակցության պատմության մ ի ջ ա զ գ ա յ ի ն նշանակությունը: Լենինը գրում եր, վոր «... ռուսական որինակը մի բան ցույց է տալիս բոլոր յերկրներին, յեվ շատ եյական բան՝ նրանց անխուսափելի յեվ մոտավոր ապագայից»:

Բացի դրանից կուսակցության հարուստ անցյալում արժեքավոր դասեր են պարունակվում բանվոր դասակարգի պայքարը կուսակցության կողմից ներկայումս ղեկավարելու յեվ ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության համար:

Ուստի կուսակցության պատմության ուսումնասիրությունն ունի նայեվ կարեվորագույն գործնական նշանակություն:

«Բոլշևիկյան կուսակցության պատմությունը,— ասել է ընկ. Պոստիշևը,— դա արխիվ չէ, այլ գործողության ղեկավարություն, վոր բանալի յե տալիս սոցիալիստական շինարարության ամենահրատապ պրոբլեմների ըմբռնման յեվ լուծման համար»:

Այս գլխում մենք համառոտակի կանգ ենք առնում մեր կուսակցության պատմության յեվ հիմնական ետապների վրա:



Գիրքը բաժանված է հետեվյալ մասերի.

1. *Առաջին հեղափոխության նախապատրաստման տարիները:*
2. *Հեղափոխության տարիները:*
3. *Ռեակցիայի տարիները:*
4. *Նոր վերելքի տարիները:*
5. *Իմպերիալիստական պատերազմի տարիները:*
6. *Փետրվարից մինչեվ Հոկտեմբեր:*
7. *Քաղաքացիական պատերազմի տարիները:*
8. *Վերականգնողական շրջանը:*
9. *Վերակառուցողական շրջանը:*

# 1. ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

## ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

*1902—1905 թվականները մի շրջան եյին, վոր Լենինն այսպես է բնորոշել.*

*«Ամենուրեք զգացվում է մեծ փոթորկի մերձեցումը: Բոլոր դասակարգերի մեջ խմորում է և նախապատրաստում»:*

*Դա հեղափոխության աճելության ու նախապատրաստման շրջանն եր:*

*Այդ ժամանակ Ռուսաստանում զարգանում եր տնտեսական ծանր ճգնաժամ, նա ընդգրկել եր տեքստիլ, հետո մետաղագործական ու ածխային արդյունաբերությունը: Տասնյակ հազարավոր բանվորներ եյին դուրս արվում: Մեծ քանակությամբ ֆաբրիկաներ աշխատում եյին շաբաթական յերեք որ: Գործազրկությունը բռնել եր արդյունաբերության բոլոր ճյուղերը: Մոսկվայում յերեք աշխատող բանվորի ընկնում եր յերկուական գործազուրկ: Գործարանատերերը, ֆաբրիկատերերը և հանքատերերը փորձ եյին անում օգտվելու գործազրկությունից, վորպեսզի ավելի լավ սեղմեն բանվորներին: Դա առաջացրեց պրոլետարական բողոքի շարժում, վորը վերածվեց գործադուլային լայն շարժման: 1903 թ. ընդհանուր գործադուլ բռնկեց Ուկրայինայում և Կովկասում: Ռուս-յապոնական պատերազմը 1904 թ. իր հերթին խմորման ալիք բարձրացրեց բանվորական և գյուղացիական մասսաների մեջ: Ազգային ծայրագավառներում (Կովկաս, Թուրքեստան, Լեհաստան և այլն), վորտեղ բանվորա-գյուղացիական մասսաները ցարիզմի առանձնապես ուժեղ ճնշումն եյին զգում,*

4. Ինչո՞ւ այժմ գլխավոր վտանգը աջ օպորտունիզմն է:
5. Ինչի՞ մեջ է կայանում բոլշևիկյան կուսակցության կարգապահությունը:
6. Ի՞նչպես է կուսակցությունը ղեկավարում մասսայական կազմակերպությունները: Ի՞նչպես են կազմակերպվում ու աշխատում ոչ-կուսակցական ընտրական կազմակերպությունների կոմֆրակցիաները:
7. Ինչո՞վ է կուսակցության ծրագիրը տարբերվում կանոնադրությունից.
8. Ինչի՞ մեջ են կայանում կոմունիստների պարտականությունները արտադրության մեջ:
9. Ինչո՞ւ կուսակցությունը ֆրակցիոնություն չի թույլ տալիս իր շարքերում:
10. Ինչի՞ համար է կուսակցությունը պարբերաբար անցկացնում իր շարքերի զտումը:
11. Ինչի՞ մեջ է կայանում կուսակցության պայքարը յերկու ճակատի գծով:
12. Ի՞նչ է յերկերեսանությունը:
13. Ցույց տվեք, թե ինչ դրական կողմեր յեվ ինչ թերություններ կան գործարկոմի ֆրակցիայի, կոմյերիտմիության բջիջի, ԲՓԲ ֆրակցիայի յեվ այլնի նկատմամբ ցույց տված՝ ձեր բջիջի ղեկավարության մեջ:







Գլուխ

# ՀԱՄ Կ (բ) Կ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՏԱՊՆԵՐԸ

Բոլշեվիզմի պատմական արմատները հասնում են այն հեղափոխական խմբակներին, վոր ստեղծել են Լենինն ու իր զինակիցները անցյալ դարի 90-ական թվականներին: Այդ հեղափոխական խմբակների կազմակերպումն ու աշխատանքի առաջին քայլերն ընթացել են անհաշտ պայքարում՝ ինչպես բանվոր դասակարգի բացահայտ թշնամիների դեմ, այնպես էլ բանվորական շարժման ներսում յերեվան յեկած ոպորտունիստական հոսանքների դեմ:

Այդ թշնամիների դեմ պայքարելով է աճել ու ամրացել բոլշեվիզմը: Այդ պայքարում ռուսական բանվորական շարժման արշալույսին մեծագույն դեր խաղացին Լենինի հիմնած «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը» (1895 թ.) յեվ «Իսկրա» լրագիրը (1900 թ.), վորը կազմակերպեց կուսակցության II համագումարի՝ բոլշեվիզմի ձեվավորման համագումարի հրավիրումը:

Բոլշեվիզմը,— ասում է Լենինը,— վորպես քաղաքական մտքի հոսանք յեվ վորպես քաղաքական

կուսակցություն գոյություն ունի 1903 թվականից:

Բոլշեվիզմն աճեց բանվոր դասակարգի հեղափոխական շարժման հետ միասին, ղեկավարել յեվ ղեկավարում է այդ շարժումը, հաղթանակի հասցրեց այն աշխարհի մեկ վեցերորդ մասում, առաջնորդում է դեպի հաղթանակ ամբողջ աշխարհում:

Ռուսաստանի բանվոր դասակարգը յերեք հեղափոխություն է կատարել բոլշեվիկյան կուսակցության ղեկավարությամբ՝ մեկը 1905 թ. յեվ յերկուսը 1917 թ.:

Դա հեղափոխական փորձի այնպիսի հարուստ աղբյուր է, վորից սովորում են աշխարհի բոլոր կոմունիստական կուսակցությունները:

Բոլշեվիկյան կուսակցության պատմությունն ուսուցանում է պայքարել պրոլետարիատի դիկտատուրայի համար, կոմունիզմի համար: Դրանումն է մեր կուսակցության պատմության միջազգային նշանակությունը: Լենինը գրում էր, վոր «... ռուսական որինակը մի բան ցույց է տալիս բոլոր յերկրներին, յեվ շատ էյական բան՝ նրանց անխուսափելի յեվ մոտավոր ապագայից»:

Բացի դրանից կուսակցության հարուստ անցյալում արժեքավոր դասեր են պարունակվում բանվոր դասակարգի պայքարը կուսակցության կողմից ներկայումս ղեկավարելու յեվ ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության համար:

Ուստի կուսակցության պատմության ուսումնասիրությունն ունի նայեվ կարեվորագույն գործնական նշանակություն:

«Բոլշեվիկյան կուսակցության պատմությունը,— ասել է ընկ. Պոստիշեվը,— դա արխիվ չէ, այլ գործողության ղեկավարություն, վոր բանալի յե տալիս սոցիալիստական շինարարության ամենահրատապ պրոբլեմների ըմբռնման յեվ լուծման համար»:

Այս գլխում մենք համառոտակի կանգ ենք առնում մեր կուսակցության պատմության յեվ հիմնական էտապների վրա:

Գիրքը բաժանված է հետեվյալ մասերի.

1. Առաջին հեղափոխության նախապատրաստման տարիները:
2. Հեղափոխության տարիները:
3. Ռեակցիայի տարիները:
4. Նոր վերելքի տարիները:
5. Իմպերիալիստական պատերազմի տարիները:
6. Փետրվարից մինչեվ Հոկտեմբեր:
7. Քաղաքացիական պատերազմի տարիները:
8. Վերականգնողական շրջանը:
9. Վերակառուցողական շրջանը:

# 1. ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

## ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1902—1905 թվականները մի շրջան էին, որ Լենինն այսպես է բնորոշել.

«Ամենուրեք զգացվում է մեծ փոթորկի մերձեցումը: Բոլոր դասակարգերի մեջ խմորում է և նախապատրաստում»:

Դա հեղափոխության աճելության ու նախապատրաստման շրջանն էր:

Այդ ժամանակ Ռուսաստանում զարգանում էր տնտեսական ծանր ճգնաժամ, նա ընդգրկել էր տեքստիլ, հետո մետաղագործական ու ածխային արդյունաբերությունը: Տասնյակ հազարավոր բանվորներ էին դուրս արվում: Մեծ քանակությամբ ֆաբրիկաներ աշխատում էին շաբաթական յերեք օր: Գործազրկությունը բռնել էր արդյունաբերության բոլոր ճյուղերը: Մոսկվայում յերեք աշխատող բանվորի ընկնում էր յերկուական գործազուրկ: Գործարանատերերը, ֆաբրիկատերերը և հանքատերերը փորձ էին անում օգտվելու գործազրկությունից, վորպեսզի ավելի լավ սեղմեն բանվորներին: Դա առաջացրեց պրոլետարական բողոքի շարժում, վորը վերածվեց գործադուլային լայն շարժման: 1903 թ. ընդհանուր գործադուլ բռնկեց Ուկրայինայում և Կովկասում: Ռուս-յապոնական պատերազմը 1904 թ. իր հերթին խմորման ալիք բարձրացրեց բանվորական և գյուղացիական մասսաների մեջ: Ազգային ծայրագավառներում (Կովկաս, Թուրքեստան, Լեհաստան և այլն), վորտեղ բանվորա-գյուղացիական մասսաները ցարիզմի առանձնապես ուժեղ ճնշումն էին զգում,



**Բանվորների դրությունը մինչ հեղափոխությունը:**

*ԿԱՊԻՏԱԼԻՍՏԸ (ասում է բանվորին): Ինչի՞դ է պետք ութժամյա աշխատօրը: Չէ՞ վոր դու համգստանալ չգիտես այնպես կուլտուրական կերպով, ինչպես յես:*

*(1917 թ. նկար)*

աճում եր հեղափոխական ուժեղ խմորումը: Գյուղացիական խռովությունները լայն չափեր ընդունեցին և սկսեցին թափանցել զինվորների զանգվածների մեջ: Խռովություններ սկսվեցին բանակում և նավատորմում: Նավատորմում հեղափոխական ամենավառ յելույթը «Պոտյոմկին» զրահակրի վրա տեղի ունեցած ապստամբությունն եր 1905 թ.: Ամբողջ յերկրում աճում եր բանվորների և գյուղացիների հեղափոխությունն ընդդեմ ցարական ինքնակալության:

Ցարական ռեժիմը հենվում եր գլխավորապես կալվածատեր-ազնվականների դասակարգի վրա, վորն իր ձեռքումն եր պահում խոշորագույն հողերն ու հանքամասերը: Ռուսաստանում ցարերն իրենք միշտ յեղել են խոշորագույն կալվածատեր-ճորտատերեր, վորոնք դաժանաբար շահագործել են գյուղացիներին: Բոլոր լավագույն հողերը հսկայական տարածությամբ պատկանել են ցարին ու նրա ազգականներին: Ցարական տոհմը 1905 թ. միմիայն Յեվրոպական Ռուսաստանում ունեցել է 7,5 մլ. դեսյատին: Հետևաբար ցարական ընտանիքն ունեցել է հողի մի տարածություն, վոր հավասար է յեվրոպական միջակ պետության: Ցարի և նրա ազգականների համար ճրնշտել են հարյուր հազարավոր գյուղացիներ: Յերկիրն ահագին հարկեր եր վճարում, վորպեսզի պահի պալատական սպասավորների, ցարական պալատականների ամբողջ մասսան, ցարի պալատներն ու կալվածները: Ցարական պալատները պահելու վրա տարեկան 12 մլ. վոսկի ռուբլի յեր գնում:

Յերկրի ամբողջ աշխատավորական բնակչությունն ատում եր ցարին ու ցարական ինքնակալության ամբողջ ռեժիմը: Դա աշխատա-





**Գյուղացիության դրությունը մինչ հեղափոխությունը:**

*ԿԱԼՎԱԾԱՏԵՐԸ.—Ինչո՞ւ դու, գյուղացի, մի վոտքիդ վրա յես կանգնած:*

*ԳՅՈՒՂԱՑԻՆ.—Յերկրորդը դնելու տեղ չկա: Ամեն տեղ ձերդ վողորմածության հողն է: Վոտք դնես — կպատապարտեք փչացնելու համար:*

*(1917 թ. նկար)*

վոր մասսաների ամենադաժան իրավազրկության ու ճնշման ռեժիմ եր:

Բացի այն ահագին հարկերից, վոր յերկրի աշխատավորական ամբողջ մասսան եր վճարում ցարական կառավարության, գյուղացիությունը ահագին փող եր տալիս կալվածատերերին և՝ հողի վարձագնի, հողն արածացնելու վճարի և այլնի ձևով: Բացի դրանից կալվածատերերը շահագործում եյին գյուղացիներին, հարկադրելով նրանց իրենց պարտքերը ծածկել իրենց աշխատանքով ու ինվենտարով, չնչին գներով կալվածատերերին տալ իրենց հացը: Միանգամայն հասկանալի յե, վոր գյուղացիության ճնշող մասը թշվառ եր ու մերկ: Գյուղական բոլոր ծխերի մեկ յերրորդականը ձիազուրկ եր, մյուս յերրորդ մասը կազմում եյին միաձի գյուղացիները: Գյուղացիության մի փոքր վերնախավը միայն՝ կուլակներն ու հարուստները՝ ապրում եր լավ:

Կառավարության մեջ ու զանազան հիմնարկներում բոլոր խոշոր դիրքերն ազնվականներն եյին գրավում: Ուստի գյուղացիության պայքարն ընդդեմ կալվածատերերի պայքար եր և ընդդեմ ցարական կառավարության:

Ռուսաստանում XX դարի սկզբին բանվոր դասակարգն արդեն աճել եր և բավականաչափ մեծ ուժ դարձել, վորպեսզի կարողանար գլխավորել և կազմակերպել գյուղացիության պայքարն ընդդեմ կալվածատերերի ու ցարական իշխանության:

Այդ ժամանակ կապիտալիստական համաշխարհային տնտեսության մեջ տեղի եյին ունեցել խորը փոփոխություններ: Աճում եյին

մոնոպոլիաները, ընդարձակ չափերով ծավալվում եր պայքարը շուկաների համար, հասունանում եր կռիվը աշխարհի վերաբաժանման համար,— կապիտալիզմը մտավ զարգացման իմպերիալիստական փուլի մեջ։

Ռուսական կապիտալիզմը առանձնապես բարձր զարգացման հասավ իմպերիալիզմի հենց այդ դարաշրջանում։ Ռուսական կապիտալիզմն իր շահերը սերտագույն կերպով միահյուսեց յեվրոպական իմպերիալիզմի շահերի հետ։ Օտարերկրյա բանկերն իրենց կապիտալները մղեցին Ռուսաստան և թափանցեցին արդյունաբերության նավթային, ածխային, վոսկեհանական և այլ ճյուղերի մեջ։

Ռուսական կապիտալն օտարերկրյա կապիտալի հետ միասին գործում եր արդյունաբերության ու առևտրի շատ ճյուղերում։

Ռուսական իմպերիալիզմն այն ժամանակ հափշտակողական մեծ խոյանքներ ուներ դեպի Արևելք։ Ռուսական իմպերիալիզմի հենց այդ հափշտակողական քաղաքականությունը հասցրեց 1904 թ. ռուս-յապոնական պատերազմին։

Կապիտալիզմի աճման հետ միասին աճում եր նաև Ռուսաստանի բանվոր դասակարգը, ընդսմին նրա աճման տեմպն այդ ժամանակ ավելի բարձր եր, քան թե նույնիսկ բանվոր դասակարգի աճման տեմպն Ամերիկայում։ Բայց դրա փոխարեն ցարական Ռուսաստանում բանվորների իրավազրկությունը, տերերի կողմից բանվորների նկատմամբ կատարվող սղմումը, նրանց գազանային շահագործումը վոչ մի համեմատության մեջ լինել չեյին կարող Յեվրոպայի և Ամերիկայի բանվորների դրության հետ։ Բանվորները հալումաշ եյին լինում օրական 12, 14 և ավելի ժամ տևող աշխատանքից, ստանալով գրոշներ։ Տերերի և նրանց վերահսկիչների կամայականությունը զարհուրելի յեր։

Ամեն մի դատարկ բանի համար բանվորը տուգանվում եր, իսկ այն գրոշները, վոր նրան հասնում եյին ստացքի ժամանակ, բանվորը պարտավոր եր ծախսել ֆաբրիկային խանութում, վորտեղ փտած ապրանքի համար նրանից գզլում եյին ապրանքի յեռապատիկ գինը։

Այդ կամայականությունը, բանվորների շահագործումն ու ծանրագույն իրավազրկությունը յեռանդուն կերպով պաշտպանում եր ցարական կառավարությունը ու սատարում նրան։ Այդ ամենն ուժեղացնում եր հեղափոխական դժգոհությունը բանվորական մասսաների մեջ և բանվոր դասակարգը դարձնում ցարիզմի առանձնապես կատաղի և հետևողական թշնամի։ Մեր կուսակցությունը պարզաբանում եր բանվորներին, վոր այդ դրությունից յելքը միայն ինքնակալության հեղափոխական տապալման մեջ ե։ Բանվոր դասակարգն իր հեղափոխականությամբ ինքնակալության դեմ մղվող պայքարի



ուղին եր քաշում և քաղաքային մանր բուրժուազիային, և գյուղացիությունը։

Բանվոր դասակարգի հեղափոխականությունն, իհարկե, ավելի հեռու յեր գնում, քան թե ցարական ինքնակալության տապալումն ե։ Բանվոր դասակարգն իր առաջ նպատակ եր դրել կապիտալիզմի և ամեն մի շահագործման տապալումը։

Պրոլետարիատի հենց այդ հեղափոխական վճռականությունն ել վախեցնում եր բուրժուազիային, վորը թեև դժգոհ եր ցարական, կալվածատիրական, կիսաճորտատիրական ռեժիմից, բայց ել ավելի յեր վախենում պրոլետարիատի հեղափոխական աճող ուժից։ Կալվածատիրական-ազնվական դասակարգի տիրապետությունը խանգարում եր արդյունաբերության զարգացմանը։ Բուրժուազիան ինքն եր իշխանության ձգտում, ուստի և կողմնակից եր ցարական ռեժիմը փոխելուն։ Բայց նրան ուժեղ անհանգստություն եր պատճառում հեղափոխական ակտիվությունը բանվոր դասակարգի, վոր իր առջև նպատակ եր դնում վոչ միայն տապալել ցարիզմը, այլև ավելի հեռուն ծավալել պայքարը՝ կապիտալիզմի տապալման և պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի համար։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր զանազան դասակարգերի շահերի տարբերությունը և այդ դասակարգերի տարբեր վերաբերմունքը դեպի գալիք հեղափոխությունը խոր պայքար եյին առաջ բերում այդ դասակարգերի շահերը ներկայացնող ու պաշտպանող քաղաքական հոսանքների և կուսակցությունների միջև։ Այդ պայքարի մասին Լենինն ասում եր, վոր դա «ծրագրային ու տակտիկական հայացքների կատաղագույն պայքար» եր և վոր նրանով «կանխվում և նախապատրաստվում եր դասակարգերի գալիք բացահայտ պայքարը»։

Քաղաքական հոսանքների այդ պայքարում ջոկվում եյին յերեք գլխավորը՝ բուրժուականը, մանր-բուրժուականը և պրոլետարականը։

Բուրժուական կուսակցությունները յելնում եյին լիբերալիզմի, այսինքն բուրժուական կեղծ ազատասիրության դրոշակի տակ։ Այդ լիբերալ-բուրժուական կուսակցությունները հեղափոխական վերելքի սկզբից ևեթ պատրաստվում են իշխանության գլուխ կանգնելու։ Աճող հեղափոխության թափից վախենալով, նրանք գերադասում եյին ցարական իշխանության հետ գործարք, համաձայնություն կնքելու միջոցով զիջումներ կորզել ինքնակալությունից, վորպեսզի դրանով իսկ հեղափոխության առաջն առնեն։

Մանր բուրժուազիայի շահերը ներկայացնում էին մենշևիկներն ու այսպես կոչված սոցիալիստ-հեղափոխականները (էսէռները)։ Այդ յերկու կուսակցությունն էլ քողարկվում էին «սոցիալիստական» և «հեղափոխական» ցուցանակներով, բայց իրոք միայն փաստաբաններն, պաշտպաններն էին քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի։

Էսէռներն իրենց «գյուղացիական» կուսակցություն տեղ էին դնում, բայց իրոք ըստ իրենց կազմի նրանք բուրժուական և մանր բուրժուական ինտելիգենցիայի կուսակցություն էին, իսկ դասակարգային շահերով ու խնդիրներով նրանք կուլակային կուսակցություն էին։ Նրանք տարբերություն չէին դնում գյուղացիության շահագործվող չքավորագույն խավերի և գյուղական կապիտալիստների—կուլակների դասակարգի միջև։ Իսկ ըստ էության նրանք կուլակության շահերն էին պաշտպանում։ Նրանք մարքսիզմի հակառակորդներ էին և մերժում էին պրոլետարիատի ղեկավար դերը հեղափոխական շարժման մեջ։

Մենշևիկներն այն ժամանակ քաղաքային մանր բուրժուազիայի շահերն էին ներկայացնում, թեպետև զուգվում էին մարքսիստական հագուստներով և իրենց «բանվորական կուսակցություն» համարում։

Այն ժամանակ և՛ մենշևիկները, և՛ բոլշևիկները կոչվում էին սոցիալ-դեմոկրատներ։ Այն ժամանակ այդ անվանումը դեռևս անարգական չէր։ Բոլշևիկների և մենշևիկների պառակտումը տեղի ունեցավ 1903 թ. կուսակցության II համագումարում։ Այդ համագումարին նախորդեց սրագույն պայքար ռուսական մարքսիզմի ներսում հեղափոխական և օպորտունիստական թևերի միջև։ Դա պայքար էր այն օպորտունիստական հոսանքների դեմ, որը հայտնի յէ «էկոնոմիզմ» անվանումով։ Այդ հոսանքը բանվոր դասակարգի խնդիրները սահմանափակում էր միմիայն տնտեսական պայքարով, բանվորներին հեռու պահելով քաղաքական պայքարից։ Այդ հոսանքը բանվորին կարծես թե այսպիսի ուղի յէր հուշում։ «Պայքար մղիր աշխատավարձի լրացուցիչ հինգ կոպեկի համար, յեռման ջրի համար, բայց մի խոթվիր քաղաքականության մեջ,—դա, իբր թե, կրթված մարդկանց և բուրժուազիայի առաջավոր խավերի գործն է և ոչ թե բանվորների»։ «Էկոնոմիստները» կարծում էին, որ բանվոր դասակարգը շահագրգռված է միայն իր նյութական դրության բարելավման, բայց ոչ պետության քաղաքական կազմի փոփոխման ու սոցիալիզմի համար պայքարելու մեջ։

Նրանք չէին հասկանում, որ բանվորների դրության իրական բարելավման համար չկա այլ ուղի, բացի ցարական ինքնակալության տապալումից և կապիտալիստական շահագործման վոչնչացումից։ Այդ



նպատակին հասնելու համար բանվոր դասակարգը պետք է կազմակերպված լինի քաղաքականորեն, պետք է ունենա իր քաղաքական կուսակցությունը։ Այնինչ «էկոնոմիստները» հակառակ էին պրոլետարիատի քաղաքական վորևէ կազմակերպության, նրանք կողմնակից էին շարժման տարերային զարգացման, բանվորական շարժման մեջ ինքնահոսի գաղափարների կրողներն էին։ Լենինն ու «Իսկրան» կատաղի պայքար էին մղում տարերայնության այդ թեորիայի դեմ, նրան հակադրելով պրոլետարական կուսակցության ղեկավարությամբ ինքնակալության ու բուրժուազիայի դեմ գիտակցականորեն ու կազմակերպված պայքար մղելու պրոլետարական թեորիան։

Բայց քանի վոր «էկոնոմիստները» դեմ էին քաղաքական պայքարի, ապա նրանք հանդես էին գալիս նաև կուսակցություն կազմելու դեմ։ Իսկ Լենինն ամենից բարձր և ամենից առաջ դնում էր բանվոր դասակարգի կուսակցությունը կառուցելու խնդիրը։

Լենինի պայքարն ընդդեմ էկոնոմիզմի ահագին նշանակություն ունեցավ մենշևիկների և այլ օպորտունիստների (լիկվիդատորներ, ոչ թեքում) դեմ ուղղված հետագա ամբողջ պայքարի համար, վորովհետև նրանք հանդես էին գալիս վորպես տարերայնության, ինքնահոսի քարոզիչներ և կազմակերպության, կուսակցականության բոլշևիկյան սկզբունքների հակառակորդներ։

Բոլշևիկների և մենշևիկների մեջ պառակտումն անխուսափելի յէր 1903 թ., վորովհետև իրոք պայքար էր մղվում այն հարցի շուրջը, թե մանրադյոք պրոլետարակա՞ն պետք է լինի կուսակցությունը, թե մանրբուրժուական։ Բոլշևիկների և մենշևիկների տարաձայնություններն ընդգրկում էին կուսակցության քաղաքականության բոլոր հիմնական հարցերը։ Դա պայքար էր հեղափոխական պրոլետարիատի քաղաքականության և մանր բուրժուազիայի քաղաքականության միջև։

Տարաձայնություններն առանձին սրությամբ հասան կուսակցության կանոնադրության առաջին կետի քննության ժամանակ։

Այդ կետը վորոշում էր, թե ով կարող է համարվել կուսակցության անդամ։ Մենշևիկների առաջնորդ Մարտովը պահանջում էր, վոր կուսակցության անդամ համարվի ամեն վոք, ով ստորագրում է նրան փողային մուծումներով, համաձայն է կուսակցության ծրագրին ու աջակցություն է ցույց տալիս կուսակցությանը։ Լենինը պնդում էր այն բանի վրա, վոր կուսակցության անդամ համարեն նրան միայն, ով ընդունում է նրա ծրագիրը, մուծում փողային մուծումներ և անձամբ մասնակցում կուսակցական կազմակերպություններից մեկի աշխատանքին։

Ի՞նչն է այս տարաձայնության իմաստը։

Այժմ յուրաքանչյուր կուսակցականի, յուրաքանչյուր թեկնածուի, յուրաքանչյուր կոմյերիտականի և անդամ պիոների համար պարզ է,

վոր չի կարող լինել կուսակցության անդամ, վորը չմտնի բջիջի մեջ ու չկատարի կուսակցական աշխատանք։ Բայց այն ժամանակ, յերեսուն տարի առաջ, յերբ կուսակցությունը դեռ նոր եր կազմավորվում, Լենինն ստիպված եր պայքար մղել կազմակերպման այդ ձևի ճանաչման համար։

Նա մեկեն հանդես յեկավ ճշտորոշ և պարզ ծրագրով այն մասին, թե ինչպես պետք է կառուցված լինի մի կուսակցություն, վոր կամենում է քաղաքականորեն ղեկավարել բանվոր դասակարգը։

Լենինն այն պատճառով դուրս յեկավ Մարտովի դեմ, վոր գիտակցում եր, թե կուսակցական կազմակերպությունից դուրս չի կարող լինել կուսակցության անդամ։ Այդպիսի կուսակցության մեջ չի կարող լինել կարգապահություն, նրա մեջ չի կարող լինել կենտրոնացված ղեկավարություն, չի կարող լինել միասնականություն։

Բայց Մարտովն ու իր համախոհները վախենում եյին հենց դրանից՝ կենտրոնացված ղեկավարությունից և կարգապահությունից։ Նրանք կարծում եյին, վոր կուսակցությունը պետք է լայն բաց անի դռները բուրժուական և մանր-բուրժուական ինտելիգենցիայի համար։ Ուստի և նրանք պնդում եյին այն բանի վրա, վոր կուսակցության յուրաքանչյուր անդամ չկաշկանդվի տեղական կազմակերպության ցուցումով՝ կուսակցական աշխատանքին պարտադիր կերպով մասնակցելու պահանջով։ Նրանք յերկյուղ եյին կրում, վոր յեթե ընդունվի Լենինի առաջարկը, ապա դա կվանի պրոֆեսորներին, ադաների զավակներին, փաստաբաններին, վորոնք մարքսիզմին համակրում են, բայց չեն կամենում կաշկանդել իրենց վորևե կարգապահությամբ։

Իսկ Լենինը վոչ թե պրոֆեսորների մասին եր մտածում, այլ բանվորների, վորոնց նա կամենում եր միավորել կուսակցության մեջ։

Այսպիսով կանոնադրության առաջին կետին վերաբերող վեճն արդեն մեկեն վորոշեց յերկու տարբեր մերձեցում դեպի կուսակցությունը։ Լենինյան մերձեցումը նշանակում եր նոր տիպի այնպիսի կուսակցության ստեղծում, վորը կառուցվում է հեղափոխական թեորիայի և պրակտիկայի միասնականության հիմքի վրա՝ պրոլետարական ամուր կարգապահությամբ, ըստ կազմի բանվորական մի կուսակցության, վորն իր առաջ նպատակ եր դնում ցարիզմի հեղափոխական տապալումը, կապիտալիստական շահագործման վոչնչացումն ու սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցումը։ Մարտովյան մերձեցումը նշանակում եր կուսակցության ստեղծումն II Ինտերնացիոնալի ոպորտունիստական կուսակցությունների կերպարանքով ու նմանությամբ, վորպիսի կուսակցություններին հատուկ է թեորիայի և պրակտիկայի ներհակությունը,— մի կուսակցություն, վոր չունի կազմակերպական ամուր վողնաշար, փխրուն կազմակերպություն մանր-բուրժուական ինտելիգենտների, վորոնք նպատակ ունեն համաձայնու-



թյունը բուրժուազիայի հետ, այսինքն պրոլետարական հեղափոխության բացասումն։

Հեղափոխական վրա հասնող դեպքերի առաջ մեկեն բացահայտվեց ամբողջ խորագույն տարբերությունը պրոլետարիատի կուսակցության խնդիրների այս յերկու ըմբռնումների միջև։ Չկար վոչ մի քաղաքական հարց, վոր տարաձայնություն չհարուցեր բոլշևիկների և մենշևիկների միջև։ Դա յերկու տարբեր մերձեցումներ եյին դեպի բանվոր դասակարգի խնդիրները վրա հասնող հեղափոխության մեջ՝ բոլշևիկների կողմից պաշտպանվող պրոլետարական մերձեցումը և մենշևիկների պաշտպանած մանր-բուրժուականը։

II համագումարում կուսակցության կենտրոնական որգանների ընտրությունների ժամանակ Լենինը մեծամասնություն ստացավ, իսկ Մարտովը մնաց փոքրամասնության մեջ։ Այստեղից էլ ծագեցին «բոլշևիկներ» (մեծամասնականներ) և «մենշևիկներ» (փոքրամասնականներ) անվանումները։

Սկզբից ևեթ, II համագումարի ժամանակից, բոլշևիզմն ու մենշևիզմը վոչ միայն յերկու տարբեր հոսանքներ եյին, այլ փաստորեն յերկու ինքնուրույն կուսակցություններ։

Քաղաքական տարամիտումների և կազմակերպական պառակտման խստությունն ամենից լավ յերևում է նրանից, վոր հեղափոխության տաժան պարագաներում մենշևիկները կուսակցության III համագումար (1905թ. մայիսին) չեկան, այլ առանձին հրավիրեցին իրենց կոնֆերենցիան, վորն իր վճիռները հակադրեց III համագումարի բոլշևիկյան վճիռներին։

Բոլշևիկների այս բոլոր վիճաբանությունների մեջ, վոր տեղի եյին ունենում մենշևիկների և եսերների հետ, հիմնական հարցն այն եր, թե վորպիսի տակտիկա պետք է գործադրել գալիք հեղափոխության մեջ, վո՞ր դասակարգը պետք է ղեկավար ուժ լինի հեղափոխության մեջ։

Մենշևիկները և նրանց հետ միասին եսերները կարծում եյին, վոր կատարվելիք հեղափոխությունը պետք է տանի դեպի այնպիսի բուրժուական կարգի գոյացումը, վորպիսին գոյություն ունի յեվրոպական կապիտալիստական յերկրներում, որինակ, Ֆրանսիայում։ Ուստի մենշևիկների և եսերների կարծիքով, Ռուսաստանում հեղափոխությունից հետո իշխանության գլուխ պետք է կանգներ կապիտալիստների դասակարգը։ Մենշևիկներն ու եսերները յերազում եյին բուրժուական պարլամենտ ստեղծելու և բուրժուազիայի հետ հետագայում խաղաղ կերպով աշխատակցելու — ամենաշատը՝ պարլամենտում ոպոզիցիա խաղալու մասին։

Բոլշևիկները բոլորովին այլ կերպ եյին գնահատում հեղափոխության դրությունն ու խնդիրները։ Հեղափոխության մերձավորագույն

խնդիրն, ասում եյին բոլշևիկները, ցարական ինքնակալության տապալումն ու պրոլետարիատի յեվ գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի հաստատումն ե։

Խելամուտ լինենք, թե ինչ ե նշանակում այդ։

Հեղափոխությունը պետք ե ուղղված լիներ ինքնակալության և ճորտատիրության մնացորդների դեմ, այսինքն դաժանագույն կաշկանդման այն կարգի դեմ, վոր գյուղացիների համար ստեղծել եյին կալվածատերերը,—ընդդեմ այն կարգի, վոր ստեղծել եր, մի կողմից աշխատավոր մասսաների մեծագույն իրավազրկությունը, իսկ մյուս կողմից, «բարձրագույն» դասակարգերի՝ ազնվականության, արիստոկրատիայի, ցարական բյուրոկրատիայի և հոգևորականության ահագին արտոնություններն ու առավելությունները,—ցարի և ցարական ժանդարմների անսահմանափակ գազանային իշխանության ու բանվորական և գյուղացիական մասսաների ճնշման ու կեղեքման կարգի դեմ,—ընդդեմ այն կարգի, վորի որով վելիկոռուսական ազգի տիրապետող դասակարգերը ճնշում եյին Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդներին։

Այնպիսի հեղափոխությունը, վորը տանում ե դեպի միապետության (ինքնակալության) տապալումը, դեպի կալվածատերերի իշխանության տապալումն ու ճորտատիրության մնացորդների վոչնչացումը, կոչվում ե բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն։

Ինչ դասակարգեր եյին Ռուսաստանում շահագրգռված բուրժուական-դեմոկրատական հեղափոխությամբ։ Նախ և առաջ բանվոր դասակարգը։ Կալվածատիրական-ճորտատիրական գերիշխանության ռեժիմը պրոլետարիատի քաղաքական ու տնտեսական դաժանագույն ճնշման ռեժիմ եր։

Ուստի բանվոր դասակարգն առանձնապես շահագրգռված եր այդ ռեժիմի տապալմամբ։ Սակայն ցարական ինքնակալության տապալումը պրոլետարիատի մերձավորագույն, բայց անցողիկ խնդիրն եր։ Նրա գլխավոր խնդիրը կապիտալիստական կարգի տապալումն եր, պրոլետարական դիկտատուրայի հաստատումը և հետագա պայքարը կոմունիզմի լիակատար հաղթանակի համար։ Կոմունիզմը բանվոր դասակարգի վախճանական նպատակն ե։ Մեր յերկիրը գյուղացիական մասսայի գերակշռություն ունեցող յերկիր եր։ Ամենաարագ կերպով կոմունիզմին հասնելու համար բանվոր դասակարգը շահագրգռված եր ստեղծելու մի կարգ, վորը թույլ տար նրան հաջողությամբ կազմակերպել նրա ուժերը, իր շուրջը միախմբել գյուղացիության լայն մասսաներին ու պայքար սկսել պրոլետարական դիկտատուրայի և սոցիալիզմի համար։

Բուրժուական-դեմոկրատական հեղափոխությամբ շահագրգռված եր և գյուղացիությունը, վորը խիստ տառապում եր կալվածա-



տիրական շահագործումից և ձգտում ազատվելու նրանից։ Իսկ կալվածատիրական շահագործումից ազատվել կարելի յեր միայն ազնվական-կալվածատիրական իշխանությունը տապալելով։ Գյուղացիությունը տեսնում եր, վոր բանվոր դասակարգը միակ ուժն եր, վորը մինչև վերջը գնում եր կալվածատիրական լծի տապալման համար մղվող պայքարում, ուստի և նա բանվոր դասակարգի հետևից եր գնում ինքնակալության դեմ ուղղված իր հեղափոխական պայքարի մեջ։

Վորչափով վոր խոսքը կալվածատերերի իշխանության տապալման մասին եր, հեղափոխությամբ շահագրգռված եր մասամբ բուրժուազիան ել, վորի համար կարևոր եր քաղաքական իշխանությունը վերցնել իր ձեռքը և պայմաններ ստեղծել կապիտալիզմի արագ զարգացման համար։ Սակայն ռուսական բուրժուազիան ամենասերտ կերպով կապված եր կալվածատերերի դասակարգի և ցարական կառավարության հետ, ուներ կալվածներ ու կառավարությունից ստանում եր պետական պատվերներ։

Ռուսական բուրժուազիան վախենում եր հեղափոխական շրջումից, ուստի և Լենինն արդեն 1905թ. բուրժուազիային բնորոշում եր, վորպես հակահեղափոխական ուժ։

Հետևաբար բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիրը մինչև վերջը լուծել կարող եր միմիայն բանվոր դասակարգը, դաշնակից ունենալով գյուղացիությունը։ Բանվոր դասակարգի խնդիրն այն եր, վոր, ինքնակալությունը տապալելով, հաստատի պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա։

## ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆԻ

Բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան պետք ե վերջ տար ճորտատիրության բոլոր մնացորդներին ու սկիզբը դներ այն վերաճման, վոր պետք ե ունենար բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը պրոլետարական-սոցիալիստականի վերածվելով։ Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան հեղափոխական պայքարի վերջը չե,—նա ունի միայն փոխանցական, նախապատրաստական նշանակություն սոցիալիզմի համար մղելիք պայքարի տեսակետից։ Լենինը Մարքսի և Ենգելսի ուսմունքի հիման վրա յե կառուցել՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության—սոցիալիստականի վերաճելու իր թեորիան։

Լենինն ասում եր, վոր հեղափոխական-դեմոկրատական դիկտա-

տուրան նշանակում է վոչ թե կարգ-կանոնի, այլ պատերազմի կազմակերպում, այսինքն հետագա պայքարի զարգացումն մասնավոր սեփականության վոչնչացման համար, շահագործողական դասակարգերի տապալման, շահագործման վոչնչացման, պրոլետարական դիկտատուրայի հաստատման համար, սոցիալիզմի համար:

> «Մենք մեր բոլոր ուժերով կօգնենք ամբողջ գյուղացիությանը դեմոկրատական հեղափոխություն կատարելու, վորպեսզի ավելի հեշտ լինի մեզ համար, պրոլետարիատի կուսակցության համար՝ վորքան կարելի յե շուտ անցնել նոր ու բարձրագույն խնդրին—սոցիալիստական հեղափոխության», «...դեմոկրատական հեղափոխությունից,—գրում եր Լենինը 1905 թ.—մենք իսկույն ևեթ կսկսենք անցնել և մեր ուժի, գիտակից և կազմակերպված պրոլետարիատի ուժի ներածին չափ հենց կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխության»:

Իսկ մենշևիկները, ինչպես ասացինք, ժխտում եյին բուրժուական-դեմոկրատական հեղափոխության—սոցիալիստականի վերաճելու գաղափարն անգամ: Նրանք կարծում եյին, վոր հեղափոխությունը պետք է լինի բուրժուական և այդ սահմաններում հեղափոխությունը վերջանում է: Իսկ քանի վոր այդպես է, ապա նրա մեջ գլխավոր շարժիչ ուժը պետք է լինի բուրժուազիան: Լիբերալ բուրժուազիան պետք է գլխավորի հեղափոխությունը, իսկ բանվոր դասակարգը պետք է սատարի նրան, երի: Բանվոր դասակարգը պետք է նրա հետ միասին գործի և չվախեցնի նրան իր հեղափոխականությամբ ու ակտիվությամբ:

Բոլշևիկներն, իհարկե, մերժում եյին հեղափոխության այս մենշևիկյան ծրագիրը: Բոլշևիկները 1905 թ. հեղափոխությունը դիտում եյին վորպես իր մերձավորագույն նպատակով բուրժուական-դեմոկրատական, բայց ըստ իր մեթոդների (իրագործման յեղանակների)՝ պրոլետարական հեղափոխություն: Նրանք ասում եյին, վոր հեղափոխության ղեկի մոտ պետք է բանվոր դասակարգը կանգնած լինի: Բանվոր դասակարգի համար բոլշևիկները դաշնակից տեսնում եյին վոչ թե բուրժուազիայի մեջ, այլ գյուղացիության:

Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան նշանակում եր պրոլետարիատի դաշինքը գյուղացիության ամբողջ մասսայի հետ, վորչափով նա ամբողջը շահագրգռված է կալվածատիրական լծի վոչնչացմամբ: Բայց գյուղացիությունը, ինչպես գիտենք, նույնասեռ չե՝ նրա մեջ կա չքավորություն, կան միջակներ, կա կուլակություն:

Բուրժուական-դեմոկրատական հեղափոխության — պրոլետարական-սոցիալիստականի վերաճելու ընթացքում բանվոր դասակարգի պայքարին լիովին սատարում է արդեն գյուղացիության վոչ ամբողջ մասսան, այլ միայն գյուղական չքավորությունը: Կուլակությունն անց-



նում է հակահեղափոխության կողմը: Միջակային մասսան սպասում է պայքարի արդյունքին: Միջակ գյուղացին միևնույն ժամանակ՝ համ սեփականատեր է, համ աշխատավոր: Նա կանգնած է ճամպարաժանում՝ արդյոք իրեն ավելի մոտ է խոշոր սեփականատերերի դասակարգի— բուրժուազիայի ուղին, թե ավելի ձեռնտու պրոլետարիատի և գյուղացիական չքավորության հետ ընթանալը: Վորովհետև պրոլետարական դիկտատուրայի համար մղվող պայքարի ընթացքում միջակները պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, ապա բանտատանվում են պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, ապա բանվոր դասակարգը շահագրգռված է, վորպեսզի միջակ գյուղացիությունը գոնե նրա դեմ չպայքարի կամ—ինչպես ասում են այլապես—վորպեսզի նա մեզ չեզոք: Պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո, յերբ միջին գյուղացիությունը պրոլետարիատի և նրա կուսակցության կողմից գործադրվող ճիշտ ղեկավարության հետևանքով համոզվում է պրոլետարական դիկտատուրայի առավելություններին, դառնում է պրոլետարիատի հեղափոխության կողմը, դառնում է պրոլետարիատի դաշնակիցը:

Իսկ մենշևիկները ժխտում եյին ամեն մի միտք այն մասին, թե բանվոր դասակարգը գյուղացիությունը կազմակերպելու, նրան ղեկավարելու ընդունակ ուժ է հանդիսանում, նրանք բացասում եյին գյուղացիության վորևե հեղափոխական նշանակությունը: Մենշևիկները պնդում եյին, թե գյուղացիությունը միայն խանգարել կարող է և վոչ թե օգնել հեղափոխության: Գյուղացիության մեջ նրանք տեսնում եյին բանվոր դասակարգի հակառակորդին և վոչ թե նրա դաշնակցին: Նրանք համառացնում եյին, վոր գյուղացիությունը հանդիսանում է ռեակցիոն, արգելակող ուժ: Իսկ լիբերալ բուրժուազիային, ընդհակառակը, նրանք համարում եյին առաջադիմական, հեղափոխական ուժ:

Մենշևիկներն ապացուցում եյին, վոր հեղափոխության գլխավոր խնդիրը բուրժուազիայի՝ իշխանության գլուխ կանգնելու ապահովումն է, վորից հետո հեղափոխությունը վերջանում է: Դրանում և կայանում եր, մենշևիկների կարծիքով, բուրժուական-դեմոկրատական հեղափոխության խնդիրը:

Ռուսական մենշևիկները բացառություն չեյին ամբողջ աշխարհի ագավառապորտունիստների մեջ: Նրանք բոլորն ել անխնա կերպով աղավաղում եյին Մարքսի ուսմունքը: Լենինը գրում եր, վոր ամբողջ աշխարհի ոպորտունիստները չեն ըմբռնում

> «... բուրժուական-դեմոկրատական և պրոլետարական-սոցիալիստական հեղափոխությունների հարաբերակցությունը: Առաջինը վերաճում է յերկրորդին: Յերկրորդը միջանկյալ կերպով առաջինը լուծում է առաջինի հարցերը: Յերկրորդն ամրապնդում է առաջինի

գործը։ Պայքարը և միայն պայքարն է վճռում, թե վորչափով է յերկրորդին հաջողվում գերաճել առաջինից»։

Հեղափոխության հաղթանակը և պրոլետարիատի ու գյուղացիության դեմոկրատական դիկտատուրային հասնելը հնարավոր եյին, ինչպես մենք նշել ենք արդեն, միայն զինված ապստամբության հետևանքով։ Ցարական իշխանությունն իր տրամադրության տակ ուներ վոստիկանության, ժանդարմերիայի և զինվորականության ահագին ապարատը։ Բանվորների և գյուղացիների դժգոհության ամեն մի արտահայտություն դաժանորեն ճնշվում եր գնդակահարումներով, կազակային մտրակներով, ծանակոծություններով, ձերբակալություններով, տաժանակիր աշխատանքներով։ Ցարիզմի այդ արյունոտ, ագահ ու դաժան իշխանությունը տապալել կարելի յեր միայն զինված ապստամբությամբ։ Ուստի բոլշևիկները կողմնակից եյին, վոր բանվոր դասակարգն ու գյուղացիությունը նախապատրաստվեն զինված հեղաշրջման։ Նրանք ստեղծում եյին բանվորական մարտախմբեր, բանվորական մասսաներին նախապատրաստում հանդես գալու զենքը ձեռքներին։ Մենշևիկները զինված ապստամբության հակառակորդներ եյին։ Նրանք հույս եյին հայտնում, վոր բանը կարող է «անարյուն» գլուխ գալ, վոր իբր թե բավական կլինեն հասարակ սպառնալիքները, միայն ագիտացիան բանակի մեջ և զինվորների հակվելը հեղափոխության կողմը, վորպեսզի ցարական կառավարությունն ինքը իր կամքով իշխանությունը տա բուրժուազիային։

Այդ վիճաբանությունների մեջ հատուկ դեր եր գրավում Տրոցկին։ Լինելով մենշևիկ, նա առանձին ջանքով եր կեղտ թափում բոլշևիկների և Լենինի վրա։ II համագումարից հետո Տրոցկին խենթական պայքար եր մղում լենինիզմի դեմ, մենշևիկյան հայացքների ամբողջ սիստեմ մշակելով կուսակցության դերի մասին։ Հայացքների այդ սիստեմը օպորտունիստների հետագա՝ բոլշևիկյան կուսակցության դեմ ուղղված ամբողջ պայքարի հիմքը դարձավ։

1905 թվականի հեղափոխության հարցում Տրոցկին հանդես յեկավ հատուկ թեորիայով, վոր արտաքուստ շատ «հեղափոխական» եր թվում, իսկ ըստ եյության զտազուտ մենշևիզմ եր։ Տրոցկին ապացուցում եր, վոր բանվոր դասակարգն իր դասակարգային թշնամիների թվում կալվածատերերի և բուրժուազիայի կողքին կունենա նաև գյուղացիությունը։ Նա գյուղացիության մեջ տեսնում եր միապաղաղ հակահեղափոխական ուժ։

Տրոցկու հատուկ թեորիան նրանում եր կայանում, վոր 1905 թ. հեղափոխությունն իբրև թե պետք է ուղղակի իշխանության հասցըներ բանվոր դասակարգին առանց գյուղացիության մասնակցության ու օգնության։ Տրոցկու այս վերաբերմունքը դեպի գյուղացիությունը բղխում եր նրանից, վոր Տրոցկին բացասում եր Ռուսաստանի բան-



վոր դասակարգի ընդունակությունն՝ իր հետևից տանելու գյուղացիությունն ու նրան դարձնելու հեղափոխական ուժ։ Դա բոլոր մենշևիկների ընդհանուր հայացքն եր։ Տրոցկին միայն արտահայտեց հատուկ ձևով այդ մենշևիկյան հայացքը, քողարկելով, ինչպես և բոլոր հետագա տարիներում, «ձախ» ֆրազով։

Տրոցկին այդ հայացքը շարադրել է այսպես կոչված «պերմանենտ»[1]) հեղափոխության թեորիայի մեջ։ Այդ թեորիան հիմքում ազավաղում եր մարքսյան ուսմունքը հեղափոխության մասին։ Այդ թեորիան կայանում եր նրանում, վոր բանվոր դասակարգը պետք է առանց դաշնակիցների, մենակ անցներ իշխանության գլուխ ցարիզմի տապալումից անմիջապես հետո։ Տրոցկու լոզունգն եր. «առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական»։ Ընդսմին նա նշում եր, վոր հիմք չկա կարծելու, թե պրոլետարիատը կպահի իշխանությունը, յեթե միջազգային հեղափոխությունը չսատարի Ռուսաստանի բանվոր դասակարգին ընդդեմ կալվածատերերի, կապիտալիստների և գյուղացիության։

Բայց վորովհետև վոչ վոք չեր կարող բանվորներին յերաշխիք տալ, թե անհապաղ տեղի կունենա համաշխարհային հեղափոխությունը, ապա ուրեմն ինչ յեզրակացություն եր ստացվում այստեղից։ Միայն այն, վոր մինչև չլինի այդպիսի յերաշխիք, անօգուտ է և անիմաստ հեղափոխություն կատարելը։ Դուրս է գալիս, վոր Տրոցկու յերևութական «հեղափոխական»—«առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական» լոզունգի հետևում իրոք թաքնված եր հրաժարումն հեղափոխությունից։

Մինչդեռ մենք գիտենք արդեն, վոր 1905 թ. ցարիզմի և ճորտատիրության դեմ ուղղված հեղափոխության հիմնական ուժերը բանվոր դասակարգն ու գյուղացիությունն եյին։ Ուստի բոլշևիկները խիստ յելնում եյին Տրոցկու թեորիայի դեմ, պայքարելով այդ դասակարգերի հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի համար, վոր պետք է լիներ բանվոր դասակարգի ղեկավարությամբ։

Բոլշևիկներն ապացուցում եյին, թե հետաձգել հեղափոխությունը, սպասելով մինչև վոր արևմտա-յեվրոպական պրոլետարիատն ապահովի «պետական սատարումը» ռուսական հեղափոխությանը, չի կարելի,—դա թերահավատություն է Ռուսաստանի բանվոր դասակարգի ուժերի նկատմամբ։ Լենինը նշում եր, վոր ռուսական հեղափոխությունն ինքը պետք է սկսի բորբոքել համաշխարհային հեղափոխությունը։ Պետք է նկատի ունենալ, վոր 1905 թ. հեղափոխությունը տեղի ուներ այնպիսի պարագաներում, յերբ կապիտալիզմն արդեն իր բարձրագույն աստիճանին եր հասել—իմպերիալիզմի աստիճանին։

1) Պերմանենտ—անընդհատ։

Լենինը գրում էր, որ ռուսական հեղափոխությունը պետք է «հրդեհի Եվրոպան» միջազգային հեղափոխության կրակով և որ Ռուսաստանի բանվոր դասակարգը պետք է

«... չսպասի, մինչև Եվրոպան ինքը հրդեհվի, չսպասի մինչև եվրոպական պրոլետարիատն իր ձեռքն առնի իշխանու-նըն ու օգնության գա մեզ»:

Լենինն այնուհետև նշում էր, որ կուսակցության լոզունգները պետք է նկատի ունենան «ոչ միայն հեղափոխությունը Եվրոպա տեղափոխվելու դեպքը, այլև այդպիսի տեղափոխման համար կատարելիք աշխատանքը»:

Բացասելով բանվոր դասակարգի ընդունակությունն իր հետևից դեպի հեղափոխական ուղին առաջնորդելու նաև գյուղացիությունը, Տրոցկին այդ կապակցությամբ բացասում էր նույնպես Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթն ու մեր երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը:

Այսպիսով և մենշևիկները, և Տրոցկին գյուղացիության մեջ տեսնում էին մի ուժ, որ գործում է ոչ թե հեղափոխության օգտին, այլ նրա դեմ, բացասում էին պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան ու նրա վերաճումը սոցիալիստական հեղափոխության:

Հետևաբար բոլշևիկները 1905 թ. պետք է պայքար մղեին երկու ճակատի գծով՝ իշխանությունը լիովին բուրժուազիային հանձնելու կոչ անող մենշևիկների բացահայտ օպորտունիզմի դեմ և ընդդեմ Տրոցկու կեղծ, «ձախ» թեորիաների, այն Տրոցկու, որը շաղակրատում էր բանվոր դասակարգի իշխանության կազմակերպության մասին առանց գյուղացիության մասնակցության, իսկ իրոք հրաժարվում էր հեղափոխությունից, մերժում էր պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ և գյուղացիությունը պրոլետարիատով ղեկավարելու գաղափարը:

## 2. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

### ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԻՑ ԴԵՊԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1905 թ. հեղափոխությունը հնարավորություն տվեց բոլոր դասակարգերին գործով ստուգելու իրենց հայացքների և թեորիաների ճշտությունը: Բոլոր վեճերը բոլշևիկների և մենշևիկների միջև իրենց լուծումն ստացան հեղափոխական դեպքերի ընթացքի մեջ: Բոլոր դասակարգերը հարստացրին պայքարի իրենց փորձը: Այդ ժամանակաշրջանի մասին Լենինն ասել է.



«Այդ ժամանակաշրջանի յուրաքանչյուր ամիսը քաղաքական գիտության հիմունքները՝ և մասսաների, և առաջնորդների, և դասակարգերի, և կուսակցության կողմից սովորելու իմաստով՝ հավասար էր «սահմանադրական» «խաղաղ» զարգացման մեկ տարվան»:

Հեղափոխության առաջին ալիքն անցավ երկրովը մին 1905 թ. հունվարի 9-ի դեպքերի կապակցությամբ: Այդ օրը Պիտերի բանվորներն իրենց կանանց և երեխաների հետ միասին խաչվառները և ցարական դիմանկարները ձեռներին ուղևորվեցին դեպի Ձմեռային պալատ, որպեսզի ցարին ներկայացնեն իրենց խնդիրը բանվորների դրության բարելավման մասին: Այդ երթը կազմակերպել էր ցարական պահպանական բաժանմունքի գործակալ Գապոն քահանան:

Վախենալով մասսաների արագ աճող հեղափոխականությունից, ցարական կառավարությունն այդ ժամանակ ուժգնապես աշխատում էր իր փոստիկանական կազմակերպություններն արմատացնել բանվորների մեջ, որպեսզի նրանց հեռու պահի պրոլետարիատի իսկական հեղափոխական կազմակերպություններից: Պետք է նշել, որ ցարին ուղղած իրենց խնդրի մեջ բանվորները մտցրել են նաև մի շարք պահանջներ, որոնք վերցված էին բոլշևիկյան կուսակցության ծրագրից: Գապոնն ստիպված էր համաձայնել դրան, որովհետև մեր կուսակցության ծրագիրն այն ժամանակ արդեն բավականաչափ լավ հայտնի էր բանվորական մասսաներին: Խնդիրը կազմված էր «հավատարմահպատակ» արտահայտություններով և սկսվում էր այսպես. «Մենք, Պետերբուրգ քաղաքի բանվորներս, մեր կանայք, երեխաներն ու անօգնական ծերուկ ծնողները, եկել ենք քո մոտ, տեր, արդարություն և պաշտպանություն փնտրելու»:

Բայց Ձմեռային պալատի մոտ բանվորներին դիմավորեցին ցարական պահնորդազորի համազարկերը:

Սպանվեցին ավելի քան հազար մարդ, էլ ավելի՝ վիրավորվեցին: Խաղաղ ցույցի այդ գնդակահարումն սպանեց հավատը դեպի ցարը և բանվորների բոլոր ցնորքները նրանց դրությունը խաղաղ ճանապարհով, առանց հեղափոխության բարելավելու հնարավորության նկատմամբ: Հունվարի 9-ի դեպքերն ամբողջ երկրովը մին առաջ բերին բանվորների և աշխատավոր մասսաների վրդովմունքի աճում ու խիստ մեծացրին հեղափոխական շարժումը և քաղաքում, և գյուղում:

Քաղաքներում տեղի էին ունենում մասսայական գործադուլներ, ցույցեր և ընդհարումներ ոստիկանության ու զորքերի հետ: Տնտեսական գործադուլները վերաճում էին քաղաքական գործադուլի, վերաճում էին ապստամբությունների: Քաղաքի շարժումը միահյուսվում էր գյուղացիների հեղափոխական ելույթների հետ, որ տեղի էին ունենում գյուղում: Հեղափոխական շարժումը լայն թափ ընդունում

նեց ազգային ծայրագավառներում, մանավանդ Լեհաստանում, Լիտվայում, Լատվիայում, Ֆինլանդիայում և Կովկասում։ Բոլշևիկյան կուսակցության հեղափոխական աշխատանքի, քաղաքում և գյուղում տեղի ունեցած ընդհանուր վերելքի ազդեցության տակ հեղափոխական խմորում սկսվեց նաև զորքերի մեջ։

1905 թ. հեղափոխությունը հասավ ամենամեծ վերելքին, յերբ բռնկեց ընդհանրական քաղաքական գործադուլը, վոր դեկտեմբերին Մոսկվայում վերաճեց զինված ապստամբության։ Շրջաններում կազմակերպվեցին բանվորական մարտախմբեր։ Բանվորները բոլոր միջոցներով ձեռք եյին բերում զենք, իրենք շինում դաշույններ և ատրճանակներ։ Զորքերից լուրեր եյին գալիս, վոր զինվորները չեն կրակի բանվորների վրա։ Այն զինվորական մասերը, վորոնք պատրաստվում եյին բանվորների կողմն անցնելու, զինաթափ եյին արվում ցարական իշխանությունների կողմից։ Շուտով բարիկադներ յերևացին։ Զինված բանվորները գրավեցին կայարանները, սկսեցին կրակել վոստիկանների վրա, վոստիկանությունը թաքնվեց։ Նահանգապետ Դուբասովը պահվեց Կրեմլում։ Մոսկվան ընդարմացավ, շարժումը դադարեց փողոցներում։ Գործարաններն ու յերկաթուղիները կանգ առան, և միայն Նիկոլայևյան ճանապարհն եր աշխատում։ Նա Մոսկվա հասցրեց Սեմյոնովյան գնդի հարբած զինվորներին, վորոնք գազանաբար ճնշեցին ապստամբությունը թնդանոթներով և գնդացիրներով, հեղեղեցին Մոսկվայի փողոցները արյունով։

1905 թ. հեղափոխության մեջ ղեկավար դիրք եր գրավում բանվոր դասակարգը։ Բուրժուազիան յերկյուղով եր հետևում բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաներն ընդգրկած հեղափոխական վերելքի աճումը։ Գործադուլների և գյուղացիական ապստամբությունների հզոր ալիքը, բանվորների հասունացող զինված ապստամբությունները քաղաքներում և մանավանդ Մոսկվայում բռնկած ապստամբությունը վերջնականապես բուրժուազիային նետեցին հակահեղափոխության բանակը։ Բուրժուազիան, ինչպես բոլշևիկներն եյին գուշակում, յերես դարձրեց հեղափոխությունից, ամբողջովին անցավ ինքնակալության կողմը, հակահարձակում սկսեց հեղափոխության դեմ։

Պրոլետարիատի հեղափոխական ամենամեծ վերելքի շրջանում գյուղացիությունը դեռևս բավականաչափ կազմակերպված չեր և խիստ հետ եր մնում հեղափոխական շարժումից։ Բոլշևիկյան կուսակցությունն եր ղեկավարում բանվոր դասակարգին։ Բայց ցարիզմն ուժեղ եր դեռևս, վոստիկանական ռեժիմն անխնա վայրագություններ եր կատարում յերկրում։ Կուսակցությունն ստիպված եր ահագին արգելքներ հաղթահարել մասսաներին նվաճելու ճանապարհին։ Կուսակցության դեմ հալածանքները գազանային եյին։



Բանվոր դասակարգն այն ժամանակ ե լավ կազմակերպված, յերբ վոր նրա գլուխ ե կանգնած բանվոր դասակարգի ներսում զանազան կազմակերպությունների վրա հենվող բոլշևիկյան կուսակցությունը։ Այնինչ հեղափոխություն սկսելու պահին բանվոր դասակարգի կազմակերպությունները խիստ թույլ եյին, նրանց մեծ մասը գտնվում եր սաղմային դրության մեջ։ Բանվորական պատգամավորների խորհուրդները, վորոնք հեղափոխության պրոցեսում ծագեցին վորպես պրոլետարիատի պայքարի ղեկավարության որգաններ, չկարողացան կապվել գյուղացիության հետ։ Պետերբուրգի խորհրդի գլուխ եր կանգնած մենշևիկ Տրոցկին։ Նկատի ունենալով նրա վերաբերմունքը գյուղացիությանը, վորպես ռեակցիոն մի ուժի, բնականաբար չեր կարելի սպասել նրանից վորևե քայլ դեպի գյուղացիության հետ կապ հաստատելն ու այդ գյուղացիությունը ղեկավարելը։

Բոլշևիկները մեկեն գնահատեցին այն ահագին նշանակությունը, վոր պետք ե ունենան բանվորական պատգամավորների խորհուրդները նրանց հեղափոխական ճիշտ ղեկավարություն ցույց տալու դեպքում։ Խորհուրդներն արդեն առաջին հեղափոխության ժամանակ հեղափոխական իշխանության որգաններ եյին։ Բայց լինելով թույլ, բացի դրանից մի շարք քաղաքներում գտնվելով մենշևիկների ձեռքում, խորհուրդները չկարողացան գլխավորել այն պայքարը, վոր մղվում եր պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի համար։

Այս պատճառով ու ոտարերկրյա կապիտալի ոգնությունն ստացած ցարական կառավարության հետ միասին հեղափոխության դեմ հանդես յեկած լիբերալ բուրժուազիայի դավաճանությունը հնարավորություն տվին ինքնակալությանը վողջ դուրս գալու հեղափոխությունից։

Զինված ապստամբությունը Մոսկվայում և բանվորների այլ ապստամբությունները (Լատվիայում, Վրաստանում, Դոնբասում և այլն) ջախջախվեցին, վորովհետև բանվորները դեռևս վատ եյին զինված և վոչ բավականաչափ կազմակերպված։ Բայց դրանից միայն բղխում եր այն, վոր կուսակցությունը պետք ե ավելի լավ զիներ բանվորներին, ստեղծեր ամուր մարտախմբեր, տիրեր փողոցային մարտերի արվեստին և այլն։ Բոլշևիկները նախապատրաստվում եյին դասակարգային նոր ճակատամարտերի, նոր զինված ապստամբության։ Իսկ մենշևիկներն ընկան հուսահատության մեջ։

Մենշևիկների այդ վերաբերմունքը դեպի ապստամբությունն ամենից լավ արտահայտեց Պլեխանովը, վորը հայտարարեց. «Չպետք եր դիմել զենքի»։ Լենինը վրդովմունքով մերժեց Պլեխանովի այդ յեզրակացությունը։

«Ընդհակառակը,—գրում եր Լենինը,—պետք եր ավելի վճռա-

կանոնին, յեռանդուն ու հարձակողականորեն դիմել զենքի, պետք եր պարզաբանել մասսաներին սոսկ խաղաղ գործադուլի անհնարինությունը և անվախ, անխնա զինված պայքարի անհրաժեշտությունը»:

Մենշևիկներն այն յեզրակացությունն եյին անում, վոր ապստամբությունները առհասարակ հարկավոր չեն, վորովհետև նրանք մեկ է պետք է ջախջախվեն: Բոլշևիկներն այլ յեզրակացություն արին՝ պետք է նախապատրաստվել զինված ապստամբության այնպես, վոր նա ավելի լավ լինի կազմակերպված: Լենինն ընդգծում եր, վոր առանձնապես կարևոր է հեղափոխական պրոպագանդ մղել բանակում, զինվորների մեջ, վոր պետք է «պայքարել զորքի համար»: Նա կոչ եր անում զինված ապստամբության յեռանդուն նախապատրաստման:

> «Ով վոր նրա դեմ է,—գրում եր Լենինը,—ով վոր չի պատրաստվում նրա համար, նրան պետք է անխնա դուրս նետել հեղափոխության կողմնակիցների շարքերից, դուրս նետել հեղափոխության հակառակորդների կողմը, դավաճանների և վախկոտների մոտ...»:

## ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՑԱՐԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

Հեղափոխական գրոհի ժամանակաշրջանում ցարական կառավարությունը հարկադրված եր «շնորհել ժողովրդին» «ազատության» յերևութականություն, այսինքն ժողովներ սարքելու, բանվորական լրագրեր ու հանդեսներ հրատարակելու, արհմիություններ ստեղծելու և այլնի վորոշ հնարավորություններ: Ցարը հարկադրված եր համաձայնելու պոչատ պարլամենտի գոյացման, Պետական դումայի ստեղծմանը, այնպես կազմակերպելով ընտրությունները, վորպեսզի Դումայի մեջ ընկնել կարողանային գլխավորապես կալվածատերերը, տերտերները, վաճառականներն ու խոշոր կապիտալիստները:

Ցարական կառավարությանը մեկեն չհաջողվեց խեղդել հեղափոխությունը: 1906—1907 թվականները շարունակվող հեղափոխական պայքարի տարիներ եյին, յերբ ցարական կառավարությունը հարկադրված եր հանդուրժել հեղափոխական լեգալ մամուլի գոյությունը, թույլ տալ ժողովներ և այլն:

Բոլշևիկներն այդ ժամանակ շարունակում եյին աշխատել բանվորական մասսաների հեղափոխական ակտիվության կազմակերպման վրա, մինչդեռ մենշևիկները թաղում եյին հեղափոխությունը: Մենշևիկներն ապացուցում եյին, թե հեղափոխությունը վերջացել է և վոր պետք է հարմարվել նոր պայմաններին: Բոլշևիկներն, ընդհակառակը,



ապացուցում եյին, վոր հեղափոխությունն ավարտված չէ դեռևս: Ճիշտ է, չհաջողվեց տապալել ինքնակալությունը, կալվածատերերն առաջվա նման մնացին տիրապետող դասակարգ: Բայց դրանից միայն այն եր հետևում, վոր պետք է պահպանել հեղափոխական ուժերը, պահպանել ինչ գնով էլ վոր լինի և ամրացնել կուսակցական կազմակերպությունը, մի խոսքով, վոչ թե դրոշակները ծալել, այլ վերակառուցվել և շարունակել պայքարը:

Մենշևիկները 1906 թվին իսկույն սկսեցին պատրաստվել Պետական դումայի ընտրությունների համար: Պետական դումայում կատարվելիք աշխատանքին մենշևիկները նայում եյին վորպես իրենց համար կարևորագույն մի գործի: Նրանք այն մասին եյին յերազում, վոր աշխատել սկսեն, ինչպես սոցիալ-դեմոկրատական մյուս կուսակցությունները Յեվրոպայի բուրժուական յերկրներում, այսինքն առանց անլեգալ կազմակերպությունների, այլ միայն պառլամենտական տեղերի համար պայքարելով և ճառեր արտասանելով:

Բոլշևիկներն ապացուցում եյին, վոր շարունակվող հեղափոխական պարագաներում վոչ թե Դուման է հերթական խնդիրը, այլ նոր ապստամբության նախապատրաստումը: Իսկ Դուման բուրժուազիայի և կալվածատերերի ձեռքում հեղափոխական եներգիան մի կողմը հեռացնելու միջոց եր: Դումայի օգնությամբ ցարիզմը ձգտում եր ջախջախել հեղափոխական ալիքը: Հետևաբար ժողովրդի այն խաբեության դեմ, վոր ցարական ինքնակալությունն եր նախապատրաստում Դումայի ստեղծմամբ, պետք եր համառ պայքար մղել յեվ վոչ թե մասնակցել նրան, ինչպես այդ անում եյին մենշևիկները: Քանի վոր հեղափոխական ալիքը դեռևս շարունակվում եր մնալ բարձր կանգնած, պետք եր բանվորական մասսաները պատրաստել նոր մարտերի և վոչ թե շեղել նրանց ընտրական խրաբանդումով հեղափոխական շարժումից:

Ուստի բոլշևիկները պատրաստում եյին ընդհանուր գործադուլ, հեղափոխական նոր յելույթներ: Մինչդեռ մենշևիկները տարվում եյին պառլամենտախաղով, բոլշևիկները կազմակերպում եյին մասսաներին հեղափոխական հետագա պայքարի համար: Նրանք օգտագործեցին ընտրական ժողովները՝ դրանք բանվորական միտինգների փոխարկելու համար: Այդ ժողովներում բոլշևիկները հանդես եյին գալիս ընդդեմ ցարական կառավարության, ընդդեմ Դումայի, առաջարկելով բանվորներին բոյկոտի յենթարկել նրա ընտրությունները և դրա փոխարեն սարքել բացահայտ յելույթներ, իսկ Դումայի բացմանը պատասխանել ընդհանուր գործադուլով:

Լիբերալ բուրժուազիայի և մենշևիկների դավաճանական վարքագիծը չկասեց պրոլետարիատի հեղափոխական շարժման հետագա զարգացումը: I Դուման հիմնականում կալվածատեր Միլյուկովի կուսակցության՝ կադետների գլխավորած արդյունաբերական և առևտրական

բուրժուազիայի ներկայացուցիչներից։ Բայց նույնիսկ այդ Դուման չափազանց «ձախ» դուրս եկավ ցարական կառավարության համար։

Ուստի ցարը շուտով ցրեց այն։ Ցարական կառավարությունն սկսեց հարձակման անցնել հեղափոխության դեմ, հենվելով բուրժուազիայի սատարման վրա։ Այս շրջանում (1906 թ. վերջը—1907 թ. սկիզբը) տեղի ունեցավ հեղափոխական ալիքի որոշ իջում։ Այդ պայմաններում արդեն աննպատակահարմար էր անմիջական զինված ապստամբության նախապատրաստումը շարունակելը, հետևաբար իմաստ չուներ նաև Դումայի ընտրությունները բոյկոտելու պայքարի շարունակումը։

Ուստի կուսակցությունը վճռեց օգտագործել II Դումայի ընտրությունները 1907 թ.՝ մասսաների առաջ մերկացնելու համար լիբերալ բուրժուազիայի հակահեղափոխականությունն ու քարոզելու համար կուսակցության հեղափոխական լոզունգները։

1906 թ. վերջում գումարված կոնֆերենցիայում Լենինը մտցրեց մի բանաձև, որի մեջ ընդգծում էր, թե բոլշևիկները հրաժարվում են բոյկոտից, բայց ոչ թե պառլամենտական շաղակրատանքի համար՝ Դումայում, այլ նոր պայմաններում նոր եղանակներով շարունակելու համար իրենց առաջվա հեղափոխական աշխատանքն ու ագիտացիան։

Ինչու էին բոլշևիկներն առաջ հարկավոր համարում բոյկոտի ենթարկելու ցարական Դուման, իսկ հետո անհրաժեշտ գտան մասնակցել ընտրություններին։ Որովհետև Դումայի բոյկոտը ճիշտ էր դեկտեմբերյան բարիկադներից անմիջապես հետո, քանի որ հեղափոխական ալիքը դեռևս չէր իջել ու պետք էր պատրաստվել հեղափոխական նոր ելույթների և գործողությունների։ Սակայն երբ սկսվեց հեղափոխական ալիքի իջումը, սխալ կլիներ չօգտագործել բոլշևիկյան պրոպագանդի համար այն հնարավորությունները, որ տալիս էին կուսակցությանը Դումայի ընտրությունները և բուն Դուման։

Մենշևիկները չէին տեսնում տարբերություն երկու դրությունների մեջ՝ երբ հեղափոխությունը դեռևս ընթանում էր վերելքի ուղղությամբ և երբ սկսվեց իջման շրջանը։ Նրանք սկզբից ևեթ տարվեցին ընտրական իրարանցումով, բռնեցին համաձայնությունների, միատեղ գործողությունների ուղին լիբերալ բուրժուազիայի հետ ի դեմս կադետների կուսակցության։

1905 թ. հեղափոխությունն առաջ բերեց Արևմուտքում հեղափոխական շարժում, զարկ տալով նրան։ Ավստրիական մայրաքաղաք Վիեննայում տեղի ունեցան փողոցային ցույցեր, իսկ ավստրիական մի այլ քաղաքում—Պրագայում բանը հասավ բարիկադների։



1905 թ. հեղափոխական շարժում առաջ բերեց Արևելքում (Չինաստանում, Տաճկաստանում, Պարսկաստանում)։

Բոլշևիկների դերը 1905 թ. հեղափոխության մեջ, իհարկե, ենթարկվեց եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի բոլոր օպորտունիստների հարձակումներին։ Բայց հեղափոխությանը սատարումն ցույց տվին II Ինտերնացիոնալի լավագույն, ամենահեղափոխական տարրերը։ Նրա ներսում ուժեղացավ ձախ թևը, որի մեջ մտնում էին Կլարա Ցետկինը, Ռոզա Լյուքսեմբուրգը, Մերինգը և այլն։

1905 թ. հեղափոխությունից բոլշևիկները դուրս եկան հեղափոխական պայքարի ընդարձակ փորձով հարստացած,—մի փորձ, որ առանձնապես պետք եկավ 1917 թ. հեղափոխության ժամանակ։ Լենինը մանրամասնորեն և անդադար ուսումնասիրում էր ռուսական առաջին հեղափոխության այդ փորձը։ Լենինը այդ հեղափոխության մեջ տեսնում էր պրոլետարիատի ապագա հաղթական հեղափոխության «գլխավոր խաղափորձը», ուժերի ստուգումը։

# 3. ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԸ

## ՊԱՅՔԱՐԸ ԼԵԳԱԼ ԵՎ ԱՆԼԵԳԱԼ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶՈՒԳԱԿՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հեղափոխությունը պարտություն կրեց։ Ցարական ինքնակալությունը դիմացավ։ Հաղթահարելով շվարումը, նա զիջումների և նահանջի քաղաքականությունից անցավ հարձակման։ Ցարական ոստիկանությունն առանձին ուժով սկսեց վայրագանալ։ Սկսվեցին մասսայական ձերբակալություններ ու աքսորումներ,—բանտերն ու տաժանավայրերը լցվեցին բանվոր-հեղափոխականներով։ Գյուղերում տիրապետում էր կուլակի մտրակը։ Հեղափոխությունը ճնշվեց։

Վրա հասան ռեակցիայի, քաղաքական անկման տարիները։ Բանվորական լեգալ կազմակերպությունները ջախջախվեցին և հեղափոխական մամուլը փակվեց։ Ցարական կառավարությունը դաժանորեն քարուքանդ էր անում բոլոր հասարակական կազմակերպությունները, բանվորների և հեղափոխականների մասսայական ձերբակալություններ էր կատարում։ Կախաղաններ, շղթաներ, մտրակներ, բանտերում չարչարումներ, ձերբակալվածների ծանակում, աքսորումներ և գնդակահարություններ—ահա թե ինչն է բնորոշում ցարական ռեժիմն այդ տարիներին։

Բայց այդ շրջանն էլ հեղափոխական դպրոց էր մեր կուսակցության և բանվոր դասակարգի համար։ Հեղափոխական դասակարգը պետք է գիտենա ոչ միայն լավ հարձակվել, այլև կազմակերպված

ձևով նահանջել այնպես, վոր իր ուժերը դուրս հանի հակառակորդի կրակի տակից ու նրանց պատրաստի հարձակողական նոր ճակատամարտերի։

«Հեղափոխական կուսակցությունները պետք է ավարտեն իրենց ուսումը,— գրում էր 1920 թ. Լենինն այդ շրջանի մասին։— Նրանք սովորում էին հարձակվել։ Այժմ ստիպված ենք ըմբռնել, վոր այդ գիտությունն անհրաժեշտ է լրացնել այն գիտությամբ, թե ինչպես պետք է ավելի կանոնավոր նահանջել։ Ստիպված ենք ըմբռնել,— և հեղափոխական դասակարգը սեփական դառը փորձով սովորում է ըմբռնել,— վոր չի կարելի հաղթել չսովորելով կանոնավոր հարձակման և կանոնավոր նահանջի գիտությունը։ Ջարդված բոլոր ոպոզիցիոն[1]) և հեղափոխական կուսակցություններից բոլշևիկները նահանջեցին ամենից մեծ կարգով, ամենից պակաս վնասով նրանց «բանակի» համար, ամենից ավելի պահպանելով նրա միջուկը, ամենից փոքր պառակտումներով (ըստ նրանց խորության ու անբուժելիության), ամենից փոքր բարոյալքմամբ, ամենից մեծ ընդունակությամբ՝ աշխատանքը վերանորոգելու ամենից լայն, ճիշտ ու յեռանդուն կերպով»։

Ինչո՞ւ բոլշևիկների կուսակցությանը հաջողվեց նահանջել նվազագույն կորուստներով։ Այն պատճառով, վոր ցարական ռեակցիայի պայմաններում կուսակցությունն այնուամենայնիվ կարողացավ ճանապարհ գտնել դեպի մասսաները, ոգտագործելով և՛ իր ընդհատակյա, և՛ բացահայտ, լեգալ (իշխանության կողմից թույլատրված) կազմակերպությունները։

Մենշևիկների մեջ ռեակցիայի տարիներում գերակշռություն ստացավ մի հոսանք, վոր պահանջում էր առհասարակ կուսակցության լիակատար լիկվիդացիան, վոչնչացումը։ Այդ հոսանքն անվանվեց լիկվիդատորություն։

Լիկվիդատորների հայացքները հանգում էին հետևյալին. հեղափոխությունը պարտություն կրեց, նոր վերելք ակնկալել չի կարելի, ուստի պետք էր իբրև թե վերակառուցվել միմիայն իշխանության կողմից թույլատրված լեգալ աշխատանքի համար, իսկ անլեգալ կազմակերպությունները պետք է ցրել, լիկվիդացիայի յենթարկել, այսինքն վոչնչացնել կուսակցության բոլոր ընդհատակյա կազմակերպությունները, բոլոր կապերը խզել բանվորական մասսաների հետ և զբաղվել միայն Պետական դումայի աշխատանքով։ Լիկվիդատորներն իրոք պահանջում էին լիակատար հաշտեցում ցարական ինքնակալության ռեժիմի հետ, նրա դեմ պայքարն ընդունելով միայն որինակա-

[1]) Ոպոզիցիոն—տիրապետող իշխանության կամ քաղաքականության դեմ յելնող։



նության շրջանակներում, ցարական որենքով թույլատրված շրջանակներում։

Հանդես գալով այդպես, մենշևիկ-լիկվիդատորները գործում էին բացահայտորեն վորպես բուրժուազիայի ուղղակի գործակալությունը բանվոր դասակարգի ներսում։ Բուրժուազիայի համար կարևոր էր, վոր բանվոր դասակարգը կազմակերպված չլինի հեղափոխական նոր մարտերի համար, վոր նա չունենա իր հեղափոխական կուսակցությունը։ Բուրժուազիայի այդ պատվերի կատարումն էլ ստանձնեցին մենշևիկ-լիկվիդատորները։

Ինչ խոսք, վոր լիկվիդատորների այդ դիրքը հանդիպեց բոլշևիկների ամենակատաղի հակահարվածին։ Նրանք անխնա պատերազմ հայտարարեցին լիկվիդատորությանն ու վճռականորեն հանդես յեկան ի պաշտպանություն կուսակցության, ընդդեմ այն փորձերի, վորոնցով լիկվիդատորները վոչնչացնում են վոստիկանական դժնդակ հալածանքների պայմաններում այնպիսի դժվարությամբ ստեղծված կազմակերպությունները։

Միևնույն ժամանակ կուսակցությունը հարկադրված էր ամենաանխնա պայքար մղել և ընդդեմ այն հոսանքի սեփական շարքերում, վորը դեմ էր լեգալ հնարավորությունների ոգտագործելուն, դեմ էր Պետական դումայի աշխատանքներին մասնակցելուն, անպայման կողմնակից էր Դումայի բոյկոտի և պնդում էր կուսակցական աշխատանքի միմիայն ընդհատակյա յեղանակների գաղափարի վրա։

Խոշորագույն սխալ կլիներ, յեթե կուսակցությունը գնար այն ուղիով, դեպի վորը հրում էր նրան այդ «ձախ» հոսանքը։ Կուսակցության հաջողությունը կախված էր միաժամանակ լեգալ յեվ անլեգալ աշխատանք կատարելու հմտությունից։ Լիկվիդատորների ուղին միայն բուրժուազիային էր ձեռնտու։ Կուսակցության վոչնչացումը հանուն սոսկ լեգալ, որենքով թույլատրված աշխատանքի,— դա ձեռնտու կլիներ նույնիսկ ցարական կառավարությանը։

Բայց պակաս վնասակար չէր լինի բանվոր դասակարգի գործի համար աշխատանքի լեգալ ձևերից հրաժարվելը. սխալ կլիներ այդ տարիներին, ռեակցիայի տարիներին Դուման բոյկոտի յենթարկելը, ապահովագրական գանձարկղների, արհմիությունների և այլնի համար չպայքարելը։ Բանվոր դասակարգի կուսակցությունը, վոր պայքարում է մասսաների համար և վոչ թե դատարկ խաղ խաղում, պետք է բոլոր միջոցներն ոգտագործի, վորպեսզի ավելի լավ կապվի մասսաների հետ։ Քանի վոր ընտրական ժողովները, հիվանդանոցային դրամարկղները և այլն կուսակցությանը հնարավորություն են տալիս կապվելու մասսաների հետ, հանցանք կլիներ դեպի մասսաները տանող այդ ուղիները չոգտագործելը։ Քանի վոր Դուման մի տեղ էր, վորտեղից թեկուզ սահմանափակումներով խոսել կարելի յեր, հանդես գալ ցարական

ինքնակալության դեմ, մերկացնել բուրժուազիայի վախկոտությունն ու բանվոր դասակարգի թշնամիների բոլոր մեքենայությունները — ապա պետք էր օգտագործել Դումայի այդ ամբիոնը։ Մեր բոլշևիկյան պատգամավորների ելույթները տպագրվում էին առանձին թերթիկներով և տարածվում բանվորների շրջանում։

Կուսակցությունը զուր չէր այնպիսի անխնայությամբ պայքարում այդ «ձախ» խմբի դեմ (նրա մեջ մտնում էին Բոգդանովը, Լունաչարսկին, Պոկրովսկին, Կրասինը և այլն), այնպիսի խստության հասնելով, որ կուսակցությունից վտարեց այդ խմբին։

Այդ խումբը կուսակցության մեջ հայտնի յե՛ բոյկոտիստներ անունով (ըստ Դումայի бойкотի լոզունգի), օտզովիստներ անունով (ըստ բոլշևիկներին Դումայից հետ կանչելու — отозвать լոզունգի) և նույնպես վպերյոդականներ անունով (ըստ այն «Վպերյոդ» լրագրի անվան, որ նրանք հրատարակում էին այդ ժամանակ արտասահմանում)։

Այսպիսով կուսակցության համար մղվող պայքարում ռեակցիայի տարիներին ես, ինչպես և 1905 թ. հեղափոխության ժամանակ, բոլշևիկները հարկադրված էին կռվել յերկու ճակատի գծով — աջ՝ լիկվիդատորության դեմ և «ձախ»՝ օտզովիզմի դեմ։

## 4. ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐԸ

### ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՊԱՅՔԱՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մի քանի տարվա ռեակցիայից հետո, 1910 թ. կեսում, սկսվեց մասսաների հեղափոխական նոր վերելքը։

Արդյունաբերությունը մտավ նշանակելի աշխուժացման շրջանը։ Աճում էին տրեստներն ու սինդիկատները։ Ներհոսում էր օտարերկրյա կապիտալը։ Ռուսական կապիտալը սերտորեն միահյուսվում էր օտարերկրյա կապիտալի հետ։

Ռեակցիայի ժամանակ խիստ ընկավ գործադուլային ալիքը։ Յեթե 1905 թ. զանազան գործադուլներին մասնակցում էին ավելի քան 8 միլիոն մարդ, ապա 1910 թ. կեսում գործադուլներին մասնակցում էին արդեն միայն 50 հազար մարդ։ Սակայն, 1910 թ. յերկրորդ կեսից սկսած գործադուլների ալիքը նորից աճում է, և նրանց մեջ արագ բարձրանում է քաղաքական գործադուլների թիվը։ Ցարական ինքնակալության գարհուրելի ռեժիմը ընդունեց մասսաների ծանրագույն ճնշման ձևեր։ Ոստիկանական տեռորը վայրագություններ էր գործում ամենաանզուսպ ձևով։

Ցարական ռեժիմը այնքան ատելի դարձավ մասսաների համար,



վոր չնայած վոստիկանության ամենադաժան հալածանքներին, 1910 թվի կեսում նորից սկսվեցին ցույցերն ու մասսայական գործադուլները։ Այդ ժամանակ սկսեց լույս տեսնել բանվորական լրագիր «Զվեզդա»-ն, վորի ղեկավարներն էին Դումայի բոլշևիկ պատգամավորները։ 1912 թ. ապրիլին (նոր տոմարով մայիսի 5-ին) սկսեց լույս տեսնել ամենօրյա բոլշևիկյան լրագիր «Պրավդա»-ն։ Լրագիրը Լենինն էր ղեկավարում արտասահմանից։ Նրա խմբագիրը ընկ. Ստալինն էր։ Չնայած ցարական իշխանությունների մի շարք հալածանքներին, լրագիրը մարտականորեն կռվում էր բոլշևիկյան լոզունգների համար և այդ լոզունգները հասցնում էր բանվորների լայն մասսաներին։ Լենայի վոսկեհանքերի 270 բանվորների գնդակահարումը 1912 թ. մեկեն շատ բարձրացրեց քաղաքական գործադուլների ալիքը։ Նոր շարժում էր սկսվում ցարական ինքնակալության դեմ։ Պետք էր ղեկավարել այն, հարկավոր էր պրոլետարիատի հեղափոխական ամուր կուսակցությունը, հարկավոր էր մասսաների լավ կազմակերպությունը։ Իսկ լիկվիդատորները դեմ էին կուսակցության, առաջվա նման լիբերալ բուրժուազիային էին կպչում, բուրժուական թերթերում հանդես էին գալիս բոլշևիկների և կուսակցականության դեմ ուղղված հարձակումներով, հետագայում իրենց լիկվիդատորական լրագիր «Լուչ»-ում գրպարտական կամպանիա էին մղում բոլշևիկների «Պրավդա»-յի դեմ։

1912 թ. բոլշևիկները կոնֆերենցիա՝ գումարեցին Պրագայում (Չեխո-Սլովակիա) և այդ կոնֆերենցիայում ընտրեցին նոր Կենտրոնական Կոմիտե միայն բոլշևիկներից ու վերջնականապես իրենց շարքերից վտարեցին բոլոր լիկվիդատորներին, բոյկոտիստներին ու տրոցկիստներին։

1903 թվականից լինելով յերկու տարբեր, շարունակ միմյանց դեմ պայքարող կուսակցություններ, բոլշևիկներն ու մենշևիկներն առանձին ժամանակաշրջաններում ձևականորեն ունեյին ընդհանուր կկ։ Պրագայի կոնֆերենցիան դրան էլ վերջ տվեց։ Բոլշևիկների կուսակցությունը վերջնականապես խզեց անգամ բոլոր ձևական կապերը մենշևիկների կուսակցության հետ։

Տրոցկին այդ ժամանակ էլ էր փորձում գրավել հատուկ դիրք բոլշևիկների և մենշևիկների արանքում, բայց իրոք մենշևիկների կողմն էր ընդդեմ Լենինի և Բոլշևիզմի։

Տրոցկին հայտարարում էր, վոր ինքը «ֆրակցիաներից դուրս» է, բայց իրոք նա գործում էր մենշևիկների և բոլշևիզմի բոլոր հակառակորդների ու թշնամիների հետ միասին, շարունակ նողկալի հարձակումներ գործելով Լենինի և մեր կուսակցության վրա։

Տրոցկիզմը միշտ աչքի յեր ընկնում Լենինի և բոլշևիկների դեմ ամենաանպետք և անսկզբունք յեղանակներով պայքարելու առանձին ընդունակությամբ։ 1912 թ. Տրոցկին փորձ արեց ստեղծելու բոլշե-

վիզմի բոլոր հակառակորդների միասնական ճակատը (այսպես կոչված «օգոստոսյան բլոկը»)՝ սկսած լիկվիդատորներից և վերջացրած ոտզովիստ-վպերյոդականներով։ Նա ի մի հավաքեց բոլոր ամենազանազանատարր խմբերն ու խմբակները հակաբոլշևիկյան պայքարի դրոշի տակ. վորպիսի տարաձայնություններ էլ լինեյին այդ խմբերի միջև, նրանք պետք է միացության տրվեյին հանուն բոլշևիզմի դեմ ուղղված պայքարի։ Ահա թե ինչի վրա յեր աշխատանք թափում Տրոցկին հենց այն ժամանակ, յերբ բոլշևիկները լարված պայքար եյին մղում կուսակցության համար ընդդեմ այն լիկվիդացիայի յենթարկելու աջ և «ձախ» փորձերի։

Այդ արարքն, իհարկե, դուրս յեկավ անպետք միջոցներով կատարած մի փորձ, վորովհետև անհնարին է վորքան և է հաստատուն կազմակերպություն ստեղծել, յեթե նա անսկզբունք է, զուրկ է գաղափարային ընդհանուր արմատներից և բաղկացած զանազանատարր խմբերից ու խմբակներից։ Իհարկե, բլոկը կազմալուծվեց։ Լենինն ասում եր Տրոցկու այդ բլոկի մասին, վոր նա այնքան ավելի մեծ չարիք է, «վորքան ավելի խորամանկ, նուրբ ու ճոռոմաբանորեն» է նա քողարկում իր հակակուսակցական եյությունը։

Բոլշևիկները ղեկավարում եյին բանվորների գործադուլային պայքարը։ Մենշևիկները գործադուլների դեմ եյին դուրս գալիս, բոլշևիկներին մեղադրելով նրա համար, վոր «գործադուլային ազարտ» են հրահրում նրանք։ Իրենց տիրոջ—բուրժուազիայի կամքը կատարելով, մենշևիկ-լիկվիդատորները կեղտաջուր եյին լցնում բոլշևիկյան կուսակցության ու «Պրավդա» լրագրի վրա։ Իսկ բոլշևիկներն ու «Պրավդա»-ն այդ ժամանակ չթուլացող հետևողականությամբ պայքարում եյին հետևյալ յերեք լոզունգի համար, վոր «Պրավդա»-յի կողմից անվանվել եյին «յերեք կետ-ձուկ»՝ ինքնակալության տապալումն, 8-ժամյա բանվորական օր և կալվածատիրական հողերի գրավումն։

Այդ լոզունգների համար մղվող պայքարում, հմտորեն կիրառելով աշխատանքի լեգալ և անլեգալ ուղիներ օգտագործելու տակտիկան, բոլշևիկները հաստատ կերպով իրենց կողմն եյին գրավում բանվորական մասսաներին։ Կուսակցությունը հնարավորություն ստացավ մերկացնելու մենշևիկներին, վորոնք գործում եյին բանվորական շարժման մեջ վորպես բուրժուազիայի գործակալներ։ Բուրժուազիան բոլոր յեղանակներով սատարում եր մենշևիկներին այն պայքարում, վոր նրանք եյին մղում բոլշևիկների դեմ։ Բայց մենշևիկներին չհաջողվեց բոլշևիկներից հետ նվաճել բանվոր դասակարգի մեջ նրանց նվաճած դիրքերը։

Այս առթիվ Լենինը գրում եր.

«.... բոլշևիկները չեյին կարողանա պահել... 1908—1914 թթ. պրոլետարիատի հեղափոխական կուսակցության հաստատուն մի-



ջուկը, յեթե նրանք ամենադաժան պայքարի մեջ չպաշտպանեյին պայքարի անլեգալ ձևերը լեգալ ձևերի հետ միացնելու անհրաժեշտությունը»։

1913 — 1914 թվականների ընթացքում գործադուլային շարժումն արագորեն վերաճում եր հեղափոխական բացահայտ յելույթների։ Պետերբուրգի փողոցներում յերևացին բարիկադներ։ Քաղաքական գործադուլների անընդհատ ալիքին ուղեկցում եյին հեղափոխական խռովությունները գյուղերում։ Սկսվեցին բանվորների մասսայական ցույցեր, վորոնք 1914 թ. ամառը փոխարկվեցին լուրջ ընդհարումների՝ վոստիկանության հետ։ Բանը նորից ընթանում եր դեպի հեղափոխական ապստամբություն։ Բոլշևիկների կուսակցությունը շարունակ գլխավորում եր բանվորական մասսաների այդ հեղափոխական ապստամբությունը։

## ԲՈԼՇԵՎԻԶՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Ղեկավարելով բանվորների հեղափոխական շարժումը յերկրի ներսում և անդադրում պայքար մղելով ռուսական օպորտունիզմի բոլոր արտահայտությունների դեմ, բոլշևիկները յեռանդուն կերպով պայքարում եյին Մարքս-Էնգելսի հեղափոխական գաղափարների համար և միջազգային բանվորական շարժման մեջ ընդդեմ II Ինտերնացիոնալի օպորտունիստական առաջնորդների։

Բոլշևիկների կուսակցության ծագման առաջին օրերից արդեն նա անհաշտ պայքար սկսեց վոչ միայն ռուսական, այլև միջազգային մենշևիզմի դեմ։ Բոլշևիկները գաղափարային մարտերի մեջ եյին մտնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և II Ինտերնացիոնալի առաջնորդների դեմ, խիստ մերկացնում և քննադատում եյին նրանց օպորտունիստական գաղափարներն ու գործողությունները, վճռականորեն պայքարում օպորտունիզմի բոլոր այլատեսակությունների դեմ։ Բոլշևիկները միաժամանակ յելնում եյին ձախ սոցիալ-դեմոկրատիայի դեմ ևս (Ռոզա Լյուքսեմբուրգ, Ռադեկ և ուրիշն.), վորը բավականաչափ արիություն չուներ, վորպեսզի իր կապերը խզեր իր մենշևիկների հետ։ Պայքարելով ռուսական մենշևիկների դեմ, Լենինը դեռևս 1903 — 1914 թվականներին միևնույն ժամանակ ձգտում եր հարաբերությունների խզումն առաջ բերել Գերմանիայում և ամբողջ II Ինտերնացիոնալում ձախ սոցիալ-դեմոկրատների և նրանց օպորտունիստական առաջնորդների միջև։ Բացահայտ օպորտունիզմի դեմ պայքարելով, բոլշևիկները միաժամանակ անհաշտ պատերազմ եյին մղում նաև ցենտրիստների դեմ, «վորոնց ամբողջ քաղաքականությունը,—ինչպես ընկ. Ստալինն է ասում,—կայանում եր նրանում, վոր ձախ ֆրազներով պունավորեն աջերի օպորտունիզմը...»։ Թե ինչ բան է ցենտրիզմը, ընկ. Ստալինն ասել է.

«Ցենտրիզմը տարածական հասկացողություն չէ. մի տեղում, ասենք, նստած են աջերը, մյուսում — «ձախերը», իսկ միջանցքում՝ ցենտրիստները։ Ցենտրիզմը քաղաքական հասկացողություն է։ Նրա գաղափարախոսությունը համակերպման գաղափարախոսություն է, պրոլետարական շահերը մանր բուրժուազիայի շահերին յենթարկելու գաղափարախոսություն...»։

Այս հոսանքը միշտ նպատակ է ունեցել հեղափոխական մասսաներին օպորտունիզմի ծոցում պահելու կեղծ հեղափոխական բառերի միջոցով։ Նրա խնդիրն է խաբել մասսաներին ավելի նուրբ յեղանակներով, քան թե բացահայտ մենշևիզմն է։

Ռուսաստանում այդ հոսանքը տարբեր ժամանակներ մինչ 1917թ. գլխավորել է Տրոցկին։ Գերմանիայում նրան գլխավորել են Կաուցկին ու Բեբելը։ Ցենտրիստներն արտաքուստ օպորտունիստների հակառակորդներն էին, բայց իրոք ջանում էին մարքսիզմը հաշտեցնել օպորտունիզմի հետ, հետևաբար օպորտունիզմի շատ հոսանքներից մեկն էին միայն։ Ուստի միանգամայն հասկանալի յե, վոր բոլշևիկները չէին կարող չպայքարել օպորտունիզմի այդ տեսակի դեմ և,— ցենտրիզմը (Ռուսաստանի պայմաններում տրոցկիզմը) իր զենքն ուղղում էր գլխավորապես հեղափոխական մարքսիզմի, այսինքն բոլշևիզմի դեմ։

Ռուսական և միջազգային մենշևիզմի դեմ ուղղված պայքարի պրոցեսում բոլշևիկները, 1903 թ. սկսած, աշխատում էին ձախ թեվ ստեղծել II Ինտերնացիոնալում։ Ռուսական բոլշևիկները գրավում էին ամենահետևողական, հեղափոխական ինտերնացիոնալիստական դիրք, մինչդեռ ձախերի մեջ բոլորը չէին ի վիճակի բավականաչափ յեռանդուն, հետևողական պայքար մղել միջազգային սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների դեմ։ Ռոզա Լյուքսեմբուրգն, օրինակ, նախապատերազմական տարիներում յերբեմն հանդես է յեկել ցենտրիստների հետ միասին, այդ թվում և Տրոցկու հետ ընդդեմ Լենինի, քարոզելով հայացքներ, վորոնք խորթ են հեղափոխական մարքսիզմի համար։ Լենինը խիստ քննադատում էր Ռոզա Լյուքսեմբուրգի և սոցիալ-դեմոկրատիայի այլ ձախ պարագլուխների սխալները, վորովհետև այդ սխալներն արձագանք էին օպորտունիստական, մենշևիկյան ազդեցությունների։

Բայց Ռոզա Լյուքսեմբուրգն ու միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ձախ թեվն ունեին իրենց հեղափոխական վաստակները և։ Բոլշևիկները քննադատում էին նրանց օպորտունիստական սխալները, բայց ամուր սատարում էին նրանց բոլոր հեղափոխական քայլերին, նրանց պայքարին ընդդեմ գերմանական ու այլ մենշևիկների և ցենտրիստների (մանավանդ համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ, յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և II



Ինտերնացիոնալի առաջնորդները վերջնականապես անցան բուրժուազիայի կողմը)։ Բոլշևիկները հրում էին ձախերին դեպի հարաբերությունների ուղղակի խզումն օպորտունիստների հետ, կոչ անելով վարվելու ճիշտ այնպես, ինչպես ռուսական բոլշևիկները վարվեցին մենշևիկների հետ, և ապացուցելով, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և II Ինտերնացիոնալի օպորտունիստական առաջնորդները բուրժուազիայի գործակալներն են հանդիսանում բանվորական շարժման մեջ։

Լենինն իմպերիալիստական պատերազմից դեռ շատ առաջ գուշակում էր, վոր օպորտունիստները պատերազմի ժամանակ կդավաճանեն բանվոր դասակարգին ու բուրժուազիայի կողմը կանցնեն։ 1907 և 1912 թվականներին կայացան II Ինտերնացիոնալի մեջ մտնող սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների յերկու միջազգային համագումարներ։ Համագումարները բանաձևեր ընդունեցին պատերազմին սատարելու դեմ և պատերազմը միջազգային հեղափոխության վերածելու ոգտին։

Լենինը նախազգուշացնում էր II Ինտերնացիոնալի օպորտունիստական առաջնորդների հեղափոխականությունը գերագնահատելու դեմ, թեև նրանք ընդունել էին այդ բանաձևերը։ Լենինը համոզված էր, վոր II Ինտերնացիոնալի օպորտունիստական մասը հեղափոխական բացահայտ քայլ չի կատարի բուրժուազիայի դեմ, յերբ պատերազմը կբռնկի։ Նա չափազանց լավ գիտեր այդ մարդկանց վախկոտ, բուրժուազիայի հետ սերտորեն կապված ցեղը (порода), վորպեսզի հավատ ընծայեր նրանց բանաձևերին։ 1914—1918 թվականների պատերազմն ամբողջովին հաստատեց Լենինի գուշակությունները։

# 5. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԸ

## II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

1914 թ. ամառը բռնկած համաշխարհային իմպերիալիստական պատերազմը հեղափոխական դաժան փորձության յենթարկեց II Ինտերնացիոնալի բոլոր կուսակցություններին, և միայն մեր բոլշևիկյան կուսակցությունը դիմացավ այդ փորձությանը։ Նա սկզբից ևեթ բռնեց մարտական, հեղափոխական ինտերնացիոնալիստական դիրք, խիստ կերպով դեմ յելնելով իմպերիալիստական պատերազմին ու պայքարելով միջազգային սպանդը միջազգային պրոլետարական հեղափոխության վերածելու համար։ Իսկ բուրժուազիան սոցիալ-դեմոկրատական հակասություններն ու II Ինտերնացիոնալի ղեկավարներն իմպերիալիստների կողմն անցան, սկսեցին բացահայտ կերպով սատա-

րել «իրենց» բուրժուական կառավարություններին ու կոչել բանվորներին մասնակցելու պատերազմին։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հանդիսավոր խոստումներն ու պարտավորությունները և II Ինտերնացիոնալի բոլոր բանաձևերն անարժեք թղթի կտորներ դուրս յեկան։ Օպորտունիստները վերջնականապես փախան-անցան իրենց իմպերիալիստական կառավարությունների կողմը, սկսեցին յեռանդուն կերպով անել բուրժուազիայի սատարելու կոչ։

Գերմանական սոցիալ-դեմոկրատները կաշվից դուրս եյին գալիս, վոր ապացուցեն իրենց բանվորներին, թե նրանք պետք է կրակեն ֆրանսական ու ռուսական բանվորների վրա։ Ֆրանսական սոցիալիստները համոզում եյին իրենց բանվորներին ռազմաճակատ գնալ՝ կրակել գերմանական պրոլետարների վրա։ Ռուսական մենշևիկները Պլեխանովի գլխավորությամբ ապացուցում եյին, վոր ռուսական, լեհական և այլ բանվորներն ու գյուղացիները պետք է պատերազմեն ընդդեմ գերմանական, ավստրիական ու տաճկական բանվորների և գյուղացիների։ II Ինտերնացիոնալը դադարեց գոյություն ունենալուց, նա քայքայվեց։

Միակ մարդիկ, ովքեր խիստ կերպով հանդես յեկան պատերազմի իմպերիալիստական, հափշտակողական բնույթի մերկացմամբ, բոլշևիկներն եյին ու ձախերի մի փոքր խումբ, վորոնք սատարում եյին բոլշևիկներին և նրանց հետ միասին կազմում Ինտերնացիոնալի ձախ թևը։ Նրանք նշում եյին, վոր իմպերիալիստական պատերազմները վերացվել կարող են միայն կապիտալիզմի վոչնչացման միջոցով, այսինքն պրոլետարական հեղափոխության միջոցով։ Ուստի բոլշևիկները պահանջում եյին բոլոր սոցիալ-դեմոկրատներից իմպերիալիստական պատերազմը վերածել հեղափոխական, քաղաքացիական պատերազմի, պատերազմը ժողովուրդների միջև վերածել յուրաքանչյուր յերկրի աշխատավորների պատերազմի՝ ընդդեմ իրենց սեփական բուրժուազիայի։

Հանդես գալով ընդդեմ բոլոր պաշտպանողական [1]) ու պացիֆիստական [2]) թեորիաների և ճառերի, Լենինն այսպես է շարադրել բոլշևիկների տեսակետն իմպերիալիստական պատերազմի վերաբերմամբ.

«Պատերազմը պատահականություն չէ, «մեղք» չէ, ինչպես կարծում են քրիստոնեական տերտերները,... այլ կապիտալիզմի անխուսափելի աստիճան... Մեր օրերի պատերազմը ժողովրդական պատերազմ է։ Այս ճշմարտությունից վոչ թե այն է հետևում, թե պետք է լողալ շովինիզմի [1]) «ժողովրդական» հոսանքով, այլ այն, վոր և պատերազմական ժամանակ, և պատերազմում և պատերազմականորեն շարունակում են գոյություն ունենալ ու իրենց արտահայտելու յեն ժողովուրդներին ծվատող դասակարգային հակասությունները։ Հրաժարումն զինվորական ծառայությունից, գործադուլն ընդդեմ պատերազմի և այլն՝ պարզ հիմարություն է, թշվառ ու վախկոտ յերազանք զինված բուրժուազիայի դեմ անզեն պայքար մղելու մասին, հառաչումն կապիտալիզմի վոչնչացման մասին առանց քաղաքացիական կատաղի պատերազմի կամ մի շարք պատերազմների։ Դասակարգային պայքարի պրոպագանդը պատերազմում ևս սոցիալիստի պարտքն է, ժողովուրդների պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխարկելու աշխատանքը միակ սոցիալիստական աշխատանքն է բոլոր ազգերի բուրժուազիայի իմպերիալիստական զինված ընդհարման դարաշրջանում»։

Մինչդեռ մենշևիկները դասակարգային պայքարը դադարեցնելու կողմնակից եյին բուրժուազիայի հետ քաղաքացիական հաշտություն պահպանելու կողմնակից,— բոլշևիկներն, ընդհակառակը, կողմնակից եյին դասակարգային պայքարի ծավալմանն ու աճման, կողմնակից եյին քաղաքացիական պատերազմի։ Ասենք այլ կերպ չեր էլ կարող լինել. բուրժուազիայի գործակալության իրենց դերը կատարելիս մենշևիկներն, իհարկե, մտահոգված եյին, վոր բուրժուազիան թիկունքում չունենա դասակարգային մարտեր։ Իսկ բոլշևիկները, հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը՝ մերկացնում եյին մենշևիկների դավաճանությունը և բանվոր դասակարգին կոչում դեպի զինված բանվորների և գյուղացիների հեղափոխական ապստամբությունն ընդդեմ իրենց կառավարությունների, ընդդեմ շահագործող դասակարգերի տիրապետության։ Բոլոր յերկրների օպորտունիստները հեղափոխությունը «հետաձգում եյին» յերկար ժամկետով, ավելի ճիշտ, դուրս եյին գալիս հեղափոխության դեմ,— բոլշևիկներն, ընդհակառակը, կողմնակից եյին իմպերիալիստական պատերազմն անհապաղ կերպով քաղաքացիականի վերածելուն։ Բոլոր տեսակների և յերկրների մենշևիկները հանդես եյին գալիս վորպես իրենց ազգի շահերի, այսինքն իրենց ազգային բուրժուազիայի շահերի պաշտպաններ,— բոլշևիկներն, ընդհակառակը, հավատարիմ եյին միայն հեղափոխական ինտերնացիոնալիզմի գաղափարին, այսինքն պահանջում եյին աշխարհի բոլոր յերկրների բանվոր դասակարգի միահամուռ հեղափոխական յելույթ, միավորված պայքար միջազգային իմպերիալիզմի դեմ։ Բոլշևիկները պահանջում եյին, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգն իր կառավարության պարտու-

---

1) Պաշտպանողականությունը մի հոսանք եր ռուսական մենշևիկների և եսերների մեջ, վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակ «հայրենիքի պաշտպանության» լոզունգն եր առաջադրում։

2) Պացիֆիստական—խաղաղասիրական։

1) Շովինիզմ—ծայրահեղ ազգայնականություն, թշնամանք ուրիշ ժողովրդի նկատմամբ։

թյանը ձգտի, որ բանվորները հոգ տանեն ոչ թե իրենց բուրժուական պետության սահմանների մասին, այլ կապիտալիզմը տապալելու և իրենց բանվորական իշխանությունը հաստատելու մասին: Այդ պահանջը բխում էր Մարքսի և Էնգելսի հեղափոխական ամբողջ ուսմունքից, որոնք քանիցս հայտարարել են, որ

«... յուրաքանչյուր առանձին յերկրի բանվոր դասակարգը պետք է նախ և առաջ վերջ տա իր բուրժուազիային» և որ «պրոլետարները հայրենիք չունեն, հետևաբար նրանցից չի կարելի խլել այն, ինչ որ չունեն նրանք»:

Մինչդեռ ոչ միայն այն մենշևիկները, որոնք հանդես եյին գալիս «հայրենիքի պաշտպանության» աշկարա լոզունգով (Ռուսաստանում նրանք պաշտպանողականներ եյին կոչվում), այլև նրանք, ովքեր կեղծում եյին ու «հեղափոխական» ֆրազներով քողարկում իրենց դավաճանությունը, իրենց բոլոր ուժերով ոգնում եյին բուրժուազիային իրագործելու նրա գիշատչական, հափշտակողական նպատակները: Բոլշևիկներն առանձին անխնայությամբ մերկացնում եյին ցենտրիստներին, որոնք խոսքով պատերազմի դեմ եյին դուրս գալիս, իսկ գործով ոգնում եյին բուրժուազիային հափշտակողական սպանդ վարելու:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և II Ինտերնացիոնալի առաջնորդ Կաուցկին պատերազմի սկզբին հայտարարեց, որ պրոլետարիատի միասնական ճակատ կազմել բուրժուազիայի դեմ անհնարին է և անհարկավոր, ուստի թող յուրաքանչյուր յերկրում յուրաքանչյուր կուսակցություն գործի ինչպես գիտի: Ընդսմին նա արդարացնում էր պաշտպանողականների քարոզած «հայրենիքի պաշտպանության» լոզունգը:

Քողարկելով իր փախուստը իմպերիալիստական բուրժուազիայի կողմը, Կաուցկին մասսաներին խաբելու նպատակով հետագայում քաղցրիկ ճառերով էր հանդես գալիս պատերազմի դեմ, բայց այդ ճառերը ոչնչով չեյին տարբերվում խաղաղության տերտերական քարոզներից: Պատերազմի հարցում նույնպիսի դիրք էր գրավում և Տրոցկին: Լենինն անխնա կերպով դրսևորում էր խաղաղության ցենտրիստական պրոպագանդի ամբողջ դավաճանական, մանր-բուրժուական էությունը:

Աշկարա օպորտունիստ-պաշտպանողականները սատարում եյին պարլամենտում իրենց կառավարության, քվեարկում հոգուտ պատերազմի պետքերի համար փող բաց թողնելու առաջարկների, բուրժուական կառավարությունների մեջ մտնում (մի շարք բուրժուական կառավարություններ իրենց կազմի մեջ ունեյին մեկ-յերկու մինիստր-սոցիալիստ), գնում ռազմաճակատ, որպեսզի ոգնեն բուրժուազիային





Պետական դումայի բոլշևիկ-պատգամավորներն աքսորավայրում (ընկ. ընկ. Պետրովսկի, Բադայեվ, Սամոյլով, Մուրանով, Շագով):

համոզելու զինվոր-բանվորներին, որ սպանեն ուրիշներին ու իրենք մահվան մատնեն իրենց:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Պաշտպանողականության ու ցենտրիզմի դեմ պայքարելով, բոլշևիկները միևնույն ժամանակ պատերազմական շրջանի դժվարագույն պայմաններում անդադրում հեղափոխական պրոպագանդ եյին մղում բանվորների և զինվորների մեջ, կոչելով նրանց տապալելու ինքնակալությունը զինված ապստամբության միջոցով:

Ցարական ժանդարմերիան 1914 թ. կեսում ջախջախեց բանվորական բոլոր լեգալ կազմակերպությունները ու փակեց «Պրավդա»-ն: Պատերազմի սկզբում տեղի ունեցավ կուսակցական աշխատողների խորհրդակցությունը Դումայի բոլոր բոլշևիկյան պատգամավորների հետ միասին (ընկ. ընկ. Պետրովսկի, Բադայեվ, Սամոյլով, Մուրանով և Շագով): Խորհրդակցությունը Լենինի թեզիսների հիմքի վրա պետք է մշակեր պատերազմի դեմ պայքարելու հարցը: Խորհրդակցության բոլոր մասնակիցները ձերբակալվեցին: Պատերազմի դեմ յելնելու համար

ցարական իշխանությունները բոլշևիկյան պատգամավորներին մեղադրեցին «հայրենիքին դավաճանելու» համար ու նրանց աքսորեցին Սիբիր։ Միաժամանակ ձերբակալվեցին ու աքսորվեցին կուսակցության բոլոր ակտիվ աշխատողները, այդ թվում ընկ. ընկ. Ստալինը և Մոլոտովը։

Վոստիկանությունն ու ժանդարմերիան մտցրին հետամտությունների, պրովոկացիաների և մատնությունների դաժանագույն ռեժիմ։ Ամբողջ երկրում կատարվեցին բոլշևիկների ընդհանրական ձերբակալություններ։

Բայց չնայած ցարական վոստիկանության այդ դաժանագույն արշավանքին ընդդեմ բոլշևիկների, ցարիզմին այնուամենայնիվ չհաջողվեց կտրել կուսակցության կապերը մասսաների հետ։ Կուսակցությունը մարտական ագիտացիա էր մղում իմպերիալիստական սպանդի դեմ և հեղափոխության նախապատրաստման համար։ Թերթիկները, թռուցիկները և բանավոր պրոպագանդը գործարաններում, պահեստի զորամասերում ու խրամատներում տարածվում էին համաշխարհային պատերազմի ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։

Բոլշևիկների աշխատանքն առանձնապես լայն չափեր ընդունեց 1916—1917 թվականներին։ Պատերազմը քայքայեց երկրի ամբողջ տնտեսական կյանքը, սկսվեցին գործադուլներ, սկսվեց դասալքությունը ռազմաճակատում, բացի դրանից սկսվեցին ցարական բանակի ռազմական պարտությունները։ Թիկունքում կատարվում էին անվերջ մատնություններ ու դավաճանություններ։ Ամենաբարձր հիմնարկներում և նույնիսկ ցարական պալատում կային շատ լրտեսներ։ Երկիրն ուժասպառ եղավ երկարատև պատերազմի պատճառով։ Գյուղատնտեսությունը հասավ անկման, զրկվելով տղամարդկային աշխատանքից ու ձիերից, վորոնք վերցված էին ռազմաճակատ։ Սկսվեց պարենավորման ճգնաժամ։ Արդյունաբերությունն ու տրանսպորտը ջլատվեցին, քայքայումը բռնեց ամբողջ ժողովրդատնտեսությունը։ Այդ հողի վրա սկսեց արագ աճել հեղափոխական վերելքը։

Բուրժուազիան վախեցավ երկրում ստեղծված դրությունից։ Նա փորձ արեց համաձայնության գալու ցարական ինքնակալության հետ, համոզելու նրան, վոր երկրի ղեկավարությունը կալվածատեր ազնվականների կողքին մտցնի արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչներին։ Սակայն ուշ էր արդեն։ Հեղափոխությունը դուրս ժայթքեց։ Վաղեմի ատելությունը դեպի ցարական ինքնակալությունը բուռն կերպով վերածվեց բանվորների, գյուղացիների և զինվորների բացահայտ հեղափոխական ապստամբության։ Ապստամբությանը նախորդեցին բանվորների բազմաթիվ գործադուլներ և միտինգներ։ Գործադուլների ալիքը 1917 թվի սկզբում անցավ Ռուսաստանի բոլոր արդյունաբերական քաղաքներովը մին։ Միտինգներն ընթա-



նում էին ինքնակալությունը տապալելու և պատերազմը լիկվիդացիայի ենթարկելու լոզունգով։ Շատ քաղաքներում սկսվեցին բանվորների մասսայական ցույցեր, վոր բոլշևիկներն էին կազմակերպել։ Վրդովմունքը ցարական ռեժիմից շուտով ընդունեց բացահայտ զինված ելույթի ձևեր։ Բանվորները զենքի դիմեցին։ Փողոցներ դուրս եկան և պատերազմից տանջված զինվորներն ու բանվորների՝ սովահարությունից տառապած կանայք։ Բարիկադներ երևացին։

Փողոցային մարտեր սկսվեցին վոստիկանության ու ժանդարմերիայի հետ։ Ցարական կառավարությունը կարող չեղավ հենվելու Պետրոգրադի կայազորի վրա, վոր հիմնականում բաղկացած էր պատերազմից հոգնած զինվորներից—մոբիլիզացիայի ենթարկված բանվորներից և գյուղացիներից։ Բուրժուազիան անզոր հանդիսացավ զսպելու մասսաների հեղափոխական պայթյունը։ Ինքնակալությունը տապալվեց։

## 6. ՓԵՏՐՎԱՐԻՑ ԴԵՊԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ

### ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Փետրվարյան հեղափոխությունն ավարտեց ժողովրդական մասսաների՝ ցարիզմի դեմ ուղղված պայքարի երկարատև շրջանը։ Մի-քանի որում Ռուսաստանը դարձավ բուրժուա-դեմոկրատական հանրապետություն, վորի մասին Լենինը 1917 թվի ապրիլին ասում էր. «Ռուսաստանն այժմ բոլոր պատերազմող երկրներից ամենազատ երկիրն է աշխարհում»։

Փետրվարյան հեղափոխության մեջ մեկեն արդարացավ բոլշևիկների դիրքը մենշևիզմի ու նրա այլատեսակության՝ տրոցկիզմի դեմ ուղղված պայքարում։ Հեղափոխական ապստամբությունը 1917 թ. փետրվարին բանվորական մասսաների ապստամբություն էր, վորոնց յեռանդուն կերպով սատարեց գյուղացիական բազմամիլիոն մասսան։ Փետրվարյան հեղափոխությունը յեկավ վորպես սկիզբն բանվոր դասակարգի և գյուղացիության կազմակերպված դաշինքի։ Հեղափոխության մեջ ղեկավար ուժը բանվոր դասակարգն էր։

Սակայն բուրժուազիան կարողացավ իր շահերի տեսակետից ոգտագործել ապստամբած բանվորների և գյուղացիների հաղթանակը։ Դրանում նրան ոգնեցին մենշևիկներն ու եսերները։ Նա կազմեց ժամանակավոր կառավարություն, վոր բաղկացած էր ֆաբրիկատերերի, բանկիրների, վաճառականների և ազնվական-կալվածատերերի ներկայացուցիչներից իշխան Լվովի գլխավորությամբ։

Մենշևիկները նույն դերն էին բռնել, ինչ վոր 1905 թվականին։ Նրանք կարծում էին, վոր ինքնակալության տապալումից հե-

տը իշխանությունը պետք է անցնի բուրժուազիայի ձեռքը: Մենշևիկները համոզում էին բանվորներին, որ հեղափոխության գլխավոր շարժիչ ուժը բուրժուազիան է հանդիսանում, թեև բանվոր դասակարգի համար ակներև էր միանգամայն, որ հենց ինքն է տապալել ցարական իշխանությունը, որ հենց ինքը, պրոլետարիատն է կատարել հեղափոխությունը, գյուղացիության օգնությունն ունենալով: Մենշևիկներն իրենց բոլոր ուժերով օգնում էին բուրժուազիային ամրապնդելու նրա տիրապետությունը, հետևաբար և շարունակելու իմպերիալիստական պատերազմը՝ անգլիական ու ֆրանսական կապիտալի կողմն անցած:

Հեղափոխության առաջին օրերին գոյացած՝ բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդներն սկզբից ևեթ մենշևիկների և էսէռների ձեռքն ընկան: Բուրժուազիայի ձեռքը տալով իշխանությունը, այդ կուսակցությունները կամովին իրենց վրա վերցրին խորհուրդների մեջ բուրժուական կառավարությանը սատարելու գործը կազմակերպելու խնդիրը: Ցավ թեպետ մենշևիկներին հաջողվում էր առաջին ժամանակները խորհուրդները հետ պահել բուրժուազիային հեղափոխականորեն տապալելուց, բայց հեղափոխությունից հետո կազմված ժամանակավոր կառավարությունը լիակատար անձնիշխանություն չուներ: Բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհուրդները, որ կարճ ժամանակամիջոցում ստեղծվեցին բոլոր քաղաքներում, բանակում և գյուղերում, ըստ էության յերկրորդ իշխանությունն էին յերկրում, պաշտոնական իշխանության կողքին:

Ստեղծվեց մի դրություն, յերբ իրոք յերկու իշխանություն գոյություն ունեյին: Նրանցից մեկը՝ ժամանակավոր կառավարությունը՝ բուրժուազիայի իշխանությունն էր: Մյուսը՝ խորհուրդները՝ բանվորների և գյուղացիների իշխանությունն էր: Այդպիսի դրությունը չէր կարող յերկար տևել. վաղ թե ուշ պետք է հաղթանակեր այդ իշխանություններից մորեն մեկը: Պետք է վերջնականապես հաստատվեր ամ բուրժուազիայի դիկտատուրան կամ պրոլետարիատի դիկտատուրան:

Փետրվարյան հեղափոխությունը լայն լեգալ հնարավորություններ բացեց կուսակցական աշխատանքի զարգացման համար: Արդյունաբերական բոլոր խոշոր կենտրոններում իրենց աշխատանքը ծավալեցին կուսակցական կոմիտեները: Պետրոգրադում նորից սկսեց լույս տեսնել «Պրավդա»-ն, որը նախ ընկ. Մոլոտովն էր խմբագրում, իսկ հետո աքսորավայրից ժամանած ընկ. Ստալինը: Բոլշևիկների կուսակցությունն ու ընկ. Ստալինն այդ ժամանակ լրագրում և խորհուրդներում հանդես էին գալիս ընդդեմ բուրժուական ժամանակավոր կառավարության, հօգուտ խորհուրդների ամրապնդման, հօգուտ նրանց



ձեռքում իշխանությունը կենտրոնացնելու: Կուսակցությունը հայտարարեց, որ ժամանակավոր կառավարությունն ըստ էության հակահեղափոխական է, որովհետև բաղկացած է խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչներից, ուստի և նրա հետ որևէ համաձայնություն լինել չի կարող: Աքսորավայրից յեկած Կամենևը, ընդհակառակը, հանդես յեկավ մի շարք հոդվածներով, որոնք կոչ էին անում սատարելու ժամանակավոր կառավարությանը:

Պատերազմի հարցում կուսակցությունը դրավում էր իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վճռականորեն փոխարկելու դիրքը: Կուսակցությունն առաջադրում էր ռազմաճակատում զինվորների յեղբայրացման լոզունգը: Կամենևը համաձայն չէր կուսակցությանը պատերազմի հարցում ևս. նա առաջարկում էր այս հարցում էլ սատարել ժամանակավոր կառավարությանը: Նա դեմ էր յեղբայրացմանը խրամատներում: Ընկ. Ստալինն անխնա քննադատում էր Կամենևի այս հայացքները, մերկացնելով նրանց օպորտունիստական էությունը:

Կուսակցությունը չգնաց Կամենևի հետևից, կուսակցությունը գնում էր ընկ. Ստալինի հետևից, դեռևս մինչ Լենինի գալը ճիշտ գիծ բռնելով: Բոլշևիկների ագիտացիան պատերազմի դեմ և ժամանակավոր կառավարության բուրժուական էության վճռական մերկացումը գրավում էին պրոլետարական լայն մասսաների ուշադրությունն ու համակրանքը:

Ցավ յերբ 1917 թ. ապրիլի 3-ին վտարանդիության յերկար տարիներից հետո Ռուսաստան վերադարձավ Լենինը, նա հիացմունքով դիմավորվեց հեղափոխական Պետրոգրադի բանվորների և զինվորների կողմից:

Հետևյալ օրը Լենինը հանդես յեկավ իր հռչակավոր «ապրիլյան թեզիսներով», որոնք դարձան պրոլետարական դիկտատուրայի համար մղվող ծավալուն պայքարի ծրագիր: Լենինն այդ թեզիսներում ընդգծում էր դրության յուրահատկությունը, յերբ բուրժուական պաշտոնական իշխանության կողքին գոյություն ուներ խորհուրդների իշխանությունը, որոնք գործով իրականացնում էին պրոլետարիատի յեվ գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան:

Հետևաբար բուրժուական-դեմոկրատական հեղափոխության գլխավոր խնդիրն իրագործված էր: Հերթի դրված էր հեղափոխության հետևյալ էտապը—պայքարը պրոլետարիատի յեվ չքավորագույն գյուղացիության դիկտատուրայի համար, անցում բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունից պրոլետարական-սոցիալիստական հեղափոխության:

Լենինի թեզիսների մեջ ճշտորոշ արտահայտված էր իշխանությունը խորհուրդներին տալու պահանջը:

«Ոչ թե պարլամենտար հանրապետություն,—ասված էր

Թեզիսներում,— Բ. Գ. Խ.-ից նրան վերադառնալը կլինի մի քայլ դեպի հետ,— այլ Բանվորական, Բատրակային և Գյուղացիական Պատգամավորների Խորհուրդների հանրապետություն ամբողջ յերկրովը մին վարից մինչև վեր»։

Թեզիսներն ազդարարում եյին այս լոզունգը. «Վոչ մի սատարում ժամանակավոր կառավարությանը»։

Այդ լոզունգը միևնույն ժամանակ չեր նշանակում ժամանակավոր կառավարությունն անհապաղ տապալելու կոչ։ Բանվորա-գյուղացիական և զինվորական մասսաների վրա հենվող խորհուրդները շատ ավելի մեծ իշխանություն ունեյին, քան թե ժամանակավոր կառավարությունը, բայց խորհուրդները դեռևս մենշևիկների ու եսերների ձեռքումն եյին։ Բանվորական ու զինվորական մասսաները դեռևս գնում եյին բուրժուազիայի այդ գործակալների հետևից։ «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգը նշանակում եր կոչ՝ պայքարելու յերկիշխանության դադարեցման ու բանվորների և գյուղացիների հեղափոխական միասնական իշխանություն հաստատելու համար։ Այդ լոզունգը նշանակում եր խորհուրդների մեջ մեծամասնության համար պայքարելու կոչ։

## ՊԱՅՔԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԵՋ՝ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կուսակցությունը գնում եր այն իսկ ուղիով, վոր նրա կողմից ծրագրված եր դեռևս 1905 թ. հեղափոխության ժամանակ։ Այն հեղափոխական ուժը, վոր ներկայացնում եյին բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդները, հնարավոր եր դարձնում, առանց հետաձգելու անհապաղ սկսել պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի համար։

Աջ ոպորտունիստները—Կամենևը, Ռիկովը, Նոգինը և այլք—հենց են գլխից չհասկացան ստեղծված դրության յուրահատկությունը։ Նրանք պնդում եյին, թե, նախքան սոցիալիստական հեղափոխության անցնելը՝ տակավին հարկավոր ե մինչև վերջը հասցնել բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը և ամբողջապես վոչնչացնել ճորտատիրության մնացորդները։ Բայց այս պնդումը խորհուրդների դասակարգային իսկ բնության մի ոպորտունիստական թերագնահատումն եր։ Լենինն այս առարկումների առթիվ մատնանշում եր.

> «Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդը»—ահա ձեզ «պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի» արդեն իսկ իրագործումը կյանքի կողմից։

Այս պատճառով բոլշևիկյան կուսակցությունը յեռանդուն պայքար ծավալեց մասսաների համար՝ «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգով։ Կուսակցությունը մերկացնում եր ժամանակավոր կառավարության և նրան սատարող մենշևիկների ու եսերների իմպերիալիստական քաղաքականությունը։ Բոլշևիկները մասսաներին բացատրում եյին, թե խաղաղության չի կարելի հասնել այլ ճանապարհով, քան պատերազմից հեղափոխական յելք կատարելով միայն, թե բուրժուական կառավարությունը չի կարող բանվորներին հաց և գյուղացիներին հող տալ, թե միակ իշխանությունը, վորը կարող կլինի տալ խաղաղություն, հաց և հող՝ դա խորհուրդների իշխանությունն ե։

Յերկիրը հոգնել եր պատերազմից։ Բանվորական ու գյուղացիական մասսաները թիկունքում և զինվորները ճակատում՝ միահամուռ կերպով խաղաղություն եյին պահանջում։ Բուրժուական կառավարությունը և նրան սատարող մենշևիկներն ու եսերները պատրաստվում եյին իմպերիալիստական պատերազմը շարունակելու։ Ժամանակավոր կառավարությունը եսեր Կերենսկու գլխավորությամբ պատրաստում եր նոր հարձակում ավստրիական ճակատում։ Սա առաջացրեց աշխատավորական զանգվածների սոսկալի զայրույթը։ Գյուղացիությունը պահանջում եր իրեն տալ կալվածատիրական հողերը։ Բայց բուրժուական կառավարությունը մենշևիկների և եսերների աջակցությամբ հրաժարվում եր հողը կալվածատերերից խլել և համոզում եր գյուղացիներին սպասել մինչև Սահմանադիր ժողովի գումարումը, վորն իբրև թե միայնակ ե իրավազոր եր այս հարցը լուծելու։ Սա, իր հերթին, առաջացրեց գյուղացիների հեղափոխական դժգոհությունը գյուղում և զինվորներինը՝ ֆրոնտում։ Լենինն այսպես բնութագրեց ժամանակավոր կառավարության դիրքը դեպի գյուղացիությունն ունեցած վերաբերմունքի հարցում.

> «Հողի համար սպասիր մինչև Սահմանադիր ժողովը։ Սահմանադիր ժողովի համար սպասիր մինչև պատերազմի վերջը։ Պատերազմի վերջին սպասիր մինչև լիակատար հաղթությունը։ Ահա՛ թե ինչ ե դուրս գալիս։ Կապիտալիստներն ու կալվածատերերը, ունենալով իրենց մեծամասնությունը կառավարության մեջ, ուղղակի ծիծաղում են գյուղացիների վրա»։

Այնինչ՝ բոլշևիկների ագիտացիան մասսաներում շարժում առաջ-
ծեց դեպի բոլշևիզմի դրոշակների ներքո։

Բոլշևիկների լոզունգները լայնորեն տարածվում եյին աշխատավոր մասսաների մեջ, արագորեն մուտք եյին գործում ֆրոնտ ու գյուղ։ Այս ագիտացիայի ազդեցությամբ բանվորական և զինվորային զանգվածներն սկսեցին հետ կանչել մենշևիկյան և եսերական պատգամավորներին և նրանց փոխարինել բոլշևիկներով։ Սկսվեց հեղափոխական շարժման հզոր վերելքը։ Ամենուրեք և, մանավանդ, Պետրոգրադի փողոցներում ու հրապարակներում սկսվեցին բանվորների յեվ

զինվորների ցույցը բոլշևիկների լոզունգներով: Ֆրոնտում տեղի էր ունենում ռուս զինվորների եղբայրացումը գերմանական և ավստրիական զինվորների հետ: Ի պատասխան ժամանակավոր կառավարության 1917 թ. հունիսի 18-ի այն հրամանի, որով պետք է ֆրոնտում սկսվեր ընդհանուր հարձակում՝ ամբողջ երկրում ծավալվեցին բողոքի բուռն ցույցեր՝ բոլշևիկների դրոշակների ներքո և լոզունգներով: Մասսաներն արագությամբ ազատվում էին մենշևիկյան-էսերական ազդեցությունից և կանգնում էին պրոլետարական դիկտատուրայի համար պայքարելու ճանապարհին:

Բոլշևիկյան կուսակցությունն ուժեղ դաշնակից ստացավ ճնշված ազգային ծայրամասերի հեղափոխական շարժման՝ մանավանդ Ֆինլանդիայում, Ուկրաինայում և Բելոռուսիայում: Բոլշևիկների ծրագիրը ցույց էր տալիս Ռուսաստանում ճնշված ազգային հակասությունները վոչնչացնելու ուղին և նրա բազմաթիվ ժողովուրդների համար հնարավորություն էր ստեղծում, որ նրանք իրենց կարիքները լուծեն համապատասխան իրենց ազգային շահերի և այս շահերը զուգակցելով (շաղկապելով) պրոլետարիատի դասակարգային ընդհանուր շահերի հետ:

## ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ: ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1917 թ. հուլիսի 3-ին Պետրոգրադի բանվորական և զինվորական մասսաները հսկայական ցույց կազմակերպեցին՝ պահանջելով, որ իշխանությունը խորհուրդներին տրվի: Մենշևիկները և էսերները, որ գլխավորում էին այն ժամանակ խորհուրդները, բանվորների և զինվորների պահանջների դեմ դուրս եկան, իսկ ժամանակավոր կառավարությունը Պետրոգրադի խորհրդի մենշևիկյան և էսերական առաջնորդների օրհնությամբ կրակեց ցույցի վրա: Ժամանակավոր կառավարությունը բանվորական հեղափոխական կազմակերպությունները քարուքանդ անելուց հետո սկսեց ֆրոնտից քաշել-բերել իրեն հավատարիմ կազակ և զվարթխական գնդերը: Սկսվեցին բոլշևիկների ձերբակալությունները: Լենինը հարկադրված էր ծածկվել ընդհատակում, վորպեսզի այնտեղից ղեկավարի կուսակցության և պրոլետարիատի պայքարը իշխանության համար: «Правда»-յի խմբագրությունը քարուքանդ արվեց: Ֆրոնտում մահապատիժ մտցվեց: Բոլշևիկյան կուսակցությունը կիսալեգալ վիճակի մեջ ընկավ, խորհուրդների և բանվորական այլ կազմակերպությունների մեջ աշխատելու հետ միասին՝ նա հարկադրված էր կուսակցական աշխատանք կատարել զուտ ընդհատակյա եղանակներով:

Կիսալեգալ այս պայմաններում 1917 թ. օգոստոսին գումարվեց կուսակցության VI համագումարը, որը Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման գործում վիթխարի դեր խաղաց: Համագումարը տեղի յեր ունենում ղեկավարությամբ ընկ. Ստալինի, որը տվեց հիմնական դիրքավորումներ ընթացիկ մոմենտի գնահատման և զինված ապստամբության նախապատրաստման վերաբերմամբ:

Իր ունեցած ելույթում ընդդեմ Պրեոբրաժենսկու, որը ժխտում էր հեղափոխության հաղթանակի հնարավորությունը մի, մեր երկրում, ընկ. Ստալինը հայտարարեց, որ «հենց Ռուսաստանը կլինի այն երկիրը, որը ճանապարհ կհարթի դեպի սոցիալիզմը»: Ընկ. Ստալինի այս խոսքերն ամբողջապես և լիակատարորեն հաստատվեցին:

Գնահատելով հուլիսյան անցքերից հետո ստեղծված իրադրությունը՝ Լենինը գրում էր. «Երկիշխանությունը վերջացավ: Վճռական տեղում հեղափոխությունն անցավ հակահեղափոխության ձեռքը»: Բոլշևիկների հերոսական պայքարը, չնայած Կերենսկու կառավարության հալածանքներին՝ մասսաների հետ ունեցած նրանց կապի ուժեղացումը, «ամբողջ իշխանությունը մասսաներին» լոզունգը մասսաներին լայնորեն բացատրելը—այս ամենը տվեց այն հետևանքը, որ բոլշևիկների ազդեցությունն սկսեց սաստիկ աճել: Մոսկվայում արհմիությունների մեծ մասն անցավ բոլշևիկների ձեռքը: Պետրոգրադում խորհուրդների մեջ բոլշևիկյան թևն օրեցօր ուժեղանում էր:

Սա չէր կարող չանհանգստացնել բուրժուական կառավարությանը: Ըստ որում՝ բուրժուական հակահեղափոխության շարքերում աճում էր դժգոհությունը ժամանակավոր կառավարությունից, որը, այդ շրջանների կարծիքով, անընդունակ էր ճնշելու պրոլետարական աճող հեղափոխությունը: Այս ռեակցիոն (հետադիմական) շրջանները, որոնց գլխավորում էին հին գեներալները—Կորնիլովը, Կալեդինը և այլք—տեսնում էին բոլշևիկների աճող ազդեցությունը խորհուրդներում և այս պատճառով հարված էին պատրաստում ամենից առաջ խորհուրդների համար:

Հակահեղափոխական այն ապստամբությունը, որն օգոստոսի վերջերին բարձրացրեց գեներալ Կորնիլովը, նպատակ ուներ վերջ տալ խորհուրդներին և վերջնականապես ամրապնդել բուրժուազիայի իշխան դիկտատուրան: Բայց բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ բանվորական և զինվորական մասսաներն այս ապստամբությունը խորտակեցին վճռականորեն:

Պրոլետարիատը զինելու լոզունգը, որ կուսակցությունն առաջադրեց կորնիլովյան հակահեղափոխական խռովության կապակցությամբ, ունեցավ այն հետևանքը, որ ամենուրեք սկսեցին կազմվել բանվորական խմբեր (դրուժինաներ), կազմակերպվեց բանվորական Կարմիր գվարդիան: Բանվորական մասսան մենշևիկների և էսերների հակահեղափոխական վախկոտ բնույթը վերջնականապես լավ հասկացավ և սկսեց

նրանց վանդել խորհուրդներից վերընտրելով նրանց և նրանց փոխարեն ուղարկելով միայն բոլշևիկների: Դեպի մեր կուսակցությունը և նրա լոզունգները մասսաների ունեցած վստահության այս աճումն ունեցավ այն հետևանքը, որ 1917 թ. սեպտեմբերին բոլշևիկների ձեռքումն էյին թե Պետրոգրադի յեվ թե Մոսկվայի խորհուրդները: Յերկու խորհրդում էլ բոլշևիկներին էր պատկանում մեծամասնությունը:

Ասել է թե՝ հասել էր ժամանակը, յերբ բոլշևիկները բանվորական և գյուղացիական մասսաներին պետք է տանեյին իշխանություն նվաճելու, պրոլետարական դիկտատուրա հաստատելու:

«Յերկու մայրաքաղաքի էլ Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդներում մեծամասնություն ստացած լինելով,—գրում էր Լենինն իր ընդհատակից—բոլշևիկները կարող են և պետք է իրենց ձեռքը վերցնեն պետական իշխանությունը»:

Լենինն իր այս նամակն ավարտում էր հետևյալ խոսքերով.

«Մեկեն վերցնելով իշխանությունը թե Մոսկվայում և թե Պիտերում (կարևոր չէ, թե ով կսկսի, գուցե և նույնիսկ Մոսկվան կարող է սկսել)՝ մենք կհաղթենք անպայման յեվ անտարակույս»:

1917 թ. սեպտեմբերն ու հոկտեմբերը Կերենսկու հակահեղափոխական կառավարության դեմ ապստամբվելու համար մասսաների նախապատրաստման ամիսներ էյին: Պետրոգրադի ու Մոսկվայի և արդյունաբերական կենտրոնների բանվոր դասակարգն արագորեն զինվում և պատրաստվում էր իշխանությունը խլելու: Ֆրոնտում զինվորները բանակային կոմիտեներից դուրս էյին շպրտում մենշևիկներին ու էսէռներին և նրանց տեղը բոլշևիկների էյին ընտրում: Գյուղում կալվածատիրական հողերի տարերային զավթումն էր տեղի ունենում: Գյուղացիական խորհուրդների ահագին մասում ձայներ էյին հնչում ընդդեմ էսէռների, հօգուտ բոլշևիկների, հօգուտ՝ «հաց, խաղաղություն ու հող» լոզունգի:

Հոկտեմբերի նախօրյակին (1917 թ. հոկտեմբերի 13-ին, նոր տոմարով՝ 26-ին) կազմված բոլշևիկյան Ռազմա-հեղափոխական կոմիտեն պրոլետարական հեղափոխության կողմն անցած զորքերով և Կարմիր գվարդիայի ուժերով գրավեց Պետրոգրադի ամենակարևոր կետերը: Կարմիր-գվարդիականները և նավաստիները գրավեցին հեռախոսակայանը, ապա փոստը և հեռագիրը: Կերենսկին սպաներին, յունկերներին և կանանց գումարտակները (բատալյոնները) քաշեց-բերեց Ձմեռային պալատը, որտեղ թաքնվել էր Ժամանակավոր կառավարությունը: Պետրոգրադի ամբողջ շրջակայքից Ժամանակավոր կառավարությունը զորքեր կանչեց՝ բոլշևիկների դեմ կռվելու համար: Բայց բոլշևիկյան ագիտատորները բոլոր ճանապարհներին կանգ-



նեցնում էյին այդ զորամասերը, և նրանք կամ բոլշևիկների կողմն էյին անցնում կամ հետ էյին դառնում իրենց զորանոցները: 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Ձմեռային պալատը համառ կռիվներից հետո գրավեցին զինվորական կարմիր զորամասերն ու բանվորների ջոկատները, և Ժամանակավոր կառավարությունը տապալվեց: Իշխանությունն անցավ բանվոր դասակարգի ձեռքը: Նույն օրն ևեթ բացվեց Խորհուրդների համառուսական 2-րդ համագումարը: Համագումարում մեծամասնությունը բոլշևիկներին էր պատկանում: Համագումարը հայտարարեց Ժամանակավոր կառավարությունը տապալված և ընտրեց Ժողովրդական կոմիսարների առաջին խորհուրդը Լենինի գլխավորությամբ:

Պրոլետարական հեղափոխության հաղթանակը առիշեղ, իմիջի այլոց՝ վերջնականապես վախճանին հասցրեց և ավարտեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը: Լենինը հետագայում մատնանշում էր, որ Հոկտեմբերյան հեղափոխության «կողմնակի արդյունքը» այն է յեղել, որ նա ամենավճռական կերպով վերջ տվեց ցարական-ճորտատիրական հասարակակարգի բոլոր մնացուկներին: Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց կալվածատերերի, իշխանների և յեկեղեցու հողի սեփականությանը և թաղեց ցարական, միապետական կարգը, վերջ տվեց այն իրավազրկությանը և անհավասարությանը, որ կապված են միապետական ռեժիմի հետ: Նա վերջ տվեց դասերի գոյությանը (մարդկանց բաժանումն արիստոկրատիայի ու հասարակ ժողովրդի—ազնվականների, գյուղացիների, քաղքենիների և այլն), վերջ տվեց գյուղի ճորտատիրական շահագործման մնացորդներին, կնոջ իրավական անհավասարությանը և ճնշմանը, պաշտոնական կրոնի ու յեկեղեցու իշխող դրությանը, ազգությունների անիրավահավասարությանը և այլն: Յեվրոպայում բուրժուական վոչ մի հեղափոխություն մինչև վերջը հասցրած չի յեղել բուրժուական-դեմոկրատական ամեն մի հեղափոխության այս խնդիրները: Ինչու: Վորովհետև, ինչպես Լենինն է ասում,

«... խանգարել է դեպի «մասնավոր սրբազան սեփականություն» ... յեղած «հարգանքը»: Մեր պրոլետարական հեղափոխության մեջ չի յեղել այս նզովյալ «հարգանքը» դեպի յերիցս նզովյալ միջնադարը և դեպի այդ «մասնավոր սրբազան սեփականությունը»:

Ռուսական հեղափոխությունը միջազգային պրոլետարական հեղափոխության ընդհանուր արշավն էր բաց անում: Մի խումբ աջակողմյաններ Կամենևի և Ռիկովի գլխավորությամբ ժխտում էյին պրոլետարական հաջող հեղափոխության հնարավորությունը Ռուսաստանում: Նրանք մենշևիկների նման կարծում էյին, թե, քանի դեռ չի հաղթել հեղափոխությունը արևմտա-յեվրոպական յերկրներում, պրոլե-

տարական հեղափոխությունը Ռուսաստանում կլինի «ավանտյուրա», այսինքն՝ մի գործ, որը կանխապես դատապարտված է տապալման: Աջերը դեմ գնացին պրոլետարական հեղափոխության վերաբերյալ բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը պրոլետարականի վերաճելու, մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության վերաբերյալ լենինյան ուսմունքին: Այս պատճառով էլ նրանք հանդես եյին գալիս բոլշևիկյան կուսակցության՝ «Պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության դիկտատուրայի», «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգների դեմ:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հենց առաջ Կամենևին միացավ և Զինովևը: Նրանք դեմ եյին, որ խորհրդային իշխանությունը վերցնեն, նրանք կողմնակից եյին մենշևիկների և եսերների հետ միասին ընդհանուր կառավարություն ստեղծելուն:

Լենինը, Ստալինը և ամբողջ Կենտրոնական կոմիտեն վճռականապես պայքարում եյին Կամենևի և Զինովևի շտրեյկբրեխերական (դավաճանական) այս դիրքի դեմ: Վախեցած այս «առաջնորդները» ոչ կուսակցական մամուլում («Новая жизнь») սկսեցին հանդես գալ կուսակցության դեմ, տարփողելով (գաղտնիքները դուրս տալով) այն մասին, որ մեր կուսակցությունը պատրաստվում է ապստամբության: Նրանք իրենց շատ խայտառակ եյին պահում նույնպես հենց Հոկտեմբերյան հեղափոխության վայրկյանին. նրանք հեռացան իրենց պոստերից, պարզեիպարզ դասալքեցին: Իհարկե սա դավաճանություն եր: Թողնել հեղափոխական պայքարի ճակատը դասակարգային մարտերի ամենաթեժ ժամանակը՝ սա վհատված և վախկոտներին և ոչ թե պրոլետարական առաջնորդներին: Կուսակցությունը խստորեն դատապարտեց փոքրոգի այս առաջնորդների վարքագիծը: Լենինը նույնիսկ պահանջեց նրանց վտարել կուսակցությունից: Ինչպես Լենինն ընդգծեց հետագայում, 1923 թ. վերջերին, իր մահից հենց առաջ՝ Կամենևի և Զինովևի դավաճանությունը պատահական չէր, նա բխում եր նրանց օպորտունիստական բնույթից և, իհարկե, նա չսասանեց բոլշևիկյան կուսակցության վճռականությունը:

«Յեթե մի այդպիսի ժամանակ տատանվող առաջնորդները մի կողմ են կանգնում, դա ոչ թե թուլացնում, այլ ուժեղացնում է թե կուսակցությունը, թե բանվորական շարժումը, թե հեղափոխությունը»,—գրում եր Լենինը հետագայում:

Շնորհիվ պրոլետարիատի և գյուղի չքավորների հեղափոխական հերոսության՝ կուսակցության ղեկավարությամբ հաղթեց Հոկտեմբերյան հեղափոխությունը և սահմանեց պրոլետարական դիկտատուրա: Մեր յերկրի պրոլետարական դիկտատուրայի ամբողջ պատմությունը մենշևիկյան կուսակցության հակահեղափոխական մարգարեյություն-



ների և Զինովևի ու Կամենևի անձնատվական (կապիտուլյանտական) հայացքների մի ակնբախ հերքումն է:

# 7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԸ

## ԲՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Իր առաջին դեկրետներով խորհրդային իշխանությունը սահմանեց բանվորական հսկողություն արտադրության վրա, վոչնչացրեց հողի մասնավոր սեփականությունը, պրոլետարական պետության ձեռքն առավ բանկերը, յերկաթուղիները և այլն, հայտարարեց անհապաղ խաղաղության հասնելու համար ձեռնարկվող քայլերի մասին, նոր հասարակակարգի քաղաքական եյությունը վորոշեց մի հատուկ՝ «Աշխատավորների և շահագործվողների իրավունքների դեկլարացիայով»: Այս բոլոր առաջին դեկրետները մեկեն վորոշում եյին Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթը և խորհրդային իշխանության կողմից նոր պետակարգ (պետական կազմ) սահմանելը:

Խորհրդային իշխանությունը քանդեց առաջվա ցարական-կալվածատիրական պետական ապարատի բոլոր մնացորդները և նրա տեղն ստեղծեց պրոլետարական դիկտատուրայի ապարատը:

Բանվոր դասակարգի դիկտատուրայի հենց առաջին որերից խորհրդային իշխանությունը հանդիպեց քաղաքական և տնտեսական հսկայական դժվարությունների:

Սաբոտաժի և նոր իշխանության օրենքները ձախողելու (խախտելու) և խորհուրդների իշխանության դեմ բացահայտ զինված յելույթներ ունենալու միջոցով կատաղի գրոհումներ սկսեցին խորհրդային իշխանության վրա վոչ միայն տիրապետող տապալված դասակարգերը, այլև նրանց վարձկանների և սպասավորների ամբողջ բազմությունը—բանկային և պետական պաշտոնյաները, ծառայողները, յունկերներն ու սպաները, այլև բուրժուազիայի քաղաքական վարձկանները և գործակատարները—մենշևիկները և եսերները: Տապալված դասակարգերն իհարկե չեյին կարող ու չեյին կամենում հաշտվել իրենց դրության հետ և քաղաքացիական պատերազմ սկսեցին խորհրդային իշխանության դեմ: Դոնում, Ուկրայինայում, Օրենբուրգում, Սիբիրում, Ֆինլանդիայում կապիտալիստները և կալվածատերերը մենշևիկների և եսերների աջակցությամբ սպիտակ-գվարդիական ջոկատներ կազմակերպեցին, վորոնք ցարական գեներալների—Կալեդինի, Կրասնովի, Դուտովի, Սկորոպադսկու և այլոց հրամանատարությամբ պրոլետարական դիկտատուրայի դեմ հակահեղափոխական պայքար մղելու պատերազմական ճակատ բաց արին:

Խորհրդային իշխանությունը դեռևս իր բանակը չուներ: Նա

հենվում էր միայն Կարմիր գվարդիայի խմբերի և Լենինգրադի ու Մոսկվայի կայազորների (գարնիզոնների) հեղափոխական այն զորամասերի վրա, վորոնք Հոկտեմբերին մասնակցել էին իշխանության հեղափոխական նվաճմանը։ Ֆրոնտում գտնված զորամասերը պատերազմից հոգնել էին։ Կատարվում էր բանակի տարերային դեմոբիլիզացիա։

Յերկրի ժողովրդական տնտեսությունը քայքայվել էր իմպերիալիստական տևական պատերազմից։ Պարենային դրությունը շատ էր ծանր։ Գյուղատնտեսությունն անկման էր հասել։ Արդյունաբերությունը մեռնում էր։ Տրանսպորտը փլուզման վիճակում էր

Կուսակցության գլխավոր անելիքն այդ ժամանակաշրջանում դասակարգային թշնամու դիմադրությունը խորտակելն էր, իշխանությունը պահելը, Խորհրդային պետության ապարատ ստեղծելը, սեփական ռազմական ուժ ստեղծելը, պետություն կառավարել սովորելը՝ առանց սեփականատերերի, առանց շահագործողների՝ արդյունաբերությունը և ժողովրդական ամբողջ տնտեսությունը կառավարելն էր։

Գլխավոր դժվարությունն այն հարցի լուծումն էր, թե ինչպես դուրս գալ իմպերիալիստական պատերազմից։ Իշխանությունը գրավելու արդեն յերկրորդ օրը Խորհուրդների II համագումարը հաշտության դեկրետ ընդունեց։ Խորհրդային իշխանությունը դիմեց պատերազմող յերկրների բոլոր ժողովուրդներին և կառավարություններին՝ հաշտության բանակցություններ սկսելու համար։ Բայց անգլիական, ֆրանսական և այլ իմպերիալիստները մերժեցին բանակցություններ սկսելը։ Այս պատճառով Խորհրդային իշխանությանը մնում էր բանակցություններ սկսել Գերմանիայի և Ավստրիայի հետ։

Գերմանական իմպերիալիստները հաշտության շատ ծանր պայմաններ առաջարկեցին Ռուսաստանին։ Կուսակցության մեջ լուրջ տարաձայնություններ առաջացրեց այն հարցը, թե արդյոք ընդունել, թե մերժել այդ պայմանները։

Բրեստի հաշտության շուրջը յեղած (հաշտության բանակցությունները Բրեստում էին տեղի ունենում) այս պայքարում հատկապես վատ արտահայտվեց այսպես կոչված «ձախ» կոմունիզմի կեղծ «հեղափոխական», ըստ էության մանր-բուրժուական էությունը՝

Լենինի, Ստալինի և Կենտկոմի մեծամասնության դեմ հանդես յեկավ «ձախ» կոմունիստների մի խումբ, ընկ. ընկ. Բուխարինի, Ռադեկի, Պյատակովի, Յարոսլավսկու, Ուրիցկու, Ոսինսկու և այլոց ղեկավարությամբ։

Այս խումբը կուսակցության ներսում ֆրակցիա կազմեց։ Նա Բրեստի հաշտությունը պրոլետարիատի հեղափոխական կուսակցության համար անթույլատրելի զիջում էր համարում գերմանական իմպերիալիզմին։ Չնայած այն բանին, վոր պատերազմելու վոչ մի հնա-



րավորություն չկար և, ամենից առաջ, բանակ չկար, խումբը պահանջում էր, վոր հեղափոխական պատերազմ հայտարարվի։ «Ձախ» կոմունիստները հեղափոխականների համար անթույլատրելի էին համարում գերմանական իմպերիալիստների ձեռքից հաշտություն ընդունելը և այս խայտառակությունից գերադասում էին կռվում «գեղեցիկ մահ» ընդունելը՝

Իսկ Լենինը խստորեն ծաղրում էր «ձախերի» այս յերեխայությունը, բացատրելով, թե բանն այն չի, վոր թեկուզ գեղեցիկ կորչենք, այլ այն է, վոր յերկրին տանք թեկուզ և շատ ծանր խաղաղություն, բայց ժամանակ շահենք, փրկենք հեղափոխությունը և նորից անցնենք հեղափոխական հարձակման։ Լենինը, ինչպես և ցարիզմի հետ պայքարելու ամենադժվար տարիներին, չէր վախենում հեղափոխության ոգտին սև աշխատանք կատարելուց, իսկ «ձախ» կոմունիստներն ուժ չէին գտնում այդպիսի աշխատանք կատարելու և հաղթահարելու ժամանակավոր դժվարությունները, հոգեպես չընկճվելու պարտության դեպքում։

Տրոցկին, վոր մեր կուսակցությունն էր յեկել Հոկտեմբերյան հեղաշրջումից հենց առաջ, շփոթ դիրք էր բռնել, բայց ըստ էության հանդես էր գալիս «ձախերի» հետ միասին, վոգեվորում էր նրանց Լենինի և Ստալինի դեմ մղվող պայքարում։ Նա՝ «Վոչ հաշտություն, վոչ պատերազմ» լոզունգն առաջադրեց։ Այս լոզունգը նշանակում էր՝ հաշտություն ստորագրելուց հրաժարվել, իսկ պատերազմն էլ չշարունակել ու բանակը ցրել։ Լենինը մատնանշում էր, վոր Տրոցկու այս հաշտության էլ ավելի ծանր պայմանների պետք է հասցնի։ դիրքը

«Յեթե գերմանացիք սկսեն հարձակվել,—նախազգուշացնում էր Լենինը,—ապա մենք հարկադրված կլինենք ստորագրելու ամեն տեսակի հաշտություն, իսկ այն ժամանակ, իհարկե, այդ հաշտությունը կլինի վատթարագույնը»։

Այս հարցում «ձախերը» միացան Տրոցկուն, և պատահեց այն, ինչ նախատեսել էր Լենինը։ Գերմանական իմպերիալիզմն սկսեց հարձակումը, նա առաջ էր շարժվում գրեթե առանց վորևէ դիմադրության մեր կողմից, վորովհետև մեզանում փաստորեն ֆրոնտ արդեն չկար։ Խորհրդային իշխանությունը հարկադրված էր ընդունելու գերմանական իմպերիալիզմի թելադրած՝ հաշտության նոր, էլ ավելի ծանր պայմանները։

Կուսակցությունը մերժեց «ձախ» կոմունիստների պահանջները։ Նա գիտեր, վոր պրոլետարական հեղափոխության այս զիջումը համաշխարհային իմպերիալիզմին հարկադրական, անխուսափելի յեր մի այնպիսի ժամանակ, յերբ Գերմանիայի դեմ պատերազմը շարունակելու համար մենք վոչ բանակ ունեինք, վոչ միջոցներ, վոչ ռազմամթերք, վոչ էլ պարեն։ Չնայած այս ամենին՝ «ձախ» կոմունիստները

գրոհում եյին կուսակցության վրա, փաստորեն բլոկ եյին կազմել (միատեղ եյին հանդես գալիս) ձախ եսերների — մի կուլակային կուսակցության հետ, վոր պաճուճվել եր «հեղափոխական» հագուստով։ «Ձախ» կոմունիստները հրաժարվում եյին յենթարկվել, պատրաստում եյին պառակտում։

Շնորհիվ Բրեստի հաշտության՝ Խորհրդային Ռուսաստանը շունչքաշ (դադար) ստացավ և նրան ոգտագործեց իր Կարմիր բանակը և սոցիալիստական շինարարության համար պայմաններ ստեղծելու համար։ Հետագայում, ամրացնելով պրոլետարական դիկտատուրան, Խորհրդային իշխանությունը հնարավորություն ստացավ պատռելու հաշտության այն ծանր պարտավորությունները, վոր նրա վզին եյին փաթաթել գերմանական գեներալներն ու իմպերիալիստները։

«Ձախ» կոմունիստները հետո ընդունեցին կուսակցության իրավացի լինելը։ Նրանք ընդունեցին, վոր նրանք կարող եյին հեղափոխությունը կործանել, յեթե նրանց ֆրակցիան հաշտության հարցում հաղթեր։

## ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ

Պրոլետարական դիկտատուրայի հաստատման պայքարը քաղաքացիական ամենակատաղի պատերազմի պայմաններում եր ընթանում։ Տապալված դասակարգերի կողմը դուրս յեկավ համաշխարհային ամբողջ իմպերիալիզմը, վոր Խորհուրդների յերկրի դեմ ուղարկեց իր զորքերը և զրահակիրները։

Քաղաքացիական պատերազմը տեղի յեր ունենում իմպերիալիստական 4-ամյա այն սպանդից հետո ստեղծված տնտեսական փլուզման պայմաններում, վորի մեջ յերկիրը ծախսեց յերկաթի, պարենի, վառելիքի, կտորեղենի և այլնի իր ամբողջ պաշարը, մաշեց իր տրանսպորտը և քայքայեց իր արդյունաբերությունը։ Յերկիրը սոված եր։ Գործարանները և ֆաբրիկաները կանգնած եյին։

Բանվորները և գյուղացիներն իրենց դիմաց ունեյին կանգնած հիանալի վարժված սպիտակ-գվարդիական բանակներ, վոր գրեթե գլխովին բաղկացած եյին սպաներից։ Հակահեղափոխական այս բանակները լավ զինված, վոտից գլուխ լավ հագնված եյին, լավ ապահովված պարենով. նրանց զինում և մատակարարում եր համաշխարհային բուրժուազիան։

Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակը, վոր ստեղծված եր արդեն քաղաքացիական պատերազմի բովում, բոբիկ և մերկ եր։ Նա յերկրի լայնածավալ տարածությունների վրայով հսկայական անցումներ եր կատարում հաճախ տրեխներով և անգամ առանց վորևե վոտնամանի։ Նա յերբեմն ստիպված եր պատերազմել առանց արկե



(հրետանու ռումբերի) և առանց փամփուշտների։ Բանվորներն ու գյուղացիները Կարմիր բանակում նահանջում և հարձակվում եյին թև թևի տված, զրկանքները միասին եյին կրում, միասին եյին հերոսաբար կռվում սպիտակ-գվարդիական սպաների ու գեներալների դեմ, խլում եյին նրանցից համազգեստները և հաստատակ կոշիկները, անզեն (սոսկ ձեռքերով) վերցնում եյին սպիտակ-բանակայինների տանկերը և զրահապատ գնացքները, վեր եյին առնում նրանց չաղ ձիերին և ուժեղացնում եյին իրենց Կարմիր բանակը։

Բանվորները թիկունքում կիսաքանդ գործարաններում, վոր մեռնում եյին (կանգ եյին առնում) վառելիք և մետաղ չլինելուց, հերոսաբար ոգնում եյին ֆրոնտին՝ արկեր, փամփուշտներ, գրատներ (շինելներ), հեսկեր (փաթաթաններ) և այլն՝ պատրաստելով։

Բանվորական մասսաների մարտական խանդավառությունը մի չտեսնված բան եր։ Մեծագույն զրկանքների և պարենային դժվարությունների պայմաններում բանվորական զանգվածներն ամբողջ ուժով պայքարում եյին այն բանի համար, վոր բնավ թույլ չտան, վոր գործարանները կանգ առնեն, և բանակն առանց փամփուշտների մնա։ Վառելիքի համար, տրանսպորտի և գործարանների աշխատանքը բարելավելու համար բանվորական մասսաների մղած պայքարում ծնվեցին կոմունիստական շաբաթորյակները, վորոնց մասին Լենինն ասել ե, թե նրանք «թիկունքում բանվորների հերոսականության» արտահայտությունն են, և թե նրանք՝ «աշխատավորության իսկ ազատ և գիտակից կարգապահության» հայտաբերումն են։

Թե ֆրոնտում և թե թիկունքում գյուղացիությունը սատարում եր բանվոր դասակարգին. հակահեղափոխական բուրժուազիայի և կալվածատերերի դեմ մղված պայքարում։ Ուստի և գյուղացիությունը տալիս եր հաց և անասուններ՝ թե Կարմիր բանակը կերակրելու և թե քաղաքի բանվորներին սատարելու համար, վոր ֆրոնտի համար արտադրում եյին ռազմական հանդերձանք։

Քաղաքացիական պատերազմը տևեց յերեք տարուց ավելի։ Յերկիրն այս ամբողջ ժամանակամիջոցում պարենի և ապրանքների ամենասուր պակաս եր զգում։ Հաց, միս, հագուստեղեն, վոտնամանեղեն՝ այս ամենից չափազանց քիչ եր մնացել յերկրում։ Յեղած փոքրաքանակ պաշարները չվատնելու և բանակն ու ամբողջ պետությունն առանց պարենի և առանց հանդերձանքի չթողնելու համար՝ կարիք յեղավ յերկրում յեղած ամեն բան հաշվառման վերցնելու և ամեն ինչ բաշխելու շատ խնայողաբար։ Վորպեսզի չձախողեն Կարմիր բանակի պայքարը, վորպեսզի նրան հնարավորություն տան հաղթելու՝ թե գյուղացիությունը և թե մանավանդ բանվոր դասակարգն իրենց զրկում եյին ամենաանհրաժեշտ շատ բաներից։

Սա մի ժամանակաշրջան եր, յերբ կարիք յեղավ խիստ հաշվառման

վերցնելու բոլոր մթերքները և ապրանքները։ Նրանց բաշխումը կատարվում եյին պետական մարմինները հաստատուն նորմաներով։ Ամեն մի առևտուր արգելվեց։ Գյուղացիությունը պետությանը հացը հանձնում եր ըստ մասնաբաշխման (разверстка). պետությունը գյուղացիական տնտեսությունից վերցնում եր ամբողջապես վողջ հացը՝ բացի նրա տնտեսության սպառման համար ըստ նորմայի պահանջվածից (ընտանիքը և բանող անասուններին կերակրելու և սերմացվի մասից)։ Այս ժամանակաշրջանը հայտնի յե ռազմական կոմունիզմ անունով։

Գյուղացիությունը, իր գլխավոր նպատակը դնելով գեներալա-կալվածատիրական հակահեղափոխությունը հաղթելը՝ գիտակցաբար եր տանում քաղաքացիական պատերազմի ծանրությունները։ Յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը դրված եր այս նպատակին ծառայելուն — հաղթանակի կազմակերպելուն։ Թե արտադրությունը և թե բաշխումը յենթակա եյին այս նպատակին։ Ամբողջ բաշխումը կենտրոնացված եր։ Շուկայի միջոցով բաշխում բնավ չկար։

Այս ամբողջ սիստեմը հենված եր պատերազմական իրադրության (պայմանների), խորհրդային իշխանության ռազմա-քաղաքական խնդիրների։

Խորհրդային իշխանությունը պաշտպանելու, պրոլետարիատի դիկտատուրան պահելու համար մղված քաղաքացիական դաժան, հյուծիչ պատերազմում այսպես ստեղծվեց և ամրացավ բանվորների ու գյուղացիների ռազմա-քաղաքական դաշինքն ընդդեմ հակահեղափոխության, ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի վերականգնման։

Կուսակցության ամբողջ գործունեությունն այդ շրջանում ամբողջապես ուղղված եր հակահեղափոխությունը խորտակելու կողմը։ Կուսակցության լավագույն ուժերը բանակում եյին։ Ընկ. Ստալինը, Ֆրունզեն, Վորոշիլովը, Որջոնիկիձեն և տնտեսության այժմյան շատ ղեկավարները քաղաքացիական պատերազմի ճակատներում եյին, կանգնած եյին բանակների գլուխ, վոգևորում եյին նրանց՝ հերոսական սխրագործությունների, պայքարի, հաղթանակի համար։

Կուսակցության կազմակերպող մեծ ուժն անընդհատ ճակատամարտերի և գրկանքների պայմաններում ամրակցում եր քաղաքացիական պատերազմում միասնական ճակատով կռվող բանվորների և գյուղացիների մարտական և հեղափոխական ճիգերը։

## 8. ՎԵՐԱԿԱՆԳՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

### ՆԵՊԻՆ ԱՆՑՆԵԼԸ

Բանվոր դասակարգը և գյուղացիությունը ջախջախեցին բուրժուական-կալվածատիրական հակահեղափոխությունը և օտարերկրյա



ինտերվենտներին։ Բայց քաղաքացիական պատերազմը սաստիկ հյուծեց (ուժասպառ արեց) Խորհրդային յերկիրը և ել ավելի քայքայեց առանց այն ել իմպերիալիստական պատերազմի կողմից ջլատված ժողովրդական տնտեսությունը։ Ուստի և՝ ներքին և արտաքին հակահեղափոխության ուժերի դեմ հաղթանակ տանելուց հետո հիմնական խնդիրը դարձավ ժողովրդական տնտեսության վերականգնումը. պետք եր վերականգնել արդյունաբերությունը, վերականգնել տրանսպորտը, վերականգնել և գյուղատնտեսությունը։ Ինարկե, գլխավորը արդյունաբերությունը և առաջին հերթին ծանր արդյունաբերությունը վոտքի կանգնեցնելն եր։

Քաղաքացիական պատերազմի պայմաններում մտածել անգամ չեր կարելի արդյունաբերության վերականգնման մասին։

«Մտածել անգամ չեր կարելի,—ասում եր Լենինը,—արդյունաբերությունը վերականգնելու մասին, յերբ նվազագույն չափով ապահովված չեր վոչ պարենավորումը, վոչ վառելիքը։ Միայն պահել արդյունաբերության մնացորդները, վոր բոլորովին էլ չփախչեն բանվորները, բանակ ունենալ—ահա մի խնդիր, վոր մենք դրած ունեյինք, և անհնարին եր նրան այլ կերպ լուծել, քան առանց հատուցման մասնաբաշխման միջոցով»։

Բայց քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտումից հետո կուսակցության գլխավոր անելիքը դարձավ հենց արդյունաբերության և ժողովրդական ամբողջ տնտեսության վերականգնումը։ Տնտեսությունը վերականգնելու համար մասնաբաշխման քաղաքականությունն արդեն պիտանի չեր։ Նոր պայմաններում այդ քաղաքականությունը պետքական չեր բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած դաշինքը պահելու և ամրապնդելու համար ել։

Խոշոր արդյունաբերության շուտափույթ վերականգնումն անհրաժեշտ եր թե տնտեսական և թե քաղաքական նկատառումներով։ Խոշոր արդյունաբերությունը վերականգնելուց, ապա և զարգացնելուց հետո յեր միայն հնարավոր բարձրացնել և սոցիալիստական տեսակի վերակառուցել նաև գյուղատնտեսությունը։ Մյուս կողմից՝ խոշոր արդյունաբերության վերականգնման և զարգացման հիման վրա միայն հնարավոր եր ապահովել քաղաքի ու գյուղի տնտեսական զոդումը և նոր հիմքի վրա ամրացնել քաղաքացիական պատերազմի բովում բանվորների և գյուղացիների միջև ստեղծված դաշինքը։

Այս առթիվ 1921 թ. Լենինն ասել է, թե մի այնպիսի յերկրում, ինչպիսին Ռուսաստանն է, վորտեղ պրոլետարիատը փոքրամասնություն է կազմում, վորտեղ մեծամասնությունը մանր-բուրժուական է՝

«...գլխավոր խնդիրը... այն միջոցների պարզումը և իրագործումն է, վորոնք անհրաժեշտ են՝ գյուղացիությունը ղեկավարելու համար, նրա հետ հաստատուն դաշինքի մեջ լինելու համար,

դեպի հանրայնացված մեքենայացված խոշոր հողագործություն տանող աստիճանական անցումների յերկար շարքի համար»։

Բայց վորպեսզի ցույց տրվեն այս առավելությունները, ամենից առաջ հարկավոր եր վերականգնել արդյունաբերությունը, պետք եր ապահովել մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքների արտադրությունը և ծավալել ապրանքաշրջանառությունը, առևտուրը։

Գյուղը կարիք ուներ շորի, վառնամանների, շաքարի, ածուխ—գործարանային զանազան ապրանքների. քաղաքը, բացի սրանից, կարիք ուներ հացի, հատիկեղենի, մսի — պարենային զանազան մթերքների։ Պետք եր գյուղացիությունը շահագրգռել նրանով, վոր նա լավ ու շատ ցաներ։ Սրան կարելի յեր հասնել միայն փոխելով մասնաբաշխման քաղաքականությունը, վորը ցանքն ավելացնելու տնտեսական խթան չեր ստեղծում։ Մասնաբաշխումը գյուղացիներից վերցնում եր նրանց ամբողջ հացը՝ բացի նրանց անձնական պահանջքի մասից (պարենավորման, անասունների կերի և սերմացուի համար)։ Մասնաբաշխումը գյուղացիների մեջ շահագրգռություն չեր ստեղծում՝ ցանքերի տարածությունը լայնացնելու և բերքը բարձրացնելու համար։

Պետությունը պետք է բավարարեր գյուղի սպառողական և արտադրական բոլոր կարիքները։ Պետական մատակարարման կարգով նա պետք է տար գյուղին մուշտակներ (քուրքեր), գլխաշորեր (թաշկինակներ), շապիկներ, վարտիքներ, գլխարկներ, կոշիկներ, աղեղներ, սայլեր և այլն։ Բայց պետությանը պակասում եյին այս բոլոր առարկաները, նա չեր կարող գյուղացիության հարյուր միլիոնավոր բազմությունն ապահովել նրան հարկավոր ապրանքներով։ Ուստի և այս ապրանքների արտադրությունը պետք եր զարգացնել բոլոր միջոցներով — թե պետական արդյունաբերության միջոցով, թե կոոպերացիայի միջոցով և թե մասնավոր արտադրության միջոցով։ Քաղաքի և գյուղի միջև փոխանակությունն ուժեղացնելու համար պետք եր վերականգնել առևտուրը։

Կուսակցությունն անցավ տնտեսական նոր քաղաքականության, վոր հայտնի յե նեպ անունով (нэп—новая экономическая политика)։

Պարենմասնաբաշխումը փոխարինվեց պարենհարկով։ Պարենհարկի և պարենմասնաբաշխման տարբերությունն այն եր, վոր գյուղացիական տնտեսությունը, ըստ պարենհարկի, պետությանը տալիս եր վոչ թե ամբողջ հացը՝ դուրս յեկած նրա անձնական և տնտեսական կարիքների համար թողնված մասը, այլ միայն հացի մի մասը՝ հարկի սահմանած նորմայով։ Հացի մնացած մասը կազմում եր գյուղացու անձնական սեփականությունը, և նա իրավունք ուներ այդ մասը վաճառքի հանելու։ Վորպեսզի գյուղացին հացը շուկա տաներ, շուկայում պետք է արդյունաբերական ապրանքներ լինեյին։ Իսկ վորպեսզի բա-



վականաչափ քանակով արդյունաբերական ապրանքներ լինեյին, պետք եր բարձրացնել մետաղի, ածխի, նավթի և այլնի արտադրությունը, պետք եր ամենից առաջ բարձրացնել ծանր արդյունաբերությունը։ Բացի սրանից՝ պետք եր արտադրել գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ—կալսիչներ, գութաններ և այլն։ Այս պատճառով՝ կուսակցությունը, հաղթահարելով հսկայական դժվարություններ, հետզհետե գործարկման դրեց պետական արդյունաբերության դազգյանները (հաստոցները)։

Սպառման լրացուցիչ առարկաներ արտադրելու համար միաժամանակ սկսեց բանել և տնայնագործական արդյունաբերությունը։ Քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապերը հաստատվում և զարգանում եյին առևտրի միջոցով։

Նեպը նպաստեց, վոր բարձրանա գյուղացիության շահագրգռվածությունն իր տնտեսությամբ։ Սկսեց աճել ցանքերի տարածությունը, ավելացավ հումքի քանակը արդյունաբերության համար, վորով և պայմաններ ստեղծվեցին ֆաբրիկաների և գործարանների աշխատանքի աշխուժացման համար։ Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանում քայքայված ժողովրդական տնտեսությունն սկսեց կամաց-կամաց վոտքի կանգնել և վերացնել փլուզումը։

Նեպը մտցվեց 1921 թվին։ Այս քաղաքականությունն այն եր նշանակում, վոր պրոլետարական պետությունն իր ձեռքում ուներ ամբողջ խոշոր արդյունաբերությունը, բանկերը, տրանսպորտը և ամբողջ արտաքին առևտուրը։ Բայց սրա հետ միասին՝ առևտրի և մանր արդյունաբերության մեջ թույլատրվեց մտնելու մասնավոր կապիտալին։ Թե ինչ բան է նեպը՝ սրա միանգամայն սպառիչ բացատրությունը տվել է ընկ. Ստալինը հետևյալ խոսքերով.

> «Նեպը պրոլետարական պետության մի հատուկ քաղաքականություն է, վորը հաշվեդրված է (հաշվարկման վրա յե հիմնված) կապիտալիզմը թույլատրելու վրա՝ մի ժամանակ, յերբ իշխող բարձունքները պրոլետարական պետության ձեռքումն են, վորը հաշվեդրված է կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարի վրա, վորը հաշվեդրված է սոցիալիստական տարրերի դերի աճման վրա ի վնաս կապիտալիստական տարրերի, վորը հաշվեդրված է սոցիալիստական տարրերի հաղթանակի վրա ընդդեմ կապիտալիստական տարրերի, վորը հաշվեդրված է դասակարգերի վոչնչացման վրա, սոցիալիստական եկոնոմիկայի (տնտեսության) հիմքը կառուցելու վրա»։

Նեպը մտցնելու հետ միասին սկսվեց սոցիալիստական և կապիտալիստական տարրերի մրցակցությունը—այն իսկ մրցակցությունը, վորը Լենինն «ո՞վ ում» խոսքերով բնութագրեց։

Պրոլետարիատի կողմը յեղած առավելությունն այն եր, վոր,

առաջինը—ամենագլխավորը — իշխանությունը պրոլետարիատի ձեռքում էր. յերկրորդ, նրա ձեռքում էր արտաքին առևտրի մենաշնորհը (մոնոպոլիան), վորպիսի հանգամանքը մեր տնտեսակարգը պաշտպանում էր ոտարերկրյա կապիտալի ազդեցությունից. յերրորդ, բանվոր դասակարգի ձեռքում էր խոշոր արդյունաբերությունը,—հետևաբար խոշոր արդյունաբերության մեջ բոլորովին կարելի չեր չվախենալ մասնավոր կապիտալի աճումից. չորրորդ, պրոլետարական պետությունն իր ձեռքում ուներ բռնած շուկայի վրա ազդելու բոլոր հնարավորությունները. նա կարող էր կարգավորել գները, նա կարող էր ազդել մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներով, նա իր ձեռքում ուներ բռնած վարկը (դրամական փոխատվությունները), հարկային սիստեմը և այլն: Հենց այս առավելություններն ու կուսակցության ճիշտ քաղաքականությամբ հետագայում տվին այն հետևանքը, վոր ժողովրդական տնտեսության սոցիալիստական տարրերը հաղթեցին կապիտալիստական տարրերին:

Նեպի միջոցով կուսակցությունը հաջողությամբ լուծեց հետևյալ խնդիրները. նա 1922—26 թ. թ. ընթացքում վերականգնեց արդյունաբերությունը, բարձրացրեց գյուղատնտեսությունը և նոր պայմաններում այս հիմունքով նա ամրացրեց բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, պայմաններ ստեղծեց ինդուստրացման լայն զարգացման համար: Նեպի հիմունքով վոչ միայն վերականգնվեց ժողովրդական տնտեսությունը, այլև պայմաններ ապահովվեցին նոր շինարարության համար, յերկրի տնտեսության բոլոր ճյուղերի արմատական վերակառուցման համար: Սրանով իսկ պատրաստվեց սոցիալիստական շինարարության վերակառուցական (ռեկոնստրուկտիվ) շրջանին անցնելը:

## ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾԻ ՅԵՎ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կուսակցությունը նեպին անցնելը և ժողովրդական տնտեսության վերականգնման ամբողջ շրջանը կատարում էր իր շարքերում բազմաթիվ ընդդիմադիր (օպոզիցիոն) թեքումների և խմբակցությունների դեմ համառ պայքար մղելու պայմաններում:

Կուսակցությունը շրջադարձ էր կատարում քաղաքացիական պատերազմի շրջանից դեպի տնտեսական շինարարությունը: Այս շրջադարձն առանձնապես դժվար էր յերկրի տնտեսական ընդհանուր հյուծման պայմաններում, և նա ուղեկցվում էր քաղաքային ու գյուղական մանր բուրժուազիայի դժգոհությամբ ու տատանումներով և խորհրդային իշխանության դեմ ուղղված կուլակային ապստամբություններով



Այսպիսի ապստամբություններ յեղել են Սիբիրում, Տամբովի նախկին նահանգում, Ուկրաինայում:

1921 թ. մարտին հակահեղափոխական ապստամբություն բռնկվեց Կրոնշտադտում:

Մանր-բուրժուական այս տարերքը ճնշում էր բանվոր դասակարգի ու մեր կուսակցության ներսում անկայուն միջնախավերի վրա և սրանով նպաստում էր հակակուսակցական զանազան թեքումներ և խմբակցություններ կազմվելուն:

Դեռևս կուսակցության IX համագումարի (1920 թ.) նախօրյակին Սապրոնովի գլխավորությամբ կազմվեց մի խումբ, վորն իրեն անվանում էր «դեմոկրատական ցենտրալիզմի» (կենտրոնականության) խումբ: Այս խումբը բանվոր դասակարգի պայքարը կենտրոնացված ղեկավարությամբ վարելու դեմ էր դուրս գալիս: Այս խումբը, հարձակվելով կուսակցության կազմակերպական կառուցման և Կենտկոմի ղեկավարության վրա՝ կուսակցությունը խորհուրդների աշխատանքին «չմիջամտելու» լոզունգով հակադրում էր խորհուրդները կուսակցությանը: Հետագայում այս խումբը տրոցկիստական օպոզիցիայի հետ միասին մասնակցում էր հակակուսակցական բոլոր յելույթներին ընդհուպ մինչև 1925—27 թ. թ. և վերջացրեց նրանով, վոր այլասերվեց ու վերածվեց հակահեղափոխական սովորական մի կազմակերպության:

1921 թ., X կուսհամագումարի նախօրյակին և նրա ժամանակ՝ կազմվեցին մի շարք ֆրակցիական խմբակցություններ, վորոնք Կենտկոմի վարած գծի դեմ էին դուրս գալիս՝ արհմիությունների դերի և կուսակցության կազմակերպական քաղաքականության հարցերում: X համագումարի նախօրյակին արհմիությունների մասին ծավալված վիճաբանությունը (դիսկուսիան) անդրադարձնում էր այն շրջադարձի անհրաժեշտությունը կուսակցության տնտեսական քաղաքականության մեջ, վորն իր արտահայտությունը գտավ նեպին անցնելու մեջ:

Այս վիճաբանության ժամանակ Տրոցկին ու Բուխարինը պայքարում էին Լենինի, Ստալինի և կուսակցության մեծամասնության դեմ: Այս ժամանակ կազմվեց «բանվորական օպոզիցիայի» խումբը, վորը գլխավորում էին Շլյապնիկովը, Մեդվեդևը և Կոլլոնտայը: Այս խմբակցությունը հանդես յեկավ պարզեիպարզ հակակուսակցական մանր-բուրժուական այնպիսի հայացքներով, վորոնք իրենցից ներկայացնում էին անարխիզմի և մենշևիզմի մի խառնուրդ. հետագայում այս խմբակցությունը միքանի անգամ դուրս յեկավ հակակուսակցական իր պլատֆորմներով (ծրագրերով):

Կուսակցության գծի ու ղեկավարության վրա վերակառուցական շրջանի բոլոր տարիներում առանձին կատաղությամբ հարձակվում էին Տրոցկին և նրա համախոհները՝ Պրեոբրաժենսկին, Ռակովսկին, Սոսնովսկին և ուրիշները: 1923 թ. Տրոցկին հանդես յեկավ Կենտկոմի

և ամբողջ կուսակցության դեմ՝ կուսակցության կազմակերպական կառուցման հարցում քարոզելով ակներևորեն մենշևիկյան հայացքներ, ամբաստանելով բոլշևիկյան հին կադրերին և փորձելով նրանց դեմ գրգռելու կուսակցական յերիտասարդությունը:

Տրոցկին հետագա տարիներում կուսակցության մեջ ծավալեց քայքայիչ, կազմալուծիչ աշխատանք՝ ընդելով ֆրակցիաներ և խմբակցություններ կազմելու ազատության վրա և քանդելով կուսակցության կարգապահությունը (դիսցիպլինան): Նա իր ֆրակցիայի հետ միասին հանդես յեկավ մի շարք տնտեսական և քաղաքական պլատֆորմներով, վորոնք գնդակոծում էյին կուսակցության բոլշևիկյան քաղաքականության արդեն բուն հիմքերը: 1925 թ. հունվարին Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումն իր բանաձևում մատնանշում էր, վոր «Տրոցկին ուղղակի արշավանք է բաց արել արդեն բոլշևիկյան աշխարհայացքի հիմունքների դեմ»: Տրոցկու հարձակումները կուսակցության և նրա լենինյան Կենտկոմի վրա որ-ավուր ավելի ու ավելի թշնամական էյին դառնում: Տրոցկիստական ոպոզիցիայի մեջ գլխավորն այն էր, վոր նա ժխտում էր մեր շինարարության սոցիալիստական բնույթը՝ աշխատելով ապացուցել սոցիալիզմ մի յերկրում կառուցելու անկարելիությունը: Այս հարցում Տրոցկուն միացան Զինովյևը և Կամենևը, վոր նրա հետ միասին կազմեցին ընդդիմադրական (ոպոզիցիոն) մի բլոկ: Միավորված ոպոզիցիան ամենակատաղի կերպով գրոհում էր կուսակցության քաղաքական գծի կազմակերպական միասնության վրա, ընկ. Ստալինի ղեկավարությամբ գործող նրա լենինյան ղեկավարության վրա: Նա ձախողում էր կուսակցական կարգապահությունը, փորձում էր պառակտել կուսակցության շարքերը, փորձում էր կուսակցության ներսում կուսակցություն ստեղծել հայտարկային կարգով (սոսկ հայտարարելու կարգով): Նա ստեղծեց իր անլեգալ կոմիտեները՝ իր անդամակցական վճարներով, իր ֆրակցիական կարգապահությամբ և այլն:

Նա ստեղծեց իր ընդհատակյա տպարանը: 1927 թ. նոյեմբերի 7-ին տրոցկիստները փորձեցին կազմակերպել իրենց հակահեղափոխական ցույցը, վորը ցրեցին բանվորները: Սրանով իսկ դասակարգային թշնամուն տրոցկիստները ցույց տվին կուսակցության և խորհրդային իշխանության դեմ հակահեղափոխական պայքար մղելու կազմակերպական ձևերը:

Կուսակցությունը բոլշևիկյան անխնայողությամբ ջախջախեց բացահայտորեն հակահեղափոխական ուժի վերասերված այս ֆրակցիան և կուսակցությունից դուրս շպրտեց տրոցկիստներին: Հետագայում տրոցկիզմը խորհրդային իշխանության թշնամիների առաջին շարքերում սկսեց ակտիվորեն կռվել պրոլետարական դիկտատուրայի յերկրի դեմ, դարձավ բուրժուական հակահեղափոխության առաջավոր ջոկատը:

Տրոցկիստները կուսակցության վրա կատարած իրենց հակահե-



ղափոխական հարձակումներն սքողում էյին «ձախ» պլատֆորմներով: Սա տրոցկիզմի համար՝ իր զուտ-մենշևիկյան էությունը կեղծ, մանր-բուրժուական արտաքուստ «հեղափոխական» տեսություններով ու ֆրազներով (դատարկ խոսքերով) թաքցնելու սովորական փորձ էր: Տրոցկիստական պլատֆորմները թափանցված էյին հավատի բացակայությամբ դեպի բանվոր դասակարգի ուժերը, դեպի նրա այն ընդունակությունը, վորով նա իր հետևից գյուղացիությունը հանում է սոցիալիստական շինարարության ուղին: Տրոցկին, ժխտելով ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը և բղավելով մեր յերկրի տնտեսական տեխնիկական հետամնացության մասին՝ նետվում էր գերինդուստրիալիզմի[1]) ծայրահեղությունների վրա՝ մղելով կուսակցությունը գյուղացիության հիմնական, միջակ զանգվածի հետ կապերը խզելու կողմը: Այս պատճառով միանգամայն բնական է, վոր կուսակցության համար այն շրջանում (1925—1926 թ. թ.) գլխավոր վտանգը «ձախից» էր, և այս պատճառով կուսակցությունը հատկապես կատաղի պայքար էր մղում «ձախ» վտանգի դեմ:

Բայց կուսակցությունը պարզորեն տեսնում էր իր շարքերում նույնպես աջ ոպորտունիստական յերևույթների առկայությունը (ներկայությունը): Կուսակցությունը դատապարտեց այդ ժամանակ ընկ. Բուխարինի առաջադրած «հարստացեք» լոզունգը և ստացավ ընկ. Բուխարինի հրաժարումը՝ ակներևորեն սխալ, հակալենինյան այդ լոզունգից: Կուսակցությունը նույնպես դատապարտեց ընկ. Բուխարինի հետևողների և աշակերտների—Սլեպկովի և այլոց—կողմից առաջադրված «նեպի լայնացման» տեսությունը, վորն իրականում նշանակում էր կուլակին զիջելու և տնտեսության դեպի կապիտալիստական զարգացման ուղին նահանջելու քաղաքականություն:

## 9. ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՇՐՋԱՆԸ

### ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՅԵՎ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Ժողովրդական տնտեսությունը վերականգնելուց հետո կուսակցությունն ու բանվոր դասակարգը ձեռք զարկին նրա արմատական վերակառուցմանը—ռեկոնստրուկցիային: 1926 թվի հոկտեմբեր-նոյեմբերին կայացած կուսակցության Համամիութենական XV կոնֆե-

1) «Գերինդուստրացման» վերաբերյալ այս ճիչերը հետագայում տրոցկիստներին չխանգարեցին գրավելու ակներևորեն հակահեղափոխական դիրք, վոր ընկ. Ստալինը բնորոշեց վորպես «խղճուկ մինիմալիզմ» (նվազագունություն), այսինքն՝ վորպես կատարյալ հրաժարում ինդուստրացման արագ տեմպերից (այս մասին մանրամասնորեն խոսվում է հինգերորդ գլխում: (Հինգերորդ գլուխը հետևյալ պրակի առաջին գլուխը կկազմի):

րանն այսպես բնորոշեց կուսակցության անելիքները ժողովրդական տնտեսության հետագա զարգացման բնագավառում.

«Վերակառուցական շրջանի ավարտումով ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը դեմ է առնում բուրժուական հասարակությունից ժառանգած արտադրական-տեխնիկական բազայի անբավականաչափ և հետամնաց լինելուն...

Կուսակցության և Խորհրդային պետության բոլոր ջանքերըն առաջին հերթին ուղղված պետք է լինեն հիմնական կապիտալի[1]) այնպիսի լայնացումն ապահովելու կողմը, որը պայմանավորի ժողովրդական ամբողջ տնտեսության աստիճանական վերակառուցումը տեխնիկական ավելի բարձր բազայի (հիմքի) վրա։ Անհրաժեշտ է ձգտել այն բանին, որ հարաբերաբար նվազագույն պատմական ժամանակաշրջանում հասնենք, ապա և անցնենք կապիտալիստական առաջավոր յերկրների ինդուստրիալ (արդյունաբերական) զարգացման մակարդակից»։

Այս խնդիրներն անմիջականորեն բղխում եյին վերակառուցական շրջանի տնտեսական այն նվաճումներից, որ թույլատրում եյին կուսակցության մոտակա նպատակն ամենայն վճռականությամբ դնել յերկրի ինդուստրացումը, արդյունաբերության, տրանսպորտի և ժողովրդական ամբողջ տնտեսության ռեկոնստրուկցիան (վերակառուցումը)։

Կուսակցության և յերկրի առջև ժողովրդական տնտեսության վերակառուցումից հետո ծառացած խնդիրներն ամենայն պարզորոշությամբ արտահայտված եյին արդեն 1925 թ. վերջերքին կուսակցության XIV համագումարի վորոշումների մեջ։ Կուսակցության պատմության մեջ այս համագումարը մտավ վորպես յերկրի ինդուստրացման համագումար։

Ընկ. Ստալինի զեկուցման վերաբերյալ ընդունված բանաձևում կուսակցության տնտեսական խնդիրներն այսպես են արտահայտված.

«Անկյունաքար դարձնել սոցիալիստական տնտեսական ձևերի հաղթանակը մասնավոր կապիտալի հանդեպ ամեն կերպ ապահովելը... ապահովել ԽՍՀՄ տնտեսական ինքնուրույնությունը, վորը պահպանում է ԽՍՀՄ համաշխարհային կապիտալիստական տնտեսության կցորդ լինելուց, վորի համար բռնել յերկրի ինդուստրացման ուղղությունը (կուրսը)»։

Սոցիալիստական շինարարության հետագա ամբողջ շրջանի ծրագիրն այս խնդիրներն եյին կազմում, և նրանք հանգիստացան կուսակցության XV համագումարի կողմից ընդունված (1927 թ. դեկտեմբեր) հնգամյա պլանի հիմքը։ Ընկ. Ստալինն այս համագումարի նշանակությունը հետևյալ խոսքերով բնորոշեց.

[1]) Այսինքն՝ գործարանների, հանքահորերի, մեքենաների սարքավորման և այլնի





«XV համագումարը, առավելապես, կոլեկտիվացման համագումար
էր: Դա ընդհանուր հարձակման պատրաստություն էր»:

2½ տարի անց (1930 թ. հունիս—հուլիսին) կայացավ XVI կուսակ-
համագումարը, որը կուսակցության պատմության մեջ մտավ որպես
սոցիալիզմի՝ ամբողջ ճակատով ծավալուն հարձակման, կուլակության՝
որպես դասակարգի վերացման և կյանքում համատարած կոլեկտի-
վացումը կենսագործելու համագումար» (Ստալին):

Այս ծավալուն հարձակումը պատրաստված էր կուսակցության
ամբողջ քաղաքականությամբ, որը (կուսակցությունը) իրագործում
էր յերկրի ինդուստրացումը:

Կուսակցությունը յերկրի ինդուստրացման համար պայքարում
էր բոլշևիկյան ամբողջ համառությամբ, հաղթահարելով, մի կողմից,
տրոցկիստական «գերինդուստրիալիստների» հակահեղափոխական ամե-
նավնասակար տեսությունները (տրոցկիստական «գերինդուստրիալիստ-
ների»,որոնք կոչ եյին անում բանվոր դասակարգի ու գյուղական չքա-
վորության դաշինքը միջակ գյուղացիության հետ խզելու, մի բան, որ
նշանակում էր պրոլետարիատի դիկտատուրայի պայթեցում) և, մյուս
կողմից, հաղթահարելով այդ ժամանակ կուսակցության դեմ բացա-
հայտորեն դուրս յեկած աջ թեքման՝ դիմադրությունն ինդուստրացման
քաղաքականությանը: Աջ օպոզիցիայի առաջնորդներն եյին ընկ. ընկ.
Բուխարինը, Ռիկովն ու Տոմսկին: Նրանց սատարում եյին Մոսկվայի
կազմակերպության մի շարք աշխատավորներ՝ ՄԿ-ի այն ժամանակ-
վա քարտուղար Ուգլանովի գլխավորությամբ:

Աջ օպոզիցիան իր հայացքներով արտացոլում էր այն դիմա-
դրությունը, որ կուլակությունը ցույց էր տալիս կապիտալիստա-
կան տարրերի վրա հարձակվելու քաղաքականությանը: Աջ թեքման
առաջնորդները վախեցան յերկրի ինդուստրացման և գյուղի կոլեկ-
տիվացման զարգացման ուղղության (կուրսի) դժվարություններից:
Ուստի և աջ օպոզիցիան հանդես յեկավ ընդդեմ յերկրի ինդուստրացման
քաղաքականության: Աջ օպոզիցիան պահանջում էր առաջին հերթին
զարգացնել սպառման առարկաներ արտադրող արդյունաբերությունը,
առաջարկում էր ինդուստրացումն սկսել «չթե ծայրից»: Իսկ սա նշա-
նակում էր ուժեղացնել ԽՍՀՄ տնտեսական կախումը կապիտալիստա-
կան աշխարհից, որովհետև մենք ստիպված պետք է լինեյինք բուր-
ժուական յերկրներին դիմելու մեքենաների, քիմիական պարարտա-
նյութերի, տրակտորների, ինքնաթիռների համար և այլն: (Այս մասին
ավելի մանրամասնորեն մենք խոսում ենք հաջորդ գլխում): Աջ օպո-
զիցիան հանդես էր գալիս ինդուստրացման արագ տեմպերի դեմ, առա-
ջարկելով հավասարվել «նեղ տեղերին»:

Կուսակցությունը կենսագործում էր կապիտալիստական տարրերի
վրա հարձակվելու քաղաքականության ուժեղացումը: Աջ օպոզիցիան

պահանջում էր հրաժարվել կուլակի վրա հարձակվելուց, դասակարգային խաղաղություն էր քարոզում՝ պնդելով, թե, իբրև թե, կուլակն ինքը «կներաճի սոցիալիզմի մեջ»:

Կուսակցությունը կենսագործում էր խոշոր տնտեսությունների—հացահատիկի և մսի պետական գործարանների—կառուցման քաղաքականություն: Աջ ոպոզիցիան այս քաղաքականության դեմ էր դուրս գալիս: Կուսակցությունը կոլեկտիվացումը ծավալելու ուղղություն էր բռնել. աջ ոպոզիցիան դեմ էր խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների կառուցմանը և փաստորեն կուսակցությանն ու յերկիրը քաշում էր դեպի կուլակային ստրկացման զարգացման ուղին գյուղում: Կուսակցությունը պայքարում էր հասարակական խոշոր տնտեսության ծավալման համար: Աջ ոպոզիցիան պայքարում էր կուլակային խոշոր տնտեսության ծավալման համար: Կուսակցությունը պայքարում էր գյուղի սոցիալիստական վերակառուցման համար: Աջ ոպոզիցիան պայքարում էր գյուղի կապիտալիստական տարրերի ուժեղացման համար:

Ինչպես և ամեն մի ոպոզիցիա՝ աջ թեքումը կուսակցության ներսում առանձին ֆրակցիա կազմելու փորձ էր անում: Նա գրոհում էր կուսակցության գծի վրա, նրա Կենտկոմի վրա և ընկ. Ստալինի վրա, վորոնք լենինյան ամենայն անհաշտելիությամբ պայքար եյին մղում աջ ոպորտունիստական տեսությունների և յելույթների դեմ: Աջ ոպոզիցիայի առաջնորդները մշակեցին իրենց պլատֆորմը, վորի մեջ նրանք կրկնում եյին տրոցկիստական զրպարտությունը կուսակցության և ներկուսակցական ռեժիմի մասին: Տրոցկիստների նման՝ նրանք էլ փորձում եյին պառակտել կուսակցությունը, ձախողել նրա կարգապահությունը և այլն:

Կուլակության և կապիտալիստական բոլոր տարրերի կողմից սոցիալիզմի հարձակմանը ցույց տրված կատաղի դիմադրության պայմաններում աջ ոպոզիցիան, հանդես գալով վորպես կուլակային և շահագործողական մեռնող դասակարգերի շահերի անմիջական պաշտպան՝ կուսակցության ներսում այդ դիմադրությունն էր արտացոլում: Այս պատճառով, կուսակցության համար նման պայմաններում գլխավոր վտանգը դարձավ աջ ոպորտունիզմը:

Կուսակցությունն անխնայորեն ջախջախեց աջ ոպոզիցիան—կուլակության այս գործակալությունը (ագենտուրան): Բանվոր դասակարգը և աշխատավորական բոլոր զանգվածները խանդավառությամբ ընդունեցին կուսակցության քաղաքականությունը: Ի պատասխան աջ ոպորտունիստների այն խղճուկ վողբասացության, թե կենսունակ չէ ինդուստրացման մեր ծրագիրը, և թե հնգամյակի նշված տեմպերը մեզ համար անիրագործելի յեն՝ բանվոր դասակարգն ինքն առաջադրեց «հնգամյակը չոր տարում» լոզունգը և ապա փայլուն կերպով իրագործեց այս լոզունգը:



Կուսակցությունը սոցիալիստական շինարարության ամբողջ ֆրոնտով—թե քաղաքում և թե գյուղում—ծավալեց ընդհանուր հարձակում վերակառուցական շրջանի այն առաջին հաջողությունների հիման վրա, վորոնց հետևանքը յեղան սոցիալիստական արդյունաբերության կառուցման զարգացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Չնայած կապիտալիստական դասակարգերի հուսահատական դիմադրությանը, չնայած աջ ոպորտունիստների բացահայտ և գաղտնի դիմադրությանը՝ կուսակցությունը հասավ այն բանին, վոր առաջին հնգամյակի ընթացքում ստեղծվեց հզոր ծանր արդյունաբերություն: (Սրա մասին մանրամասն պատմված է հինգերորդ գլխում):

Գյուղում հաղթեց կոլտնտեսակարգը: Թե քաղաքը յեվ թե գյուղը պինդ հաստատվեցին սոցիալիստական ճանապարհի վրա: Կապիտալիստական և սոցիալիստական տարրերի միջև պայքարն ավարտվեց վերջինների վճռական հաղթանակով. «ո՞վ ում» հարցը վերջնականապես սոցիալիզմի օգտին է վճռված: Սոցիալիստական շինարարության ընդհանուր հաղթանակի և հատկապես կոլտնտեսային կարգը գյուղում հաղթած լինելու հիմունքով ջախջախված է յերկրի կապիտալիստական վերջին լուրջ դասակարգը—կուլակությունը, համատարած կոլեկտիվացման հիմունքով մենք հաջողությամբ վերացնում ենք նրան, վորպես դասակարգի: (Սրա մասին մանրամասն պատմված է վեցերորդ գլխում):

Բայց կուլակությունը դեռևս ամբողջապես մինչև մահացումը չի հարվածված: Նա դեռևս գաղտնաբար դիմադրում է սոցիալիստական շինարարությանը: Ջախջախված դասակարգերի մնացորդները զանազան միջոցներով փորձում են սոցիալիստական շինարարությունը սաբոտաժի յենթարկել, ձախողել և քայքայել: Այս պայմաններում աջ ոպորտունիզմը շարունակում է մնալ վորպես գլխավոր վտանգ: Թշնամի դասակարգերի դիմադրող և սոցիալիզմի կառուցմանը վնասող այս մնացորդների անմիջական ոժանդակողն ու գործակալը նա յե:

Բայց կուսակցությունը մի րոպե անգամ չի ընդհատում պայքարը նույնպես «ձախ» ոպորտունիզմի արտահայտությունների դեմ—երկպարանոց վարչարարության և հրամարարության փորձերի դեմ կոլեկտիվացման գործում, կոլտնտեսությունների արտելային ձևի վրայով թռչելու փորձերի և այլ այնպիսի խոտորումների դեմ, վորոնց հետևանքը լինում են՝ գյուղացիական մասսաների կողմից դեպի բանվոր դասակարգը յեղած վստահության ձախողումը և գյուղի սոցիալիստական վերակառուցման նկատմամբ յեղած պրոլետարական ղեկավարության թուլացումը:

*Բոլշևիկյան կուսակցությունը, հաստատուն վարելով յերկու ֆրոնտով պայքարելու լենինյան փորձված քաղաքականությունը հաղթականորեն պայքար է ծավալում դասակարգերի և դասակարգային հասարակության մնացուկների լիակատար վոչնչացման համար, սոցիալիստական անդասակարգ հասարակություն ստեղծելու համար:*

## ԱՅՍՊԻՍՈՎ՝ ՉՈՐՐՈՐԴ ԳԼԽԻՑ ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ.

Այն ուղին, վոր անցել է մեր կուսակցությունը,— աշխարհում մեծագույն հեղափոխական պրոլետարական կուսակցության կողմից կոմունիզմի համար մղվող հերոսական պայքարի փառավոր ուղին է:

Այս ուղին ընկած է ցարական վոստիկանչության (պոլիցեյսկիյ) դաժանագույն հալածանքների — բանտերի, աքսորների, տաժանքների (կատորգաների) յեվ կախաղանների միջով:

Այս ուղին ընկած է քաղաքացիական պատերազմի, սովի, գրկանքների, չտեսնված ճիգերի, պայքարի յեվ փառավոր հաղթանակների ծանր փորձությունների միջոցով:

Սա՝ ռուսական յեվ միջազգային մենշևիզմի դեմ անխնա պատերազմ մղելու ուղի յե, վերցրած մենշևիզմն իր բոլոր բազմատեսակություններով ու արտահայտություններով:

Սա՝ իր սեփական շարքերում ոպորտունիստական թեքումների դեմ անհաշտելի պայքար մղելու ուղի յե — ինչպես բացահայտ ոպորտունիզմի (աջ թեքումը) ուղղությամբ, այնպես յեվ մանր-բուրժուական կեղծ «հեղափոխականության» («ձախ» թեքումը) ուղղությամբ, սա՝ կուսակցության գաղափարական յեվ կազմակերպական յերկաթե միասնության համար վճռական պայքար մղելու ուղի յե:

Սա՝ պրոլետարական հեղափոխականների ընդհատակյա փոքր կուսակցության հաջորդական զարգացմամբ մի այնպիսի կուսակցություն դառնալու



ուղին է, վորը կառավարում է կառուցվող սոցիալիզմի հզոր յերկիրը,— մի յերկիր, վորը գործնականում իրագործում է աշխատավոր ամբողջ մարդկության յերազը — անդասակարգ հասարակության կերտումը:

Համաշխարհային ամբողջ պրոլետարիատն ուսումնասիրում է այս ուղին: Այս ուղով, մեր կուսակցության շավղով են ընթանում միջազգային բանվոր դասակարգի առաջավոր շարքերը — ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցությունները:

## ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

### IV ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. *Ե՞րբ յեվ ի՞նչ առթիվ պառակտում տեղի ունեցավ բոլշևիկների յեվ մենշևիկների միջև:*
2. *Ի՞նչպես էին գնահատում բոլշևիկները յեվ մենշևիկները 1905 թ. հեղափոխությունը:*
3. *Ի՞նչպես էին գնահատում բոլշևիկները յեվ մենշևիկները գյուղացիության դերը հեղափոխության մեջ:*
4. *Բոլշևիկների կարծիքով ո՞ր դասակարգը պետք է ղեկավար ուժ լիներ 1905 թ. հեղափոխության մեջ: Ի՞նչն էր բոլշևիկների յեվ մենշևիկների հայացքների տարբերությունն այս հարցում:*
5. *Ինչո՞ւ էին բոլշևիկները 1905—1906 թ. թ. պայքարում բանվորական խմբեր (դրուժինաներ) ստեղծելու յեվ ապստամբությունը նախապատրաստելու համար, յեվ ի՞նչպես էին վերաբերվում սրան մենշևիկները:*
6. *Ի՞նչ բան է լիկվիդատորությունը յեվ ի՞նչ ժամանակին է նա վերաբերում:*
7. *Լենինն ի՞նչպես էր սովորեցնում միացնել հեղափոխական լեգալ յեվ անլեգալ պայքարը: Մեր կուսակցության այս փորձն այժմ ի՞նչ նշանակություն ունի յեղբայրական կոմկուսակցությունների համար:*
8. *Դուք մինչհեղափոխական շրջանի բոլշևիկյան ի՞նչ թերթեր գիտեք, յեվ նրանցից յուրաքանչյուրն ի՞նչ դեր էր խաղում կուսակցության կյանքում:*
9. *Մեր կուսակցությունը համաշխարհային պատերազմի ժամանակ ի՞նչ գիծ էր վարում յեվ պաշտպանում:*
10. *Ինչո՞ւմն էր կայանում Փետրվարյան հեղափոխությունից հետո յեղած յերկիշխանությունը:*
11. *Ինչո՞վ արտահայտվեցին Բրեստի հաշտության առթիվ կուսակցության մեջ յեղած տարաձայնությունները:*

12. Կուսակցությունը վերականգնական շրջանում ի՞նչ հարցերի շուրջն էր պայքար մղում տրոցկիզմի դեմ:
13. Ինչո՞վ է տարբերվում վերակառուցական շրջանը վերականգնական շրջանից:
14. Ինչո՞ւ գլխավոր վտանգը ներկայումս աջ թեքումն է:

## ՑԱՆԿ


Հրատարակչության կողմից .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. 3

1 գլուխ. Յերկու աշխարհ .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. .. 5

2 գլուխ. Մեր վերջնական նպատակը կոմունիզմն է .. .. .. .. .. .. .. .. 54

3 գլուխ. Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը 95

4 գլուխ. Համկ(բ)Կ պատմության գլխավոր էտապները .. .. .. .. .. .. .. .. 155







ԽՍՀՄ կառուցվածքը (տես էջ 87) [1]:

1) Գրքի էջ 87-ում և 91-ում ասված է, որ ԽՍՀՄ կառուցվածքը (սխեման) և ԽՍՀՄ իշխանության մարմինների կառուցվածքը կտրվեն սույն գրքի 2-րդ պլակում: Տպագրության ընթացքում հնարավոր յեղավ հասցնել այս սխեմանները և զետեղել հաջորդաբար այս և մյուս էջերում:




ԽՍՀՄ՝ իշխանության մարմինների կառուցվածքը (տես էջ 91).

Инв. № 36727

Թարգմանիչներ—
Ս. Ծատնյան, 1—23 էջերը.
Ց. Խանզադյան, 24—49, 106—196 էջերը.
Գ. Արեյան, 50—105, 196—222 էջերը:
Խմբագրիչ. Ա. Տ.-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 14 նոյեմբերի 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 6 նոյեմբերի 1936 թ.
Գլավլիտ 7775 (բ). Հրատ. № 196
Պատվեր № 52. Տիրաժ 10.000 618,000 տպ. նշ.

Պետհրատի տպարան. Երևան.

ՀՀ Ազգային գրադարան
NL0182992
c.90

ԳԻՆԸ 2 Ռ. 50 ԿՈՊ.

ԿԱԶՄԸ 50 ԿՈՊ.

Арм.
3-8581 I-2

...Б. с Лнгр.
А. 1933 г.
Акт №

С. ИНГУЛОВ
ПОЛИТГРАМОТА
ВЫПУСК I

Партиздат. 1933. Эривань